



ԱԼԵՔՍԱՆԴՐ
ՄԱԿԵԴՈՆԱՑԻ


ՀԱՅԱՍՏԱՆԻ

9(38)

Թ-28

Բ. ԱԵԶՄԻԿՈՎ

✓

ԱՏՈՒԳԱԿԱՆ Հ. 1961 թ.

ԱԼԵՔՍԱՆԴՐ
ՄԱԿԵԴՈՆԱՑԻ

4126 A II
39403



Ի. ՌԵԶՆԻԿՈՎ: ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ

Հեղինակը սեղմ ակնարկով նկարագրում է հին աշխարհի մեջ զորագարներից մեկի՝ Ալեքսանդր Մակեդոնացու կյանքն ու զորավարական արվեստը և զուգընթացաբար պատկերացում է տալիս այն պետությունների ռազմական արվեստի մասին, որոնք եղել են մակեդոնացի նվաճողի դաշնակիցները կամ հակառակորդները:

И. РЕЗНИКОВ
АЛЕКСАНДР МАКЕДОНСКИЙ
(На армянском языке)

Армгиз, Ереван

1941

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՄԵՐ ԹԱՂԱԿԱԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՌԱՋ
IV ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

«...մենք սախոված պիտի լինենք փիլիսոփայության,
ինչպես և ուրիշ շատ բնագավառներում շարունակ վերա-
դառնալ այս փոքրիկ ժողովրդի սխրագործություններին,
որի ունիվերսալ շնորհքն ու գործունեությունը մարդկաւ-
թյան զարգացման պատմության մեջ նրա համար ապա-
հովել է այնպիսի տեղ, որին հավակնել չե կարող ոչ մի
ուրիշ ժողովուրդ»:

(Մարքս և Էնգելս, Երկ. ճ. XIV, ոռու. հր. էջ 340)

Հույն ժողովրդի չպերազանցված հանճարով է գրված դի
տության բոլոր բնագավառների հիմքը: Բժշկականությունը,
կենդանաբանությունը, բուսաբանությունը, մեխանիկան, աստ-
ղաբաշխությունը, մաթեմատիկան, պատմությունը, աշխարհա-
գրությունը, փիլիսոփայությունը— ամենուրեք առաջին խոսքն
ասել է հունական հանճարը: Հին հուների երախտիքն առանձ-
նապես մեծ է փիլիսոփայության և մաթեմատիկայի բնագավա-
ռում: Եվ, թեպետ, երկուսուկես հազարամյակների ընթացքում
գիտության ու տեխնիկայի բոլոր բնագավագներում մարդկու-
թյունը շատ ավելի առաջ է անցել հին հուների հետ համեմա-
տած, բայց և այնպես արվեստի շատ բնագավառներում մենք
մինչև այժմ էլ մնում ենք որպես հելլենների աշակերտներ ու
ընդօրինակողներ:

Հունաստանը դանվում է Ասիայի, Աֆրիկայի ու Եվրոպա-
յի ճանապարհների հանգույցում: Ծովը նրան շրջապատում է
լոռոր կողմերից, կղեյան ծովի հարյուրավոր կղզիներից ու
կղզակներից կազմված բնական կամուրջը նրան կապում է
Փոքր Ասիայի ու Մըրեկքի հետ: Հույնները ծովագնաց ժողո-
վուրդ են եղել, հունական նավերն անվեհերաբար ակոսել են
ծովերի ու Ատլանտյան օվկիանոսի ջրերը և միայն աստղերն են
ճանապարհ ցույց տվել խիզախ ծովագնացներին: Գիրը և քա-
ղաքակրթության ուրիշ շատ տարրեր հուները փոխ են առել
Արեւելից, բայց աշակերտները շուտով գերազանցեցին իրենց
ուսուցիչներին. մեր թվականությունից առաջ V դարում արդեն

Հույներն իրավամբ կարող էին համարվել կուլտուրապես առաջավոր ժողովուրդն այդ գարազջանում :

Հունական սփանչելի կուլտուրայի ակոնքներն սկիզբ են առնում այն միջինավոր ստրուկիների արյունից ու քրտինքից, որոնք կազմում էին Հելլադայի առաջավոր մարդերի ու քաղաքների բնակչության մեծամասնությունը։ Ստրուկներ ձեռք էին

բերվում ծովահենությամբ, պարուապանների ստրկացումով, Դրիմի ու Արեելքի ստրկավաճառ շուկաներում գներով և վերջապես ստրկացներլով նվաճված երկրների բնակչությանը։ Ստրուկների մեծամասնությունն օտարերկրացիներ էին—թրակիացիներ, իլլերիացիներ, սկյութացիներ, ևդիստացիներ, փյունիկացիներ, խտալիկներ։ Ստրուկի աշխատանքը, «երկոտանի անասունի» աշխատանքը, լայնորեն օգտագործվում էր հանքերում, արհեստանոցներում, զյուղատնտեսության մեջ, շինարարական աշխատանքներում, անային անտեսության մեջ։ Ստրուկն ու ստրկուհին ամրողապես պատկանում էին իրենց

Ալեքսանդր Մակեդոնացի

տիրոջը, տերը կարող էր նրանց հետ վարիել այնպես, ինչպես ինքը կուզենար։ Ստրուկներն օգտագործվում էին և՛ պետության, և՛ մասնավոր անձանց կողմից՝ որպես վերակացուներ, վարպետ արհեստավորներ, գրադիրներ, մունիչտիկներ, ստրկաներ։ Հին դարերի հույնը չէր կարող հասարակությունն ու պետությունը պատկերացնել առանց ստրուկի աշխատանքի։ Զ՞ո՞ր «...Միմիայն ստրկությունը հնարավոր գարձրեց աշխատանքի ամելի կամ պակաս մեծ մասշտաբով բաժանումը երկրագործության և արդյունաբերության միջև և այդ ուղիով հնարավոր գարձրեց Հին աշխարհի ծաղկումը, Հունաստանի կուլտուրան։ Առանց ստրկության չէր լինի հունական պետությունը, հունական արվեստն ու կուլտուրան...», (Էնգելը, Անդ-Դյորինգ, Պարտիզդատ, изд. 1938 թ. стр. 148)։

«Շատ էժանաղին բան է ստրկության և նման երևույթների մասին ճոռոմարանություններ անել և այսպիսի խայտառակությունների վրա բարեբուխ զայրույթ թափել... իր ժամանակի պայմաններում ստրկության մուտքը մի մեծ առաջադիմություն է եղել» (նույն տեղը) :

Այդ փոքրիկ երկիրը բաժանված էր բազմաթիվ մանր մարզերի, յուրաքանչյուր մարզ ձգտում էր զեսլի իր քաղաքային կենտրոնը, յուրաքանչյուր այդպիսի «քաղաք-պետություն» եռանդով պաշտպանում էր իր անկախությունն ու ինքնուրույնությունը: Բայց արդեն V դարում հունական մանր պետությունների մասսայի մեջ բարձրացել էին երկու պետությունները և Սպարտան:

Աթենքում իշխանությունը պատկանում էր «Ժողովրդին», այսինքն՝ լիիրավ քաղաքացիների համայնքին: Բոլոր աստիճանավորներն ու պաշտոնատար անձններ, ընդհուպ մինչև բանտի վերակացուն և զորախմբի սետը, ընտրվում, վերընտրվում ու հսկողության էին ենթարկվում ժողովրդական ժողովում, որտեղ և սխտեմատիկաբար վերանայվում ու հստատվում էին բոլոր պետական օրենքներն ու որոշումները: Աթենացիների կարծիքով աթենական յուրաքանչյուր քաղաքացի պետք է ընդունակ լիներ պետությունը կառավարելու: Որևէ պաշտոնի ընտրելիս քվեարկության վերջնական ելքը մեծ մասամբ որոշվում էր վիճակ զբցելով: Սակայն իրականում պետական կարևորագույն պոստերը ամենաառնեոր քաղաքացիների ազգեցիկ ինտելիգենտական վերնախալի մոնոպոլիան էին: Քաղաքացիների մեջ, որպես կանոն, անդրագետներ չկային: Դեմոկրատական Աթենքում խոսքի անսահմանափակ աղատությունն էր տիրապետում, սերճախոսությունը կարեռագույն զործնական տաղանդ էր, իսկ Հռետորը աթենական գեմուկրատիայի ամենաչքնաղ գեմքն էր: V դարի կեսերին դառնալով հունաստանի խոչըրագույն առևտրական ու արդյունաբերական կենտրոնը, Աթենքը միաժամանակ դարձավ «Հելլադայի զպրոցը», հունական կրասիկ կուլտուրայի կենտրոնը: Գիտության, փիլիսոփայության, արվեստի ու գրականության բնագավառում երեք և ոչ մի տեղ և այդքան կարճ ժամանակամիջոցում այնքան բան չէր արվել, ինչքան արվեց Աթենքում V դարի կեսին:

Սակայն այդ «գիտության ու արվեստի տաճարը» հանգրվանած էր խախուտ ու անհուսայի հիմքի վրա: Աթենքի, ինչպես նաև Հունաստանի մյուս առաջափոր կենտրոնների գյուղացիներըն ու արհեստավորները ստրկային աշխատանքի մրցությանը դիմանալու ուժ չունենալով՝ ծախծնում էին իրենց վարելահողերը, մրգի ու խաղողի այգիները, քում էին իրենց զաղգյահները և մտնում էին պարագախտային լյումպեն-պրոլետարիատի մասսայի մեջ: Բնակչության ունեոր խավերը և պետությունն

ստիպված էին իրենց հաշվին պահելու այդ պարագիտային հոծմասան, որը աշխատանքը համարում էր պատ մարդկանց անվայել բան, սարուկների բաժին։ Սարկությունը ազատ մարդկանց մեջ սարկային վերաբերմունք էր առաջացրել դեպի աշխատանքը, որով ԱՎ դարի աթենացի արհեստավորն զբաղվում էր դառն զզվանքով, տիսուք անհրաժեշտությունից զրդված։ Կառավարման գործին, զատարանին մասնակցելը, բանակում կամ նավատորմում ծառայելը, թատրոն հաճախելը, նույնիսկ ժողովրդական ժամանակին հաճախելը— ամեն ինչ վարձատրվում էր հասուեկ զանձարելիքից։ Հարավի արեգակը սնունդի, հաղուտի, ոտնամանի ու բնակարանի ծախսերի մեջ ինայտություն անելու հնարավորություն էր տալիս, և պետական ու հասարակական նպաստները, դրամ բաշխելն ու բաժանելը շարքային աթենացուն հնարավորություն էին տալիս իր բյուջեի մեջ ծայրը ծայրին հասցնել։ Նրա միջոցները մի կերպ բավականացնում էին լրու, աղ զրած ձկան ու ձիթապաղի և մի քանի կում ջրախառն զինու ծախսերը հոգալու համար։ Այդ ամբողջ կիսաքաղց մասսան երազում էր «ոսկե դարը», երբ ամբողջ զույքը պիտի բաժանվեր բոլոր քաղաքացիների մեջ հավասար, և նրանք պիտի ժամանակին անց կացնեն հաճելի անդորրության մեջ, կերպությումի և սիրային զբարձությունների մեջ՝ ամբողջ աշխատանքը զցելով սարուկների ուսերին։

Վաղուց անցել էին Աթենքի այն ոսկե օրերը, երբ աթենացիք 200 պետությունների ծովային միության դրուխ էին կանգնած, պարագիտի ուես ապրում էին իրենց «դաշնակիցների» հաշվին և ձգտում էին տիրապետելու ամբողջ Հունաստանում։ Այժմ, ԱՎ դարի կեսերին, մի շարք ուազմական ծանր անհաջողություններից հետո, զաշնակիցներին ու թշնամիներին ճնշելու և նրանց հաշվին հարստանալու կարողություն չունենալով՝ Աթենքը չի պատփում տնտեսական, ֆինանսական ու քաղաքական մշտական ձևածանություն։

Դանդաղ, բայց անշեղորեն դեպի ցած է սահում այդ քարք, ապրելով վիառավոր անցյալի տոկոսներով, զեռևս մնալով իսոչոր արդյունաբերական ու կուլտուրական կենարոն, իր անցյալում ունենալով ամեն ինչ, իսկ առջեռում՝ ոչինչ։ ԱՎ դարի Աթենքը հենց աթենական մի հոետորի սահածի նման պետք է համեմատել ոչ թե իմաստության ուազմաշունչ աստվածուհի Աթենասի հետ, այլ մի զառամյալ պառատի հետ, որը կամացուկառությունն է թափառությունում է շրփացնելով իր հոգաթափերը և հատաքելով իմում է իր բռնիւթյունը միքստուրկաները (զեղահատերը)։

Դրությունն ամելի լավ չէ նաև արթատոկբառական Սպարտայում, «ճամբար-պետությունում», որտեղ նվաճողների— սպարտացիների ցեղը առաջացրել էր տերերի մի սակավաթիվ կաստա։ Ամբողջ նվաճված բնակչությունը սպարտացիների հա-

մայնքի կողմից ստրկացված էր և ամբացված իրենց սակալա-
թիվ տերերի հողամասերին։ Աղնվադարմ սպարտացուն արգել-
վում էր զրադվել աշխատանքով, արհեստով կամ առևտով,
նրա ամբողջ կյանքը նվիրված էր պատերազմին— պատերազմ
հարեանների հետ՝ պատերազմ ճորտ-հելոտների հետ, որոնք
խիստ շատ էին, և որոնց երրեմները եմն հարկ էր լինում բնա-
ջինջ անել։

Սպարտացիք միայն ամբակազմ և լով կառուցվածք ունե-
ցող երեխաններին էին կենդանի թողնում, թույլերին անդունեն
էին նետում։ Երեխաններին կիսաքաղց էին պահում, նրանք ամ-
բողջ տարին ժինույն հաղուստն էին հաղնում, ոտարորիկ էին
մնում, քնում էին եղեղյա կոչու խախիների վրա, կատարում է-
ին ամեն տեսակ աշխատանքներ։ Նրանց վարժեցնում էին ար-
ձանի բության, պատասխանների լակոնականության և անտը-
տունջ հնագանդության իրենցից մեծերին։ Նրանց թույլատրվում
էր դողություն անել, բայց արգելվում էր դողության մեջ
բոնվել։ Ամենաչնչին զանցանքների համար անչփառասներին
ծեծում էին աստվածութիւնների զոհաւեղանների առաջ և վար-
ժեցնում էին անտարբեր կերպով զիմանալ ցավերին։ Նրանց սո-
վորեցնում էին միայն խմբական երգեր, սրբափող նվազել,
սովորեցնում էին թվարանության ու զբության հիմունքները,
կոփում էին նրանց ուղղական վարժություններով, համակցե-
լով այն բաղմակողմանի Փիդիկական կուլտուրային։ Ի դուք չէ,
որ Սպարտան իր կուլտուրայով Հունաստանում վերջին տեղե-
րից մեկն էր բոնում, բայց դրա վիճարեն դաստիարակում էր
լավագույն մարտիկները Հունաստանում, որոնցից «փախչում
էին ինչպես ուրիշականից»։

Երկար ժամանակ անհնարին էր համարվում բաց դաշտում
սպարտական զինվորների խիս շարքին զիմարելլ, զինվոր-
ներ, որոնք սովորատակուու ատլետի պես հաստատուն ու չա-
փափոր քայլով, սրնդափողի նվազի տակ, սաղմաշունչ հիմն
երգելով, տոնական հաղուստներ հաղած պողպատե պատնեշի
նման հարձակում էին թշնամու վրա։ Սպարտացիք այնպես էին
վարժվել հաղթանակների, ով հաղթանակից հետո աստվածնե-
րին զոհաբերում էին միայն մի աքաղաղ, բայց «Ճամբար-պե-
տության» ամբողջ կարգը նվիրաբերված էր պատերազմի ա-
րյունություն աստծուն։

Գործածության մեջ էր միայն երկաթե դրամը, մահապատ-
ժի սպառնալիքով արգելված էր սոկի և արծաթ պահել։ Ե՛վ
արշակի ժամանակ, և՛ տանը, վրաններում ճաշում էին միայն
զինվորական ընկերություններով։ Նրանց աղղային ճաշը արյու-
նե ապուրն էր, որ առիթ էր տալիս հետեւյալ կատակին։ «Այս-
պիսի ապուր ուտող մարդկանց համար հետ է զնալ մահվանն
քնդառաջ»։ Կինն իր մարմինը, որպես ապագա մոր մարմին,

մարզում էր վաղքով, ըմբշամարտով, մարմնամարզությամբ, սկավառակ նետելով: Նա իրեն անկախ էր զգում և ազատ էր իր երեխաների հայր ընտրելու: Վախկոտությունը համարվում էր մեծաղույն արատ, որ համասարվում էր պետական հանցադործության: Սպարտայի ամբողջ պետական կարգը տողորված էր կանոնականությունի, հնության պաշտամունքով և թշնամական անվտանությամբ դեպի այն ամենը, ինչ որ սպարտական չէր:

IV դարի սկզբում 27-ամյա համառ պատերազմում, պար-սկների օգնությամբ ջախչախելով Աթենական ծովային պետությունը՝ Սպարտան գարձավ Հունաստանի դիմավորող պետությունը, որի առաջ դլուխ խոնարհեց ամբողջ Հելլագան: Հարս-տությունների ներհոսանքը, աղքեցիկ անձանց կաշառումը, շքեղության ներխուժումը սպարտական բարքերի մեջ, սպարտացիների համայնքների արագ քայլայումը, որոնց մի մասը կորց-րեց իր հողամասերը և քայլայինք, այդ «ստորացած», անի-րավահավասար սպարտացիների կատաղի պայքարը օլիմպարիֆա-կան վերնախաղի գեմ— սազմաշարիստոկրատական կարգերի այս ամբողջ նեխումը դրսեռորեց Սպարտայի ածող անզորությունը, նրա լիակատար անընդունակությունը տիրապետելու Հունաստանին: Սպարտայի կոնսերվատիվմը, որ զոյտություն ուներ նրա բանակի տակտիկայում, կազմակերպման ու սպատաղինման դում, միացուծ սպարտացիների կատայի ներքին նեխման հետ, 371 թվին Սպարտային հասցրեց ուազմական ջախչախման այն-պիսի չափի, որից նա այլևս երբեք ի վիճակի չեղավ ուշքի գա-լու: Առաջին անդամն էր, որ Սպարտայի կանայք թշնամու խա-րույկների ծուխ էին տեսնում իրենց քաղաքի մոտ: Սպարտան զրկվեց իր ամենաարդախմանդ, ամենասպողաբեր մարզից՝ Մես-սինիայից, «Հելլագայի այլուց» և շղթավից իր թերակղղու ա-մենահարավային մասը, որտեղ և իր վերջին օրերն էր ապրում հիվանդ ու անզոր:

IV դարի կեակին հունական ինչպես վեմոկրատական, այն-պես էլ օլիդարխիսական*) պետությունների մեծ մասում եռում էր դասակարգային կատաղի պայքար, որը տեղադրու սրվելով հասնում էր մինչև ցասումնալից քաղաքացիական կոփիների: Տնտեսական ու քաղաքական խոր զդնաժամը ցնցել էր ամբողջ երկիրը: Քայլայի դյուցացիությունը հսում էր քաղաքացիական բազմազար մասսայի մեջ: Պատերազմը դարձել էր խրոնիկա-կան վիճակ, խաղաղությունը՝ պատահական դադար: Բնակչության աղքատացած ու ցածացած տարրերը արկածների ու վա-

*) Օլիդարխիսական պետություններում կառավարում էր իշխանություններեց ձեռքն առած հարուստ մարդկանց՝ օլիդարխների մի խումբ:

յելքների տենչով տարված, փառքի ու ավարի հետեւց ընկած՝ պատրաստ էին իրենց մարմինը վաճառելու ամեն մեկին, ով ի վիճակի էր զնելու այն: Վարձկանները մորեխի նման ավերում էին երկերը, մասսայական հալածանքները, բոնադրավումներն ու մահապատճենները, քաղաքական հեղաշրջումները, որի ժամանակ հաղթողներն իրենց մեջ բաժանում էին պարտվածների ոչ միայն գույքը, այլ և կանանց ու հարճերին, այս ամենը միշտ միան փոխում էին սեփականատերերին, բայց չէին փոփոխում սեփականության ձևը: Ստրուկներն ավելի ու ամանը համախ էին ապստամբում, բայց ստրուկը ևս, պայքարելով պատության համար, երազում էր ինքը դառնայ ստրկատեր:

IV զարի աթենական հրապարակախոս Իսոկրատն ասում է՝ «Հարուսաններն ավելի շուտ պատրաստ են ծովը նետելու իրենց գույքը, քան թե տալ չքավորների ձեռքը»: Նույն իսոկրատն ասում է. «Հարուսատի անունը ունենալին ավելի վանդալոր է, քան հանցագործության մեջ կասկածվելը»: Խորտակվում էին հին կենցաղի, հին կրօնի, հին բարոյականության հիմքերը: Սովեստները, իմաստության թարխառաջները ուսուցեցները սովորեցնում էին «սեւ սպիտակ և սպիտակը սև դարձնելու» կարողություն: Նրանց ավերիչ քննադատությունը թթվուածի նման քայլքայում էր դարավոր հասարակական հիմքերն ու արագիցիաները: «Փողը մարդ է դարձնում», «Պատիվը հարստության հետեւց է դնում», «Եթե քո ունեցածը մի դրու է, ուրեմն քո վինն էլ մի դրու է» — այսպես են այդ դարի առաջները, երբ ըստ մի կոմեդիայի հերոսի խոսքերի ոսկով կարելի էր գնել «չիայն մարդկանց», այլ և աստվածներին:

Հունաստանը, երբ զետ ուժեղ էր, դալարվում էր ճղնաժամի ճանկերում և մեծ հույսով իր հայացքը դարձնում էր գեղի Արևելք, որտեղ ինքոսից մինչև նեղոս ու Սիր-Դարիա վաված էր պարսկական վիթխարի պետությունը:

V զարում արդեն հունական դաղութների հոսանքը լայն ալքով վավել էր ամբողջ Միջերկրական ծովում: Հայրենիքում տիրող քայլքայումը, քաղաքացիական կոփվները և աղջամիջյան սպատերազմները, հոգի ներվածքությունը ամենաձեռնութեցներին մղում էին «բախտ որոնելու ծովի այն կողմը»: Փյունիկեցիների հետքերով հույները ծայրից ծայր նավարկում էին Միջերկրական, Մարմարա ու Սև ծովերը, ձգուում էին նույնիսկ օվկիանոս, և ըստ որոշ տվյալների, հասնում էին Բրիտանիա ու Բալթիկա: Հունական դաղութները ծովափնյա երիդի պետ պատել էին ներկայիս Ֆրանսիայի, Իտալիայի, Իսպանիայի մարզերը, Աղրիատիկ ծովի ամերիս, ցրվել էին հյուսիս-աֆրիկական ծովափերին, Գոն, Բուդ և Դնեպր գետերի գետաբերաններում, Ընդկրկել էին նաև Ղրիմը: Փոքր Ամիայում այնքան հույներ կային, որքան բուն Հելլադայում: Առանձին համարձակ մարդիկ արդեն

Հասնում էին նաև կովկասի ափերին: Թարմ ուժերի անընդհատ հոսանքը նպաստում էր զաղութների արագ աճմանը: Թվում էր, թե հույները ցանկանում են բնակություն հաստատել ամբողջ աշխարհում:

Փյունիկան հզոր կարթաղենն Արեմուտքում, Պարսկաստանն Արեւելքում սահման դրին հույների տարածմանը և սկսեցին նրանց գուրս մզել իրենց բնակություն հաստատած վայրերից: Սակայն Հելլագան նվաճելու ուղղությամբ պարսկիների կատարած փորձերն անհաջող անցան և հույները, գիտակցելով իրենց կուլտուրական ու սաղմական գերազանցությունը պարսկիների համեմատությամբ, սկսեցին ձգնաժամից դուրս գալու միակ միջոցը համարել Պարսկաստանի նվաճումը: Հունական քաղաքներում լարված ուշադրությամբ են պատմությունները լլում պարսկական թագավորի անրափ հարստությունների մասին, Արեւելքի վիթխարի չքեզ քաղաքների մասին, Եղիպտոսի խորհրդավոր խմաստության և Բաբելոնի հրաշալիքների մասին: «Պատերազմը՝ վիտսարել Պարսկաստան, իսկ Պարսկաստանի հարստությունը՝ մեղ մոտ», — այս էր իսոկըատի տված լուգունդը:

Եվ ահա, Մակեդոնիայի լեռնաշղթաներում կուտակվում են այն աշակեր ամպերը, որոնք հետո սոսկալի վոթորկի նման անցնում են Ասիայի վրայով:

ՅԵՒՊ ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԲԱՆԱԿԻ

«Այդ բնագավառում հեղաշրջում էր կատարում հանձարեղ զորավարների ոչ թե «մոքեթ ազատ սահղծակործությունը», այլ՝ ափերի լավ գենք հնարելլ և բանակի կազմի մեջ փոփոխություն մտցնելու հանճարեղ զորագարների ազգեցությունը լավագույն գեղքում սահմանափակվում էր միայն պատերազմի եղանակը հարմարեցնելով նոր գենքին և նոր մարտիկներին»:

(Энгельс, Изданные военные произведения, т. I, стр. 2).

Մինչև Ֆելիպ թագավորը Հունաստանի պատմության մեջ Մակեդոնիան բավական անշան դեր էր խաղում: Հունաստանի հեռավոր հյուսիսի արդ մարզն իր անտեսական ու հասարակական զարգացման մակարդակով երկար ժամանակ սամենահետամաց մարզերից մեկն էր: Մակեդոնիան, որ բոլոր կողմերից շրջապատված էր լեռնաշղթաներով, ծովի մոտ սեղմած էր հունական զաղութների շղթայով և շարունակ ավերվում էր հա-

բնան թրակիայի ու իլլիրիայի բարբարոս ցեղերի ասպատակություններից, ամբողջ Վ գարում կուշ եկած մնաց պատմության հետավոր անկյունում: Բնակչության հիմնական զբագմունքներն էին՝ հողագործությունը, անասնապահությունը, ձկնորսությունը, անտառարդյունաբերությունը: Փայտը, խեժը, ձյութը արտահանության առարկաներ էին հանդիսանաւմ: Բնակչության հիմնական մասսան կազմում էր դյուզացիությունը, «րի մեջ դեռևս լիակատար համայնական հարաբերություններ դոյություն ունեին: Գյուղացիներն աղատ մարդիկ էին և դեռ տօհմային ավագանուց սորկական կախման մեջ չէին ընկել: Նրանք հողի ու անասնական մասսան կազմում էր դեռ մասը դեռ պահում էին իրենց ընտանիքների ու համայնքների ձեռքում: Սակայն տոհմային ավագանու վերնախավն արգեն իր ձեռքում էր կենտրոնացրել այնպիսի հողացին տարածություններ, որոնք Մակեդոնիայի պես փոքրիկ պետության համար կարող էին հսկայական համարվել:

Բարքերն աչքի էին ընկնում նախնադարյան դաժանությամբ ու պարզությամբ: Համաձայն Արիֆսատուկելի պատմածի՝ ով ոչ մի թշնամի չէր սպանել, պետք է զըներ գոտիկ տեղ պահուրց (նոխուա) կապած: Հարզանք էր վայելում միայն այն մարդը, որն ընդունակ էր թափելու թե՛ իր, թե՛ ուրիշի արյունը: Քաղաքացին կյանքը, առեւտուը, արգյունաբերությունը թույլ էին զարգացած: Մակեդոնիան դեռևս սորկության չէր հասել, ըստ բուկն այնտեղ պատահական ու հազվադյուն Փիդուրա էր:

Երկրում պահպանվել էր նախնադարյան «ռազմական միապետությունը»: Թափախորը, որ իշխաններից ամենահասակաւ վորն էր, միաժամանակ զինվորական առաջնորդ էր, զինամուր դասուակոր և բարձրագույն քուզմ: Սակայն թագավորական իշխանությունը որոշ ազգեցություն էր վայելում միայն Ստորին Մակեդոնիայի հարթավայրային մարզում, լեռնոտ Վերին Մակեդոնիայի բաղմաթիկ իշխաններն իրականում անկախ էին և թագավորի հետ ու իրար միշն անդադար կորիւներ մղելով, եռանդով պահպանում էին իրենց ինքնուրույնությունը: Թեսկու երկիրն իր ընակչության թիվով և տերիտորիայի չափով հստարյա թե առաջինն էր Հելլագայում, սակայն իշխանների միջնեղած ավերիչ պառակտումները, թագավորական իշխանության թուլությունը, բարբարոսների ներխուժումները, անտեսական ու կուլտուրական հետամնացությունը Մակեդոնիան դյուրին ձեռք դցելիք ավար էին զարձնում հարեւանների համար:

Վ զարի սկզբին Մակեդոնիան առանց գիմադրության որևէ փորձ անելու անձնատուք եղավ պարսից «մեծ արքային», որի մոտ մակեդոնական թագավորը մունեատիկի և թարգմանչի գեր կատարում: Հույները, իրենց ազատությունը պաշտպանելով էր կատարում: Հույները, իրենց ազատությունը պաշտպանելով պարսկական արշավանքներից, պարսկական լծից ազատեցին նաև Մակեդոնիան: Հունական քաղաքներն ազատուրեն իշտոնիւմ էին

Մակեղմնիայի ներքին դործերին և արյունահեղ ընդհարումներ էին բորբոքում թագավորական ընտանիքում ու իշխանական առհմերում :

Արդարութանքների արյունոս կծիկների պես թագավորական զահի աստիճաններին էին հյուսվում փառամոլությունը, դաժանությունն ու հետասիրությունը : Մայթը նենդարար սպանում է իր որդուն, որպեսզի թագավորական զահ բարձրացնի իր տարփածուին, ինամակալ հորեղբայրը նախապես խեղդում է իր եղբար որդիներին, մի որևէ բարելախտ անձնավորությունն հավակնելով թագավորական զահ բարձրանալ, իր ճանապարհից վերացնում է զահի ավելի օրինական թեկնածուներին, — և այս բոլորը իշխանության համար մզվող պայքարի սովորական երեցույթներ էին : Մակեղոնական թագավորներից շատերը լավ էին հասկանում, որ անհրաժեշտ է բոլոր ցեղերը միացնել մի միանական իշխանության տակ և աղաստ ելք նվաճել գեղի ծովը : Մինչեւ Ֆիլիպը ամենասաշքի ընկնող թագավորն էր եղել Վ դաւրի վերջերում ապրող Արքելայը, որն իրեն էր ենթարկել Վերբին Մակեղոնիայի մի շարք իշխանությունները, հունական օրինակով վերակազմել էր իր բանակը, իրախուսում էր առևտրի ու արդյունաբերության զարգացումը, ճանապարհներ ու ամրություններ էր կառուցել, իր պարագել, մարդկել էր ամրող Հյուսիսային Հունաստանի կուլտուրական կենտրոնը : Այդ հետահետ թագավորի վաղաժամ հարկադրական մահը չկարողացավ երկարժամանակով հետ պահել Մակեղոնիայի հետագա բարձրացումը :

Ի տարբերություն Աթենքի և Հունական մյուս առաջավոր պետությունների՝ Մակեղոնիան Ո գարում գանգում էր իր զարգացման վերասաց ճանապարհի վրա : Սարկությունը, հույն ժողովրդի արտակարգ ընդունակության հետ միավին, Հունաստանի առաջավոր պետություններին հնարավորություն էր ավել բարութիկ կուլտուրա ստեղծել, բայց այդ նույն ստրկությունը Հունաստանին մացրել էր տնտեսական, քաղաքական ու բարոյական այնպիսի փակուլու մեջ, որից գուրս գալու մէտել ելքը Հունաստանի լայլագույն մասնություն համարում էին պարսկական հարուստ միապետության նվաճումը : Հույներն ընդունակ էին Պարսկաստանը նվաճելու, բայց քայլքայլող Հունաստանն ի վիճակի չէր կարմակերպելու այդ նվաճումը : Մակեղոնիան, ուի բնակչությունը կազմված էր սաղմաներ ցեղերից, որը առատ բնական հաբստություններ ուներ, որն արագորեն զարգանում էր տնտեսապես ու կուլտուրապես, այդ Մակեղոնիան ամենաերիտասարդը, ամենասուժեղն էր Հելլալայի ստրկատիրական պետությունների մեջ : Նա դատավ նաև իր ինպետներին արժանի առաջնորդներ :

359 Թիվոց Մակեղոնիան կառավարել սկսեց Ֆիլիպը, որը զահից հեռացրեց իր անընդունակ եղբարորդուն : Ֆիլիպին ժա-

մանակակից պատմագիրը դրում է . «Ֆիլիպի նման մարդ ամբողջ Հելլագում չի եղել» : Ֆիլիպի բնավորության բնորոշ գըծերն էին՝ մտքի սրությունն ու պազությունը , կամքի ամբությունն ու ճկունությունը , մարդկանց ու մարդկային արատների ճանաչումը , նպատակի ու ձգտումների հաստատությունը և աղատությունն ամեն տեսակ բարոյական կապանքներից :


Հունատանում եղած ժամանակը նա օգտագործեց , որ յուրացնի Հելենական փայլուն կուլտուրայի արտաքին շուքը և ընդօրինակի ուղղմական տեխնիկայում հույների ձեռք բերած նըվաճումները : Գեղատեսիլության հաճելի դիմակի տակ , անբըռնազրությունիկ վերաբերմունքի , շարժուձեկի և խոսակցության ճկունության ու աշխուժության գիմակի տակ նա թաքցնում էր իր գիշտիչ ու խաղաղ արիության գիմակի տակ ինա թաքցնում էր իր գիշտիչ ու խաղաղ արիության գիմակի տակ ինա թաքցնում էր իր գիշտիչ բնության պատրաստակամությունը : Լինելով հսկոր , կատակաբան , սովիեստ , քուրմ , դերասան , մարտիկ , մուսաների բարեկամ , զինու և հետերաների սիրահար՝ Ֆիլիպն սկզբնական ըրջանում անուն հանեց ոչ այնքան իր արշավներով , որքան ինձնույքներով ու դիմարբութներով : Բայց , եթե չկար մի վայելք , որից նա խորչեր , ասպա չկար նաև մի գրկանք կամ դըմքարություն , որից նա վախենար : «Ոչ թե վայելքն էր տիրապետում նրան , այլ նա՛ էր տիրապետում վայելքին» :

Ֆիլիպը , անհրաժեշտության դեպքում կռվի մեջ մտնելով իր գորքերի առաջին չարքերում , բաղմէցս վերավորված լինելով և մի աչքից զրկված լինելով թշնամու ներից , ընդհարման եռուն պահերին երբեք չէր շփոթվում , պահպանում էր իր զգությունը , հայցքի դիմուվությունն ու ոգու տոկոնությունը : Այդ լավագույն զրարկարն ու իր ժամանակի դիմանագետն իր ամբողջ կյանքում անդադրում ամբապնդում էր իր բանակը : Իր երեկոի զինվորական ու Փորմի ընթացքում Ֆիլիպն օգտագործեց Հունաստանի ուղմական գործի բազմադարյան փորձը , որ երեք հիմնական էտապ էր անցել :

Առաջին էտապը հեռախոր անցյալի դործ էր , երբ ճակատամարտի բախտը վճռվում էր մետաղյա դրահ ու մարտակառք ունեցող նշանակոր ստածնորդների , «Հերոսների» մենամարտով : Հերոսների ժամանակ ցրված կռվում էին շարքային զինվորները , որոնք վատ էին զիմված և օժանդակ դեր էին խաղում :

Երկրորդ էտապը կապված էր ժողովրդական աշխարհազորի հշանակության աճման և տոհմական ավագանու տեսակարար կըուի անկման հետ՝ ստրկատիրական հասարակության ու պետության մեջ , մետաղուրդիքի պրոլետի հետ , տեխնիկայի ու կենցաղի մեջ լայն չափերով երկաթ գործածելու հետ , որը դեռ Կարում զնահատպում էր համարյա թե իր կըու չափ ոսկով , — վերջապես , լեռնու Հելլագյում մարտակառքերի դործա-

ծության սահմանափակումով։ Մարտական շարքի հիմքը կաղմում էր ֆալանգան — ծանրադեն, զրահապատ նիղակավորների՝ հոպլիտների մի քանի տողանութ անընդհատ ծավալուն շար-




Հոռնական մարտակառք

քը։ Ֆալանգան դեպի խորքը սովորաբար ունենում էր ոչ ամենի 6—8 տողանից։ Նա շարումում ու գրոհում էր միահամուռ ճակատով, առավելապես կույի մանելով հարթ վայրում, որը նըստասում էր ֆալանգայի մարտական շարքի և մարտական կարդերի պահպանմանը։

Հոռնական հոպլիտների խիտ ֆալանգաները, որոնց ուղեկցում էին պարսատարավորների ու աղեղնատվորների ջոկատները, շատ էին ջախջախել ու հետ՝ դեպի Ասիա շվարտել պարսից «մեծ արքայի» բազմաթիվ զորախմբերը։

Հոպլիտը ձախ ձեռքով վահանը բռնում էր նրա ներսի կողմի բռնակից, խոկ աջ ձեռքով նիզակն անց էր կացնում վահանի կարգածքի միջով։ Դրա համար էլ աջ թեսում, որ ամենախոցելի կողմն էր, կանգնեցնում էին ամենալավ, ամենաքաջ դիմուրներին, և սովորաբար լավագույն մաքստիկներից կազմված աջ թեր գերազանցում էր իր զիմաց կանգնած հակառակորդի ձախ թերին։ Կենտրոնում կանգնեցնում էին համեմատաբար վատ զինվորներին, և կոսի բախտը սովորաբար որոշում էր երկու

աջ թերերի ընդհարումը։ Այս էտապում հատուկ հոչակ էր վայելում սպարտական հոպլիտների ֆալանգան, հոպլիտներ, որոնք միաժամանակ և՛ քաղաքացիներ էին, և՛ դիմվորներ։



Սպարտական հոպլիտներ

Երրորդ էտապում վճռական նշանակությունը պատկանում է պրօֆեսիոնալ վարձկան բանակներին։ Վարձկանների ջոկատները, «որոնց մարմինը պատկանում էր նրանց, ովքեր առվելի լավ կվճարեին», աղատորեն վաճառվում ու գնվում էին իրենց զորավարների հետ միասին։ Վարձկանները, որոնք իրենց հեռավոր արշավներում զեկավարվում էին «պատերազմը կերպարում է պատերազմին» կանոնով, շահ ստանալու ոչ մի հնարավորություն բաց չէին թողնում և հաճախ իրենց բարեկածների համար թշնամուց էլ վատ էին դառնում։ Դրա փոխարեն վարձու բանակներում մենք տեսնում ենք դաժան դիսցիպլինա, չը բաժանատարության խիստ իերարխիա և նոր տակտիկա ու սպա-

ռապինություն: «Զինվորները պետք է իրենց առաջնորդից ավելի վախճանան, քան թշնամուց», — ստուգ էր այդ տիպի մի տկանալոր հրամանատար — Կլեարխը:

Խազմական արհեստի վարպետ աթենացի Իփիկը արատնանուր գործադրության մեջ դրեց նոր տիպի սպառապինում ու տակափիկա, այսպես կոչված՝ «պելտաստների», ինչպես առաջ կոչվում էին թրակիացիների ազգային զորքերը: Իփիկը առաջ պելտաստը պաշտպանված է թեթև թաղիքե մետաղապատ սաղավարտով, քայլանե զբանով, որ կոճկվում էր մի քանի շերտով, և «իփիկը արանի շերտով» — հաստ կաշվից սապողներով՝ մետաղե շերտերով: Նա կրում է «պելտա» — 2—3 կգ կշռող տախտակե փոքրիկ կլոր վահան, որը կաշվով է պատաժ: Իփիկը առաջ պելտաս-




Աթենական հոպլիտ

տի սպառապինումից ձեռքի նիղակը հանեց, թողնելով նրան թեթևե, նետելի տեղ, միաժամանակ պելտաստի ստուգերը երկարացրեց մինչև 1 մ: Այդ ունիվերուստ «միջին հետեակի» առավելությունը նրա թեթևությունն է, չարծունությունը և մանեգիւղու ունակությունը:

Իփիկը առաջը վերաբերեց նաև հոպլիտներին, որոնց սպառապինության ծանրությունը նա թեթևացրեց համարյա կրկնակի չափով: Ի հաշիվ դրահի ու վահանի ծանրության և վահանի ամրիչը երկու փոկե օղերով փոխարինելով, որոնք ձախ ձեռքի դաստակելը ազտուցին նիղակը բռնելու համար, նա զգալի չափով երկարացրեց հոպլիտների նիղակը: Իփիկը առաջ պելտա միաժամանակ ուժեղացնում էր պելտաստների պաշտպանունակությունը և հոպլիտների հարձակսղական ունակությունը: Նոր տիպի վարձու զորքերը նետերի ու տեղերի ամպերով քայլացրում էին հին ծանրաղեն ֆալանգաները, իրենց արագ մաներներով հյուծում էին հակառակորդին, իրենց երկար սրերով ու նիղակներով լրացնում էին նրա պարտությունը և առաջ համառությունը էին նրան, աշխատելով ոչնչացնել կամ գե-

Ծի վերցնել թշնամու ամբողջ կենդանի ուժը: Իֆիկրատն առաջին անգամ կորնթոսից ոչ հեռու ոչնչացրեց սպարտական 600 հովանականերից բազկացած մի ջոկատ, որոնք մինչ այդ լար դաշտում անպարտելի էին համարվում, և աստ, հետո էլ հաջողությամբ կրկնեց այլ փորձը: «Հարվածածների դպրույնը տարրածից ամբողջ հելլապայում»:Մի հարյուրամյակ առաջ հոպլիտները դերազանցեցին պարսիկներին, այժմ, IV դարում, վարձու պետաստները դերազանցում էին Սպարտայի հռչակված հոպլիտներին:




Հունական դինվորների սպասազնությունը

Թերեացի խամբնոնդը 371 թվին Լեվարիի մոտ ջախջախեց ամբողջ սպարտական բանակը, այն էլ թվապես նվազ ուժերով: «Եպամինոնդն առաջինն էր, որ բաց արեց ճակատում՝ զորքերն անհամաշավի դաստիորելու տակարիկական մեծ սկզբունքը՝ նպատակ ունենալով ուժերը կենտրոնացնել գնուական կետում գլխավոր հարվածը տալու համար» (Խոդելս): Նա մարտ էր մղում «շեղ շարքով», լավագույն ուժերը կենտրոնացնելով ոչ թե աջ թե ձախ, ինչպես արքում էր սովորաբար, այլ ձախում, որտեղ շարքում էին մինչև 50 տողան ղեպի խորքը: Այդ խորունկ «զորացյանը» ձեղքում էր թշնամու ուժեղագույն աջ թերը: Թերեացիների կենտրոնը և մանավանդ՝ ավելի թույլ աջ թերը, որոնք իրենց ձախ հարվածային թերի համեմատությամբ քաշված էին վնասում հետ և շեղ ուղղությամբ, թշնամու մարտական գծի՝ առաջ ցույց էին անում և մարտի մեջ էին մտնում միայն այն ժամանակ, երբ իրենց զիլիափոր ուժերը գնուական հարված էին հասցնում թշնամուն գնուական կետում: Դրա հետևանքով թերեացիք թշնամու ամելի ուժեղ թերը հաղթահարում էին ամելի շուտ, քան նա կհաղթահարեր իրենց թույլ թերը: Եպամինոնդը ստեղծեց զինուրների հատուկ ջոկատ, որոնք նախապես մահվան

էին դատապարտում իրենց, և այդ «սրբազն սաղմոնը» նրա դժի հենակետն էր:

Էպամինոնդն իր հաղթանակներով կործանեց Սպարտայի ռազմական հզորությունը և ընդմիջա ցրեց Սպարտայի անպարտելիության համբավը: Ֆիլիպը և նրա որդի Ալեքսանդրը Էպամինոնդի սկզբունքը կիրառեցին ավելի լավ, քան ինքը՝ Էպամինոնդը:

Հունաստանի ռազմական պատմության մեջ կարեւոր տարեթիվ է հանդիսանում նաև Հունական վարձկանների արշավանքը:




Հոպլիտների մարտը

Դեսի Ասիա, որ տեղի ունեցավ մոտ 400 թվին մ. թ. ա.: 13.000 հույն վարձկանները, որոնց պարսից թագաժառանդ Կյուրոսը հայտքազգի էր իր եղբոր դեմ դահի համար պատերազմելու նպատակով, Միջազգետքում, Կունակսի մոտ տեղի ունեցած գլխավոր ճակատամարտում հաղթանակ տարան իրենց թեում, սակայն Կյուրոսը կռվում ընկափ և նրա մնացած բոլոր զորքերը ցաք ու ցրիլ եղան: Հույների առաջնորդները բանակցությունների պատրիվակով ներզբավկլեցին թակարդի մեջ ու ոչնչացվեցին: Հույները նոր զորավարներ ընտրեցին և, անընդհատ կրիվներ մղելով պարսկական սատրապների դեմ, ծանր ճանապարհի գրկաներից հյուծվելով, Սսիայի խորքերից վերտպարձան Հելլան:

Հույները հարթ վայրերում կիրառում էին քառանկյունաձև

աղջումով պակասածից Ու



կառուցվածք, իսկ կտրոված, լեռնոտ տեղերում՝ շարժվում է-ին զորայուներով: Բայց երբ Անդրկովկասի լեռներում, որտեղ թշնամին կարող էր թաքնվել ու տեղափորվել բարձրաթիվ կիրճերում ու լեռնագողերում, նրանց ճանապարհը կտրեցին կուլիթացիք, հույներն ստիպված եղան անցնել նոր ձևի մարտակարգերի: Ամբողջ ջոկատը բաժանվեց 100-ական մարզուց բաղկացած առանձին «լոխոսների», որոնք այնքան մոտիկ էին իրար, որ կարող էին միմյանց օդնել, և այնքան հեռու էին իրարից, որ կարող էին բավականաչափ աղաս ու ինքնուրույն լինել իրենց շարժումների մեջ: Սակայն երթի ու մարտի այս ժամանակված ձևն իր զարդացումն ու կիրառումը գտավ միայն Հոսմի հոյակապ ուղղմական պատմության մեջ:

Ֆիլիպը հաշվի՝ առաջ անցյալի ամբողջ փորձը և այն հարմարեցրեց Մակեդոնիայի պայմաններին: Մակեդոնիայի ունենող գյուղացիությունը նրան տվեց մակեդոնական նշանավոր Փալանզայի զինվորներ: Ֆալանզիտը — հետևակն իր ողաշտպանողական սպառազինությամբ՝ իր զբահով, սպառազինով ու սըրունքականերով՝ չէր տարբերվում իիֆիլրատի հոպլիտից: Նեղակները, «սարհամները», շատ երկար էին — 3-ից մինչև 4 մետրը: Ֆալանզայի միայն առջևի շարքերը կարճ նկատկակ ունեին, իսկ հետեւ շարքերն իրենց նիզակները զնում էին առջևիների ուսերին: Նիզակի հարվածն ուժեղանում էր շարժման էներգիայով: Կարիական երկարավուն վահանը մարմինը ծածկում էր ամբողջ երկարությամբ, կարճ սուսերը ծառայում էր որպես պահեստի զենք: Ֆալանզիտը մենամարտի հարմարված չէր. նա կազմում էր մի մասնիկն ընդհանուր մասսայի, որի շարժումներն աչքի էին ընկնում միասնականությամբ, զգացրությամբ և վստահությամբ: Ամբողջ ծանրությունն ընկնում էր հոծ մասայի հարվածի մեխանիկական ուժի վրա: Ֆալանզան զեեպի խորքն ունենում էր 8—16, երբեմն նույնիսկ ավելի շարքեր:

Այդ ամբողջ ծանր հետևակը բաժանվում էր տակիսիների (գնդերի), սովորաբար ամեն մի տակսիսի զինվորները միեննույն վայրի ծնունդ էին լինում: Տակսիսում մեծ մասամբ լինում էր մոտ 1500 մարդ: Տակսիսը բաղկացած էր մի քանի սինտապմայից: Վերադասավորումը կատարվում էր ըստ սինտապմաների, որոնք ճակատի ու խորության ուղղությամբ ունենում էին 16-ական վահան, հետևասես, ընդամենը 256-ական մարդ: 16 սինտապման կազմում էին, այսպես կոչված, «փոքրիկ ֆալանզա», որ բաղկացած էր լինում 4096 մարդուց: Չորս փոքր ֆալանզան կազմում էին «մեծ ֆալանզա», որ ունենում էր ավելի քան 16.000 մարդ: Մարտի մեջ մեծ ֆալանզան դորձում էր մի քան 16.000 մարդ: Մարտի մեջ մեծ ֆալանզան զինվորը շուրջ զալ չէր կարող:

Այդ խիտ ու փակ ուղղանկյան մեջ զինվորները կանդնում


էին ուսուուսի, առջեկի շարքերի սարկասաճերը ճակատի դժիգ առաջ մղելով մահաբեր հաճախակի հարվածներով, ծածկվելով իւրենց վահաններով և ահեղաբար ցցելով իրենց նիղակների անտառը: Երկու հարյուր տարի անց՝ հռոմեական մի հայտնի զորավար խոստովանում էր, որ ինքը չի տեսել ավելի զարհութելիք բան, քան այդպիսի շարժվող ամրոցների ճակատային հարվածը: Մակեդոնական ֆալանգան հունականից շատ ավելի խոր էր, խիստ, մասսիվ ու անթափանցելի, բայց դրա փոխարեն ավելի քիչ շարժուն էր, իր շարքը ճեղվելու կամ թիկունքից ու թիեց հարված ստանալու դեպքում ամելի անզոր էր: Ֆալանգան կտրտված վայրերում վերադասավորվել և մաներել կարող էր մխան մեծ դժվարությամբ: Վերելքների ու վարէջների ժամանակ ֆալանգայի կարդը հեշտությամբ էր քանդվում, իսկ թէերն ու թիկունքը ամենախոցելի տեղերն էին, որոնք հարկ էր լինում պաշտպանել թեթևաղեն հետեւակի ու հեծելազորի մասերով:

Թեթև հեծելազոր տալիս էին գլխավորապես իլլիրիական և թրակիական ցեղերը: Այդ հեծելազորն օգտագործվում էր հետախուզության, թեն ու թիկունքը պաշտպանելու, թռուցիկ ընդհարումների ու հարձակումների, երթը և գլխավոր ուժերի ծավալումն ապահովելու, վերջապես, դարաններից հանկարծակի զրոհներ տալու և թշնամուն հետապնդելու համար: Այդ թեթև հեծելազորն իր փոքրամարմին, բայց արագավաղ ու դժմացկուն ձիերով մակեդոնացիներին շատ էական ծառայություններ էր մատուցում: Ֆիլիպը պահան չափով չկարողացաւ օգտագործել նաև օտարերկրյա թեթև հետևակը: Ֆիլիպին ընտիր նիղականեներ էր տալիս սահմանային ադրիանների ցեղը, իսկ ընտիր աղեղնավորներ Մակեդոնիային տալիս էր կրետե կղզին:

Բացի ֆալանգիաներից, թագավորն ուներ նաև պրոՓեսիոնալ տիպի մշտական զորք—հիպասպիտոնների կորպուս: Հիպասպիստի պաշտպանական գենքն էր քաթանե զրահը, թեթև վահանը, սաղավարտը, իփիկրատիկները — այնպիսին, ինչպիսին ունեին պելտասանները: Նրանց նիղակն ավելի կարճ էր, քան ֆալանգիաներինը, իսկ սուսերն ամելի երկար էր: Հիպասպիտը, լինելով ճարպիկ սուսերամարտիկ, հիանալի մարզիկ, կռվի մեջ արագաշարժ ու ճկուն, հավասար հաջողությամբ ընդունակ էր կռվելու ինչպիս մխանակ, այնպես էլ շարքի մեջ: Հիպասպիստաների կորպուսը, որի մի մասը կազմում էր թագավորական հետևակ դվարդիան, կատարյալ կերպով կատարում էր ամեն տեսակ մաներներ ու վերադասավորում և հանդիսանում էր զորավարի հնազանդ ու ճկուն զենքը:

Հեծելազորի կորիզն էր «է թ ե ր ն ե ր ի» (հեթերների), այսինքն՝ թագավորի «ընկերների» ծանր հեծելազորը: Նբանք նստում էին թեսալիայի ու Մակեդոնիայի հյութալի մարդագե-


ալիններում աճեցրած զորեղ ձիերի վրա, պաշտպանված էին սաղավարտներով, վզնոցներով, օդազրահներով, ուսակալներով ու սրունքակալներով, զինված էին նիզակներով, որոնք պիտանի էին ոչ միայն ձեռնամարտի, այլև և նետելու համար, ունեին սուսերներ և հպարտ էին իրենց աղնվատոհմ ծագումով ու թաղավորին մոտիկությամբ։ Թագավորն այդ «զրահապատ հեծյալներին» հանձնարարում էր հիմնական հարվածը տալ թշնամուն։ Այդ ժամանակ հեծյալը չուներ ոչ թամր, ոչ ասպանդակներ, չէին զործածվում նաև պայտեր, ձիավորը նստում էր ամուր կերպով ձիու վրա քաշած տապակին։ Էթերը հիմնալիւրին տիրապետում էր իր ձիուն և իր զենքին, թշնամու հեծելագորը երբեք չէր դիմանում էթերների մասսայական հարվածին, որոնք համարձակորեն զբոհում էին նաև հետևակի վրա։ Յուրաքանչյուր «իլայի» (էսկադրանի) ձիավորները սովորաբար միևնույն վայրի ծնունգ էին լինում։



Հունական հեծյալ


Ինչպես որ հույները կանոնավոր հետևազոր էին ստեղծել, այնպես էլ մակեդոնացիք ստեղծել էին կանոնավոր հեծելազոր։ Մինչև Ֆիլիպը հեծելազորը զորքի օժանդակ ու երկրորդական տեսակն էր։ Հունական մի քանի պետությունների բանակներում ձի էին նստեցնում ամենավատ զինվորներին, ուրիշ զելքերում հեծելազորը սուրհանդակի ու տրանսպորտի պարտականություններ էր կատարում։ Հունական ոչ մի զորքի մեջ մինչև Ֆիլիպը

այնքան մեծաթիվ հեծելազոր չկար և եղածն էլ այնքան կարե-
վոր գեր չէր խաղում, բացի, թերևս, մարզադետիններով ու
արտօններով հարուստ թեսալիայից, բայց թեսալական հեծելա-
զորը ևս Ֆիլիպը կարմակերպեց մակեդոնական ճեղով և սափ-
ուղից ծառայել իրեն։ Հունական հեծելազորը վատ էր ձի քշում,
զրոհի էր զիմում վարդով և համարյա երբեք հետեւակի վրա



Կառապուտա

չէր գրոհում։ Հունական ձիերը երկար ժամանակ շատ ավելի
վատն էին ասխականներից— պարսկական ու արաբական ձիե-
րից։ Ֆիլիպն անդադար հող էր տանում լավացնելու իրենց ձիե-
րի ցեղը՝ զուգավորելով նրանց Արքաթայի, Իրանի և Փոքր Ա-
սիայի լավագույն ցեղերի հետ։ Հին դարերի պատմադրի վկա-
յությամբ Ֆիլիպը Մակեդոնիայի ձիերի ջոկերին է բաժանել
ակյութացներից խլված 20.000 հատ աղնվարյուն դամբիկ։




Բալիստա

Մակեդոնական հեծելազորը գրոհի էր զիմում սրաբշավ ա-
ռաղությամբ, հակառակորդի զիծը ճեղքելու հստար կիրառելով

Հեղանկյունաձև դասավորում : Այդ իր ժամանակաշրջանի լավագույն հեծելազորն էր, որ երկար դարեր անհասանելի օրինակի համբավ էր պահում :

Մակեդոնական թեթև հեծելազորին էին պատկանում սարսաններով զինված «սարսաստֆորների» «իլաները», որոնք այսպես կոչված՝ «սլորդբոմների», այսինքն՝ հետախույզների ծառայություն էին կատարում : XIX դարի թեթև հեծելազորի այդ նախատիպի կողքին պետք է հիշատակել այսպես կոչված՝ «գիմափոսների» միջին հեծելազորը, որոնք պետք է կարողանացին ծիերից իշնելով կովել նաև հետեւակ շարքով . դա հետազոյի դրադունների նախատիպն է :

Ֆիլիպն առաջնո՞ն էր Հելլակայում, որ ըստ արժանվույն գնահատեց նետող գործիքների դերը, ինչպիսիք էին կատապուլ-



Ձինանոց Պերգամում III դարում մ. թ. ա. Գոտնված է 894 ոռուք,
որոնց մեջ կան 73 կիլոդրամ կշիռ ունեցողներ

տան ու բալլաստան և զանազան պաշարողական միջոցները : Հելլակայի հույները դեռևս մեր թվականությունից առաջ V դարում իրենց պաշարած քաղաքները գրավում էին ուժասովառ անելով : Ֆիլիպն սկսեց քաղաքները գրավել գրոհներով : Պարիսպները ճեղքում էին բարաններով, շղթաներից կախված ծանր դերաններով, որոնց ծայրերին երկաթե ծայրոցներ էին լինում, պարիսպների ու աշտարակների տակը փորում էին, պաշարողա-

կան աշխատանքները պաշտպանելու և քաղաքի պարիսպները «մաքրելու» համար քաղաքին մոռեցնում էին զբոհային աշտարակներ, գործազրում էին զանազան տեսակի շարժական ծածկեր, վահանածածկ «կրիաներ» և այլն:

Կարթաղենացիք առաջին անգամ Սիցիլիայում գործադրեցին այսպիսի մեքենաներ, որոնք մեծ հեռավորության վրա և մեծ ուժով նետում էին նետեր, քարեր ու կապարե գնդեր: Փոքր չափսի կատարությամբ նետը հեշտությամբ ծակում էր ամուլ դրահը: Ֆիլիպի ժամանակ այդ յուրատեսակ «նետող հրետանին» գործածվում էր պաշտպան գեպքում, իսկ նրա որդի Արլեքսանդրի օրոք գործածվում էր նաև նույնանման «դաշտային հրետանի», որտեղ գործիքը գործողության մեջ էր դրվում ձգման պարաների առաձգականության կամ լծակների հատուել կոմըինացիայի միջոցով: Ֆիլիպի բանակում կային հիմնայի ինժեներներ, որոնք կարողանում էին կամուրջներ դցել, պարիսպների տակը գորոշել, ավելի նպատակահարմար ձևով օգտագործել մակեղղնական բանակի տեխնիկական միջոցները: Ֆիլիպի բանակը և՛ տեխնիկական, և՛ տակտիկական, և՛ կազմակերպչական տեսակետից իր ժամանակի առաջտիր բանակն էր:

Բանակը ծանրաբենող գումարի թեթևացվեց և մասամբ ուշնչացվեց: Յուրաքանչյուր ձիավորի թույլատրված էր ունենալ մշայն մեկ ձիապան: Բանակում ոչ մի ավելորդ բան չպետք է լիներ: Ֆիլիպի բանակի կարևոր առավելությունն այն էր, որ նրա կորիզը կազմում էր մակեղղնական միացեղ տարրը. կողք-կողքի կովում էին միենալուն վայրի և միենալուն համայնքի մարդիկ:

Չորքերը կովկում էին պատերազմի անփոխարինելի դրազ-ըցում, իսկ կարճատև զաղարների ընթացքում անլնդհատվարժություններ էին անում ու կատարելագործվում: Նույնիսկ քաղաքացիական աշխարհազորն իր մարտական պատրաստությամբ կանոնեց պրոֆեսիոնալ վարձու բանակների մակարդակի վրա: Ֆիլիպն իր մոտ սիրով ծառայության էր վերցնում բոլոր ընդունակ մարդկանց, քիչ նշանակություն տալով նրանց տեղական ու տուժմային ծագմանը:

Թագավորի հետ միասին բազմաթիվ արշավանքներում անձում ու կովկում էին նրա գորապետները, որոնցից ամենաականավորն ու փորձվածն էր Պարմենիոնը: Բայց թագավորի հատուկ վստահությունն էր վայելում Անտիպատրը: «Ես քննել էի, որովհետեւ Անտիպատրն արթուն էր», — ասում էր թագավորը: Ֆիլիպի ստրատեգիայի ու տակտիկայի հիմնական սկզբունքներն էին՝ վճռականությունը, անակնկալի բերելը, արտադրությամբ, զենքի բռնոր տեսակների կոմբինացված գործողությունը, վայրի չնորհալի օգտագործումը և համառությունը հետապնդումների ժամանակ: Ֆիլիպի համար թշնամու փախուստը միայն առաջն

քայլն էր նրա լիտկատար ոչնչացման ճանապարհին : Մակեդոնարկան բանակն ընդունակ էր արշավիլու ամեն ժամանակ և ամեն տարածության վրա :

Մակեդոնիայի ռազմական հղորությունը, ինչպես Ֆիլիպի ժամանակակից հռետորն է անում, նրա քաղաքական հաջողությունների հետ միասին աճում էր «ինչպես հրզեհ», և այդ հրդեհի ծխի մեջ խեղդվեց հունական գեմոկրատիայի աղատությունը :

ՄՍԱԿԵԴՈՆԻՅԱՆԻ ՌԱՐՉՐԱՅՈՒՄԸ

Ֆիլիպի թագավորության առաջին տարիներն անցան սահմանակից թրակիական ու իլլիրիական ցեղերի վեմ մզած պատերազմներում : Այդ ցեղերը Ֆիլիպից ստացած մի շաբթ արյունահեղ զասերից հետո համոզվեցին, որ իրենց համար ձեռնոտու է պատերազմել ոչ թե Ֆիլիպի վեմ, այլ նրա հետ միասին : Դեռևս աճման փուլի մեջ դառնվող իր բանակը ուժեղացնելով հարեւան ցեղերի թեթելաղեն ջոկատներով, վարպետորեն օդապործելով Հելլագայի բաժան-բաժան լինելը և նրա առաջատար պետությունների շահերի հակասությունները՝ Ֆիլիպը նըղածեց Պիտինան, Մեթոնը և մակեդոնական ծովափի այլ հունական նախահանգստային քաղաքներ, որով իր համար ելք բացեց գելի ծովը : Այդ նույն տարիներին նա իր իշխանության տակ միավորեց ամբողջ Մակեդոնիան, քաղաքական ինքնուրույնությունից դրկեց Վերին Մակեդոնիայի իշխանություններին և ամբողջ մակեդոնական ավագանին դրավեց իր արքունիքը : Այդ ավագանու օգնությամբ, որը ղեկավար դիրք էր դրավում արդ քունիքում ու բանակում, նա վերակառուցեց իր զորքերը, զրավեց Պանդեյի ոսկեհանքերը և այլ մարզում մակեդոնական վինդորական գաղութներ հիմնելով իր համար ապահովեց տարեկան 1000 տաղանդ եկամուտը (տաղանդը մոտ 2.000 ռուբլի է սուկով) : Երկրի տնտեսական արագ դարձացումը և Պանդեյի մարզի նվաճումը Ֆիլիպին դրվեցին կտրել ոսկե զրամ «Փիլիպիկ» :

Միացյալ, ուժեղ ու հարուստ Մակեդոնիան այժմ իր քաղաքականության մեջ պաշտպանությունից անցնում է հարձակման և ինքն է սկսում ակտով իրեն խառնվել Հելլագայի զործերին : Ֆիլիպը Հունաստանը նվաճել է սկսում ոչ միայն երկաթուլ, այլ և ոսկով, ոչ միայն արտաքուստ, այլ և ներքուստ : IV դարի 40-ական թվականների հունական քաղաքականության պղտոր չի մեջ նա ծղտում է իր զործակալության լայն ցանցով որսալ բոլոր շատ թե քիչ կարևոր քաղաքների աղեցիկ զործիչներին : «Զիա քաղաքի այնպիսի բարձր ու զիք պարիսպ,

որի վրայով չկարողանա անցնել ոսկի բարձած է ըստ՝ այս է դառնում նրա քաղաքականության նշանաբանը, քաղաքականություն, որը վերամբարձ խոսքերով քողարկում է ստոր գործերը և բարձր նպատակներով կեղուոտ ձգտումները:

Դեֆիլի սրբադան տաճարի պաշտպանության պատրիակով, որ կողոպտել էին թոկիզացիք, նաև խառնվում է Միջն Հռուսաստանի գործերին: Հարուստ թոկիզացիների վարձած ընտիր բանակը մի շարք արյունահեղ դասեր է տալիս մակեդոնացուն: Այդ դասերի վոխարեն թեսալիայի կրոկուսյան դաշտում նահատուցում է վարձու բանակի ջախջախումով, որից հետո մի քանի հազար զերի վարձականներ լցվում են ծովը, իսկ նրանց առաջնորդները իրացնում են: Ամբողջ Հռուսաստանը նրա հաջողություններից վախեցած՝ ոտքի է կանգնում նրա դեմ: Ֆիլիպը հեռանում է Միջն Հռուսաստանից, բայց զրավում է Թեսաւիան, իր բանակն ուժեղացնում է թեսաւական ընտիր հեծելադրություն, իր եկամուտներն ավելացնում է թեսաւական նախահանդիսաներից ստացվող մաքսերով, ապահովում է իրեն արդ հարուստ մարդից ստացվող հացով, անաստաններով ու ձիերով: Նրա ուժերն աճում են, Մակեդոնիան, վերջապես, առաջավոր դիրք է զրավում, բոլոր քաղաքներում ստեղծվում են Մակեդոնիայի կողմանակիցների ու հակառակորդների պարտիաներ, նրա գործողություններին հետևում են շարունակ աճող հիացմունքով, համակրանքով, կամ թշնամական տալնապով: Մակեդոնասիրական ու հակամակեդոնական պարտիաների պայքարն առանձնապես սուր բնույթ է ստանում Աթենքում:

Աթենքը զեռևս մնում էր որպես Հելլադայի առևտրա-արդյունաբերական կենտրոն: Աթենքի նախատորմիզը 300 նավ ուներ, նրա միջոցները նշանակալից էին, պահանջները՝ անհամեմատ ավելի: Հակամակեդոնական պարտիան զլխավորում էին զենքի արհեստանոցների տերերը, առևտրականներն ու արդյունաբերողները, որոնք շահագրգուված էին, որ Աթենքը տիրապետի նեղուցների (Բոսֆորի և Դարձանելի) դեպի Սև ծովը տանող ծովային առևտրական ճանապարհներին, որոնց ավելի ու ավելի էր մոտենում վտանգավոր մակեդոնացին: Գործադրուրկ ու աղքատ մարդկանց մասսան, որի համար դեմոկրատիան ստամբուլի հարց էր, նույնական հավաքում է հակամակեդոնական պարտիայի զբոշների տակ:

Այդ պարտիայի ճանաչված առաջնորդն է դառնում Դեմոսթենը՝ պրօֆեսիալ փաստաբան, բոլոր ժամանակների մեծագույն հռոմեական մեկը, որի անունը պերճախոսության սիմվոլ է զարձել: Դեմոսթենի ծրագիրը բարդ չէ. Աթենքը պետք է սպառագինվի, իր չուրջը համախմբի ամբողջ Հռուսաստանը, ու չընչացնի Մակեդոնիայի հզորությունը և վերականգնի Աթենքը՝ փառավոր անցյալը, որ մի ժամանակ ամբողջ Հելլադայի գլուխ

Էր կանդնած : Ֆիլիպը գառնում է նրա բուռն պերճախոսության դվիսավոր նշանակետը, նրա «Փիլիպիկը» : Դեմութենն անում է այն ամենը, ինչ որ կարելի է անել խոսքով : Թող արագան նրա դեմ լինի, թող նա ստիպված լինի իր ամբողջ կրանքում ովենչնել ու պաշտպանել մի գործ, որը կործանման է դատապարտված : Նա ինչոք առպիկ է, այնպես էլ կմեռնի որպես մակեդոնական թագավորի անհաշա թշնամի, նրան կաշառել չի կարելի նույնիսկ Մակեդոնիայի ամբողջ ոսկով :

Սակայն Աթենքի ստրկատերերի ունեոր խավերի մեծ մասի համար նրանց սեփական ժողովուրդը, որ ձեռք էր բարձրացնում նրանց սեփականության վրա, դվիսավոր չարիքն էր, այն տանջող խոցը, որը թերևս միայն Ֆիլիպը կիարողանար բուժել իր հաղթական զենքով : Այդ մարդիկ, որոնք «Թշնամիներից ամենի քիչ են վախենում, քան իրենց սեփական քաղաքացիներից», պատրաստ են երկու ձեռքով ստորագրելու իսուլրատի ծրադրի տակ, իսուլրատի, որը երևելի ստիլիստ էր . ու ականավոր հրապարակախոս, որի պատղամները կարգում է ամբողջ Հունաստանը : Իսուլրատը Հելլադայի վրկությունը համարում է նրա համարիմբիլը մի ուժեղ իշխանության չուրջը, որը կհնագնանդեցներ գեմոկրատական քաղաքների անհաղանդ, խուլվար ստորին խամփերը և ամբողջ Հունաստանը կտաներ նվաճելու Պարսկաստանը : Նա իր դրություններով հերթով դիմեց Սպարտայի թագավոր Արքիլամին, հարուստ Սիցիլիայի տերերին, Յասոն Թեսալացուն, բայց այդ բոլոր գործիչներն ասպարեզից հեռացան՝ չկարողանալով Հելլադան խաղաղեցնողի և Արևելքը նվաճողի գեր խաղալ : Իր հարյուրամյա կյանքի վերջում միայն նա հանձինս Ֆիլիպի դատի այն մարդուն, որին որոնում էր իր ամբողջ կյանքում : Եվ ահա, իսուլրատն ի գեմս Ֆիլիպի ողջունում է «Մակեդոնիայի թագավորին, Հունաստանի բարերարդին և բարբարոսների տիրակալին» : Իսուլրատը Ֆիլիպին գրում է . «Ամբողջ մարդկային ցեղը չնորհակալ կլինի քեզանից, եթե դու հելլեններին աղատես բարբարոսական զեսպոտիզմից, որից հետո բոլոր մարդկանց կերծանկացնես հելլենական կուլտուրայով» :

Ամբողջ Հունաստանը լրում է Դեմութենին, բայց ամբողջ Հունաստանը կարգում է նաև իսուլրատին, իսկ իսուլրատն Աթենքում ևս ունի բազմաթիվ կողմնակիցներ, հետեւրդներ և աշակերտներ, որոնց համակրանքը գեղի Մակեդոնիան և հավասը գեղի նրա թագավորի անշահախնդրությունն է՛լ ամփելի ուժեղանում է Ֆիլիպի ոսկիների գորությամբ : Աթենքում մակեդոնասիրական պարտիային են պատկանում փայլուն, հռչակված հռետոր Քսքինեսը, հռետոր Դեմադը, որ բնածին հռետորական չնորհքով չեր զիջում, ինչպես ասում են, նույնիսկ Դեմութենին, աթենական լավագույն զորավար Թոկիոները և շատ


ուրիշները, որոնք ջանում էին իրենց չնորհալի ու պայծառ ճառերով խլացնել Դիմութենի հզոր ձայնը:

Իսկ այդ ժամանակ Ֆիլիպը հաջողությունից հաջողություն է գնում, չհարբելով իր հաղթանակներով և չողնելով ժամանակավոր անհաջողություններից: Նա բազմաթիվ հունական քաղաքներ է գրավում Ավլիկա թերակղզու վրա ու Թրակիական ծովափին և ավելում է նրանց միջի գլխավոր քաղաքը՝ Հարուստ Օլիմբը: Նա ավելի ու ավելի վատահորեն է ձեռք մեկնում գեղի Սև ծովի նեղուցները, որոնցով Աթենքն ստանում էր հաց, ձուկ, սարուկներ, անսաստներ: Նա նավատորմ է կառուցում և նրա նավերը, համարձակ հարձակումներ գործելով, ներխուժում են նույնիսկ Աթենքի նավահանդիսատը: Թերելի հետդաշնակցած՝ նա վերջնականապես բնաջնջում է Թոկիութական բանալի և գաման գատաստան տեսնում թշվատ Թոկիութայի հետ:

Իսկ Աթենքում գործում են դանդաղ, անվճռական, երկչու, միշտ ուշացումով, և Դեմոսթենի քաղաքականությունը դեմ է առնում Ֆիլիպի կողմնակիցների հասաղի դիմադրությանը: Այսուամենայնիվ միայն Դեմոսթենին, նրա բուռն ու բոցավառ կամքին, նրա հուետրական հրավառ հանճարին են պարտական երենց իրկությամբ նեղուցների մոտ գտնիող քաղաքները՝ Բյուզանդիոնը (այժմ Կոստանտինոպոլիս) և Պերինթը, որոնք 340 թվին պաշարվել էին Ֆիլիպի կողմից: Այդ լավ ամբացված և համառորեն դիմադրող քաղաքներին համարյա միաժամանակ օդնության հասան և՛ Աթենքից, և՛ պարսկական սատրապների կողմից ուղարկված օժանդակ ուժերը: Ֆիլիպի նահանջը հակածակեղոնական պարտիան ցնծությամբ դիմավորեց: Բայց Ֆիլիպը, նահանջելով, պատրաստվեց ամելի վանդալովր թոիչքի: Հաջորդ տարին աստվածների իրավունքի համար «սրբազն պատերազմ» մղելու պատրվակով նա հանկարծակի ներխուժեց Միջին Հունաստան և գրավեց այն կարևոր կետերը, որոնք նրա համար ճանապարհ էին բացում գեղի Հելլակայի բոլոր խոչընակությունները:

Այս անդամ Դեմոսթենին հաջողվեց Ֆիլիպի դեմ ոտքի հանել համարյա ամբողջ Հունաստանը՝ Թերելի ու Աթենքի գլխացվորությամբ, որոնք առաջ թշնամության մեջ էին իրար հետ: Դաշնակիցները որոշ հաջողություններ ունեցան, Ֆիլիպը լարեց բոլոր ուժերը: 338 թվի ամառը Թերելից ոչ հեռու, Քերոնե փոքրիկ քաղաքի մոտ վճռական ճակատամարտ տեղի ունեցավ Քակեղոնացիների և Հույների միջև, ըստ որում, յուրաքանչյուր կողմից կովին մասնակցում էին մոտ 30.000 մարդ: Դաշնակիցների բանակում, բացի քաղաքացիական աշխարհագործից, կային նաև վարձու զորամասեր: Ճակատամարտը համար էր և արյունահեղ: Աթենացիք, որ կանգնած էին հույների ձախ թեռում, հետ շղթացին աջ թևը, որի հրամանատարն ինքը՝

Ֆիլիպն էր : Ասում են, թե Ֆիլիպը դիտելով, որ աթենացիներն առաջ շարժվելիս նրանց շարքերը քանդվում են, ասաց . «Թշնամին հաղթել չեւ կարողանում» : Մինչ այդ, Ֆիլիպի որդի Ա-



Հունական նավեր (արիելներ)

լեքսանդրը, որ ձախ թևի հրամանատարն էր, ծանր հեծելազուրի գլուխ անցած մի շարք կատաղի զրոհներով ջախջախեց թերեացիների գիմապրությունը, զլինովին բնաջնջելով՝ նրանց «սրբազն սաղմոնը», թերեացիներին փախտատի մատնեց և թևից հարված տալով՝ հույսների կենարսնը չուռ տվեց նրանց աթենական թևի վրա, որի շարքերն իրար խառնվեցին և խառնիխուռն փախտան կովի դաշտից : Դաշնակիցները սոսկալի կորուատ ունեցան և բաց ճակատամարտում հաղթելու բոլոր հույսները կորցրին :

Քերոնիից հետո հունական քաղաքներն իրար հետեից անձնատուր եղան՝ ընդունելով հաղթողի պայմանները : Ֆիլիպը պարտվածների նկատմամբ չափավորություն ու տակտ ցուցաբերեց, քանի որ մտադիր էր կարձ ժամանակից հետո նրանց գլուխ անցած հաղթել պարսիկներին : Աթենքի հետ, որի նախատրոմիցի կարիքն ուներ պարսիկների դեմ պատերազմելու համար, նա առանձնապես զիջողաբար վարվեց և նրան տվեց թերեական Օրոսի քաղաքը : Նա կարծես թե «գերազառում էր երկար ժամանակ չելլաղայի սիրելին լինել, քան թե կարձ ժամանակով նրան

տիրակալը լինել» : Քերոնելից հետո մի աթենացի ասել է . «Եթե մենք հաղթենք, մենք բոլորս կորած էինք», և այս խոսքերը պերճախոս կերպով ցույց են տալիս ունենար խավերի հմտնական մասի տրամադրությունը :

338 Թվի վերջնին Կորնթոսում մի համագումար հրավիրվեց, որին ներկա էին բոլոր հունական պետությունների ներկայացուցիչները, բացի Սպարտայից : Այդ համագումարում ազգաւրաքեց «բոլոր հունական պետությունների ազատություն ու անկախություն, նրանց միջև հարաբերությունների ու ծովագնացության ազատություն և խաղաղություն ու անվտանգություն ամբողջ Հելլադայում» : Յուրաքանչյուր պետություն պետք է իր ներկայացուցիչներն ուղարկեր գաշնակցային խորհուրդ, որի խնդիրներն էին՝ պաշտպանել սեփականությունը, դոյլություն ունեցող պետական կարգերը պահպանել և աջակցել Մակեդոնիայի նվաճողական պլաններին՝ Աքենելքում : Խստորեն արգելվում էին աքսորը, մահապատճեռ, գույքի բանագրավումը, պարտքերի ներումը, հողի վերաբաժանումը, ստրուկներին աղատություն տալիս հեղաշրջման նպատակով և քաղաքական կամ սոցիալական միջոցառումների բնույթ կրող նույնանման զործողությունները : Պաշտպանողական ու հարձակողական դաշինք կնքվեց հունական պետությունների միության և Մակեդոնիայի միջն : Այդ միության բոլոր զինված ուժերի գերազույն հրամանատարությունը հանձնարարվում էր Ֆիլիպին :

Կորնթոսում (հավանորեն հետեւյալ տարին) որոշվեց պատերազմ սկսել Պարսկաստանի դեմ և որոշվեց, թե դաշնամկեցներից որը որքան զինված ուժ է զուրս բերելու : Բոլոր այն հույները, որոնք պարսկի թագավորի մաս ծառայության մտած կայգարեններն իրենց հայրենակիցների դեմ, հայտարարվում էին օրենքից դուրս և նրանց դույքը պետք է բռնազրավեր :

336 Թվի գարնանը 10.000 մարդուց բազկացած հունական կեղոնական մի գորաման Պարմենիոնի և թագավորի ազգական Առաջի հրամանատարությամբ Հելեսպոնոսոն անցավ և մտավ Փոքր Ասիա : Սակայն սկսված ձեռնարկումն մարտել վիճակը ոչ թե Ֆիլիպին, այլ նրա որդի Աքեքսանդրին :

Ա.Լ.ԵՐԵՎԱՆԻ ՊԻ. ՊԱՏՄ.ԵԵՆՈՒԹՅՈՒՆԸ

Ալեքսանդրի ծննդյան մասին բաղմաթիւլ առասպելներ ու պատմություններ կան : Աստվածների սիրելի Ալեքսանդրի աստվածային ծագման և հերոսական միսսիայի վերաբերյալ այդ առասպելներից շատերը ստեղծվել են նրա մահից հետո, չափերն էլ ծագել են հենց նրա կենդանության ժամանակ և ջանա-

սիրաբար կազմում ու տարածում էին եթե ոչ ինքը՝ Ալեքսանդրը, աստ նրա կողմնաւկիցներն ու բարեկամները։ Այդ առասպեկտների մեջ երեմն կրոնական քողի ասկ նրբութեն քողարկված քաղաքական պրոպագանդ է մզգում։ Այդ առասպեկտները բարեկեր հող էին գտնում Ալեքսանդրի սիրաբործությունների մեջ և պարուրված էին նրա անպարտելիության ու փառքի հռչակով։

Հունական յուրաքանչյուր արխատկրամ իրեն սերված էր համարում հունական բազմաթիվ աստվածներից որևէ մեկից, որոնք մարդկանց զերարշանցում էին ոչ միայն իրենց ընդունակություններով ու զորությամբ, այլ և իրենց արտաներով։ Գըլիսալոր աստված Զեսն ամենաեռանդունն ու ամենաանհոնջն էր այդ երկնային դոնժուաններից և իր զոհերին մերձենում էր ամենաբազմազան կերպարաններով, սկսած կարապից, վերջացրած ցուլով։ Ալեքսանդրի մորը՝ կազիրի թագավորի աղջիկ Օլիմպիադային նա որպես թե մերձեցել է օճի կերպարանքով։ Այն դիշերը, երբ ծնվել է Ալեքսանդրը, ինչպատճենային կերպարաններում, կամ անմահացնել, կֆեսում ժառում է Արտեմիդա աստվածուհու հոչտիկոր տաճարը։ Ֆեմիլը իր տղայի ծննդյան լուրի ստանում է երեք հաղթանակների լուրի հետ միասին և այլն։ Մի խորագույն աստապելը կրնկակոր հետևում է տղային, նշելով նրա յուրաքանչյուր քայլը և չի դադարում նույնիսկ նրա մահից հետո։

Ալեքսանդրի մայրը՝ Օլիմպիադան Ֆիլիպի օրինական կինն էր։ Ալեքսանդրի ծնունդը 356 թվին բոլորավին աննկատելի անցավ։ Ֆիլիպի ամբողջ սերունդից միայն Ալեքսանդրը դարձավ իր հոր արքանավոր զալակը, նրա խորթ եղբայրները միջակ ընդունակությունների տեր կամ նույնիսկ թուլամիտ մարդիկ էին։ Ալեքսանդրը մեծանում էր որպես կամակոր, հպարտ ու անվեհել տղա։ Հպատակիվելով միմիայն ինքն իրեն՝ նա ցասումի պահին բոլորավին զադարում էր ամբարտել իրեն։ Ներքին կրակով ու անդուսպ եռանդով ինցուն՝ նա իր մորից ժատանդել էր աշխուժություն և զգացմունքների խորություն, խառնվածքի կրտսություն, հարուստ երևակայություն և իր արքանապատվության անշեղ զիտակցություն, իսկ հորից՝ մտքի պարզություն ու արթունություն, կազմակերպչական տաղանդ և ուղղմական հանձար։ Դեռ մանկության օրերին նրա մեջ երեան են գալիք արտասովոր լայն հետաքրքրություն և փառքի, ուղղմական սիրաբործությունների անդուսպ ձգտում։

Պատմում են, թե դեռ մանուկ հասակում նա փախստական պարսիկներին, որոնք IV դարի 40-ական թվականների սկզբին եկել էին Ֆիլիպի արքունիքը, մեծադույն հետաքրքրությամբ Հարց ու փորձ էր անում պարսիկների ուազմակամր ուսուրսների, նրանց հատկությունների ու առանձնահատկությունների մասին, Սուլայի ու Պերակալուի— Պարսկաստանի մայրաքաղաքային

Հենարունների ճանապարհների մասին: Բայ մի ուրիշ պատմության նա կարողացավ սահմանական վայրի նժույզը Բուցեֆալին, որը Ֆիլիպը հրաժարվում էր դնել, որովհետև հնարավոր չէր վարժեցնել այդ նժույզը: Ալեքսանդրը, նկատելով, որ նժույզը վախենում է իր ստվերից, նրա գլուխը դարձեց դեսպիտ արեգակը, թռավ նրա վրա ու քշեց հարթավայրով: Որոշ ժամանակից հետո նա իր հուզված հոր մոտ վերադարձավ փրփուրի մեջ կորած, բայց սահմանարված Բուցեֆալի վրա նստած: Հայրը նրա համար զնեց, Բուցեֆալը: Բուցեֆալը դարձավ Ալեքսանդրի անքաժան ընկերը նրա արշավանքներում ու ճակատամարտերում և միմյանց Ալեքսանդրին էր թույլ տալիս նստել իր վրա: Նույն պատմությունն ասում է, թե երբ Ալեքսանդրը Բուցեֆալի վրա նստած վերադարձավ, Ֆիլիպը հրճանքի արցունքներն աչքերին կրծքին սեղմեց նրան ու ասաց. «Զավակս, քեզ համար քեզ արժանի թաղավորություն գտիր, որովհետև Մակեդոնիան չափազանց փոքր է քեզ համար»: Հոր հաջողություններին նախանձելով՝ վաստակեր պատահին իր ընկերներին ասում էր. «Իմ հայրը ինձ ոչ մի բաժին չի թողնելու, նա ինքն է կատարելու բոլոր փայլուն դրսերը»:

Ֆիլիպը, մեծ ուշադրություն և հող տանելով իր զավակին հունական կրթություն տալու մասին, իր պալատը հրանիրեց Արիստոտելին, որը հին դարերի մեծագույն դիտնականն էր, խոշորագույն գիտական, դրականագետն ու մանկավարժը: Բավական է ասել, որ մինչև XVII դարը (մեր թվականության), այսինքն 2000 տարի Արիստոտելը տիրապետում էր մարդկության մտքին: Արաբների, հրեաների և միջնադարյան և վրապացիների դիտությունն ու վիլխոսփայությունը գտնվում էին հունական մեծ մտածողի, լոգիկան, քերականությունը, սոցիոլոգիան և գիտության մի չարք ուրիշ ճյուղեր ստեղծողին ուսմունքի ու հայցաների որոշակի ազգեցության տակ: Իր ամենաապարի մտքով նա դրւգակցում էր ամենաբազմակողմանի ընդունակություններ ու ճաշակ և աչքի ընկնող կազմակերպչական հատկություններ: Օրինակ, նրա զեկավարությամբ կազմվեց հին հունական պետությունների 158 կոնստիտուցիաները: Իր ժամանակի ամենաականակոր գիտնականները դուրս էին եկել Արիստոտելի դպրոցից, «սովորեցնողների ուսուցչի» դաշտոցից:

Այդ ժամանակ, 343 թվին Արիստոտելի 40 տարին էլ դեռ չէր լրացել և նա գեռնես համաշխարհային հաշակ չէր ձեռք բեր քեզ: Նրա հայրը, Նիկոմախը մի ժամանակ Մակեդոնիայում պատասխան բժիշկ էր եղել և այդ կարող էր ազդած լինել թագավորի ընտրության վրա:

Երեք տարի, 343-ից մինչև 340 թիվը Ալեքսանդրն իր մանկության ընկեր Հեփեստիոնի և մակեդոնական ազնվասուհմ երե-

խաների հետ ապրում ու սովորում էր Միեզա խաղաղ, վոքրիկ ավանում, հեռու մայրաքաղաքի ու արքունիքի աղմուկից : Մեղ շատ քիչ տեղեկություն է հասել այն մասին, թե Արխատուելն ինչպես էր գլուխ հանում իր դժվարին խնդրից, ուստցան ու դաստիարակման իր մեթոդներով ինչպես էր հարմարվում իր աշակերտի անդուսպ ու վայրի բնափորությանը : Գիտնականի խոր միտքը, ամենապարզական դիտելիքները և իմաստուն հավասարակշռությունը չեն կարող հարդանք չներնչել իր աշակերտին : Հետապայում Ալեքսանդրը երախոսակիտությամբ էր հիշում իր մեծ ուսուցչին, նամակադրություն էր պահում նրա հետ, նրան օժանդակություն էր ցույց տալիս դիտական ուսումնասիրություններում, երբեք չէր մոռանում, որ իր «հորն ինքը պարտական է իր կյանքը, իսկ ուսուցչին այն, ինչ արժանի է կյանքին» :

Արխատուելն իր սանի հոգեկան հայացքի առաջ լաց արեց հոգենական կուլտուրայի անսպառ հարստությունները և նրան հաղորդակից արեց իր ժամանակի զաղափարներին ու շահերին : Ուսուցչի աշխարհահայացքը որոշ հափով դարձավ իր աշակերտի աշխարհահայացքը : «Հելլենները կտիրապետեին ամբողջ տիեզերին, եթե միացած լինեն մեկ պետության մեջ», — ասում է Արխատուել : Արխատուելի համար «բարբարուն ու սարուկն լուս իրենց բնության նույնանման հասկացողությունն են» : 25 որ «հենց ուղղակի իրենց ծագման մամենուից որոշ մարդիկ նախանշված են հպատակվելու համար, ուրիշները՝ տիրապետելու», «լինում են ի ծնե ազատ մարդիկ և լինում են սարուկ ծնիֆած մարդիկ, որոնց համար օգտակար և արդարացի է ծառայել ու ենթարկվել ուրիշներին» : «Երջանկությունը, — պնդում է վիլիսուիկան, — ոչ թե արտաքին բարիքների օգտագործման մեջ է, այլ խելացի գործունեության, որն իր հետ բերում է ներքին բավականություն», սակայն «ոչ ոք չե ցանկանա ապրել առանց բարեկամների, թեկուզ և տիրապետելով կյանքի մյուս բոլոր բարիքներին, միայն բարեկամությունն է լիակատար դարձնում երջանկությունը», «երջանկության կարելի է հասնել միայն կուլեկտիվի մեջ», չե որ «... մարդն իր իսկ բնությամբ հասարակական էակ է» : Բարեկամության մասին խոսքերը խոր արձագանք են գտնում Ալեքսանդրի սրբում, որի ամենահամակրելի կողմերից մեկը իր մանկության ու պատանեկության ընկերներին կուտածամբ ունեցած ջերմ սրտակցության և քնքույշ վաստահության գեցցմունքն էր :

«Միայն կրթված մարդիկ արժանի են պետության քաղաքացիներ լինելու, — ասում է Արխատուելը, — և նրանք պետք է իրենց նվիրաբերեն բացառապես զինվորական ծառայության կառավարական դորձերին և ազատ ժամերին՝ դիտական պարագմունքների, որը մեզ հաղորդակից է անում աստվածների

Երանությանը»: Արիստոտելը ապագայի «Հելլեների առաջնորդին ու բարբարոսների հրամայողին» սովորեցնում էր, որ «աղատ հելլենը չէր հանդուրդի մեկ մարդու լուծն իր վրա», «Ծերեւս երեան դար մի մարդ, որն իր բոլոր արժանիքներով այնքան գերազանցեր, որ աստված թվար մարդկանց մէջ» և «այդպիսի մարդուն հարկ կլիներ առանց առարկության հնաթարկիւ, որովհետև այդ լավ կլիներ բոլոր պետական կառուցվածքներից»: «Մարդկանց մէջ աստված» լինելը դառնում է Ալեքսանդրի նվիրական բաղձանքը: Ալեքսանդրը երազում է լինել արժանավոր սերունդն իր «նախնիների»— առասպելական դյուցակն Հերկուլեսի, որն իր սիրազործությունների համար աստվածների շարքն էր ընկել, և «աստվածահավասար Աքիլեսի», Հոմերոսի փառապանծ հերոսներից առաջնի, հերոսներ, որոնք չին վախենում կուլել նույնիսկ անմահ աստվածների հետ: Աքիլեսը դառնում է Ալեքսանդրի սիրած հերոսը, իսկ Աքիլեսի սիրազործությունները երգող «Իլիականը» դառնում է նրա սիրած զիբքը, որ նա դաշտունի հետ դնում էր իր բարձի տակ:

Արիստոտելի ղեկավարությամբ Ալեքսանդրը դարձավ Հունաստանի ամենազարդարացած մարդկանցից մեկը: Հունական դըրականության նկատմամբ ունեցած սերը Ալեքսանդրը պարտական է Արիստոտելին: Նա հունական բանաստեղծների ու ողբերդուների ստեղծագործություններից կարող էր աղատուն ամբողջ հատվածներ արտասահել անդիր և իր սիրած հեղինակների դրերից երբեք ու ոչ մի տեղ չէր բաժանվում: Արիստոտելն իր սանի մէջ հետաքրքրություն առաջացրեց դեպի բնական գիտությունները, և հետագայում, արելյան արշավանքների ժամանակ Ալեքսանդրի հրամանով ահադին բնագիտական կոլեկցիաներ հայտարկվեցին ու հանդամանորեն ուսումնասիրություն նոր երկրների բնությունը: Գիտական ու գործնական գիտելիքների տեսակետից իր հանճարեղ ուսուցչից շատ բան կարողացավ ըստանալ հանճարեղ աշակերտը նույնիսկ բժշկական արվեստի բընագավառում, որ հետագայում նա կիրառում էր իր զինվորների վերաբերմամբ:

Ի զուր չեն ասում, թե Ֆիլիպն իր աղային ուսուցանելու համար փիլիսոփային վարձահատուց եղավ վերականգնելով Արիստոտելի հայրենի քաղաքը՝ Ստագիրան, որ ալերել էին մակեդոնացիք:

Երբ 340 թվին Ալեքսանդրի 16 տարին լրացավ, Ֆիլիպը նրան նշանակեց պետության կառավարիչ: պատանուն խորհրդական նշանակվեց Ֆիլիպի փորձված օղնական Անտիպատրը: Ալեքսանդրը պետական գործչի ու զորավարի արտակարդ չնորհք է ցուցաբերում: Երա բոլոր գործողություններում ներդաշնակ է կորեն միաձուլվում են մաթեմատիկական խաղաղ հաշիվն ու բոցավառ երևակայությունը, յուրաքանչյուր մանրունքի ինամ-

քով հաշիվը և մտադրությունների համարձակ լայնությունը, աննպառ եռանդն ու անսասան կամքը, հրաբուրով թյունն ու պայծառ միտքը: Գեղեցիկ, համարձակ, չնորհալի պատանին շուտով հոչակ է ստանում և՝ զորքի, և՝ ժողովրդի մեջ: 338 թվին, Քերոնեի ճակատամարտում նա ծանրավեն հեծեկազրի զլուս անցած ճեղքում է թերեացիների շարքերը և դրանով լուծում ճակատամարտի բախտը: Նրան խորթ են իր շվայտ հոր բայխականությունները— ոչ դինին, ոչ կանացի դեղեցկությունը չեն թուլացնում այդ ատլետի, մարզիկի ու լավ վագողի ուժեղ օրդանիզմը: Դեպի Արևելք Ֆիլիպի կառարած արշավով կարծես թե զործունեության ու վատրքի լայն ասպարեզ էր բացվում պատահու համար:

Բայց Ալեքսանդրն ստիլված եղավ մտածել ոչ թե Պարսկաստանը նվաճելու, այլ Մակեդոնիան իր ձեռքում պահելու ժամին: 337 թ. աշնանը Ֆիլիպը երկրորդ անդամ ամուսնացավ մակեդոնական մի նշանավոր տոհմի մի ջահել աղջկա՝ Կլեոպատրայի հետ: Օլիմպիադայի համար հանդես եկավ վտանգավոր մրցակցուհի: 337 թ. ուշ աշնանը հարսանյաց խնճույքի ժամանակ Կլեոպատրայի քեռին՝ Ատտալը, գինուց տաքացած առաջարկեց աստվածներին աղոթել, որ նրանք թագավորին օրինական ժառանգ պարզենն նոր ամուսնությունից: Ալեքսանդրը զայրացած գավաթը շպրտեց նրա վրա ու դոչեց. «Իսկ ինձ, որիկա, զու անօրինակա՞ն ես համարում»: Հարբած Ֆիլիպը սուրբ մերկացը դեպի որդին, բայց սայթաքեց ու ընկավ: «Նայեցեք այս մարդուն, — ծաղրանքով ասաց Ալեքսանդրը, — սա մտածում է Եփրոպայից Ասխա անցնել, մինչդեռ չի կարողանում հաստատուն քայլերով մի դահավորակից մյուսն անցնել»: Հոր հետ այսպես գժամկելուց հետո Ալեքսանդրն անհապաղ իր մորը տարավ իպիր, նրա եղբայր Ալեքսանդրի մոտ, իսկ ինքը ուղեկորժեց իլիրիա: Ճիշտ է, շուտով հայր ու որդի արտաքուստ հաշտվեցն, Ալեքսանդրը տուն վերադարձավ, սակայն հոր հետ նախկին սրտամից հարաբերություններն այլևս հնարավոր չեղավ վերականգնել: Ալեքսանդրի մի քանի բարեկամներին Մակեդոնիայից արտաքսելը նորից նրանց հարաբերությունները սրբեց:

Զցանկանալով դեպի Արևելք արշավելիս թիկունքում թշնամիներ ունենալ՝ Ֆիլիպն իր դստեր ձեռքն առաջարկեց իսպիրի թագավոր Ալեքսանդրին: 336 թ. ամառվա վերջերին Մակեդոնիայի հին մայրաքաղաք էղեռում ոկտիվ հարսանյաց շքեղ հանդեսը...

Ֆիլիպի թիկնապահ Պալմանիոսը, որը չէր կարողացել Ֆիլիպին համազել, որ պատժի իրեն վիրավորող անվանի Ատտալիին, ոխ էր պահել թագավորի դեմ և որոշել էր առաջին խակ հարմար դեպքում իր անպատճությունը մաքրի թագավորաց համար դեպքում իր անպատճությունը մաքրի թագավորա-

Իշան արյունով։ Ըստ երևույթին դավադրությանը խառն են եղել նաև մակեդոնական լշխանները, որոնք հույս ունեին, թե Ֆիլիպի մահից հետո կվերականգնեն իրենց նախկին անկախությունը, իսան է եղել նաև պարսից արքունիքը։ Ֆիլիպին վերացնելը ձեռնառ էր Դեմոսթենին և Հելլադայի հակամակեդոնական պարտիային, որը լույն էր, բայց չէր հնազանդվել։

Պարսանիոսը հարմար մոմենտ դատավ. Երբ Ֆիլիպը թատրոն վնալիս իր պահակախումբն առաջ էր ուղարկել և ինքը հանդիսաւ քայլում էր բազմության միջով, Պալսանիոսը դաշույնի հարվածով մահացու վերք հասցրեց թագավորին։ Մարդասապանն ուղեց փախչել, բայց սայմաքեց և թագավորի պահակները սըրախողվող արին նրան։ Սոսկալի խառնաշվոթություն սկսվեց։ Դահի թեկնածուների թվում հիշատակվում էին Լինկեստիդայի իշխանների անունները, Ֆիլիպի եղբորորդի Ամինդի անունը և ալլն։ Սակայն բահակը, ժողովուրդն ու արքունիքը Ալեքսանդրի կողմն էին, որը չըջապատիած էր բարեկամներով և թատրոնում մնաւապաղ հոչակվեց Մակեդոնիայի թագավոր։

ՃԵՌԽԵՍՍՅԵՐՆ ԱՐԵՍՎԱՆՎԲԸ ԵՎ ԹԵՐԵՒ ԱՊՍՏԱՄԹՈՒԹՅՈՒՆԸ

Ալեքսանդրը դահ բարձրացավ այն մարդկանց դիմեկների վրայով, ովքեր կամա թե ակամա դահի թեկնածու էին համարվում։ Նրանցից ով փախչել չկարողացավ, շտապ կարգով մահապատճի ենթարկվեց։ Օլիմպիադայի մրցակցուհի Կեռոպատրան Ֆիլիպից ունեցած իր երեխայի սպանությունից հետո ստիպված եղավ ինեղդամահ լինել։

Սակայն Ֆիլիպի սպանությունն աշխատացրել էր Մակեդոնիայի բազմաթիվ թշնամիների հույսերը։ Դեմոսթենը փոխեց այն սպազմեստը, որ հաղել էր իր աղջկա մահվան առթիվ։ Նա տոնական շորեր հագավ և աթենացիների առաջ հանդես եկավ ուրախ կոչով, որ լի էր «ծանրամիտ» Ալեքսանդրի հասցեին ուղղած ծաղրանքով։ Հելլադան չափազանց շատ բան դիտեր Ֆիլիպի մասին և չափազանց քիչ դիտեր Ալեքսանդրի մասին։ Հելլադան սթափվեց, պատրաստվելով ազատազրիւ արին «ազատությունից», որ սասացել էր հաղթական Ֆիլիպից թերունեից հետո։ Աթենացիք, ամքրիացիք, որոնք վոնդել էին մակեդոնական կայալորը, Արգոսը, Էլիտան, Արկադիան, Թերեն, Էտոլիան — եռանդով պատերազմի էին պատրաստվում։ Մյուս պետությունները, այդ թվում և Սպարտան, թշնամական ուշադրությամբ էին հետեւում Մակեդոնիային։ Հուղումներ սկսվեցին հարուստ թեսալիայում, չարժվել սկսեցին թրակիական ու իլլիրիական

կիսավայրենի սահմանամերձ ցեղերը : Պարսկաստանը պատրաստ-
վում էր օժանդակություն ցույց տալ ծրագրվող հակամակենդո-
նական կոստյումին : Սովորում Աստածը իր ջոկատի գլուխ ան-
ցած դործում էր իր ազգականուհի կլեոպատրայի օդուն, հույս
ունենալով գահ նստեցնել նրա օրգուն, որպեսզի ինքն էլ խնա-
մակալի պարտականությունը վերցնի իր վրա : Բուն Մակեդո-
նիայում դարսանակալած հարմար մոմենտի էին սպասում դինաս-
տիայի ու թագավորության թշնամիները : Թշնամիների օղակը
մահվան սպանալիքով սեղմվում էր :

Ալեքսանդրը մակեդոնական ընտիր ջոկատի գլուխ անցած
նետվեց դեպի թեսալիա, լեռների դժվարանցանելի լանջերով
աստիճաններ փորելով ու շավիզներ բանալով շուրջանցեց թեսա-
լական ուղեկալներին և լեռնային հեղեղի նման հարձակվեց
երկրի վրա, որը դեռ չէր կարողացել դիմագրության նախա-
պատրաստվել : Թեսալիան հնագանդվեց : Ալեքսանդրը մտածված
ու առատաձեռն քաղաքականությամբ իր կողմը գրավեց թեսա-
լիայի կառավարող արխտոկրատիային, որի իշխանությունն իր
երկրում էր ավելի ամբարտողեց և իրավունքներով ու ուղմա-
կան ավարտից բաժին տալով հավասարեցրեց Մակեդոնիայի ա-
րխտոկրատիային : Այնուհետև թեսալիայի արխտոկրատիան
հավատարիմ ու նվիրված ծառայում էր թագավորին, տալով
նրան ընտիր հեծելազոր, որը դիմացկուն էր ու տոկուն և մա-
նավանդ ընդունակ էր երկարատե ու ձգձգվող սրատերազմի :

Մանր ցեղերը, որոնք իրենց ճռոքումն էին սպահում զեղի
Միջին Հունաստան տանող թերմոպլիզան լեռնանցքը, անձայն
ճանապարհ բաց արին մակեդոնացու առաջ դեպի Հելլագա : Ա-
լեքսանդրը, ինչպես ասում են, ճանապարհին այցելեց Դելֆյան
հոչակալոր տաճարը, որպեսզի երկնքի հետ դաշնակցելով սըր-
բագործի իր սուրբը և երկնքի օգնությամբ ավելի ամուր հա-
տատի երկրի վրա : Նա միշտ էլ կարողակում էր քրմերի հետ
հարմարվել : Չմեռ էր, գուշակուեցի պյութիան հրաժարվում էր
դուշակություն անելուց : Երիտասարդ Ալեքսանդրը, որպես թե,
նրան զոռով քարչ տվեց դեպի գոհասեղանը, և երբ նա բացա-
կան չեց . «Տղա, քեզ դիմագրել չի լինի», — այն ժամանակ նա
բաց թողեց պյութիային, ասելով, թե այդ գուշակությունը
բավական է արդեն . . . :

Հունաստանը սարսափահար եղած անձնատուր եղավ . ամեն
կողմից դեսպաններ էին շտապում նվերներով, հաճորախոսու-
թյամբ և բարեկամության երգումով : Թերեւում և մյուս քա-
ղաքներում իշխանությունն անցավ մակեդոնասեր պարտիայի
ձեռքը, կարեւոր կետերում մակեդոնական կայազորեր գրիփեցին :
Իր հոր օրինակին հետևելով Ալեքսանդրն Աթենքի հետ խիստ
զգուշակոր վերաբերմունք ունեցավ . Աթենքը Հունաստանի կուլ-
տուրական կենտրոնն էր և ծովային ուժեղ պետություն : Նորից

Կորնթոսում համագումար հրավիրվեց, որը Ալեքսանդրի համար ճանաչեց նույն իրավունքներն ու լիազորությունները, որ իր ժամանակին տրված էին եղել Ֆիլիպին:

Կորնթոսում պատահի թաղավորն իրեն շրջապատել էր Հելլագի նշանավոր նկարիչներից, բանաստեղծներից, փիլիսոփաներից կազմված շքախմբով։ Ինչպես պատմում են, միայն Սինովիցի Դիոգինես փիլիսոփան, որն ուսուցանում էր, թե հարստա է նա, ով հարստության կարիք չի զգում և մեծ է նա, ով դոհ է քչով, չէր դուրս կալիս իր տակառից, որի մեջ ապրում էր. և չէր դնում Ալեքսանդրի պալատը։ Ալեքսանդրը Դիոգինեսին դուստ իր տակառի առաջ արեկ տակ տաքանալիս և հարցրեց, թե ինչո՞վ կարող է օգնել կամ ծառայել Դիոգինեսին։ Չմեռ էր և փիլիսոփան պատասխանեց. «Արեւ մի ծածկիր ինձանից»։ Ալեքսանդրը կատարեց աղքատ փիլիսոփայի ցանկությունը և հեռանալիս նկատեց, որ եթե ինքը Ալեքսանդրը չի ներ, ապա կցանկանար, որ Դիոգինեսը լիներ։

Այն ժամանակ, երբ Օլիմպիադան Մակեդոնիայում դաժան ջանապարհությամբ կլիստում էր իշխանական ու պալատական օպողիբան և ճանապարհից մաքրել էր և Կրեոպատրային, և նրա մանուկին, իսկ Ալեքսանդրը վերամբարձ ճառերով իր կամքը էր թելադրում Կորնթոսի համագումարին, այդ նույն ժամանակ Փոքր Ասիս ուղարկված մի վատահելի սպայի գաշույնից ընկալ Ալեքսանդրի թշնամի Աստավը. Ամենավանդոր միշտ համարական անցել էր։ Եկավ ժամանակը՝ միանդամ ընդ միշտ Հունաստանի առաջ դաս տալու անհանդիստ կիսավայրենի հարեւության:

Թրակիական կիսավայրենի ցեղերը, որոնք մեծ մասամբ միշտ այն զանակներով ու որսորդական նիդակներով էին զինված և ծածկված էին զաղանի մորթիներով, բաց դաշտում անդոր էին մակեդոնացիների առաջ։ Նրանք ի զուր էին փորձում Գեմ լեռան վրա մակեդոնացիներին կանգնեցնել վերեկից զլորած ու ցած սահող սայլակներով. Ալեքսանդրի զինվորները վահաններն ցած սահող սայլակներով. Ալեքսանդրի վահանները կամուրջ էին իրենց զլիստերեւում խիտ վահանական անելով կամուրջ սարքում այդ սայլակների համար, կամ թե հետ հետ քաշվելով թողնում էին, որ սայլակը աղատ ցած ընկնի։ Եվ թրակիացիներից ով փախչել չէր կարողանում, սպանվում էր կամ գերի առնվում՝ սորկալամատ շուկաներում վաճառվելու համար։ Հաղթանակը ձեռք բերվեց առանց դժվարության։

Թրակիական տրիբալների բազմամարդ ցեղը, որը մի անդամ կարողացել էր Ֆիլիպի գումակի մի մասը իւլել, այժմ հինգամ կամ կարողացել էր արյունով վճարեց։ Տրիբալները, իրենց հետ միասնացած թրակիական վախստականների հետ միասին, բոլոր կանանց ցած թրակիական վերցրած վախսան Դանուբի Ոեվկա կզզին։ Տրիբալների մի մասը փորձեց Ալեքսանդրի թիկոնքում զրավել

ի եռնանցքերը, բայց մակեդոնացիք ձևացնելով, թե փախչում են, նրանց հրապուրեցին բաց դաշտը, շրջապատեցին ու բնաջինց արին: Շատ քէքը միայն գիշերվա խավարից օդապիելով կարողացան փրկվել խիստ անտառը փախչելով:

Դեմ լեռան կուլից հետո երրորդ օրն Ալեքսանդրն արդեն Դանուրի ավիին էր: Գետն անցնելու միջոցներ նա քիչ ուներ, ափը զիք էր, գետը խոր ու հոսանքն արագ, խակ Պելվկա կըդղին լավ պաշտպանված էր: Դիմացի ափին արթիստալներին օդնության էին հավաքվում կիսավայրենի հեթերի խառնիճաղանչ ամբոխները: Մակեդոնացիք ստիպված եղան առժամանակ հըբաժարվել կղզու վրա գրուելու մաքից. նախ հարկավոր էր հեթերին դաս տալ: Գիշերային լուսության մեջ շրջակա բնակչությունից իրված ձևնորսական մակույկներով և դարձան ցրած ու իրար պինդ կազած տիկերից պատրաստած բազմաթիվ լաստերով Դանուրն անցավ մի ջոկատ, որ բաղկացած էր 1500 ձիալորից և 4000 հետևակից: Յերեկը ջոկատը ծավալվեց, հանկարծակի հարված տվեց հեթերին և փախչողներին կրնկակոխ մտավ նրանց քաղաքը, ամենն ինչ ամերեց ու հետ վերադարձավ ավարով ու զերիներով, չկորցնելով և ոչ մի մարդ:

Թագավորը նպատակ չուներ արշավել գեպի Անդրդպանության մարդերը, որտեղ ալքատ, կիսավայրենի ցեղեր էին ապրում: Պելվկայի տրիբալները մեծ նվերներով գեսապաններ ուղարկեցին և զթություն աղերսեցին: Մերձանուրբյան բոլոր ժողովուրդները, նույնիսկ Սորիստիկի կելտերն իրենց դեսպաններն ուղարկեցին: Որպես թե կելտերի գեսապանները հայուրարել են, թե իրենք Ալեքսանդրի նման հերոսի բարեկամությունն աշխարհում ամենից բարձը են գնահատում, թեև իրենք ոչ մի բանից չեն վախենում բացի նրանից, որ երկինքն իրենց գլուխի ընկնի: Ասել են նրանք այլպես թե ոչ, համենայն գեպս Ալեքսանդրին համոզերու հարկ չկար: Նրա արշավանքի նպատակը բարբարոսներին սարսափահար ամեն էր, որին նա արդեն հասել էր: Հունատանը նորից հուզվում էր, ժամանակին էր վերադառնալու տուն:

Վերադարձի ճանապարհը փակել էին իլլիրիական թշնամի ցեղերը, որոնք գրավել էին Պելիոն լեռնային ամրոցը: Եեշտակի հարվածով իլլիրիացիք քշվեցին ամրոցը, ուակայն Պելիոնը գրոհով վերցնել չհաջողվեց: Հետեյալ օրը մակեդոնացիներին շրջապատեց տավլանատինյան ցեղը, որ դաշնակից էր իլլիրիացիների հետ. շրջապատի բոլոր բարձունքներն ու անտառները բռնաված էին անհամար թշնամիներով: Առաջ գնալ չէր կարելի, նահանջելն էլ անհնարին էր, պարենամթերքը և անհանակերը սպառվելու վրա էին, օժանդակ ուժերի սպասելու ժամանակ ըրկար և իմաստ էլ չուներ: Դրությունն անելանելի էր թվում, բայց ելքը գտնվեց:

Ալեքսանդրը մի հարպիկ մանելրով ամբողջ շրջակայքը
մաքրեց տալվանախիներից, որոնց վրա սարսափէ էր տարածել
ֆալանգայի ահեղ տեսքը: Փոխանակ իրենց բազմաթիվ լինելու
ու արագաշարժությունն օգտագործելով մակեդոնացիներին ու-
ժառապառ անելու մշտական հարձակումներով, տալվանախիներ-
ը թաքնվեցին Պելլոնի պարիսպների հետեւ՝ բաց անելով Ա-
լեքսանդրի չուրչանցի ուղիները: Ալեքսանդրը ճամբար խիեց և
սկսեց գրոհի համար հարմար մոմենտի սպասել: Օգտվելով բար-
բարսների անհոգությունից, որոնց պահանջները քաղցր քուն
էին մտել, մակեդոնացիք զիշերով հարձակում դորձեցին և լիա-
կատար հաջողություն ունեցան: Պելլոնը դրավվեց, արյունահեղ
կոտորածից ողջ մնացած բարբարոսները խուճապահար փախան,
ճանապարհն աղատավեց: Հարկավոր էր առանց բողեք կորցնելու
շատպել Հելլագա:

Պարսկական թաղավոր Դարեհը ոսկի չէր խնայում օժանդա-
կելու Մակեդոնիայի թշնամիներին, որոնք Ալեքսանդրի բացա-
կայության ժամանակ նորից դլուխ էին բարձրացրել: Տարած-
վող լուրերը, թե տրիբալների դեմ մղած կովում Ալեքսանդրը
պարտվել ու զահվել է, լուրեր, որ հաստատում էին «ականա-
տեսները», յուղ էին լցնում բորբոքված կրակի վրա: Հունաս-
տանը հուզվել էր: Ելույթի առաջին աղդանշնը տվեց Թերմն:
Թերմեռմ զինված հեղաշրջում տեղի ունեցավ, մակեդոնակարա-
կան պարտիայի առաջնորդները կոտորվեցին, Թերմե-Կառմոս
ամրոցը, որտեղ մակեդոնական կայսորն էր կանգնած, պա-
շարպից բոլոր կողմերից, Հունաստանի բոլոր քաղաքները դես-
պանություններ ուղարկվեցին՝ դաշնակցելու և պաշքարի կոչուի:
Արկադիացիք իրենց զորքերն օգնության ուղարկեցին Թերմե-
ներին, Էլիացիք ցրիվ տվին մակեդոնական կայսորը, Աթենքը
Թերմեին օգնություն խոստացավ և սկսեց ուժեղ թափով զին-
վել: Թերմեռմ պատության համար պայքարելու համար զին-
վեցին ստրուկները, զինք տրվեց ամբողջ անիբավահավասար
քնակչությանը, պարենի ու զինքի մեծ պաշարներ ստեղծվեցին:
Էլի մի քանի օր՝ և ամբողջ Հունաստանը կապստամբեր Մակե-
դոնիայի դեմ:

Եվ հանկարծ հույներին որոտի ոլես շշմեցրեց այն լուրի,
թե Ալեքսանդրը, կենդանի, ողջ ու առողջ ու հաղթական Ա-
լեքսանդրը կանգնած է Թերմեի առաջ և պահանջում է քաղաքը
հանձնել: Աթենացիք որոշեցին հետ կանդնել ողատերազմի մըս-
քից, արկադիացիք շտապեցին վերադառնալ Արկադիա, Թերմեին
թշնամի քաղաքներն անհապաղ միացան Ալեքսանդրին, Թերմեն
մնաց միայնակ: Հունաստանը տաղնապալից սպասողականության
մեջ ընկալ: Նախկին վտարանդիներին, հակամակեդոնական
պարտիայի զիսամլորներին, որոնք Թերմեռմ իշխանության դը-
լուխ էին անցել, պայքարը հույս էր ներշնչում, իսկ անձնատը-

վությունը մահ էր սպառնում : Քաղաքը, որ դեռ օդնություն
ստանալու հույս ուներ, հրաժարվում էր անձնատուր լինել :
Գործը հասալ գործի : Կատաղաբար դիմացը թերեացիք քա-
զաքից դուրս մղեցին այնտեղ ներխուժած մակեդոնացիներին,
բայց ստիպված եղան իրենց պարիսպների մի մասից զորքերը
հանել : Այդ ժամանակ ընդհանուր գործի ազդանշան տրվեց և
մակեդոնացիք սկսեցին բոլոր կողմերից քաղաք ներխուժել :
Կաղմասի պաշարված կայազորը քաղաք ներխուժեց ու միացալ
իր հայրենակիցներին : Գրոհը վերջացավ, սկսվեց կոտորածը :
Քաղաքը կողապատվեց, ապա հիմնահատակ ավերվեց : Բնակչու-
թյունը կոտորվեց կամ վաճառվեց ստրկության, թերեւի տերի-
տորիան բաժանվեց թերեւի թշնամիների միջև : Թերեւն հողին
հավասարեցվեց, բացառություն արվեց միայն բանաստեղծ Պին-
դարի, քրմերի ու քրմուհիների և մակեդոնական դինաստիայի
մի քանի բարեկամների տների նկատմամբ : Կաղմոսի միջնաբեր-
դի մակեդոնական կայազորը միայն պահապան մնաց ավերակ-
ներին, տաճարներին ու շիրմներին :

Այդ հնարդարյան քաղաքի ողբավի վիճակն այսպիսի տպա-
վորություն գործեց, որ «կարծես երկնքից վայր էր ընկել լու-
սինը» : Դեպաններն շտապեցին Ալեքսանդրի մոտ, խնայելու ա-
ղաջանների էին հնչում, քաղաքներն շտապում էին մահապատիժ-
տալ հակամակեդոնական պարտիայի առաջնորդներին, չո-
ղոքորթում էին, մատնություններ, ստորաքարչություններ ա-
նում, աղաջում ու պատասում : Աթենքը, որ երկյուղ էր կր-
րում, թե թերեւի բախտին կարժանանա, լցվել էր փախստական-
ներով : Աթենքի գեսապանությունը թափալորին չնորհալորեց
թերեւի նկատմամբ տարած հաղթանակի համար, բայց արիու-
թյուն ունեցավ ինդրելու, որ Աթենքին թույլատրվի ապաստան
տալ վարանդիներին ու փախստականներին : Ալեքսանդրն աթե-
նացիներին, որոնք մի անդամ նրան երեխա էին անվանել, լո-
պանաց ապացուցել, որ ինքն արդեն հասուն մարդ է : Նա պո-
հանջոց իրեն հանձնել հակամակեդոնական պարտիայի առաջ-
նորդներին ու փախստականներին և առաջին հերթին Մակեդո-
նիայի անհաջող թշնամի Դեմոսթենին : Այդ օրերին Աթենքի ժո-
ղովրդական ժողովում բուռն վիճարանություններ էին զնում :
Դեմոսթենն աթենացիներին հորդորում էր «առակում հիշատակ-
վող ոչխարների նման գայլին չհանձնել իրենց պահապան չնե-
րին» : Ֆոկիոնը Դեմոսթենից պահանջում էր իր մահով փրկել
հայրենիքը, որի սիրո մասին նա այնքան հաճախ ու այնքան
խանդակառ խոսել էր : Բայց Ալեքսանդրը մտադրություն չու-
ներ հունական կուտուրայի կենտրոնի ամերումով արշաք սկսել
բարբարոսների դեմ : Այս անդամ դեսպանները «առյուծին կուշտ
դառն» : Զորապետ Խարիդեմը, իֆիալտեսոր և էլի մի քանի
մարդ վտարվեցին ու զնացին Պարսկաստան, Դեմոսթենը մնաց

ԱԺԵՆՔՈՒՄ : ԱԺԵԿՆՔԸ պահեց իր անկախությունը, իր նախատորմնները ամբողջունները :
ԱՀԵՔՍԱՆԴՐԸ պատրաստվում էր արշավելու Պարսկաստան :

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ՄԻԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ IV ԳԱՐՈՒՄ (Մ. Թ. Ա.)

«...անկախած է, որ կյուրոսի կամ Ակեքսանդրի մեծ պետությունները չեն կարող ազգեր կոչվել թեև նրանք պատմականորեն էին գոյացել, զանազան ցեղերից ու ուասներից էին գոյացել Դրանք ազգեր չեն, այլ խմբերի պատահական ու քիչ շաղկապված կոնգլոմերատներ, որոնք տրոնվում էին կամ միավորվում էին՝ նայած այս կամ այն աշխարհակալի հաջողություններին կամ պարտություններին»:

(Մատական, «Մարքսիզմը և ազգային գաղութային հարցը», Կումհբատ, էջ 11):

Պարսկական միավետությունն իր տերիսորիայով և իր աղղաքակցությամբ մի քանի տասնյակ անդամ դերազանցում էր Հելլալային : «Մեծ թաղավորի, արքայից արքայի» գայլսոնի ներքո էին Փոքր Ասխան, Խրանը, Միջազգետքը, Սիրիան ու Պաղեստինը, Արաբիայի մի մասը, ներկայիս Ավլանստանի ու Բելուջիստանի տերիսորիան, Թուրքիանը, Պամիրի լեռնաշղթայի ըլլր-ջակարքի մարզերը, Հայաստանը, Եփիպոտոսը, Հնդկաստանի հյուսիս-արևմտյան մասը : Այս բոլոր երկրները մեր թիվականությունից առաջ VI դարի երկրորդ հետին նվաճել էր Եթոնային Պարսկաստանից զուրս եկած ռազմաշունչ ու դաժան պարսիկ ցեղը, որը «չգիտեալ ինչ է գիտին և ուսում էր օրական մեկ անդամ», և համախմբվել էր Աքեմենյան դինաստիայի դիմավորությամբ : Պարսկական գենքը մի օղ էր, որն արտաքում մի ամբողջության մեջ էր առնում ամենաբազմապիսի բնակչորության տեր ցեղեր ու ժողովուրդներ :

Բազմաթիվ հպատակ ցեղեր ու ժողովուրդներ առուրք էին տալիս թագավորին և նրա արքունիքին մատակարարում էին իրենց երկրներում արտադրվող մթերքներ ու գործվածքներ, ըսկած Արարիայի ինձից և վերջացրած Բարելնի ներքինիներով, և կատարում էին զանազան աշխատանքներ ու պարտավորություններ : Կապագովկիան, Փոքր Ասխայի ներքին մարզը, քացի փողից տալիս էր նաև 1500 ձի, 2000 ջորի և 50.000 ոչխար, Լիդիան (Փոքր Ասխայի արևմտյան մարզերից մեկը) երկու անդամ դրանից ամելի էր տալիս և այն : Ամեն կողմից թաղավորական արքունիքն էին հոսում անհուն հարստություն-

ներ, որոնց մասին Հունաստանում առասպելներ էին հյուավում։ Եթե պարսից թաղավորին փող էր հարկավոր լինում, նա մարդ էր ուղարկում իր զանձարանները՝ իր ոսկու և արծաթի զանդվածներից համապատասխան կտոր կտրելու։ Արքունիքում կերպարվում էին տասնյակ հաղարավոր ամեն տեսալի կանայք ու հարծեր, զարդանկարիչներ ու տակառապետեր, թիկնապահներ ու ներքիններ, նախագուշակողներ ու խոհարարներ, ձիապահներ ու քուրմեր։ Թաղավորի արքունիքում, նրա սպասավորների մեջ էին գտնվում Պարսկաստանի նշանալիոր տոհմերի ներկայացուցիչները, որոնք հիմնական գեր էին կատարում կառավարական ապարատում և զինվորական հրամանատարության մեջ։ Հենց այստեղ էլ Պարսկաստանի աղնվատոհմ երկասարդությունը սովորում էր պալատական բարդ էտիկան ու զինվորական գործը — նետաձլություն, սուսերամարտություն, ձիավարություն — և զաստիարակվում էր միապետին և ցեղային տրադիցիաներին ու ստավածներին նվիրվածության սովոր։ Թաղավորի իշխանությունը զեսպատական բնույթի էր կրում, թաղավորական «աստիվածային» խոսքը բարձրագույն օրենք էր։

Պարսկաներն ու նրանց աղջակեց միդիացիք հարկ չեին վճարում, պարտավորություններ չեին կատարում և, որպես «ամենաազնվազարմն աշխարհում», պետության մեջ առանձին դիրք էին գրագում։ Առեւտրում և մի քանի արհեստներում հրամանատարական դիրքն իրենց ձեռքում էին պահում ձեռներեց ու ճարպիկ «ծովերի տերերը», հարուստ Փյունիկայի վաճառականներն ու արդյունաբերողները։ Սակայն պետությունը՝ կառավարելու գործում «արքայից արքան» հենվում էր ոչ միայն պարսկական ու միդիական աղջականության, այլև հպատակ քաղաքների ու մարզերի ավագանու և քրմության վրա։ Որպես կանոն, յուրաքանչյուր մարդ ու յուրաքանչյուր երկիր ապրում էր «իր օրենքներով» և օգտվում էր կուլտուրական ու կրոնական լայն ակտոնոմիայով։ որոշ մենաշնորհներով և արտոնություններով։

Պարսկաստանի մայրաքաղաքներից մեկից՝ Սուզայից մինչեւ Լիդիայի գլխավոր քաղաք Սարդա էր անցնում այսպես կոչված՝ «արքայական պողոտան», որով թաղավորի յուրաքանչյուր հըրամանը և կառավարական ամեն մի գրություն 10—12 օրում կարող էր միապետության մի ծայրից մյուսը տարփել։ Այդ ժամանակարհին եղած 111 կայսերներն իրենց հյուրանոցներով և նրանց կեց ախոռներով ապահովում էին կապի կանոնավորությունն ու արագությունը։ Կառավարումը կատարվում էր միապետության բլուրով կրապատկան մեծ ապարատի միջնորդ, որի զլույթն էր հանգիսանում թաղավորական գրասենյակը։ Միապետության լայնածավալությունը, առեւտրական ճանապարհների շատությունը, համեմատական խաղաղությունն ու անվտանգությունը ձեռնոտու էին Արեեւքի երկրների բազմաթիվ վարձառ-

կաններին ու արդյունաբերողներին, որոնց շահերը խիստ պահանջում էին հենց այլպիսի ընդարձակ պետական օրգանիզմի դոյլություն :

Ավագանին ու քրմությունը օգտվում էին բարձրագույն հովանակությամբ, Երուսաղեմի տաճարի քահանան ազատորեն աղոթում էր «Խորայիլի միասնական աստծուն», Գյումիկյան քուրմը մարդկային զոհեր էր մատուցում Մոլոխին, արևելյան բազմաթիվ մանր թաղավորներից յուրաքանչյուրն իրեն ավելի ապահով էր զղում «արքայից արքայի» հովանավորության տակ : Պարսիկներին ենթակա ժողովուրզների վերնախավը առժամանակ սիրով հաջողում էր իր կախյալ վիճակի հետ, իսկ ժողովրդի ներքնախավերի՝ դյուցացիների, ճոփոտերի ու ստրուկների համար մեծ մասամբ միենույն էր, թե ում անունով են կեղեքում իրենց :

Թաղավորական զորքը, թաղավորական բյուրոկրատիան, թաղավորական ճանապարհն ու թաղավորական դրամը, ոսկե «գարեհիլը» ի մի էին կապալցում այդ թաղավորությունը, որի կենտրոնացումն, այսուամենայնիվ, զուտ արտաքուստ էր : Պարսկաստանը դեռ Դարեհ Վշտասպյանի ժամանակներից բաժանված էր 20 սատրապությունների՝ ուղղմահարկատու մարդերի, բայց պարսկական սատրապներից յուրաքանչյուրն անկախության էր ձգտում կենտրոնական կառավարությունից, դրա համար էլ կայագործերի ու զինված ուժերի հրամանատարությունը հանձնարարում էր զինվորական օկրուզների հատուկ պետերին : Սատրապների վարքին հսկում էին թաղավորի գործակալները, այսպես կոչված՝ «թաղավորի աչքերն ու ականջները» : «Ոչինչ չի թաքնվի թաղավորի աչքերից ու ականջներից, նա ամեն ինչ տեսնում է ու լսում» : Թաղավորի հավատարիմ ծառաները խրախուսվում էին առատ պարզեներով, հողերով ու պաշտոնի բարձրացումով, իսկ խոռովարանների ու ըմբուռների համար պատիճների ու տանջանքների մի ամբողջ սիստեմ էր մշակված . կենդանի-կենդանի հողի մեջ թաղելը, խաչ բարձրացնելը, քառահատումը, մաշկելը և այլն :

Պարսիկները պատմական ասպարեզ մտան որպես ձիակորների ցեղ, և հեծելաղորը նրանց զորքի մեջ պատվավոր դիրք էր զրայում : Պարսկական ու միդեական հեծելաղորին իր մարտական հատկություններով քիչ էր զիջում պարթևների, բակորիացիների, սովորացիների և ներկայիս Ավղանստանի, Թուրքեատանի ու Բելուջիատանի տերիտորիաներում ավըռող ուրիշ ցեղերի, հեծելաղորը : Այդ անկանոն հեծելաղորն աչքի էր ընկնում իր անզսպությամբ ու արագաշարժությամբ, սակայն իր հարվածի ուժով ու տոկունությամբ զգալի չափով հետ էր մնում մակեդոնական ծանր հեծելաղորից : Պարսիկների հեծելաղորի մեջ դերակշռում էին երկու հիմնական տեսակներ՝ հեծյալ նե-

տաձիգներ և հեծյալ նիզակավորներ։ Հեծյալ նիզակավորները դինած էին նետելու տեղերով։

Պարսիկները, միջիացիք և մի քանի լեռնական ցեղեր տալիս էին ընալի հետեակի զոկատներ, որոնք ամենից հաճախ բաժանվում էին «տասնյամկներով», «հարյուրյակներով» ու «հազարյակներով»։ Հետեակ պարսիկի զենքն էին տեղը և կարծ սուսերը, պաշտպանական զենքն էին կազմում արևելյան չալման, թիփուկանման զրահը և ուռենու ճյուղերից հյուսած վա-



Պարսկական զինվոր

Հանը։ Մյուս ժողովուրդների հետեակի մեծ մասամբ բոլորովին զուրկ էր պաշտպանական զենքից։ Այդ հետեակը վարժված էր նետիլով մարտ մղելու և ձեռնամարտի մեջ հունական կովիած հովլիքաների առաջ բոլորովին անդոր էր դառնում, դրա փոխարեն պարսկական նետաձիգները հունական նետաձիգներին չեն զիջում։ Այդ հետեակը ոչ մի մարտական կարգ չդիտեր, կը վում էր իսկու ու հօծ բազմությամբ և արագ իսումապի էր մատնը։


Պարսկական զորքի կորիզը կազմում էր զվարդիան— «տասն հազար անմահները», որի թիվը միշտ լրացվում, հասցվում էր

10.000 մարդու : «Անմահների» դեկըն ու զբահը շքեղ զարդարված էին և նախշած սոկով, արծաթով ու թանկագին քարերով : Թաղավորական մշտական զորքի մեջ էին մտնում նաև թագավորական գեղարդավորներն ու հեծյալ զվարդիան : Սակայն նույնիսկ զորքի այդ ընտիր մասը, ով քաջ էր, ուներ մարտական սղի և համեմատաբար լավ էր զինված, ոչնչէ չէր կարող անել հովական Փալանգաների խիտ շարքերի դեմ :

Բացի այդ, բաղմաթիվ ամրոցներից ամեն մեկում կայազոր կար, ամեն մի սատրապ ձգտում էր իր սեփական զորքը պահել, թաղավորի վստահած մարդկանց հրամանատարության տակ հատուկ ջոկատներ կային նրա թաղավորության բոլոր դիմուրական շրջաններում :

Բացի հեծելազորից ու հետևակից, բանակի կաղմի մեջ էին մտնում մարտակառքերը, որոնց մի մասը զինված էր մանզադանման կեռ զանակներով : Այդ մարտակառքերը կարող էին գործել միայն բոլորովին հարթ վայրում և հաջողություն էին ունենում միայն ասիական խառնիխուռն ամբոխների դեմ :

Պարսիկներն օգտվում էին իրենց հպատակ ժողովուրդների ռազմական տեխնիկայից : Նրանց ծանոթ էին բարանների, կրի-



Պարսկական մարտակառք

աների, պրահային սանդուղքների, շարժական աշտարակների և պաշարողական պատճենների զործածությունը : Հայոնի են դեպքեր, երբ նրանք պաշարման ժամանակ նոր հովանով են շուռադը վել գետերը : Ռազմական տեխնիկայում կատարած դրուժերով առանձնապես հռչակված էին փյունիկացիք :

Պատերազմի ժամանակ թագավորը կարող էր աշխարհապոր հայաքել իր ընդարձակ պետության բոլոր ցեղերից ու ժողովությանը: Այդ ժամանակ արքայական դրոշի տակ հավաքվում էր մի վիթխարի բազմացեղ բազմություն, որի մեջ եթով պացիք, արարները, եւդատացիք, բարելացիք, ասորեստանցիք, հնդիկները, պարթևները, սովորացիք, վրկանացիք, բակորիացիք և բազմաթիվ այլ ժողովուրդներ հանդես էին գալիս յուրաքանչյուրն իր աղջային հազուսառով և իր աղջային գենքով: Սակայն մարդկային խոշոր մասսաներին կառավարելու արվեստը հատուել է միայն բարձր կուլտուրայի տեր ժողովուրդներին: Մարդկի ուժով սպանդանոց քշված աշխարհապորն իր ճանապարհին ուտում, սպասում էր ամեն ինչ, բայց ճակատամարտում գործում էր վեխավորապես ուղերով: V դարի սկզբին (մ.թ.ա.) դեպի Հելլադա կատարած արշավանքների տիսուր փորձից հետո պարսից թագավորները նման զորահավաքի դիմում էին միայն բացառիկ դեսպօքում և մեծ զդուշությամբ, կանչելով այն ժողովուրդների ջոկատները, որոնք ամենից ավելի ռազմաշունչ էին և ամենից ավելի բարեկամ էին պարսիկներին:

Պարսկատանը հույներից ամենից լավ պաշտպանում էին հենց իրենք՝ հույները. սպարսկական թագավորները, համոզվելով, որ հույները սազմական առավելություններ ունեն, սկսեցին սիրով իրենց մոտ ծառայության ընդունել հունական վարձկաներին, սպարսկական արքունիքում սկսեցին ավելի ու ավելի շատ երեալ հույն խորհրդականներ, դիտնականներ, րժիշխներ: V դարի կեսերին հույները մասսաներով թափանցում են Պարսկատան, սատրապների պալատները, թագավորի արքունիքը, և աստիճանաբար Պարսկատանը նվաճում են ներքուստ: Հունական կուլտուրան ու հունարեն լեզուն ավելի ու ավելի խորն է թափանցում կառավարող խամբերի կենցաղի մեջ: Պարսկական ավագանին խանդուան անվտանգությամբ և վատ թաքցրած թրշնամանքով է վիրաբերվում զեսպի եկվորները, բայց հենց ինքն էլ ստիպված է լինում շատ բանում ընդօրինակել նրանց:

Այս վիթխարի միապետության ներքին թուլությունն ու նեխովածությունը վաղուց արդեն իր վրա էր գարձել հույների ուշադրությունը: Պարսկատանը նվաճելու լողունգը գանձում է իր ժամանակի ամենատարածված լողունգը: Կառավարող կաստայի թուլությունը, անընդունակությունն ու անկուլտուրականությունը, թագավորական սատրապների պատակառությունները, բոնակալ թագավորի և նրա սանձարձակ ավագանու կամացականություններն ու բռնությունները, հարկերի ու տուրքերի ծանրացող լուծը, հպատակ ցեղերի ու ժողովուրդների կարգածությունն ու պատագրական ձղտումը, առեւտրի ու արդյունաբերության զարգացման համար

անհբաժեշտ կարդ ու կանոնի և անդորրության բացակայությունը — այս ամենը դեպի կործանում էին տանում պարսկական միապետությունը։ IV դարի կեսերին պարսկական թագավորները հռնական վարձկանների ձեռքով մեծ դժվարությամբ ճնշեցին Եղիստոսի, Փյունիկիայի և Փոքր Ասիայի ապստամբությունները։

Այսուամենայնիվ մինչև այժմ հռւյներին չէր հաջողվել իրեւ պարսիկներից նույնիսկ Փոքր Ասիան, որ գտնվում էր հռնական կուլտուրայի ուժեղ ազդեցության տակ և որի բնակչությունը ևս մասամբ հռւյներ էին։

Պարսիկներին էին ծառայում Փյունիկիայի, Կիպրոսի, Եղիստոսի և վորք-ասիական մարդերի էսկադրոնները, այնպես որ պարսկական միացյալ նովատորմն իր ջրմբում կարող էր դիմացրել Հելլագայի միացյալ ծովային ուժերին։ Հռւյների Փինանսարան միջոցները բարորդվին չէին կարող համեմատվել պարսկական զանձարանում 200 տարվա ընթացքում կուտակված հարստության հետ։ Հռնական վարձկանների ամենատաղանդավոր առաջնորդներն ամեն ըստե պատրաստ էին իրենց մարմինն ու հոգին վաճառել որոշ գումարի ոսկե ու արծաթե տաղանդներով։

Իսկ ամենազդվածորն այն էր, որ հռւյները միացյալ ուժերով արշավի դուրս դալու ոչ մի հնարանորություն չունեին։ Նրանց մանր-մունը քաղաք-պետություններն իրենց ուժերն ըստ պառում էին փոխադարձ պառակումների մեջ, իսկ Պարսկաստանը նրանց շարունակ թշնամաղնում էր իրար հետ՝ իր ոսկին դցելով կշեռքի այս կամ այն նժարը։

Երբ Աթենքն իր փառքի ու հղորության գագաթնակետին էր, մի մեծ էքսպերտիցիա կազմեց ապստամբած Եղիստոսին օդնելու համար, լսայց Պարսկաստանը բարվականաչափ ուժ ունեցավ հետ մղելու աթենացիների հարձակումը, որոնք զբաղված էին նաև Սպարտայի դեմ պատերազմելով։ Սպարտայի դեմ Աթենքի մղած բազմանյա պատերազմի ամենավճռական պահին, մի պատերազմ, որ իր ջրապտույտի մեջ էր առել առ բողջ Հելլագան, պայքարի բախտը լուծեց Պարսկաստանի միջամտությունն իր ոսկով ու նավատորմով։ Աթենքը ջախջախվեց, ստորացվեց ու երկար ժամանակով ուժապատ արվեց։

Շուտով Սպարտայի հմուտ գորավար Ագեսիլայոսը ներխուժեց Փոքր Ասիա և արդեն առաջին հաջողություններն էր ունեցել, բայց... պարսկական ոսկին Սպարտայի դեմ ոտքի հանեց Աթենքի, թերեւի, Կորնոթոսի և Արգոսի կուլցիքան։ Աղեսիլայի բան շտապեց հետ վերալանանա՝ իր հայրենիքը փրկելու։ Պարսկական ոսկին գորավար հաջախավեց հայրական վրա նետաձիգ էր պատկերված և այդ

Ազեւիլայտսին առիթ՝ տվից դառնությամբ սրախօսություն. «Պարսկական տասը հաղար նետաձիզներ ինձ քշում են Ասլալից»:

387 թվին Արտաքերքսես թագավորը երկու պատերազմող ուժապառ եղած կողմերի համար ստորադրեց իր «արքայական հաշտությունը». Փոքր Ասխան մշում էր Պարսկաստանին, օրինականացվում էր Հունաստանի մասնատվածությունը բազմաթիվ մանր ու մանրազույն համարների, Սպարտային շղթայակապ շան դեր էր հանձնարարիվում պարսկական արքունիքում. նապետը է պարսիկներին ձեռնտու կարգեր պահպանել այնուղի:

Պարսկաստանը հիմք ուներ կարծելու, որ Մակեդոնիան Աթենքից ու Սպարտայից ավելի բախտավոր չի լինի, ուստի նա առանց առանձին տագնապի էր դիտում Ալեքսանդրի նախապատրաստություններն արշավանքի:

Գ. Բ. Ա. Ն. Ե. Կ. Հ. Ա. Ս. Ա. Մ. Ս. Ր. Տ. Ը.

«Քրանիկի ճակատամարտը (334 թ. մ. թ. ա.) հանդիսանում է մարտի առաջին օրինակը, երբ հեծելազորը վճռական դեր խաղաց»:

(Են գելս, Ընտիր երկեր, հ. I, սուս. հրատ. էջ 225):

Արշավի դուրս գալու պահին, 334 թվին, Ալեքսանդրն ընդդմենը 70 տարվանդ կանիփի դրամ ուներ, որի հետևանքով նըրա վտրձու զորքերի թիվը համեմատաբար փոքր էր: Հելլազայում էլ Ալեքսանդրի թիկունքն առանձնապես կայուն չէր, և թեպետ քաղաքների մեծ մասում իշխանության դլուի էլն կանգնած մակեդոնասիրական պարտիայի նշանակած մարդիկ, ևսկ միջնարերդերը թերեւում կաղմուը, Կորնթոսում Ակրոկուրնթոսը և այլ կարևոր ստրատեգիական կետերը մակեդոնացիներն էին դրավել, բայց և այնպես Ասխայում կրած առաջին ևսկ պարտությունը կապայիցներ Ալեքսանդրի թիկունքը: Մակեդոնիայում թողնված էր հմուտ զրապետական պատիվարը՝ 12.000 հետևակով և 1500 մարդուց բազկացած հեծելազորով:

Հունական դաշնակից պետությունների կոնտինովնուր կանչված էր մյուս զորքերի համեմատությամբ այնպիսի հարաբերությամբ, որ արշավի ժամանակ վճռական դերը մակեդոնացիների ձեռքում լինի: Կամպանիայի ամրող առաջին կեսում հելլեն դաշնակիցների նկատմամբ եղած անվտանգությունն արտահայտվում էր նրանով, որ նրանց մարտերում երկրորդական խնդիրներ էին Հանձնարարվում: Հունական գաղնակիցների 7 հազարանոց միացյալ կորպուսի հրամանատար էր նշանակված ստրատեգ:

Անտիգոնոսը : Հունական այդ հետեւակը կազմված էր մասամբ հոպլիտներից, մասամբ պեղսատներից, իսկ հունական ծանրազեն ձիավորների 600-անոց ջոկատը, սովորաբար, միանում էր թեսալիկան ծանր հեծելազորին, որ բաղկացած էր մոտ 1200 ձիավորից : Էթեր Մենանդրը հունական վարձկանների 5 հազարնոց կորպուսի հրամանատարն էր :

Բանակի մակեդոնական կորպուս կազմում էին էթերները, դիպառապիտները և ֆալանգաները : Էթերների ծանր հեծելազուրը բաղկացած էր 1800 ձիավորից : Թագավորական հեծյալ գըրվարդիայի հրամանատարն էր Սև կլիտոսը՝ թագավորի բարեկամն ու սիրելին, նրա ծծմայր Լանիկայի եղբայրը : Ֆալանգաների 6 ատկիւններում կային մոտ 9000 մարտիկ : Նրանց հրամանատարներն էին՝ Պերզիկան, Կենը, Ամինտան, Մելեադրը, Ֆիլիպը և կրատերը : Գիտասպիտների 3 հսղարանոց կորպուսի հրամանատարն էր Պարմենիոն զորավարի որդի Նիկանորը, իսկ մակեդոնական սարխոփորների մի քանի հեծյալ իլերի հըրամանատարը՝ Ամինտան :

Թեթև զորամասեր կազմում էին զլիավորապես թրակիացիք, որոնց ջոկատների հրամանատարներն էին իրենց իշխաններն ու ցեղապետները : Թրակիացի-օղբիդների թեթև հեծելազորի հրամանատարն էր Սոլափոնը, բարեկամ պետների հեծելազորինը՝ Սրբատները : Մի քանի հազար թրակիական ակոնտիստների (աեղաձիդներ) էր բերել իրենց իշխան Սիտալը, ազոնապատճենապրիմաների հաղարանոց ջոկատի հրամանատարն էր Ատամալը : Թեթև զորքերի կազմի մեջ էին մտնում մակեդոնական և կրիստոնական հոչակիված նիդակավորների ջոկատները, առնվազն 1000 մարդ :

Արշավանքի սկզբում այդ խայտարգետ զորքի կազմի մեջ էին մտնում մոտ 30.000 հետևակ և 5000 ձիավոր : Յուրաքանչյուր ծանրազեն ձիավորին կցված էր մեկ ձիազան, այնպես որ, արանսպորտի, մեքենաների, անսանակերի ու պարենի վորիազրության անհրաժեշտ ձիերը հաշված՝ Ալեքսանդրի բանակում սկզբանին 10.000 ձի :

Այս ո՞չ խոշոր բանակն էր կազմակերպվածությամբ, դիսցիպլինայութ, մարտիկների ու հրամանատարների փորձվածությամբ, աեկանական բանակն էր :

Թագավորի մերձակոր անձինք, որոնց թվումն էին նրա յոթ անձնական համհարդները (Լեռնատը, Պաղսմեսոսը և այլն) կազմում էին զեկավարությունը — բանակի շտաբը : Առանձնապես կարեւոր զեպքերում գումարվում էր ընդլայնած ուղղմական խորհուրդ, որի մեջ մտնում էին հեծելազորի հիպարքիներն ու իլիարիները, սարատեզները, հետևակի խիլիարիներն ու

տարսիարիները և այլ ամբազ պետքը : Բանակին կից կային՝ դանձարան, գրասենյակ, ինտենդանտական վարչություն, հիմնդանոց : Կային նաև նետող դործիքների դաշտային հրետանի (Ֆիլիպի մոտ՝ միայն պաշտպանական) և պաշտպանական մեքենաների հարուստ պարկ, ինժեներային արվեստի ու սապրուտին դործիք վարպետներ, հողաչափական-տեղադրական բաժանմունք շտաբին կից (այսպես կոչված՝ «բեմատխաներ») և քաղաքական-պրոպագանդիստական ապարատ ի դեմս հարմարվող փիլտրատիվների, պատմադիբների ու բանաստեղծների : Աջական-քի ժամանակ Ալեքսանդրին ուղեկցում էին հունական բարդաթիվ դիտականներ ու փիլիպիաններ — պատմադիր Կալիխտենը, փիլիտականներ Պիրբոնը և Անակսարխը, աշխարհագրադետներ, բռւսարաններ և այլն :

Աթենքի նախատորմը բաղկացած էր 350 տրիերից, կորնթոսի պարմանազրի համաձայն՝ Պարսկաստանի գեմ ծովային պատերազմ մղելու համար Հունաստանի մյուս ծովամերձ քաղաքներից կարելի էր պահանջել զգալի թվով նավեր : Սակայն Ալեքսանդրը սահմանափակվեց 160 ռազմանավերից և որոշ թվով տրանսպորտային նավերից բաղկացած նախատօրմով, (որոնցից միայն 20-ը աթենական) : Նա երկուուր էր կրում, թե կախման մեջ կընկնի իր կասկածելի դաշնակիցներից, ուստի ռազմական գործողությունների մեջ նախատօրմին օժանդակ գեր հատկաց-քեց :

Արշավի բոլոր նախապատրաստական աշխատանքները կատարվում էին ինամքով ու մտածված . Ալեքսանդրը, դիտենալով մանրունքի խոչոր նշանակությունը, իր ձեռնարկումները նախապատրաստելիս հոգում էր ամեն մի մանրունքի մասին : Նրա պլանների համարձակությունը միշտ համապատասխանում էր այդ պլանների նախապատրաստման ու իրականացման մեջադրությունների մեջ նախատօրմին :

334 Թվի գարնանը մակեդոնական բանակն արշավի զուրուկավ և Աթենքան, Մարոնեան, Կարդիան, Պերինֆը և մյուս թրակիական ու դաշնակից քաղաքներն անցնելով՝ Սեսոփի մոտ հասավ ծովափ : Ալեքսանդրի խանդավառությունը, նրա հավատն իր և իր հաջողության/նկատմամբ՝ ողերում էին նրան շրջապատողներին և վոխանցվում ամբողջ բանակին : Զորավարը կարողանում էր իր զորքերին ներշնչել, թե աստվածները հովանափորությ են հենց իրեն՝ իրենց սիրելին : Ի զուր չէ՞ր, որ երբ մակեդոննացիք Հելլեսպոնտոսին մոտեցան, ոչ մի տեղ պարսկական նավատորմ չէր երեսում, որը կարողանար հեշտությամբ խանդարել Ամիա անցնելուն :

Այս ժամանակ, երբ զորքերը Հելլեսպոնտոսով անարգել անցնում էին ու հավաքվում Աթենքում, ինքը՝ Ալեքսանդրը

Ասիա անցավ էլեա քաղաքի մոտ, որ Արքուսից դեպի հարավ
էր գտնվում: Փոքր Ասիայի ամբողջ ծովափնյա ըշխանը Պարս-
կաստանի հունական մարզն էր, և այդ կապակցությամբ Ալեք-
սանդրը որոշեց Փոքր Ասիայում դործել որպես հույների ազա-
տագրող՝ պարսկական լծից, այն տրադիցիայի դրոշի տակ, որ
մնացել էր հույների՝ դեպի Ասիա կատարած հերոսական արշա-
վանքների ժամանակներից: Որպես իր դերով Համբակվող ու
հրան համատացող չնորհալի դերասան՝ նա մի քանի սիմվոլիա-
տական պատկերներ սարքեց. ափ իջնելլս նավի վրայից նիզա-
կը նետեց Ասիայի ափը և առաջնն ինքը ցած թուավ գետնի վը-
րա: Նա Աթենաս աստվածուհու տաճարից վերցրեց այն զենքը,
որ իրը թե պատկանելիս է եղել իր առասպեկտական նախնի Ա-
քիլեսին: Պատկերի վրեց հին հերոսների շրիմների վրա: Կաղ-
մակերպեց կրօնական տոնակատարություններ, մրցություններ
ու խաղեր: Այդ դործողությունների մեջ միաձուլված էին քա-
ղաքական հաշիվները, հավատոն իր կոչման նկատմամբ և ան-
կեղծորեն իր դերով հրապուրվելլը:

Այդ ժամանակ Պարսկաստանի թաղավորն էր Դարեհ Կողո-
մանը, որ հաղթանդամ, վայելչակաղմ տղամարդ էր, օրինակե-
լի ընտանիքավոր, ընդունակ կառավարելու իր հարեմը, բայց
ո՛չ թաղավորությունը, որին սպառնում էր Ալեքսանդրը: Այդ
սահմանափակ մարդն ուներ մի ընդունակ օգնական՝ հույն Մեմ-
նուր: Մեմնոնը գեռևս Ֆիլիպի կողմից Ասիա ուղարկած ջոկա-
տը հետ մղեց գեպի ծովափնյա ամրությունների դիմք, բայց
չկարողացավ նրան քշել Եվրոպա և խանդարել մակեդոնական
դիմումոր ուժերի ափ իջնելուն Աքբագոսում: Փոքր Ասիայի պաշտ-
պանությունը Դարեհը հանձնարարել էր փոքր-ասիական սատ-
րապների ու ազնվասոհմիկների խորհրդին, որոնք թշնամական
կասկածանքով էին նայում հունական հրամանատարներին—Մեմ-
նոնին, ամբենացի իֆիալուեսին ու Խարդիկմին: Մեմնոնի երե-
սին նույնիսկ մեղադրանք չպատեցին, որպես թե նա դիտավո-
րյալ կերպով զանդազկուտություն է ցուցաբերել: Պարսկական
սատրապները մեծ կարծիք ունեին իրենց ուժերի ու ընդունա-
կությունների մասին և պատրաստվում էին մի հարվածով հա-
շիվ մաքրել թշնամու հետ:

Խորհրդի նիստում պարսիկների մեծամասնությունը վճռա-
կանապես դեմք դուրս եկալ Մեմնոնի ուազմական պլանն ընդու-
նելուն, այն է՝ ցամաքում նահանջելուն և ծովի վրա հարձակ-
վելուն: Այդ պլանի հիմքը կազմում էր այն ենթազրությունը,
թե հավանական է, որ բաց ճակատամարտում պարսիկները
պարտություն կրեն և նույնիսկ հաջողության դեպքում հնա-
բավոր չեն լինի վճռականապես ջախջախել թշնամուն: Ուստի
Մեմնոնն առաջարկում էր նահանջել ու երկիրն ավերել, ամ-

յացնել, որպեսզի հարձակվող թշնամին ուժասպառ լինի սովոր
ու ծարավորից, միաժամանակ օգտագործել ծովի վրա ունեցած
դերակչությունը, գրաբել Հունաստանի ու Ասիայի միջև եղած
կղզիները, Հունաստանում ընդհանուր ապստամբություն բարձ-
քացնել մակեղոնացիների վեմ, վերջապես մակեղոնական բանա-
կի մնացորդները ծովից ու ցամաքից փակել առափնյա չերտում:

Պարսկաստանի պատմությունը տեսել էր Դարեհ Վշտա-
պյան թագավորի արշավանքը Աև ծովի ամիերին ապրող սկյութա-
կան վաչկատուն ցեղերի դեմ, որոնք իրենց առաջատակություն-
ներով անհանգիստ էին անուամ պարսկական սահմանամերձ սատ-
րապությունները: Դարեհի զորքը Դանուրին անցավ և նահանջող
սկյութացիների հետեւից դնալով խորացավ սեծովյան ընդարձակ
տափաստանում: Բայ ամսնղության սկյութական առաջնորդներից
մեկը Դարեհին ուղարկեց մի մուկ, մի զորտ, մի թռչուն և
հինգ նետ: Թագավորի շողոքորթներն շտապեցին բացատրել,
թե զբանով սկյութացիք թագավորի տրամադրության տակ են
դնում հողը, ջուրը, օդը և իրենց զենքը: Բայց աղնվականնե-
րից մեկն այդ առաքումն այլ կերպ մեկնարանեց, այն է պար-
սիկները սկյութացիների նետերից փրկվելու համար կամ պետք
է մկների պես հողի մեջ թաղվեն, կամ դրսերի պես ջրի մեջ
սուզվեն, կամ թռչունների պես օդը բարձրանան: Այդ աղնվա-
կանը ճիշտ էր ասել. սովոր ու ծարավոր պարտված պարսկա-
կան բանակն սկսեց շտապ նահանջել և այդ ժամանակ ամենն կող-
մից պարսիկների գլխավերեն սկսեցին սուլել սկյութական մա-
շարեր նետերը:

Բայց IV գարե Փոքր Ասիան, մանավանդ նրա առափնյա
մասերը հարուստ, արգավանդ ու կռւառուրական երկիր էր և
նրա բնակչությունը, ինչպես հույները, այնպես էլ բնիկները
(լիդիացիք, կարիացիք և այլն) ի զեմս Ալեքսանդրի, որը բո-
լորին առառողեն խռատանում էր ամեն տեսակ բարիքներ, տես-
նում էր իր գրիչին, կամ, լուսագույն զեսքում, անտարեր էր էր
վերաբերում իր ախրոջ գոտինելուն: Փոքր Ասիան ամայացնելու
համար հարկավոր էր նախապես փոքրասիացիներին բնաջինջ
անել: Այս էր Մեմոնի պլանի առաջին մասի քաղաքական ա-
րատավորությունը, մի պլան, որ իրականում կհանդեր պար-
սիկների կողմից Փոքր Ասիան թողնելուն:

Փուլութիամի՝ Հելլեսպոնսուին մոտիկ գտնվող երկրի սատ-
րապ Արսիսոն ասաց, որ ինքը չի թույլ տա իր սատրապությու-
նում ոչ մի տռն վառել: Մյուս պարսիկ աղնվատոհմիկներն էլ
նրա կողմն անցան: Որոշում ընդունվեց՝ հրաժարվել երկարա-
ձիք պատերազմ մղելուց և Հաղթանակ որոնել բաց ճակատա-
մարտում: Եվ պարսիկներն իրենց ուժերը չարժեցին զեսի Գրա-
նիկ ղետը, որ թափվում է Մարմարա ծովը: Մակեղոնական

դորքերն առաջ էին շարժվում չորս զսրայուներով, իրենց աշխանդարդում ունենալով սարլսոփորներին և թեթև հետեւելը:

Գետի աջ ափը, որ բոնել էին պարսիկները, մի քանի մետր բարձրությունից ուղղաձիգ իշխում էր գեպի ջուրը: Գետը տեղակաղաքությունից վերջալուք մոտենում էր: Ծերունի Պարմենիոնն առաջարկեց ճամբար խփել գետի ափին և, թշնամու հեծելագորը դիշերային սպասումով հողնեցնելով՝ առավոտյան սկսել անցումը: Ալեքսանդրը սրաթափանց հայացք գցեց թշնամու անհեթեթք դասավորության վրա, որը առջևում կանգնեցրել էր հեծեկազորը, իսկ թիւկունքում կանգնեցրել էր ընտիր վարձու հետեւեկը, որպես ճակատամարտի համբ վկաները: Մարտի դաշտում, ինչպես շախմատի տախտակի վրա, ամենահաջող քայլերն ստացվում են ի հաշիվ հակառակորդի սխալների: «Հեղեղսպնոտան անցնելուց հետո Գրանիկից վախենալու հարկ չկա», — ասաց Ալեքսանդրը և հրամայեց զորքը շարել ճակատամարտի:

Զենքի վայը, սպազմաբարտի վրայի սպիտակ փետրափունջը, արքայական տեսքն ու հրամայական տոնը պարսիկներին մատնեցին, որ Ալեքսանդրը աջ թեռումն է գտնվում: Սպասելով, որ պլիսավոր հարվածն իրենց ճախի թեխն կտրվի՝ պարսկական հերամանատարությունն այստեղ խիստ շարքերով դասավորեց Մեմնոնի ու նրա որդիների հեծյալ ջոկաները, մի քանի վորք-սկական սատրապների հեծելազորերը և ինդիայի սատրապ Սպիթրիքատի թեթևաղին վրկանցիներին: Զախի թեխն միացան նույն քառասուն անվանի պարսիկներ, որոնք փափառվում էին ընդհարվել մակերտնական առաջնորդի հետ: Պարսիկների աջ թեռում դասավորվեցին 1000 լիդիական և 2.000 բակտրիական ձիավորներ: Կենտրոնը նույնպես բազկացած էր հեծեկազորից: Իսկ հետում, բարձունքի վրա լուռ նատած իր հերթին էր սպասում հետեւակազորը:

Այս օրիգինալ ճակատամարտում պարսիկները թվական մեծ զերակշռություն ունեին հեծեկազորի նկատմամբ (հավանաբար 4:1 հարաբերությամբ), իսկ մակերտնացիք՝ հետեւակազորի նրկառում: Պարսկական հետեւակազորը ճակատամարտում նկատելի դեր չէր խաղում: Նա առանց այն էլ համեմատաբար սակավաթիվ էր, իսկ մի քանի հազար հունական վարձու հետեւակար մարտին մասնակցություն ունեցավ միայն ամենավերջում:

Սարբառփորների իլերը, պեսնիական թեթև հեծելազորը, էթերների իլերը և զիվասպիտների տակսիսները փողերի հրնչումների տակ, մարտական երդեր երգելով սկսեցին անցնել Դրանիկ գետը: Այսուհետեւ անհավասար զծոյլ առաջ շարժվեցին Գրանիկ գետը: Այսուհետեւ անհավասար զծոյլ առաջ շարժվեցին թեթև զորքամարդ ձաւի հաշված՝ հետեւյալ կարգով — թեթև զորքամարդ, թեսալիական հեծելազորը, հունական հեծելազորը, օդ-

ըիզների ձիավորները, ֆալանգաներն ու դիպասպիտները, էթերների մնացած յոթ իլերը, ադրիանյան տեղաձիզները, նիզակավորները։ Հուռական դաշնակից և վարձու զծային հետեւակադրն ըստ երեսլիքին դրավել էր կենարնի ֆալանգաների աշխանքների տարածությունները և մասամբ էլ ուղեցի էր կառմել։ Զախ թե՛ հրամանատարն էր Պարմենիոնը՝ Ալեքսանդրի աջ ձեռքը։ Պարմենիոնի թե՛թե զորամասերը հրաման էին ստացել՝ ձախ կողմից ընդդրկել պարսիկների աջ թե՛լ։

Ալանդարդի սարիսոփորները, պետներն ու հետեւակը, ուրնք իրենց վրա էին դարձրել պարսիկների ձախ թե՛ դիմավորութիւնը, թշնամու տեղերի հարվածների տակ դժվարությամբ էին դուրս զալիս ջրից ու առավիճայա տիզմից։ Այդ ժամանակ Ալեքսանդրը դեպի ձախ մի կիսաշրջան կատարեց և իր էթերների գլուխ անցած՝ թե՛ կողմից խրվեց պարսիկների կենարունը, որին արդեն առջելից մոտենուած էին մակեդոնական կենարունի ֆալանգաներն ու դիպասպիտները։ Պարսկական հեծելազորի դիմավոր մասսան և պարսկական ամբողջ ավագանին նրան ընդուած նետիւցին։ Ակավեց ձիավորների մի կատաղի մարտ, որ տեղ, հին պատմադրի ասածով, մակեդոնական նիզակը հաղթեց պարսկական տեղին։ Զիավորների խոչը մասսաների մարտը Գրանիկի ճակատամարտի բնորոշ մոմենտն է։

Մասսիվ զրահ ունենալու չնորհիվ մակեդոնացիք չառ քիչ ձիավոր սպանվածներ ունեցան, բայց վիրավորների թիվը համեմատաբար մեծ էր։ Մարտի չնչով արբած Ալեքսանդրը կըսված էր առաջին շարքերում՝ իր անձնական օրինակով ոգեշնչելով իր մարտիկներին։ Նրա ձեռքի նիզակը կոտրվեց, նրա զինակիրը ևս իր նիզակը կորցրեց։ Նա հենց արշավիլ ընթացքում բռնեց իր հույն բարեկամներից մեկի իրեն նետած նիզակը և սպանեց Դարեհի ազգական Միհրդատին, որը կարողացավ միայն վիրավորել թագավորին իր տեղով։ Միհրդատի եղբայր Ռիզապը թրի ուժեղ հարվածով ճեղքեց թագավորի գլխի սաղավարտը և թեթև չանդուեց նրա մաշկը, բայց դրան ի պատասխան՝ նիզակի հարվածը ծակեց անցավ Ռիզապի զրահն ու կուրծքը։ Այդ բոպեին Ալեքսանդրի վրա նետիւց Լիդիայի սատրապ Ապիթրիդատը և անդեն Ալեքսանդրի գլխին ճոճեց իր կեռ թուրը, բայց կրտսը կտրեց պարսիկի ձեռքը թրի հետ և հետեւյալ հարվածով վերջ տվեց նրա կյանքին։

Մարտում ընկած նշանավոր պարսիկների մեջ էին Դարեհի փեսա Փաննակը և Արտաքսերքսեսի թոռ Արտօւպալը։ Պարսկական ավագանին ցուցաբերեց մեծ քաջություն, բայց նիզակ իւելք։ Ի վերջո պարսկական կենարունը չգլմացավ ճակատի ու թե՛ միաժամանակ պարսիկի ձեռքը թրի հետ և հետեւյալ հարվածով վերջ տվեց նրա կյանքին։

զբկված ջոկատները ցաք ու ցրիվ փախչել սկսեցին դետափից :
Փախտառը քամու պես ընդդրկեց ամբողջ պարսկական հեծելա-
զորը և միայն աղելի քան հազար ձիավորների ու ձիերի դիմակ-
ները մնացին դետափին պառկած :

Պարսկական հեծելազորի ծաղիկը կործանվեց, բայց նրա
ջախիման ամենաղաքն պտուղները բաժին ընկան հունական
վարձկաններին : Լինելով բոլոր կողմերից շրջապատված, նետե-
րի ու տեղերի ամպանման տարափի տակ, սեղմված ֆալանգա-
ներով և ջարդ կրելով իրենց շարքերի մեջ ներխուժող մակերո-
նական հեծելազորից՝ նրանք կարող էին միայն թանկ ծախել ի-
րենց կյանքը : Շատ մակեղոնացի զինվորներ վիրավորվեցին ու
սպանվեցին, սպանվեց նաև Ալեքսանդրի տակի ձին : Վարձկան-
ների մի մասը փորձում էր փրկվել ընկածների դիմակների տակ :
2.000 մարդ գերի բռնվեցին : Ճակատամարտը վերջացավ :

Գերի հույները չլթայակառ ուղարկվեցին Մակեդոնիա-
տաժանակիր աշխատանքի, միայն թերեացիք ներումն ստացան :
Մարտում ընկած բոլոր թե՛ հույները և թե՛ պարսկաները թաղ-
վեցին հարգանքներով : Աթենք, Աթենաս աստվածուհու տաճարն
ուղարկվեց պարսկական 300 հատ լրիվ սպառազինություն՝ հե-
տեյալ մակաղբությամբ . «Ալեքսանդր, որդի Ֆիլիպի և հելլե-
նացի, բացառությամբ սպարտացիների, Ասիայում բարբարոս-
ներից վերցրած ավարից» :

Դժվար է ասել, մակեդոնացիների կորուստները նվազեցրած
չե՞ն արդյոք հին պատմագիրների կողմից, որոնց ասածի հա-
մաձայն կովում ընկել են միայն 85 ձիավոր ու 30 հետևակ և
վիրավորվել են մի քանի հարյուր մարդ : Ալեքսանդրը հայտնի
քանդակագործ Լիսիալին հրամայեց բրոնզից ձուլել այն 25 է-
թերների արձանները, որոնք առաջինն ընկան կովում և հոռ-
տարափ զոհվածների ընտանիքների մասին : Նա եղավ բոլոր վե-
րափորների մոտ և յուրաքանչյուրի հետ առանձին զրոյց ա-
րագ :

Պարսկաների կորուստներն անհամեմատ ավելի էին : Գրանի-
կում վերջին զոհը եղավ Փոյուղիայի սատրապ Արսիաը, որը,
վախենալով, թե մահ կդանի դահճի ձեռքով, շտապեց ինքնաս-
պանությամբ վերջ զնել իր կյանքին :

«Կեսարի սկզբունքները նույնանման էին Ալեքսանդրի ու Հաննիբալի սկզբունքների հետ... Կենտրոնացնել իր ուժերը՝ չդրսկորելով իր թույլ կողմերը, արագորեն շարժվել գետի կարեռագույն կետերը, օգտվել ըարոյական աղդեցությունից, իր գենքի փառքից, նրա ներշնչած սարսափից և քաղաքական միջոցներից՝ իր գանձակիցներին հավատարիմ և հպատակ ժողովուրդներին հնագանդ պահելու համար»:

Ն ա պ ո լ ե ո ն

Գրանիկի ճակատամարտից հետո Հելլեսպոնտոսի Փռյուղիան ամբողջին գրալի լով՝ Ալեքսանդրն շատակեց դիմումի Լիդիա: Մեր թվականությունից առաջ VI դարում Լիդիան մի հզոր ոլեատություն էր, իսկ նրա թագավորը կրեսոսի հարասությունը նույն իսկ ասելիք էր դարձել: VI դարի երկրորդ կեսին նա ընկավ պարսիկների տիրապետության տակ: Լիդիայի բնակչությունն Ալեքսանդրին չդիմադրեց, նրա մայրաքաղաք Սարդիկի բնակիչները հյուրասիրաբար բաց արին նրա առաջ քաղաքի դարբասները: Սարդիկի գանձարանում թալավորը բակական շատ հարստություն դատավ և այդ նրան հնարավորություն տվեց հույներին ու փոքր-սասիացիներին պարակական լծից ապատագովի մեծահոգի դերի մեջ մտնելու: Ալեքսանդրը վիճում էր նախկին հարկերի ասպարհները, թեթևացնում էր հարկերը, առատության հրամաններ էր արձակում և առատ խոստումներ ու սիրալիք խոսքեր չէր խնայում: Շուտով արևելյան պալեցիկ քրմությունն առատ նվերներով ու ամեն տեսակ արտոնություններով ներդրավվեց ծառայելու նվաճողին: Զիար մի աստված, որին թալավորը չփառձեր կաշառել ու դրամի կողմը: Զինվորական, ֆինանսական ու վարչական բոլոր կարենոր պաշտոններում Լիդիայում և ամբողջ Փոքր Ասիայում նշանակվում էին առավելապես մակեդոնացիներ ու հույներ: Իր զորքերի մակեդոնական կորիզը ցրելուց հեռատեսարար խումափերով՝ Ալեքսանդրը պահակային ու կայսերացին ծառայության մեջ թողնում էր զիսապորապես դաշնակից հունական զորքեր՝ մակեդոնացիների հսկողությամբ: Հույներին էր հանձնազարդում նաև այն վայրերի նվաճումը, որոնք բանակի հիմնական ճանապարհից հեռու էին ընկած:

Մինչ այդ մոտենում էր պարսկական նավատորմը՝ բաղկացած 400 նավերից, Փյունիկայի, Կիսրոսի և Փոքր Ասիայի առափնյա մարզերի նավագների ընտիր անձնակազմութ: Նավերի վրա կային նաև հունական վարձկաններ: Ալեքսանդրի մեջ մի որբան հղացաւ. այդ նավատորմը ոչնչացնել ցամաքում հաղթանակ-

ներ տանելով, նրան ծովային բազաներից զրկելով և Պարսկաստանի առավելաց մարդկարը նվաճելով: Մակեդոնական նախատորմքն հրաման տրվեց՝ շտապել գեպի Միլետ և Լեսբոսն ու Էգեյան ծովի մյուս կարեոր կղզիները միացնել մակեդոնական դաշինքին:

Փոքր Ասիայի արևմտյան ափերի իոնիայի հունական քաղաքները սիրով անցնում էին մակեդոնացիների կողմը: Բուն Հելլադայում Մակեդոնիան օժանդակում էր գեմոկրատիայի թւը՝ նամիներին, բայց Ասիայում կուրս էլք վերցրած տապալել պարսիկներին բարեկամ օլիգարխիան և ստեղծել չափավոր-դեմոկրատական կարգեր: Եփեստոսում՝ որք կոչվում էր «իոնիական քաղաքների թագավոր»՝ և ամբողջ Իոնիայում գեմոկրատիայի ու օլիգարխիայի կատալի պայքարը սովորաբար վերջանում էր պարսիկներին բարեկամ պարտիայի կորիզի բնաշնչումով, որից հետո այդ քաղաքները մտած մակեդոնական զորքերը կարգ էին հաստատում և զեմոկրատական կարգեր սահմանում: Հունական քաղաքների հետ Ալեքսանդրը վարվում էր ո՛չ որպես նվաճող, այլ որպես ազատագրող, ցեղակից ու բարեկամ: Նախին պարտավորությունների ու հարկերի վերացումը կամ կրծատումը, ժողովրդական վարչությունը վեցականունելը, «ազատություն» հոչակելը, հելլենական ողին խրախուսելը և զրա հետ միասին քուրմերին ու տաճարներին հովանավորելը — ահա սրանք էին արագիսի պահճելլենական քաղաքականության հիմնական սկզբանական բաղադրիչները: Քաղաքներից շատերը ի միջակի չեին հրաժարվելու զենքի ուժով իրենց վղին փաթաթվող բարեկամությունից և դաշն էին կնքում Մակեդոնիայի հետ: Ալեքսանդրի, Պարմենիոնի և Ալկիմախի ջոկատներն արագործն զրավեցին կոլիայի ու իոնիայի բոլոր քաղաքները Փոքր Ասիայի արևմտյան ափերին, բացի Միլետ քաղաքից: Այդ նույն ժամանակի մակեդոնական նախատորմը լես Լեսբոս և Քիոս հարուստ կղզիներում՝ պարսիկների կամաց կատարներին տապայելով՝ ուղեկորչեց դեպի Միլետ: Ալեքսանդրը միանալու ազագությունն ամրապնդելու համար: Նա տաճարներ էր հիմնում, վերականգնում էր մի ժամանակ պիերված հունական քաղաքները, կազմակերպում էր զինվորական հանդեսներ, սպորտային մրցություններ, խաղեր, կրոնական արարություններ, թատերական ներկայացումներ, մերձենում էր տեղական ինստիտուցիոնի հետ: Այնուհետև բանակը դուրս եկավ գեպի Միլետ:

Հարուստ Առևտրական Միլետը պարսիկների օրոք արտոնյալ վիճակում էր գտնվում, օգտվում էր ինքնավարությամբ և պահպանել էր զեմոկրատական կարգերը: Ալեքսանդրի «ազագահպանել էր զեմոկրատական կարգերը: Ալեքսանդրի «ազագահպան» և պարսիկների «ճնշման» միջև տասաճնիւմ՝ Միլետը չեղոքությունը ընտարեց, սակայն Ալեքսանդրը չճանաչեց չեղո-

քությունը և քաղաքն իր մեջ ընդունեց պարսկական զորքերը՝ Մակեդոնական նավատօրմը կարողացավ գրավել Միեւսի ռազմական նավահանդիսաբը, որ դառնվում էր նավահանդստին տիրապետող կղզու մոտ։ Մի քանի օրից հետո երես պարսկական նավատօրմը, որ փորձեց քաղաքի բլոկադան ճնշել, կամ մակեդոնական նավատօրմին ծովային մարտի մեջ ներբռավել, սակայն նրա ըսլոր փորձերն ապարդյուն անցան։ Ալեքսանդրը հրամայեց ծովային մարտ չոկու թվաղես, դուցե և որպակապես ուժեղ հակառակրթի հետ։ Նա հաստատորեն հետեւում էր իր նշած պլանին — պարսկական նավատօրմը ոչչացնել մակեդոնական հաղթական բանակի միջոցով և իր բախոր միայն լավ խաղաթթի վրա էր գնում։ Միեւսը գրավեց զբոհով, նրա պաշտպանների մեծ մասը կռտորվեց, պաշարվածների մի մասը փրկվեց մակույկներով։ Թագավորը ներսւմն չնորհեց և իր մոտ ծառայության ընդունեց 300 հույն վարձկանների, որոնք թաքնվել էին առևտրական նավահանդստի մի փոքրիկ ժայռու կղզում։ Պարսկական նավատօրմը հեռացավ Միեւսից։

Նավատօրմն իր 30-հազարանոց անձնակազմով նույնքան ծախս էր նստում, որքան բանակը։ Փոքր Ասիայում Ալեքսանդրի վարած քաղաքականությունը որպես կանոն նրան թույլ չէր տալիս ռազմատուղանք վերցնել կամ բռնադրավումներ կատարել։ Պատերազմի այդ շրջանում Ալեքսանդրի Փինանսական միջոցներն աննշան էին։ Նավատօրմն ատահովել էր բանակի սույումն Սախա և նպաստել էր առաջին ռազմական զործողություններին, բայց հետագայում, նկատի ունենալով պարսիկների գերակշռությունը ծովի վրա, պետք է գատապարտված լիներ ծանրաբեռնող պատիվության։ Ռւսակի Ալեքսանդրը տրամադրութիւն կատարել համար իր մոտ թողեց մի քանի տասնյակ նավեր, որոնցից 20-ը աթենական, մնացած ամբողջ նավատօրմն աղատ արձակեց։

Մակեդոնական բանակը շարժվեց գետի կարիք՝ Փոքր Ասիայի հարավ-արևմտյան ափերը նվաճելու։

Կարիսան, որ հույն ու կարիացի բնակչությամբ հարուստ երկեր էր, կառավարվում էր իր սեփական թաղափորական Մավսուլ գինաստիայի կողմէց և Պարսկաստանի նկատմամբ կախյալ դաշնակցի վիճակում էր դանվում։ Կարիայի տերերը կառավարում էին նաև հարեւն Լիկիա մարզը, ունեին բավական ուժեղ նավատօրմ, իրենց ոսկե գրամն էին կարում, ձեռք էին մեկնում հարուստ Միեւսին և խառնվում էին հունական զործերին։ Նըրանցից կախյալ վիճակում էին դանվում էղեյան ծովի շապկիներ, այդ թվում Հուդոս խոշոր, հարուստ կղզին։ Կարիա մի թաղուհի Աղան, որին իշխանությունից հեռացրել էին պարսկական օրիենտացիայի կողմանակիցները, ակրահօժար կերպով որդեգրեց Ալեքսանդրին, որով օրինականացրեց նրա պա-

Հանջները կարիայի նկատմամբ։ Կազիայի հունական քաղաքների նկատմամբ ընդունվեց ավտոռոնոմիայի իրավունք և տուրքերից ազատություն։ Շուտով ամբողջ կարիան, բայց նրա կենտրոն հղոր Հալիկարնասից, ընկալ մակեդոնացիների ձեռքը։

Հալիկարնասում Մեմնոնի և աթենացի կիֆիալտեսի հրամանաւարությամբ կենարոնացել էին հունական ու մակեդոնական էժիդրանատները, պարսկական զորքերն ու հունական վարձկանները։ Քաղաքը երեք կողմից շրջապատված էր ամուր պարխապնեսով, իսկ հարավային կողմը նայում էր ծովին։ Ամրոցի հետ կապված էին չորս ամրությունների մեջ էին մտնում մի քանի միջնաբերդ։ Պարսկական նավատորմը կարող էր անընդհատ ամեն անհրաժեշտ բան մտակարարել քաղաքին։ Մեմնոնն ու նրա օդնականները եռանդուն պաշտպանության էին պատրաստվել։ Առանց Հալիկարնասը գրագելու Ալեքսանդրն առաջ շարժմել էր կարող։

Հալիկարնասի մոտ հաղթողը եղավ մակեդոնացի ինձեները։ Խոր ու լայն խանդակը մի քանի տեղում լցվեց, պարխապներին դրույային աշտարակներ մոտեցվեցին և նետող զործիքների, կրիաների ու պաշտպանական պատերի ծածկի տակ սկսվեց պարխապների տակը փորելու աշխատանքը, միաժամանակ եռանդուղ դործում էին բարանները, պատժակիցները և ուրիշ պարսպակործան դործիքներ։ Պաշտպանվողների համառությանը զուգընթաց աճում էր և հարձակվողների համառությունը և աշխատանքներն առաջ ընթանում, քանզի մում էին պարսպակները, նրանց մեջ ճեղքեր էին բացվում, փուլ էին դալիս աշխարակները և քաղաքի անկումը մոտենում էր ժամ առ ժամ։ Պաշտպակածների կատաղի գիմազրությունն անձանդող էր անցնում, զոհվեց մոտ 1000 մարդ, այդ թվում՝ Մեմնոնի շնորհալի օդնական կիֆիալտեսը։ Դրությունն անհռուալի էր դարձել։

Թշնամու զրոհին չպատելով՝ Մեմնոնը քաղաքը վախեց, կայազորեր թողեց կղզիների ամրություններում ու պարանոցի ամրոցում, իսկ ինքը զորքի մի մասի հետ նավ նստեց։ Ալեքամու նորուն սոխաված եղավ կղզիների ու առավելյա ամրությունները պաշարելու համար մի ջրկատ առանձնացնել, բաղկացած 3.000 վարձկաներից և 200 ծիսակարներից՝ Պաղոմեոսի հրամանաւարությամբ։ Հալիկարնաս քաղաքն արկրավեց, նրա բնակիչները բնակեցվեցին երկրի զանազան մարզերում։

Առունը մոտենում էր։ Մինչև 333 թ. գարունը չէր կարելի սպասել, թէ Փոքր Ասիայում պարսկական մեծաթիվ զորքեր կերեան։ Բոլոր նորապասակ զինվորներն արձակվեցին և իրենց տները՝ ընտանիքների մոտ ուղարկվեցին։ Պարմենիոնը ծանր հեծելազորով, զումակով, դաշնակից զորքերով ու մեքենաներով հեծելազորով, զումակով, դաշնակից զորքերով ու մեքենաներով ուղարկվեց Սարդի՛ Զանդստանալու, իսկ Ալեքսանդրը մնացած զորքը տարավ Լիլիա՛ Փոքր Ասիայի հարավում զտնվող ծովա-

փընյաւ մարզը։ Աիկիայի բազմաթիվ քաղաքներն ու ավանները՝ ուարսկական կայազորերից զրկված լինելով, անձնատուր էին լինում առանց դիմադրության։ Ալեքսանդրը Ի.իկիայում անխափան թողեց նրա հնամենի ֆեդերատիվ կառուցվածքը և լիկիացիներից պահանջեց, որ պարսկական նարվատորմից հետ կանչեն իրենց նարվեցը։ Այնուհետեւ նա սկսեց դրավել հարեւան Պամփիլիան։

Պամփիլիայում թաղավորը տեղեկացավ, որ իր թեսալական հեծելագորի հրամանատարը դամաճանել է։ Այդ հրամանատարի եղբայրները, որոնք պատկանում էին Լինկեստիդյան իշխանական տոհմին, որպես օրինական դինաստիայի դեմ դաշտարություն կաղմակերպողներ մահապատճի էին ենթարկվել Ալեքսանդրի դաշտարարի դաշտարարության մեջ կամացանական գագաթի որոշակի հանցանշաններ ըլինելու պատճառով Ալեքսանդրը բարվականացավ դաշտարանության մեջ կասկածվաղներին հսկողության տակ կալանքի առնելով։

«Պամփիլյան սանդուղքի» լեռնակույսերը դեպի արևելք անցնելու համար միայն մի նեղ շավիղ ունեին ծովի եղերքով։ Հարավային քամու ժամանակ այդ շավիղն էլ ծածկվում էր ծովի ալիքներով։ Իր զորքի մի մասը լեռնանցքով ուղարկելով մասացած մասի հետ Ալեքսանդրն անցավ այդ նեղ շավիղով։ Հետագայում առասպել ստեղծվեց, թե իբր երբ թագավորը մոտեցել է ծովին, քամին հնապանդությամբ իր ուղղությունը փոխել է և ծովը հետ է քաշվել լեռներից՝ ճանապարհ բանալով մակեդոնական զորքի համար։ Սակայն վստահելի տեղեկությունների համաձայն Ալեքսանդրն ու իր զորքերը այդ շավիղով անցել են մինչև ծնկները ջրի մեջ թաղված։

Պամփիլյայի քաղաքներից մի քանիսը վարձեցին դիմադրություն ցույց տալ, բայց ճնշվեցին, նրանց վրա ուղղմատուցանք գրվեց և ստիպված եղան պատանդներ տալ ու ձիեր մատակարարել հաղթողին։ Փոքր Ասկայի ամբողջ ծովակիը ընդհուպ մինչև Փոքր Ասկան ու Սիրիան իրարից բաժանող լեռնաշղթան այժմ ընկալ մակեդոնացիների ձեռքը։ Մակեդոնացիների գլխավոր ուժերը սարահարթի ու ծովափի միջև ընկած լեռներն անցնելով մտան ներքին Փոյտագիա։ Տեղատեղ ուղղմատենչ լեռնական ցեղերի հետ արյունահեղ ընդհարումներ էին տեղի ունենում, բայց Ալեքսանդրն առանց հիմնական ուղղությունից չեղվելու արագորեն առաջ էր զնում։ Նա լեռնային ամրոցները չուրջանցում էր՝ նրանց գրավելը թողնելով իր վոխարքաներին։ Դեպի Փոքր Ասկայի խորքը և գետի Միջագետք առնող ճանապարհը քակող Քելեն ամրոցի մոտ նա թողեց 1500 ժարդուց բաղկացած մի ջոկատ, ամրոցի կայազորի հետ համա-

ձայնություն կայացնելով, ըստ որի, օժանդակ ուժերը չինելու դեպքում ամրացը պետք է որոշ ժամանակամիջոցից հետո անձնառուք լիներ: Մակեղոնացիք մտան Ներքին Փոյտղիայի մայրաքաղաք Գորդի:

Գորդիում Աւեքաննողը կարող էր ապահով կերպով հանգստանալ... Տաղանդավոր ու եռանդուն զորավար Մեմնոնը, որ Դարեհի հրամանով նշանակված էր պարսկական նավատորմի և Փոքր Ասիայի բոլոր զինված ուժերի պետ, հանկարծակի մահացավ ծովում իր ծավալած ուսղմական գործողությունների ամենաեռուն ըրջանում: Նա գրավել էր Սամոս, Հռոդոս, Կոս, Սպորադյան, Քիոս կղզիները և Լեմրոս կղզու մեծ մասը: Լեմրոսի խոշորագույն քաղաք Միտիլենան բոլոր կողմերից պաշարված էր: Հունաստանը հուրվել էր, Սպարտան, որ հրաժարվել էր գեղի Արևելք ձեռնարկված արշավանքին որևէ մասնակցության ունենալուց, պատրաստվում էր ոտքի երնելու, Մեմնոնը հարաբերությունների մեջ էր մտել հունական մի շարք քաղաքների հետ: Եվբեա կղզին, որ Աթենքին մոտիկ է գտնվում, պատրաստվում էր իր նավահանդիսաներում ընդունելու Մեմնոնի նախառարձրը: Միտիլենան երկար դիմանալու հնարավորություն չուներ... Բայց ահա, Ալեքսանդրի համար ճիշտ և ճիշտ րազմականին, Մեմնոնը մեռավ, գուցե և իր թշնամիների կողմից թունավորվելով:

Մեմնոնի մահը ծանր հարված էր Դարեհի համար: Նա զինվորական խորհրդակցություն հրավիրեց: Այդ խորհրդակցությանը հույն զրբավար Խարիբեմն առաջարկեց հույն վարձկաններից և պարսկական ընտիր ջոկատներից խառն զորք կազմել և իրեն՝ Խարիբեմին վստահել պատերազմի ամբողջ զեկավարությունը: Պարսից ազնվականների հետ տարբացած վեճի ժամանակ Խարիբեմն սկսեց ապացուցել, թե պարսիկներն առանց հույների օդնության անզոր են պարբերելու Մակեդոնիայի դեմ և Դարեհ արքան կիրծանալի, եթե իր խորհրդարքը չլսի: Դարեհը և՛ որպես պարսիկ, և՛ որպես ամենազոր տիրակալ կրկնակի չափով վիրավորված այս խոսքից՝ ձեռքը դիպջրեց Խարիբեմի զոտուն և թիկնապահները նրան գուրս տարան և խեղդեցին: Առում են, թե Խարիբեմի վերջին խոսքերն էին. «Դու շուտով կղզաս, որ չես կարողացել զնահատել ինձ: Ինձ համար վրեժառնողը հեռու չէ»:

Որոշեց պետական աշխարհազոր գումարել, որի գլուխ պիտի անցնեփ ինքը՝ Դարեհը, նավատորմից կանչել բոլոր հույն վարձկաններին և երր մակեդոնացիք Փոքր Ասիայից դուրս կը գան, բոլոր ուժերով հարվածել նրանց: Մեմնոնի պլանը թագուհի, մահից հույն վարձկաններին կանչելուց հետո վեց: Մեմնոնի մահից և հույն վարձկաններին կանչելուց հետո պարսկական նավատորմը գործում էր դանդաղ ու անվճռական, պարսկական վերջին հաջողությունը եղավ Միտիլենան գրավե-

Ա և մի քանի մանր կղղիներ վերցնելը։ Այսուհետեւ նոր կազմակերպված մակեդոնական էսկադրաները կասեցրին պարսկական նավատորմի դործողությունները և Հելլագան ընկնելու վտանգն առժամանակ վերացավ... Պարսկական դորաժողովի դանդաղությունը Ալեքսանդրին հանրաբանություն տվեց Գորդիում հանդիսատ անց կացնել ձմեռվա վերջը։

Գորդիում Ալեքսանդրին ցույց տվին Գորդիի առասողելական թագավորի կառքը, որի լծասարքը կասմիած էր մի շատ հնարամիտ հանդույցով։ Գոյություն ուներ մի դուշակություն, թե իրը ով որ կարողանա այդ հանդույցը քանդել, նա կտիրի ամբողջ Ասիային։ Ալեքսանդրը դորդյան հանդույցը կտրեց իր թրոպ։

Գարնան դեմ Գորդիում հավաքվեցին Պարմենիոնի դորաժամական հեծելազորը, դումակն ու մեքենաները, արձակուրդից վերադարձած նորապատճերը և նրանց հետ էլ նոր ուժեր՝ 3000 մակեդոնական հետևակներ, 300 մակեդոնացի, 200 թեսալացի և 150 էլեացի ձիավորներ։ Գարնան սկզբին դորքերն արշավի դուրս եկան և առանց կանգ առնելու նվաճված Պաֆլատոնիայում, Անկիրի (Ներկայիս Թուրքիայի մայրաքաղաք Անկարայի) վրայով ուղևորվեցին զեսփի Տավրոսի լեռնանցքերը։ Ճանապարհին ընկած Կապաղուլիիան դարձվեց մակեդոնական մարզ, սակայն վճռական ճակատամարտից առաջ իր ուժերը չցրելու համար մակեդոնացիք ստիպված եղան հրաժարվել Սև ծովի ափերի քաղաքները (Սինոպը, Զերտկլեան և այլն) գրավելու մըսքից (այդ քաղաքները կառավարում էին պարսիկների նշանակած մարդիկ)։ Բոլոր ուժերը փոխադրվեցին Միջերկրական ծովի ափերը։

Դեպի Սիրիայի սահմանակից Կիլիկիա էին տանում Տավրոսի լեռնանցքերը, որոնք դրամի էին Կիլիկիայի սատրապ Արզամի ջոկատները։ Ալեքսանդրը հեծելազորի ու թեթև հետևակաղորի շետակի հարվածով լեռներից ցած շարստեց թշնամու պոստերը և շուար հարձակվեց Կիլիկիայի հարթավայրի վրա, մաքրեց այն պարսկական թռուցիկ ջոկատներից, որոնք Արզամի հրամանով արվերում էին ամբողջ մարզը։

Կիդնա լեռնային գետի պաղ ալիքների մեջ անզգույշ լողանալը Քիչ մեաց աղետ պիտի առաջացներ։ Թագավորին ջրից գուրս հանեցին վիտակությունը կրցրած միջակում և միաժամանակ նա կյանքի ու մահվան միջև էր դանվում։ Բայց այդ հապաղումն արշավի ընդհանուր ընթացքի վրա նկատելի հետեւանքներ չունեցավ։

Պարմենիոնը տիրեց Երկրորդ լեռնաշղթայի։ Այժմանի ինոնանցքերին, որը առաջալոր Ասիան բաժանում էր Փոքր Ասիայից։ Ալեքսանդրը, ճանապարհին լեռնական ցեղերին ճնշելով, ավարտեց ամբողջ Կիլիկիայի նվաճումը։ Բայց այդ ժամանակ

տեղեկություն ստացվեց, թե Դարեհ արքան մեծ զորքով դանը-
վում է Սոխի սիրիական փոքրիկ քաղաքում, որ զեպի Սիրիա
տանող լեռնանցքերից երկու երթաչափ հետու էր գտնվում:

ԻՍՍՈՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸՆՑԸ

«Եթե ուազմական արվեստը միշտ անվտանգ դիբք
բռնելը լիներ, ապա փառքը միջակ մարդկանց սեփակա-
նությունն կդառնար»:

Ն ա պ ո լ ե ռ ն

ՄԵՆՔ չուխտենք և երբեք չենք իմանա Դարեհի հայաքած
հակայական զորքի թիվը, որի մեջ էին մտնում նաև պարսկա-
կան ծառայության մեջ գտնվող բոլոր հույն վարձկանները: Այ-
սուամենայնիվ Դարեհը ժամանակ չունեցավ իր այս բազմացեղ
զորքի մեջ կանչելու իր պետության արևելյան ցեղերի ամբողջ
հեծելազորը և հաղիվ թե իսսարի ճակատամարտին զբաղի թվով
բակտրիական, սոգդիական կամ սկյութական թեթև ձիամորներ
մասնակցած լինեին: Հույն պատմագիրներից ոմանք Դարեհի
զորքի թիվը հաշվում են 600.000 մարդ: Այդ ժամանակնե-
րում 600.000 մարդուց բազկացած բանակ մի տեղ համարել,
պարենավորելու ու ժամանակարարել հնարավոր չէր և պարսկական
սատրապների ու ազնվականների ուժից վեր էր շատ թե քիչ տա-
նելի ձևով կառավարել բազմալեզու, բազմացեղ ու անվարժ
մարդկանց այլպիսի մի վիթխարի մասսա: Այսուամենայնիվ
Դարեհի զորքն իր թվով մի քանի անգամ ավելի էր մակերունա-
կան զորքից և, բացի 10.000—12.000 հունական վարձկաննե-
րից, նրա կազմի մեջ էին մտնում ծանրազեն կորդախները, որ
նրա հետևակազորի ամենակորիված մասերն էին, որոշ թվով
ծանրազրահ ձիավորներ, նշանակալից թվով թեթև հեծելազոր,
արքայարկան գվարդիայի և նիզակավորների զորագունդը, մեծ
թվով նետածիդներ և վերջապես աշխարհազորի բազմացեղ ջո-
կատներ:

Պարսիկների սովորության համաձայն թագավորական աշ-
խարհազորի առշավի զուրս գալը հաղթական երթ էր հիշեցնում.
առջևից հանդիսավոր կերպով զնում էին մոգերը, որոնք հիմն
երգերով տանում էին արծաթե անոթների մեջ դրված սրբազն
կրակը: Այս վիթխարի շքերթի, որի գլխավերեւը ճոճվում էր
փայտի ծայրին ամրացրած արքայական արծիվը, զարդն էին
կազմում «անմահները», իրենց ոսկե շղթաներով և շողշողուն
ոսկե զրահներով: Ինքը՝ Դարեհը չորս հատ սպիտակ ձի լծած
մարտակառքին բազմած, ծիրանագույն թիկնոցը վրան, ոսկե-

Հուռ դոտին կապած, թիկնապահների և սիրամարդի պես զարդարված շքախմբով ու աղնվականներով շրջապատված, հայրածնապարտ աչք էր ածում այդ վիթխարի բաղմերանդ հոսանքին, որ դանդաղորեն շրժվում էր զետիկ արևմուտք, և հաճույքով ականջ էր դնում իր պալատականների հաճոյախոսություններին:

Թագավորն ու իր աղնվատոհմիկներն արշավի ժամանակ ոչ մի բանի պակասություն չպետք է զգային: Մի հսկա գումակ գանդաղորեն քարշ էր զալիս Դարեհի զորքի հետեւից. թագավորական երթային հարեմը, սատրապների հարեմները և պալատականների կանայք ու հարձերը ուազմական արշավը դարձնում էին մի չքեղ համասնաց հանդես: Ասում են, թե 600 ջորիներով և 300 ուլտերով ոսկի, արծաթ և այլ գանձեր էին տառնում: Այս խայտարղետ ու բազմալիսի մասսան երբատ զետնանցկացնելու համար հինդ օր հարկավորվեց:

Սիրիա մտնելիս գումակի մեծ մասը, գանձարանը, պայտատական պարագիստներին ու ներքինիներին, կանանց ու հարձերի ամբողջ բազմության հետ թողին Դամասկոսում, իսկ պարսկական բանակը տեղափորվեց Սոխում, Հյուսիսային Սիրիայի հարթությունում, որ Սմմանի լեռնանցքերից երկու օրվա հեռավորության վրա էր զանվում: Այսուղ ավելի հարմար էր պարսկական հեծելազորի ծավալման համար և կարելի էր թվական գերազանցությունն օդտագործելով՝ հակառակորդին շուրջանցել թերերի կողմից: Ահա այսուղ էլ պարսիկներն սկսեցին սպասել թշնամու երեւալուն:

Փոքր Ասիան Սիրիայից և Սիրագետքից բաժանված է Տավրոսի և Սմմանի լեռնաշղթաներով, որոնք համարյա հանում են Մէջերկրական ծովին և ծովափին միայն նեղ կածաններ են թողնում անցնելու համար: Տավրոսի լեռներում «Կիլիկյան դարբաս» կոչվող անցքը և Սմմանի լեռնաշղթայի ու ծովի միջև գտնվող ճանապարհը, «Սմմանի դարբասն» արդեն մակեղոնացիների ձեռքումն էին զանվում: Երրորդ լեռնանցուղը դուռմ էր Հյուսիսից ուղիղ գեպի հարավ, հարավում ուղիղ մոտենում էր ծովին և, բայց գժվարանցանելի չափակներից, միայն մեկ հարմար անցք ուներ գեպի Սիրիա: Ահա հենց այդ «Սիրիական դարբասով» էլ սպասվում էր մակեդոնացիների մուտքը Սիրիա...

Դարեհն անհամբեր սպասում էր հակառակորդին և նույնիսկ Սիրիական դարբասը չփակեց: Օրերն անցնում էին իրարհետեւից, բայց հորիզոնում ոչինչ չէր երևում... Արդյոք Ալեքսանդրը չփախեցած վ պարսկական վիթխարի ուժերից և չդերագասեց արդյոք մաս լ լեռնանցքերի մյուս կողմը: Բայց պարսիկները Սմմանի լեռնածյուղով գիտեին կողմանկի անցքեր, ու բոնք, հավանորեն, մակեդոնացիներին քիչ էին հայտնի, բայց

այդ՝ նրանք գերագասում էին ծովափին մոտիկ մնալ և իրենց ուժերը չցրել: Եվ ահա, Դարեհը մի ոխկու որոշում է ընդունում. նրա զորքն անցնում է Ամմանի լեռնացյուղերը, որպեսզի թշնամուն հարկադրի մարտի դուրս գալ:

Ալեքսանդրը չէր էլ մտածում պաշտպանվել... Նա համար առում էր իրեն ու իր զորքերին, վստահ էր իր հաղթանակին և հույս ուներ, որ այդ հաղթանակի հետևանքով կղրավի Միջերկրականի ափերը և կոչնչացնի ոչ միայն պարսկական բանակը, այլ և պարսկական նավատորմը... Լեռնանցքերի պաշտպանությունը միայն կծագձեր պատերազմը և Հելլադայում կաշխատացներ հակամակեդոնական պարտիան: Բոլոր հիմանդրներին ու վիրավորներին իսսայում թողնելով՝ Ալեքսանդրը, շարժմակ շարունակ ծովափնյա դժի ուղղությամբ, որտեղ կարելի էր թշնամու գեսանտի իջեցում սպասել, ծովափի անցերով դուրս եկալ դեպի Միրիանդ քաղաք:

Այդ նույն դիշերը պարսկիները, Ամմանի լեռնանցքն անցնելով, դուրս եկան Ալեքսանդրի թիկունքը և Կիլիկիայում թըշնամու զլիսավոր ուժերին չհանդիպելով՝ իսսայում քարուքանդարին մակեդոնական հիմանդրանոցը: Դարեհի անսպասելի մանելով մասին տեղեկանալով՝ Ալեքսանդրն անհապաղ հետ դարձալ: Նրա զորքերը նորից Կիլիկիայի ծովափնյա հարթավայրերը մտան, բայց արդեն ոչ արևմուտքից, այլ հարավ-արևելքից:

Դժվար է Դարեհին դատապարտել այն բանի համար, որ նա չէր հոգացել թշնամու վերադարձի ճանապարհը փակելու մասին: Նա իր վիթխարի զորքը որքա՞ն ժամանակ կարող էր կերակրել, անասունների կերով ու սպարենով ապահովել ծովափընյա նեղ հարթավայրում կամ անպատճ սարահարթում: Հաջողության դեպքում նա կտրած կլիներ թշնամու ճանապարհը վեպի Մակեդոնիա, բայց նրա համար ճանապարհ բացած կիրներ Սիրիայի վրայով դեպի Փյունիկա ու Միջազգետք, դեպի իր միապետության սիրտը: Դարեհը վստահ էր իր ուժերի գերազանցությանը և չէր ցանկանում խույս տալ ճակատամարտից:

Պարսիկները պաշտպանության համար հարմար դիրք դրա վեցին ծովափնյա հարթությունում, իսոսայի ու ծովափնյա ամրացին միշեն: Այդ հարթությունը արեւելքից և հյուսիսից եղել ված է բավական բարձր լինելով: Այդտեղ հարթավայրի լայնությունը հասնում է 4 կմ-ի, հարթությունը հարավ-արևմետյան ուղղությամբ կարում է Պինար փոքր գետակը, որ սկիզբ է առնում լեռներից և թափառում է ծովը: Պինարի հոսանքն ի վեր հարթությունը հետզհետեւ լեռնու բնույթ է ստանում: Պինարի ափերը զարդարված են ու ժայռոտ, շատ տեղերով այդ գետակն այդ գերազանցությանը և դժվար է: Պարսիկները ճամբար գցեցին Պինարի հյունացնելը դժվար:

սիստեմն ամին և անցումի համար ավելի հարմար վայրերն ու գիք ամբողջն ամրացը ին ցցվածքներով—ցցերով:

Առավինյա անցքերը շուրջանցելով՝ մակեդոնական բանակն աստիճանաբար ծավալում էր գեպի հյուսիս՝ երեսը թշնամու կողմը դարձրած: Իսսայի մոտ տեղի ունեցած նակատամարտը նշանակալից է ինչպես երկու հակառակորդների զուգահեռ ու միաժամանակյա մարշերով ճակատամարտից առաջ, այնպես էլ երկու բանակների շուրջ տված ճակատով ու թվապես ուժեղ կողմի պաշտպանության անցնելով: Սկզբում ծավալվեցին ֆալանգայի տակսիաները և գիտապալիստների կորպուսը, այնուհետեւ գիտապալիստներից գեպի աջ դուրս եկավ թեսալական ու մակեդոնական հեծելազորը, ֆալանգայից գեպի ձախ թրակիական թեթև և հունական ծանր հեծելազորը: Արանքներում սկսեցին դասավորվել թեթև հետևակի և նետաձիգների ջոկատները: Լեռների մոտ դանվող աջ թերի հրամանատարությունն իր վրա վերցրեց Ալեքսանդրը, ձախ թերը վստահեց Պարմենիոնին: Պարմենիոնը հրաման ստացավ՝ ծովից չեռանալ:

Պարսիկները ծավալվեցին հեծելազորի և թեթևազեն հետեւ գակի խոչը ջոկատների պաշտպանության տակ, որոնք ուղարկվել էին գետի հանդիպակաց ափը: Պարսիկների մի ահապին ջոկատ կանգնեցրած էր լեռան ստորոտի մոտ, որ պայտաձև մուտենում էր մակեդոնացիների աջ թերին, այնպես որ այդ ջոկատի մի մասը պետք է հայտնվեր մակեդոնացիների թեկունքում: Դեպի առաջ բերված կենտրոնը դրավում էին հունական վարձկանները, ճակատի առջևը սարքված էին արհեստական խոչնդուուներ, ծովի մոտ կանգնած էր պարսկական հեծելազորը, գետի հոսանքի երկարությամբ ցցված էին աղեղնավորների ջոկատները: Պաշտպանության համար հարմար զիլքը պարսիկների մի համար կապված էր մի էական թերության հետ. նրանց մարտական գիծը հավասարվում էր ավելի սակավաթիվ հակառակորդի մարտական գծին, և աշխարհազորի մի զգալի մասը դուրս գործողությունների անհարմարության պատճառով դարձել էր, պարսկական սովորության համաձայն, տեղափորվել էր կենտրոնում՝ գվարդիայով և իր շքախմբով ըջապատված:

Երբ պարսկական գլխավոր ուժերի ծավալումը վերջացավ, Դարեհն ավանդաբեր հետ կանչեց: Տեղի պակասության և ձախ թեսում գործողությունների անհարմարության պատճառով Դարձեհն իր համարյա ամրող հեծելազորը տեղափոխեց աջ թերը, Պարմենիոնի դեմ:

Այդ բանը նկատելով՝ Ալեքսանդրը Պարմենիոնին օդության ուղարկեց թեսալական հեծելազորը, որը պարսիկների համար աննկատելի մեկ թերից մյուս թերը սլացավ մարտագծի հետևից: Պարսկական մեկուսացված ջոկատը, որ ընդգրկում էր մակեդոնացիների աջ թերը, էթերների ու թեթև հեծելազորի գրոհով

լեռան ստորոտից հետ շպրտվեց նրա գաղաթը: Նրա դիմաց
կանգնեցվեց մի սակավաթիվ հեծելազորային ուղեփակ:

Այսպիսով մակեդոնացիների աջ թեր բաժանվում էր երկու
ձյուղի—այդ ուղեփակը և գլխավոր գիծը, որի գեմքն ուղղված
էր զեպի պարսիկները: Երբ մակեդոնական գիծը վերջնականա-
պես ծավալվեց, նա, սկսած աջից, բաղկացած էր հետեւյալ գո-
րամասերից: Հունական պետաստներ, առյօնանյան նետաձիգ-
ներ, աղեղնավորներ, պետներ թեթև հեծելազորը, մակեդո-
նական սարիստՓորներն ու էթերները, նորից աղեղնավորներ,
գեպասպիստների ջոկատները, Փալանզայի տաքսիսները, Կրետեի
նետաձիգները, թրակիական թեթև հետեւակաղորը, Հունական
դաշնակիցների հեծելազորը, թեսալական հեծելազորը և թեթև
հեծյալները: Զորքի ընդհանուր թիվը մոտավորապես նույն էր,
ինչ որ Գրանիկայի ճակատամարտում, իսկ Հույների թիվը հա-
մեմատարար պակաս էր:

Խսայի մոտ Դարեհի պլանը պաշտպանողական մլան էր,
այն հաշվով, որ հակառակորդին նախապես ուժառապատելուց և
թուլացնելուց հետո հարձակման անցնեն և ջախջախեն նրան:
Պարսկական կենտրոնով, որը, ինչպէս թվում էր, համարյա ան-
մատչելի դիրք էր գրավել, վանել մակեդոնական կենտրոնը և
հետ շպրտել մակեդոնացիների գրուները պարսիկների ձախ թե-
փի վրա, հեծելազորի ամբողջ մասսայով հարձակման անցնել
Պարմենիոնի թեփի վրա, հետ շպրտել նրան ծովից ու մակեդո-
նական կենտրոնից, այնուհետև ամբողջ ճակատով հարձակման
անցնել և հետեւղականորեն ջախջախել մակեդոնական կենտրոնն
ու աջ թեր—ահա այդ պլանի հիմնական գրույթները:

Լեռան մոտ կանգնած պարսկական մեկուսացված ջոկատն
առանձնապես կարևոր դեր պիտի խաղար, երբ պարսիկներն
ընդհանուր հարձակման անցնեին, թեից ու թիկունքից կաշկան-
դելով մակեդոնական աջ թեր և փախչողների առաջ փակելով
զեպի լեռնային կիրճերը տանող ուղին: Նայելով վայրի ընույ-
թին և կովող կողմերի փոխարձ դասավորությանը, ճակա-
տամարտի արդյունքը պետք է լիներ պարավող կողմի լիակա-
տար ջախջախումը: Իզուր չէ, որ նապուենն իսսայի: Ճակա-
տամարտի մասին զերել է, թե պարտության դեսպում Ալեքսանդ-
րի բանակը բոլորուն կոչնչացվեր:

Ծովից մինչև լեռները մարտական դիմ կազմած, կարդ ու
հանգստություն պահպանելով՝ մակեդոնական բանակը դամդա-
ղորեն մոտենում էր թշնամուն: Ալեքսանդրը հաշվի էր առել,
որ հարձակման խիստ արագ տեմպի դեպքում Պինար գետն
անցնելիս իր ամբողջ կենտրոնը կարող է խառնվել, մինչդեռ
փալանքան զարհութելի էր միայն այնքան ժամանակ, քանի զեռ
անխախտ էր պահում իր ահեղ դասավորությունը: Այսուամե-
նայնիվ Ալեքսանդրն ստիպված եղավ Պինար զետն անցնելու ա-

մենահարժար տեղն ընտրել իր ծանր հեծելազորի համար և կտրվել բանակի մնացած մասսայից: Վերջապես, երբ մակեդոնական ամբողջ մարտադիմքը հակառակորդին մոտեցավ այնքան, որ աղեղից նետված նետը կարող էր հասնել, Ալեքսանդրն իր էթերների գլուխ անցած, իր աջ ու ձախ կողմերում թեթև հետևակի, ձիավորների ու աղեղնակորների ջոկատներ ունենալով, որոնք պիտի նպաստեին գրոհին, ճակատամարտն սկսեց շոտագ անցումով և շեշտակի հարձակումով պարսկական ձախ թեր:

Նրա էթերները թեթև զորքերի հետ, որոնք աջ կողմից շուրջանցել էին պարսկական գիծը, խրվեցին թեթև հետևակի ու կարգակների շարքերի: մեջ: Հեծելազորը պաշտպանեց մակեդոնական դեմքի փառքը — պարսիկները չղիմացան սոսկալի հարցածին, ցնցվեցին ու հետ քաշվեցին դետի ամիս: Ալեքսանդրը նետվեց ընդհարման ամենաեռուն տեղը՝ իր հետեւից տանելով թիկնապահներին, գվարդիան և իր ամբողջ թերը: Ինչպես Գրանիկայի ճակատամարտում, այսուղե ևս նա կիսաշրջան գործեց, սեպի պես խրվեց թշնամու առաջին գծի մեջ և, իր հարվածի հղորությունից խառնված ու շշմած թշնամուն ձնշելով ու փախցընելով, սլացավ գեղի Դարեհի կողմը:

Երկու թաղավորների ընտիր զորքերի մեջ կատաղի մարտ սկսվեց: Պարսիկները մասսայորեն կոտրվում էին իրենց տիրակալի շուրջը, բայց սեղմվում էին նրա շուրջը և իրենց մարմնով պաշտպանում նրան: Ալեքսանդրը մարտի եռքի մեջ բոլորովին մոռացել էր իրեն և իր առջև տեսնում էր միայն Դարեհի մարտակառքը: Զնկանելով անգամ, որ ինքը ազդրից վիրավորված է, նա իր հեծյալ ու հետևակ դվարդիայի հետ նետվեց դեպի այդ մարտակառքը: Կիլիկիայի սատրապ Արդամը, Մեծ Փռյուգիայի սատրապ Ատիլիսոսը, զրբապետ Ռեոմիթրը, Եղիպատոսի սատրապ Սարակը ընկան Դարեհի մարտակառքի մոտ: «Մարտում հաղթում է նա, ում ներվերն ավելի ամուր են»: Դարեհը վախկոտ չէր, մինչև գտն բարձրանալը նա աչքի էր ընկել կաղուսիների դեմ կատարած արշավում, որի համար պարզ էր ստացել, բայց զրահ հետ միասին նա բարոյապես զորեղ մարդ էլ չէր, որպիսի մարդու կոփկած ողին կարողանում է դիմանալ մահացու պայքարի ամբողջ լարմանը և կրել պատասխանատվության ամբողջ ծանրությունը: Նա իր մարտակառքը շարժեց նախ մի կողմի վրա, իսկ հետո՝ դռեմարտից սեպի հետ, իսկ նրա հետևից փախալ նաև նրա զորքը՝ ցնցված «թաղավորը փախչում է...» աղաղակներից:

Ալեքսանդրը Դարեհի հետեւից հասնելու ժամանակ չուներ: Հարձակման ժամանակ նրա թերվել էր Փալանգայից, որի շարքերը չէին կարողացել հասնել նրա հետեւից: Կենտրոնը հետ էր մնացել, Պինար գետն անցնելիս գիծն ալելի ևս ճեղքից:

Այդ ժամանակ պարսկական կենտրոնը հակագրոհի անցավ, առաջացած միջտարածությունները ներխուժեցին հունական վարձկաները և հարվածեցին Փալանգայի խախտված շարքերին... Սյստեղ հանդիպեցին միատեսակ փորձված ու հմուտ զինվորներ, որոնք մարտական կովվածքով, սպառազինման բնույթով ու փոխադարձ տաելությամբ միանման էին: Փալանգաների հըրքամանատարները գիտեին, որ խաղաթզիթի վրա է դրված ամեն ինչ— ճակատամարտի բախտը, մակեղունական զենքի փառքը, զորքի ու ամբողջ կամպանիայի վիճակը, Մակեղունիայի ապագան և սեփական բարեկեցությունն ու կյանքը, և յուրաքանչյուր մարտիկ այդ նույն բանն էր զգում: Կատաղի համառության և հաղթանակի հասնելու ցանկության մեջ ո՛չ հույները, ո՛չ մակեղունացիք մեկը մյուսին չէին զիջում, բայց մակեղունացիք ավելի անհարմար դրության մեջ էին զտնվում: Քայլ առքայլ հետ մզմելով, շատ նշանավոր սպաներ կորցնելով, օդը խլացնելով մարտական աղաղակներով, մետաղի շառաչով, նըզովներով ու հառաչանքներով՝ Փալանգիստները քայլ առ քայլ հետ էին քաշվում պարսկց արքայի հույն հոգիստների առաջ:

Դրությունը լավ չէր նաև ձախ թևում: Այն ժամանակ, եզր Ալեքսանդրը հարձակվեց պարսիկների ձախ թևի վրա, նրանց աջ թևում կանգնած Նարարդանն իր ծանրացեն ու թեթևագենն հեծյալների ամբողջ մասսայի զլուխ անցած Պինար գետն անցավ և ուժեղ հարված հասցրեց թեսալական ու դաշնակից հեծելազորներին: Թեսալազորների մեկ իլը, որ իր ուսերին էր կրել պարսիկների հարձակման ամբողջ ծանրությունը, ջախջախվեց, բայց մնացածները նորից միացան և կարողացան դիմադրել առաջին հարվածին, ապա նաև հակադրունով հետ չպրտել պարսիկներին: Պարսիկներին չհաջողվեց ճեղքել ու կենտրոնից հետ չպրտել Պարմենիոնի գիծը: Պարսիկների հարձակումը վերըսկավեց նոր ուժով, և ուժապատ եղած թեսալական հեծելազորը չէր կարող երկար դիմադրել իր վրա հարձակվող թշնամու հեծյալների մասսային, սակայն աջ թևում և կենտրոնում ճեղքը բերած հաջողությունն օգնեց նրան դիմանալու:

Կենտրոնի գիպասապիստները շուռ եկան դեպի աջ և հարվածեցին վարձկանների թևին, որոնց հետեւ մակեղունական հեծելազորը ցրիվ էր տալիս աշխարհազրի անկարգ մասսաներին: Առջեւում նոր նույնով և ուժով միացան Փալանգաները, որոնք արգեն նահանջել էին սկսել: Եղավ մի բողեք, երբ Դարբեկի վարձկանների կործանումն անխուսափելի էր թվում, բայց նրանք նորից միացան, ծանր Փալանգայից պոկվեցին և մարտական շարքը պահպանելով, առյուծների նման հետ մզմելով հարվածները, սկսեցին դետափից նահանջել, ճամփար բացելով պարսիկ փախտականների բազմության միջից:

Պարսկական ձիավորները լսեցին, որ «թագավորը փախչում

է», և տեսնելով, որ հույները նահանջում են, իսկ իրենց վրա դժուգում է մակեդոնական հարձակման ալիքը, ձիերը շուր տվին և թեսալացիների կողմից կրնկակոխ հետապնդվելով, իրենց սեփական հետևակին տրորելով ու զլորելով՝ ամբողջ ուժով հեռու սլացան:

Ձորակները լցվեցին պարսիկների դիմակներով, գետերը կարմրեցին թափված արյունից, հաղթական աղաղակները միախառնվում էին հատաշանքներին, ողբին ու նղովքին: Բոլորից առաջ, իր մարտակառքին նստած, փարխչում էր Դարեհը: Ալեքսանդրը համոզվելով, որ այլև չի մնացել որևէ մեկը, որին հարկ լինի հաղթել, իր եռանդի ամբողջ թափով նետվեց Դարեհը: Ինչն ըստելու՝ ոչնչացնելով պարսից արքային շրջապատող գլարդիային: Ծուտով հասան բրուրների ու ձորերի, հորիզոնում մոտենում ու մեծանում էին իրաները, հետապնդողն արգեն մոտիկ էր, ծիերը սայթաքում էին և փախուստը դանդաղեցնում: Այն ժամանակ Դարեհը թողեց իր մարտակառքը, նրա մեջ՝ իր աղեղը, վահանն ու արքայական պատմուճանը և ձի նստելով սլացավ ամբողջ ուժով: Աշնանային դիշերն արագ վրա էր հասնում: Ալեքսանդրը Դարեհի զենքն ու հաղուստը վերցրեց և վերադարձավ ճամբար:

Մակեդոնացիք պարսկական ճամբարը գրավեցին առանց նրա պաշտպանների կողմից դիմադրության հանդիպելու: Ճամբարը բարձրում գտան 3.000 տաղանդ գումարի դարդարանք ու թանկարձեք իրեր, այնուեղ էր նաև Դարեհի կինն իր երկու աղջիկներով և պարսկական աղնվատոհմ միջանի կամացք: Ալեքսանդրը շրջեց, այցելեց բոլոր վիրապորներին և հրամայեց զինվորական հարցանքով թաղել ընկածներին: Ընկածների պատվին Պինարի ամին երեք զոհասեղան կանգնեցվեց:

Մակեդոնացիք որպես թե սպանված ունեցան 300 հետևակ և 150 ձիավոր, վիրավորները մի քանի անդամ ավելի էին: Պարսիկների կորուստները հսկայական էին: Նրանք ջախջախվել ու ցրվել էին բոլոր կողմերի վրա:

ԱԽՐԵՍ ԵՎ ՓՅՈՒՆԻԿԱՍ.ԵՎ ՆԱՍԱՌՈՒՄԸ

«Ամբողները բանակին փոխարինել չեն կարող, բայց և այնպես միակ միջոցն են հանդիսանում հաղթական թշշնամուն կանգնեցնելու, դանդաղեցնելու, թուլացնելու և նեղելու գործում»:

Ն ա պ ո լ ե ս ն

Դարեհը փախավ դեսպի Արևելք, իր պետության հիմնական մարզերը: Նրա վարձկան հույների մեծ մասը դնաց գեղի եղիպատու, չելլադա կամ դեսպի Կրետե կղզին:

Ալեքսանդրի առաջ ծառացավ. ի՞նչ անել, շարժվել դեպի Բաբելոն ու Գերսիկա, դեպի պարսկական միապետության սիրու, թէ՛ գրավել Միջերկրական ծովի բոլոր ավերը, Պարսկաստանը կարել ծովից, ոչնչացնել պարսիկների ծովային ուժերը, ցըել Հելլադայի հակամակեղոնական պարտիայի հույսերը, Պարսկաստանից օգնություն ստանալու խնդրում և դրանից հետո միան, իր թիկունքն ամրապնդելով, շարունակել արշավանքը դեպի Արևելք: Ալեքսանդրն ընտրեց պատերազմի երկրորդ պլանը, որ ավելի հետևողական էր ու հուսավի:

Դամասկոսում Պարմենիոնը շատ հարուստ ավար ձեռք դրցեց (Սիրիայի սատրապի գավաճանության չնորհիվ). Դարեհի ամբողջ դումակն իր երթային գանձարանով, մեծաքանակ սաղմական հանդերձանք, արքայական ազնվատոհամիկների երթային հարեմները և Դարեհի ամբողջ պարազիտային արքունական շտատը: Այլ «արժեքավոր մասնագետների» թվում ձեռք դցվեցին 70 սպասավոր՝ դինի տաքացներու համար, 40 սպասավոր՝ համեմունքներ պատրաստերու համար, 46-ը՝ պակներ հյուսողներ և այլն... Դամասկոսի առումը ֆինանսական փայլուն հաղթանակ եղավ, որից հետո արգեն Մակեդոնիան պատերազմ մղելու համար այլևս միջոցների կարիք չդադաց:

Ալեքսանդրի զորքերը մտան Փյունիկիա, որտեղ և նամակ ստացվեց Դարեհից: Դարեհն Ալեքսանդրին էր դիմում արդեն ոչ որպես «արքայից արքան» ըստ պարսկական սովորության կրեմեր մի հասարակ թագավորի, այլ որպես հավասարը համարին, և առաջարկում էր վերադարձնել գերի առնված արքայական ընտանիքը և բանակցություններ սկսել բարեկանության ուղարկում էր մասին: Միաժամանակ Դարեհը մակեդոնացիներին մեղադրում էր, թե նրանք առանց որևէ պատճառի ու հիմքի խախտել են խաղաղությունը Պարսկաստանի ու Մակեդոնիայի միջև և իրեն ներկայացնում էր որպես արդարության պաշտպան, որ անարդարացի կերպով պատժվել է իր բախտի կողմից:

Ալեքսանդրի պատասխանը Դարեհի նամակին յուրահատուկ մի քաղաքական մանիֆեստ էր, որի հիմնական դրույթները հետեւալի էին.

1. Պարսկաստանը միշտ եղել է հույների ու մակեդոնացիների թշնամին, իսկ նրա օգնությունը Պերինֆին ընդդեմ Ֆիլիպի և մասնակցությունը Ֆիլիպի դեմ կազմակերպիմած դավագրությանը չարամիտ ու ոճրագործական խախտումն են պետական նորմալ հարաբերությունների: Դրա համար էլ հույներն իրեն՝ Ալեքսանդրին ընտրել են որպես մարտիկ ու վրիժառու համահունական գործի համար:

2. Ինքը՝ Դարեհը պարսկական գահն է բարձրացել ապօրինի կերպով, պարսից օրինական թագավոր Արգեսի դիակի վրայով, որին թունավորել է ներքինին:


3. Արդարության պաշտպան աստվածների կամքով Դարեհի աստբաղները և ինքը՝ Դարեհը պարտված են և Դարեհի թագվորությունը տրված է Ալեքսանդրին:

4. Պարսկաստանի բոլոր ժողովուրդները հօժարակամ և սիրով խոնարհվում են Սախայի կամոքն աստծո նոր տիրոջ առջեւ, և եթե ինքը՝ Դարեհը կզա իր հրամայոցի մոտ, ապա նրան ոզորմած ընդունելություն ցույց կտրվի:

5. Իսկ եթե Դարեհը չցանկանա հպատակվել, ապա Ալեքսանդրը կկարողանա գտնել նրան, որտեղ էլ թաքնվելու մինի կամ որտեղ էլ որ տեղափորվի:

Զշփոթվելով պարսկական նախատորմի առանձին հաջողություններից, որը զրավել էր մի քանի կղզի և Փոքր Ասիայի առափնյա քաղաքները, Ալեքսանդրն առաջ էր գնում: Փյունիկի-այի հարուստ առևտրական քաղաքներն իրենց ձևոներեց ու զործունյա սեմիտական ընակչությամբ, որը հնում լավագույն ծովայիններ էր տալիս, դիմացրություն ցույց չէին տալիս հզոր ու սիրալի նվաճողին: Արարից և Բիբլոնից հետո անձնատուր եղամ Սիդոնը, որը Դարեհ Կողոմանի թագադրվելուց քիչ առաջ ապստամբել էր պարսիկների դեմ և դաֆանորեն հնազանդեցվել նրանց կողմից: Սիդոնացիք որոշեցին «այրել իրենց նավերը», որպեսզի վախուսատի ճանապարհը կտրվի, և, երբ պարսիկները զավաճանության չնորհիլ Սիդոն մտան, սիդոնացիք կատաղի պաշտպանությունից հետո իրենց քաղաքը վառեցին և մասսայաբ հրի մեջ նետվեցին: Այս խոռությունից հետո Սիդոնը բնակչությունից զրկվել և իր նախկին նշանակությունը կորցրեց: Սիդոնի անկումից օգուտ քաղեց նրա մըցակից Տյուրուը, որն իր լոյալության համար պարսիկներից նոր արտոնություններ ստացավ:

Տյուրոս քաղաքի կարևորագույն թաղերը դանվում էին ոչ թե մայր ցամաքի, այլ մի կղզու վրա, որ մոտ մեկ կիլոմետր երկարություն ու լայնություն ուներ: Տյուրոսը 80 նավից բաղկացած նավատորմ ուներ, առևտրական ու քաղաքական սերտ հարաբերություններ էր պահպանում հարուստ ու հզոր կարթաղենի հետ (փյունիկական զիսավոր զաղութ Աֆրիկայում), հիանալի ամրացված էր ու մթերավորված և կարող էր պարծենալ, որ մինչ այդ դեռ ոչ ոքի չէր հաջողվել զրավել այդ քաղաքը: Ամուր պարխապները և համարյա անմատչելի դիրքը քաղաքը փրկել էին առողջությունների, բարելացիների և անցյալի այլ նվաճողների հարձակումներից: Քաղաքը որոշեց չեղոքություն պահպանել, սակայն Ալեքսանդրը կտրականապես պահպանչեց մակեդոնացիներին ներս թողնել ոչ միայն քաղաքի հին թաղամասերը մայր ցամաքի վրա, այլ և կղզու վրա: Տյուրոսի պարիսպների վրայով անցնելով միայն կարել էր վստահորեն շարունակել հետագա ուղին:



Տյուրոսի պաշտպանությունը

«Հին Տյուրոսը» (Պալետայուրոս) գրավվեց մակեդոնացիների կողմից և մասամբ ավերվեց: Քաղաքի բնակչությանը քշեցին ամբարտակներ կառուցելու նոր քաղաքի առջև: Նեղուցը ոչ մի տեղ 6 մ. ավելի խորություն չուներ և մայր ցամաքի մոտ ծանծաղ էր ու տղմուտ: Տղմուտ հատակին ցցեր էին տնկում, խև սրանց արանքներում հին Տյուրոսի ավերակներից խոչոր քարափոշտեր էին շարում: Թաղավորն ինքը բերեց հողով լի առաջին բեռնախարակները և իր ինժեներների հետ միասին զեկալարում էր բոլոր աշխատանքները, որի մեջ էր ներգրավել ամբողջ զորքն ու բնակչությունը: Աշխատանքը հաջողությամբ առաջ էր գնում նետող զործիքների պաշտպանության տակ: Տյուրոսցիք մի մեծ նալ բարձեցին զանազան այրվող նյութերով, մի քանի տրիերներով քաշեցին այն և հյուսիսարևելյան ուժեղ քամին օդտապործելով՝ նավը վառեցին ու հրկիքեցին ափի կառուցվածքներն ու ամբարտակի ցցերը: Տրիերները սմբակուում էին պատճեցի ամբողջ առջևի մասն ու մակեդոնացիներին, որոնք փորձում էին հրդեհը հանգցնել, իսկ բարձաթիւլ նավակներով կույի վայրը հասած տյուրոսցիք քանդեցին ամբարտակը, որի մնացորդները ողողեցին ծովի ալիքները: Այս անհաջողությունը միայն ուժեղացրեց Ալեքսանդրի ցանումը և նրա վճռականությունը՝ վերջ տալու այդ հզոր քաղաքին:

Հայլանորեն հենց այդ ժամանակ ժամանեց Դարեհի երկրորդ պատվիրակությունը: Դարեհի դեսպանները Դարեհի մոր, կնոջ և երեխանների փոխարեն որպես փրկանք առաջարկում էր իր թագավորության ամբողջ արևմտյան մասը մինչև Եփրատ գետը, առաջարկում էր բարեկամություն ու դաշնաք, որ պիտի ամբապնդմին Ալեքսանդրի ամուսնությունը Դարեհի աղջկա հետ:

Խորհրդակցություն հրավիրվեց: Կարծիքները բաժանվեցին: Մակեդոնական զորավարներից ոմանք լիովին բավարարվում էին այլպիսի վիթխարի տերիտորիա, այդպիսի հարստություններ ու փառք ձեռք բերելով, շատերը բնազդաբար զգում էին, որ հին Մակեդոնիայից Եփրատի այն կողմը շատ քիչ բան կմնա, և ինքը՝ իրենց թագավորը շատ շուտով կարող է դառնալ ինքնակալ դեսպոտ: Պարմենիոնն ասաց, որ եթե ինքն Ալեքսանդրը լիներ, այդ պայմանները կընդունէր: Ալեքսանդրին ասաց, «Ի եթե ինքն էլ Պարմենիոնը լիներ, նույնական կընդունէր այդ պայմանները չի բնունում: Մեծ մասի համար պարզ էր, որ այդ հաջողությունները ժամանակավոր ժամանակամատ բնույթ են կրում և կատարված բոլոր նվաճումների լավագույն երաշխիքը պարսկական բռնակալության լիակատար ջախջախումն է, ուստի և զորավարները կանգնեցին Ալեքսանդրի տեսակետի վրա:»

Դարեհին տրված պատասխանը հանդում էր հետևյալ կետերին:

1. Դարեհի ամբողջ թագավորությունը, նրա բոլոր գանձերն ու հողերը պատկանում են Ալեքսանդրին, ուստի հարկ չը-կա, որ նա ամբողջի փոխարեն մի մասը վերցնի:

2. Եթե Ալեքսանդրը ցանկանա Դարեհի աղջկանը տիրել, ապա նրան կվերցնի անկախ Դարեհի համաձայնությունից:

3. Եթե Դարեհը ցանկանում է որևէ բան ստանալ կամ իր ձեռքում պահել, թող ինքն անձամբ ներկայանա մակեղոնական զորակայան:

Այլպիսի պատասխանից հետո՝ խոսք լինել կարող էր միայն մահու և կյանքի պայքարի մասին:

Կրկնակի թափով սկսեց աշխատանքը եռալ՝ զեպի նոր Տյուրու քաղաքն ավելի լայն ու ավելի ամուր պատճեց կառուցելու և զինը վերականգնելու համար։ Այդ աշխատանքների և քաղաքի վրա գրոհելու համար բարձր կերպով կառուցվում էին մեծ թվով բազմալիսի մեքենաներ։ Մակեղոնա-հունական պաշտողական տեխնիկայի և Տյուրոսի բարձր զարգացման հասած տեխնիկական արվեստի միջն համար պայքար սկսվեց։ Երկու կողմերն էլ հմտանում էին զանազան պրիորների ու խորաման լությունների մեջ։

Հարկ եղավ Փյունիկիայի հնադարյան կենտրոնը վերցնել հենց վյունիկեցիների օգնությամբ։ Պարսկական նավատորմը ցրիվ եկավ և Բիրոնի, Սրադի, Սիդոնի ու կիսահունական Կիարոսու կղզու քաղաքների էսկաղըաները վերաբարձան հայրենի ջըրերը, որտեղ ստիլված էին մասնակցել իրենց ցեղակիցների ըլոկադային ու պաշտրմանը։ Նավեր ուղարկեցին նաև Հոռորդու կիկիան, Կիլիկիան։ Տյուրոսի նավատորմը փակվեց իր նաւահանդիսաներում, հյուսիսային Սիդոնի և հարավային Եգիպտական նավահանդիսաներում։ Տյուրոսը պաշտրված էր բոլոր կողմերից և նրա կործանումը միայն ժամանակի հարց էր դարձել։ Լիբանանի լեռնային արարական ցեղերի դեմ կատարած հաջողակ արշավանքը մակեղոնացիներին իրենց կառուցումների համար հիանալի շինանյութ տվեց — Լիբանանի եղենի։ Իսկ և իսկ լավ ժամանակին Ալեքսանդրի բանակը եկան նոր համաքաղաք 4000 հույն վարձկանները։ Պատնեշը բոլորովին մոտենում էր քաղաքի պարսպին, սակայն այդ արևելյան կողմից սալաքարերով շարժած հաստ պարխապը, որ ուներ մի քանի տասնյակ մետրը բարձրություն, բազմաթիվ հրակնատներ, աշտարակներ ու մեքենաներ, թվում էր անմատչելի... Զնայած տյուրոսցի ըրա-սույնների բոլոր խորամանկություններին, որոնք կարտում էին սարխիսի պարանները, մակեղոնական նավերը բոլոր կողմերից խորխիսի պարանները, մակեղոնական նավերը բոլոր կողմերից ժոտենում էին կղզուն և հետախուզում քաղաքի խոցելի կետերին։

Գաղաղած այուրոսցիք գերիներին դուրս էին բերում, իրաց Հետեւից մորթոտում և դիակները ծովլ նետում: Երկու կողմերից զայրույթը գաղաթնակետին էր հասել...

Մինչ այդ կարթագենը Տյուրոսին մերժեց օղնության հասնել... Փրկության միակ հույսը կարող էր լինել միմիայն հանդուզն ելույթը: Մի խաղաղ կեսօր, երբ կիսլոսի նավերի անձնակազմը ծովափին թարմ ջրի ու պարենի պաշար էր վերցնում, այուրոսցիք, իրենց նախապատրաստությունները նավահանդասիք մոտ տարածած առաջատաների հետեւ թաքցնելով, հանկարծակի գուրս եկան նավահանդասիք և սկսեցին կիսլոսի նավերը խորտակել ու կործանել: Սակայն այդ ժամանակ Ալեքսանդրի գլխավորությամբ օղնության հասավ մի էսկադրա, որը շըրջապատեց հարավային նավահանդիսատը: Տյուրոսի նավերը ցրվեցին ու փախուստի դիմեցին, նրանցից շատերը վնասվածքներ ստացան կամ խորտակվեցին:

Սկսվեց Տյուրոսի օրհասը... Հարավային կողմից պարիսպներն արդեն բազմաթիվ պարսպահար գործիքների հարվածներից քանդվում ու թափում էին: Պաշարվածների կատաղությունն ու համառությունն աճում էին վտանգի աճմանը զուգընթաց: Վերջապես պատը փլվեց գեղվի հարավ, առաջացած ձեղփի վրա կամքջակներ դրվեցին և մարտն սկսվեց: Սակայն ձեղքը խիստ փոքր էր, այուրոսցիք կատաղաբար պաշտպանվում էին թշնամու վրա թափելով վառվող ու շիկացած նյութեր, առեղալով նրանց վրա նետերի ու տեղերի տարափ: Զարհուրելի մեքենաները ճանկում էին հարձակվողներին և նրանց մարմինները պատառ-պատառ անում: Տյուրոսցիների կատաղի համառությունը հաղթահարեց մակեղոնացիների տոկունությանը, հարձակվողների լավան հառաջանքներով ու նզովներով հետ շպրտվեց: Պարսպի ձեղքն անհապաղ փակվեց:

Էլի երեք օր անցավ: Բացվեց օգոստոսյան մի սքանչելի տաք օր: Ծովի խաղաղ մակերեսույթին իր կապառությամբ մրցում էր ջինջ երկնքի կապույտի հետ, քամին գաղարեց, ամբողջ մասությունը վճիտ անդորրություն էր չնչում: Դա մըրկալից գրոհի, Տյուրոսի կործանման օրն էր: Բոլոր կողմերից քաղաքի պարիսպներին էին մատենում մարդկանցով ու մեքենաներով ծանրաբեռնված նավեր, որոտաց մակեղոնացիների մարտական կանչը, զրոհի աղդանչաները ձեղքեցին օդը: բոլոր կողմերից նետեր ու քարեր թռան, աշխատել սկսեցին մեքենաները, չո՛ղ շողաց զենքը: Տյուրոսի պաշտպանները վիրավոր գաղանների պես մի պատից մյուսն էին նետվում: Հանկարծ հարավում պարսպի մեջ ճեղվածք ստեղծվեց: Ընտիր գիտասպիսաններով ու Փալանդիտներով բնունված նավերն շտապ դրամիցին մեքենաներով բեռնված նավերի տեղը, և ցած իջեցրած կամուրջներով քաղաք նետվեցին դիպասպիսաների հարմանատար Աղմետը, որ

Հենց պարսպի վրա էլ ընկալ, և ինքը՝ թագավորը։ Նրանց հետեւից առաջ նետվեց զինվորների ամբողջ մասսան։

Այրումահեղ ընդհարումից հետո ամբողջ հարավային պարսպը մաքրվեց նրա պաշտպաններից, ապա մաքրվեց նաև արևելյան պարփակը։ Գրոհով առնվեց թագավորական ամբողջը, որտեղից արդեն հեշտ էր քաղաք իջնել։ Փյունիկյան նարկերը կտրտեցին հարավային նավահանդսում շղթաներից սարքած փակոցները, այնուեղ կանոնած նավերը խորտակեցին կամ քչեցին զեսլի աթը։ Միաժամանակ կիսրոսի նավերը ներխուժեցին հյուսիսային նավահանդիսա, նրանց դեսանտն իր համար ճանապարհ բացեց գետի քաղաքի կենտրոնը… Մակեդոնացիք բոլոր կողմերից ուժեղ հօսանքով ներխուժեցին Տյուրոս՝ նրա փողցները ողողելով արյունով։

Սպանվեց 8000 այուրոսցի, 30.000 մարդ ստրկության վաճառվեց։ Շատ այսպասցիներ հավանաբար փրկվեցին իրենց հայրենակիցների նավերով, կամ թե ավելի շուտ էին փախել Կարթագեն։

Երկար ամիսների հերոսական գիմազրությունից հետո այսպես ընկալ անտոիկ Տյուրոսը։ Ամբողջ աշխարհի վրա ցնցող սպավորություն թողեց այս գետքը։

Տյուրոսը գարձվեց մակեդոնական նավատորմի ծովային բարձրական գլուխ քաղաքները թեսվետ իրենց նավատորմնու տեղական ինքնավարությունը պահպահեն, սակայն, ի տարբերություն Փոքր Ասիայի հունական «ազատ» քաղաքների, Մակեդոնիայից ավելի անմիջական ու ավելի սերտ կախման մեջ ընկան։

Փյունիկյան նվաճելուց հետո պարսկական նավատորմը փաստորեն գաղարեց գոյություն ունենալ, որովհետեւ հունական և փյունիկյան էսկազրաներն անցան Ալեքսանդրի տրամադրության տակ։ Մեմնոնի հաջորդը, որ փորձում էր Քիոս կրողու վրա ամրանալ, ստիպված եղավ անձնատուր լինել մակեդոնական նավատորմին։ Այդ ժամանակ 3000 վարձկաններ ու 42 արիերներ զերի առնվեցին։ Արշավելագի բոլոր կղզիներն ու Կարիայի ամբողջ ծովափը մաքրվեցին պարսկական ուժերի մասը բրոգներից։ Մակեդոնական նավատորմը Փյունիկյայի և Կիպրոսի բազմաթիվ նավերով ուժեղացած՝ գերիշխում էր ծովի վրա։ Աթենքի և հունական մյուս թշնամի քաղաքների ուղղմանը արամագրությունը երկար ժամանակով պաղեց։ Իսոսայի շունչ տրամադրությունը երկար ժամանակով պաղեց։ Տասայի ճակատամարտեց հետո Տավրոսի լեռնաշղթայի մյուս կողմը և գեպի Սև ծովի ափերը փախած Դարեհի զորքերի մնացորդներից է, սպարտական անխոնը թագավոր Ագիսը, մի քանի հազար վարձկաններ վերցնելով, կրետե կղզում ափ իջավ, նպաստ վարձկաններ վերցնելով։

շառակ ունենալով այդ կղզին զբավել և Մակեղոնիայի դեմ դուրս գալու գեպքում այդ կղզին ծովի վրա հենակետ դարձնել: Սակայն Հունաստանի բախտը վճռվում էր Աստիայի դաշտերում, որտեղ մակեդոնացի նվաճողը մեթողաբար ու անզուսպ կերպով առաջ էր շարժվում:

Պաղեստինում փոքրիկ Հրեաստանն ընդունեց Մակեդոնիայի իշխանությունն իր նկատմամբ: Եվ Հրեաստանը չսխալիեց Ալեքսանդրի հովանավորությունն ընդունելով. Ալեքսանդրն ու նրա հաջորդները հրեաներին, որոնք տարածված էին Արևելքի ու Արևմուտքի բոլոր քաղաքներում, լայն իրավունքներ ու արտոնություններ տվեցին և հրեական ավտոնոմ համայնքները շուտով արտակարգ ծաղկման հասան:

Երուսաղեմը հանդիսաւ ու բարեհաճ վերաբերմունք ցույց տվեց Պաղեստինը մակեդոնացիների ճեռքն անցնելու վաստին, բայց սահմանամերձ Գաղա ամրոցը, որ գտնվում էր Կարմիր ծովից դեպի Տյուրոս և Եղիպտոսից դեպի Դամասկոս տանող ճանապարհների խաչածեման վրա, որուց դիմադրություն ցույց տալ: Ամրոցի կայազորն ուժեղացվեց արար վարձկաններ հավաքագրելով, բավականաչափ պարենամթերք նախալաւր սատրվեց. ափի և Գաղայի միջև ընկած ավազն ու ծանծաղուուները պիտի խանդարեին մակեդոնական նավերի գործողություններին: Կայազորի պետ ներքինի Վատիսը, որ Դարեհի նվիրված սպասավորն էր, ապացուցեց, որ որոշ դեպքերում ներքինին կարող է խակական տղամարդ լինել: Ալեքսանդրի ինժեներները հայտարարեցին, թե ամրոցը դանդում է բարձր ու դիք բլրի վրա և այդ հանգամանքը խանդարում է պաշտպանկան մեքենաների գործողություններին:

Ալեքսանդրը հրամայեց հողաթումը սարքել այնպիսի բարձրությամբ, որ մեքենաների գործողությունը հնարավոր լինի: Գործի սկիզբն անհաջող էր. ամուր պարիսպները շատ դժվարությամբ էին ենթարկվում պաշարողական մեքենաների գործողություններին, իսկ պաշարվածները վայրի եռանդով հաճախակի ընդդիպումներ էին ունենում: Այդպիսի գրոհներից մեկի ժամանակ կատապուտայից նետված մի նետ ծակեց թափափորի վահանն ու զրահը և վիրավորեց նրան: Թաղափորի զինվորները նրան դուրս բերին կուվի գաշտից, զորքի շարքերը ցնցվեցին, խառնվեցին ու սկսեցին հետ քաշվել, այրվեցին ու ամերգվեցին բազմաթիվ պաշարողական գործիքներ ու պաշտպանական պատեր:

Բայց այդ կրիտիկական բոպեին վրա հասան այն հզոր մեքենաները, որոնք ավերել էին Տյուրոսի պարիսպները: Քաղաքի պարիսպների շուրջը 60 մ լայնությամբ և 75 մ բարձրությամբ հողաթմբեր սարքվեցին, պարիսպների տակը փորվեցին, գործի դրվեցին բարանները, ծակելները և այլ մեխանիզմները: Պա-

ըլսավները չդիմացան և սկսեցին փլվել։ Գաղայիր ամբությունների ավերումը գնալով ավելի արագանում ու հաջող ընթացք էր ստանում։ Մակեղոնացիք բոլոր կողմերից բացված ձեղքերով քաղաք էին նետպում։ Երեք անդամ դրույթ հետ մղվեց և միայն չորրորդ անդամ, երր պարիսպներն ավերակների վերածվեցին, որոնց վրա թափված էին արար քաջերի դիակները, և երր գեպասպիստների ջոկատը պաշարողների համար բաց արեց գարբանները, մակեղոնական ամբողջ զորքը քաղաք ներխուժեց։ Գա՛զան պաշտպանողների մնացորդները բնախնչվեցին փողոցավին կատաղի մարտերում, իսկ նրանց կանայք ու երեխանները վաճառվեցին սորեկության։ Գա՛զան դարձվեց մակեղոնացիների զինվորական հավաքակայանը։ Սիրիայի և Պաղեստինի նախաճումը ավարտված էր։

ԱԼԵՔՍԱՆԴՐԵ ԵԳԻՊՏՈՍՈՒԹՅ

Սիրիան և Փյունիկիան նվաճելուց հետո թվում էր, թե Ալեքսանդրը պետք է շարժվի դեպի Արևելք, որպեսզի Դարեհին հնարավորություն չուն իր ուժերը հավաքել, և պետք է մի քանի վճռական հարվածով վերջ տա Պարսկաստանին։ Սակայն սորատեղիական, ընդհանուր պլանի խախտում կլիներ իր թիկունքում պարսիկների ձեռքին թողնել Միջերկրականի ծովափընայա այնպիսի կարևոր մի երկիր, ինչպիսին էր Եգիպտոսն իր հունական վարձկաններով, որը կարող էր հենակետ դառնալ։ Ալեքսանդրին թշնամի բոլոր ուժերի համար։

Եղիպտոսը բնականից լավ պաշտպանված էր և Ալեքսանդրին հարկավոր էր՝ օգտագործելով եղիպտացիների հիմնական մասսայի ատելությունը պարսիկների նկատմամբ, պարսիկների շփոթված վիճակը, Զելլադայի սարսափահար եղած դրությունը, աիրապետել Եգիպտոսին և այն իր համար բազա դարձնել դեպի Պարսկաստանի խորքերն արշավելու նպատակով։ Բացի արդ, Ալեքսանդրը շահագրգուված էր, որ Դարեհին տապալելուց հետո ինքը նստի նրա զահին որպես Ալեքմենյանների աստվածաց մին ու օրինական ժառանդ, Եգիպտոսի քուրմերը կարող էին Ալեքսանդրին որպես մակեղոնահունական առաջնորդի բարձրացնել ինչպես նաև հավատ եղիպտացիների աչքում, այնպես էլ Արեւելքի ժողովրդական մասսաների մեջ, որտեղ կրոնը դեռ ամենակարող ուժ էր։ Ալեքսանդրը բուրդերի խորհրդավոր աշխարհի կողքով անցնել չէր կարող։

Եղիպտոսը Դարեհի թաղավորության ամենահարուստ ու ամենակարեւոր մարդերից մեկն էր։ Նրա արգավանդ հողը, որ ուղղվում էր ջրառատ Նեղոսի ջրերով, հացահատիկների ամենա-

Հարուստ բերք էր տալիս : Երկրի ամբողջ բարեկեցությունը Ներդոսից է կախված, «Եղիպատոսը Նեղմուի պարզեն է», — ասում է էին Հնում : Կառավարությունն ստիպված է հոգալ ջրանցքների, ջրամբարների, պատնեշների ու չյուղների բարդ սիստեմի մասին, որոնք հնարավորություն են տալիս գետի հորդացումն օդատագործել արհեստական ոռոգման համար : Եղիպատոսի ծեծկված, ճնշված, ճորտ գյուղացիությունը կախյալ վիճակում էր գտնվում՝ քուրմերից ու գեսպատական պետության շինովնիկներից, որոնք գյուղացիությանը կեղեքում էին իրենց սահմանած պարտականություններով, տուրքերով ու հարկերով : Ոչ մի տեղ քուրմերը կրոնական սնահաւաքառությունների ու նախապաշտումների այնպիսի ճկուն ու ամուր ցանցով չէին խճճում մարդկային միտքը, ինչպես Եղիպատոսում : Այսաեղ մարդուն վարժեցնում էին իր ամբողջ կյանքում մահվան պատրաստվել, բայց մահից հետո էլ մնում էր անհայտասրությունը մարդկանց միջև և անդրչիրիմյան երանությունը բաժին էր ընկնում առաջին հերթին ունեորներին ու ավագանիներին :

Պարսիկները չէին կարողանում հաշտվել քրմության հետ և թերազնահատում էին ժողովրդական մասսաների վրա ունեցած նրա ազգեցության ամբողջ ուժը : Քրմությունը ձգտում էր երկրի լիակատար ու անբաժան տերը դառնալ և ամեն հարմար առիթ օգտագործում էր օժանդակելու ապստամբներին և ապրատամբություն բարձրացնելու օտարերկրյա ճնշողների դեմ : Քաղաքներում շատ հույներ էին ասլրում և նրանք, ի հարկե, շատ էլ չէին համակրում պարսիկներին : Եղիպատոսը շատ անդամ էր ոտքի կանգնել պարսիկների դեմ և շատ անդամ էր երկար ժամանակով աղատվել նրա լծից, սակայն ամեն անդամ պարսիկները հույն վարձկանների և հունական բարեկամ պետությունների օգնությամբ այդ ապստամբությունները խեղզում էին արյան մեջ և լուծը վերադառնում էր նոր ուժով : Պարսից թաղավոր Արտաքիրքսեսը վերջին ապստամբությունը ճնշելիս (մակեդոնացիների գալուց տասը տարի առաջ) ինքն անձամբ էր սրախողվող արել Սպակ Եղը և հայհոյել նրանց բոլոր կրոնական սրբությունները : Եղիպատացիների սուր ատելությունը պարսիկների նկատմամբ՝ գրավական էր մակեդոնացիներին բարեկամաբար գիմափրեմու, իսկ այն հանդամանքը, որ իսասայի ճակատամարտից հետո Եղիպատոս վախած և կողոպուտի ու բռնությունների համար ամբողջ երկրում ցըլված հունական վարձկաններին Եղիպատացիք ջարդել էին, այդ էլ արյունաքամ էր արել պարսիկների ուղղմական ուժերը :

Անապատի միջով Դօրյա անցումից հետո Ալեքսանդրը հասավ Պելուզիա, որտեղ միացալ մակեդոնական նավատորմին : Պարսկական սատրապ Մաղակն առանց դիմագրության հանձնեց Եղիպատոսի մայրաքաղաք Մեմֆիսը և ամբողջ Եղիպատոսը : Ա-

Ալեքսանդրը Եղիպտոսում իրեն պահում էր որպես ուղղափառ և գլխավորացի և իր առատաձեռնությամբ, ուշադիր վերաբերմունքով ու սիրալիրությամբ չուսով, ի դեմս Եղիպտական քուբմերի, ձեռք բերեց չնորհալիք ու բանիմաց դաշնակիցներ :

Նեղոսի հոսանքով դեպի ցած գնալով՝ նա բացառիկ հաջողակ տեղ ընտրեց իր անվան քաղաք Հիմնելու համար : Այստեղ, Նեղոսի գետաբերանի մոտ, որտեղ ծովային հոսանքը մի կողմէ էր մզել բոլոր գետաբերուկները, լճի, ծովի ու գետաբերանի միջև, Փարոս կղզու մոտ կառուցվեց նշանալոր Եղիպտական Ալեքսանդրիան : Շուտով Ալեքսանդրիան դարձավ խոչըրագույն առևտրական, արդյունաբերական, գիտական ու կուլտուրական կենտրոն և հին դարերի ամենազեղցիկ ու բարեկարգ քաղաք ներից մեկը : Քաղաքը կառավարվում էր հունական ձեռվ՝ (խորհուրդը, ժողովրդական ժողովը և համայնքների լիազորները), նրա բնակչությունը կազմում էր հուն հուները, հրեաները (հուղարացիք) և Եղիպտացիները :

Այսի երկարությամբ գնալով՝ թաղավորը հասավ Պարետոնիա : Այստեղ նա աֆրիկական հունական դաղութ Կիրենայից նըլվերներ լնդունեց (մի քանի հարյուր մարտական ձի և մի քանի մարտակառք), որից հետո Պարետոնիայի ու Սիվա օազիսի արանքով անապատի ավաղներով անցավ 300 կմ տարածություն և լուս ավանդության մի ժամանակ այդ նույն ճանապարհով անցել էր պարսկական մի ջոկատ, բայց թաղվել էր ավաղի տակ : Հետագայում առասպեզն Ալեքսանդրի այս անցումը զարդարեց զանազան հրաշագործություններով : Օազիս այցելելու արդյունքներից թաղավորն, ըստ իր խոսքերի, շատ դոհ մնաց . «Նա լըսեց այն, ինչ ցանկանում էր» :

Բուժիչ ազգյուրներով ու փարթամ բուսականությամբ այդ օազիսն իր տաճարի քրմերի ու գուշակողների հոչակով շատ ուխտավորներ էր զրավում ամենահեռավոր երկրներից : Սիվա անապատի Ամմոնի տաճարի քրմերը Դելֆիի, Օլիմպիայի, Բարեկրնի տաճարների քրմերի նման իր ժամանակի լավագույն դիմանադեսներն էին : Նրանք կրոնական քողի տակ արժեքավոր խորհուրդներ էին տալիս և իրենց գուշակություններով «քաղաքական հաջողություն» էին ստեղծում այս կամ այն գործչի համար : Այդ տաճարների հրաշալիքների մասին ամենազարմանալի լուրեր էին տարածվում, ինչպես օրինակ, որպես թե Դելֆիան տաճարի քուրմերը գուշակել են, թե ինչ է անում Լիդիայի թագավորը, որն այդ պահին կաթսայով ուղարի միս ու կրիս է եփելիս եղել և այլն : Ամմոնի տաճարն այցելելը թագավորի քաղաքական մի ճարապիկ մանելիք էր . քրմերը նրան ճանաչեցին որպես Ամմոնի որդի, որին որպես իր սիրեցյալի, Ամմոնը տիրապետություն է պարզել ամբողջ տիեզերքի վրա :

Ալեքսանդրի «աստվածացումը» ոչ միայն բազմաթիվ առաս-

աղեներ ու ասացվածքներ ստեղծեց, այլ և շատ դորավարների մեջ անբարյացակամ արձագանք գտավ. բնորոշ են մի ինչ որ նամակի վերաբերյալ լուրերը, նամակ, որ գրել է Ֆիլոսար Պարմենիոնին. այդ նամակով նա հեղնաբար չորհավորելով ասուվածների ընտանիքի բաղմացումը, միաժամանակ՝ ցավակցություն է հայտնել այն մարդուն, ով ստիպված է ապրել այլպիսի: գերբարձրի:

Ալեքսանդրը բարեհաջող կերպով Մեմֆիս վերադառնալով՝ բանակը մեծացրեց ու վերակառուցեց ի հաշիվ նոր օժանդակուժերի և կառավարման զործն այնպես կազմակերպեց, որ Վերին ու Ներքին Եղիպտոսի կառավարիչները, Փինանսական վերահսկիչը, Մեմֆիսի ու Պելուզիայի կայտորերի պետերը, առանձին վարձկան ջոկատների պետերը և Լիբանանի ու Արարիայի սահմանային զինվորական մարդերի պետերը փոխադարձարար վերահսկեն, լրացնեն ու ճնշեն իրար: Հույները հանձնվեցին հասուկ պաշտոնյայի կառավարմանը:

Բայց Ալեքսանդրն ստիպված եղավ շտապել, որպեսողի ժամանակին Դարեհի առաջը դուրս դա:

ԴԱՎԴԱՄԵԼԱՅԻ (Ս.ԲՐԵՆ.Ա.ՅԻ) ՃԱԿԱԾԱՄԱՐՏՈՒՅ

«Արքելայի ճակատամարտը... ամենափառավորն էր մակեդոնական հեծելազորի համար: Ալեքսանդրն անձամբ կռվի տարավ մակեդոնական հեծելազորը... Այդ ժամանակից Ալեքսանդրը համարվում է բոլոր համանակների ամենալավ հեծելազորային պետերից մեկը»:

(Թ Ի Գ Ե Լ Ե, «Избранные военные произведения», т. I, стр. 226).

Եղիպտոսից Պաղեստինի վրայով անցնելով՝ Ալեքսանդրը դուրս եկավ Եփրատի մոտ: Նրա բանակը, որ ուժեղացել էր նոր համալրումով և օժանդակ ուժերով, բազկացած էր 40.000 հետևակից և 7000 ձիավորից: 331 թվի օգոստոսի սկզբին մակեդոնական բանակը Փաղստիկ մոտ Եփրատն անցավ՝ հետ ըլպրտելով պարսկական ջոկատը, որը խանգարում էր կամուրջներ գցել, և այսուղից բլաշտ և համեմատաբար զավ տեղերով անցնող հնագույն մեծ ճանապարհով շարժվեց դեպի Տիգրիս: Գերի վերցրած պարսիկ ձիավորները հաղորդեցին, թե Դարեհ թաղավորն իր վիթխարի բանակով թշնամուն սպառում է Տիգրիսի ձախ ափին, Նինվեի ավերակներից ոչ հեռու: Արևմթաց Տիգրիսը ծանծաղուտով անցնելով այնպիսի մի տեղում, որտեղ թշնամին ամենից քիչ կարող էր սպասել, Ալեք-

սանդրն իր զորքին միօրյա հանդիստ տվեց : Այդ օրը, 331 թը՝ վի սեպտեմբերի 20-ին տեղի ունեցավ լուսնի խալվարում, որ, ի հարկե, մեկնաբանվեց որպես հաղթանակի նախանշան :

Այդտեղից ուղղություն վերցվեց դեսլի հարավ : Աջ կողմը չորձանք էին տալիս Տիգրիսի ջրերը, ձախ կողմը վեր էին բարձրանում դեռ հեռավոր իրանի լեռների ճյուղերը : Սեպտեմբերի 24-ին գերի առնված սարսիկ ձիավոր հետախույզներից տեղեկացան, թե իրը Դարեհը մեկ միլիոն հետևելով և 40.000 ձիավորներով կանգնած է Գալզամելա փոքրիկ քաղաքից դեպի հարավ, մի հարթ դաշտավայրում : Մակեդոնացիք անմիջապես Գասեր գետի ափին կառուցեցին ինամքով ամրացված մի ճամբար : Այդ ճամբարում թողին հիմներին և գումակը : Հոգնեցուցիչ երթից հետո զորքին չորսօրյա հանդիստ տրվեց : Մոտենում էր Ասիայի համար մղվելիք վճռական ճակատամարտի օրը : Պարտությունը հավասար կլիներ կործանման, որովհետև նվաճողներին իրենց հայրենիքից բաժանում էին 4000 կմ տարածություն, Տիգրիս ու Եփրատ գետերը և անապատը : Հարց էր դրված — կամ հաղթել, կամ մեռնել :

Լույս սեպտեմբերի 30-ի գիշերը մակեդոնացիք արշավի դուրս եկան : Թշնամին ընդամենը 10—15 կմ հեռավորության վրա էր գտնվում : Երբ այդ տարածության կեսն անցան, մակեդոնացիք իրենց առջև տեսան հորիզոնը ծածկող թշնամու ու մասսաները, որոնք մինչ այդ ծածկված էին բուրների հետեւ : Անմիջապես հարավիրվեց ռազմական խորհուրդ, որտեղ հաղթահակեց ծերունի Պարմենիոնի կարծիքը, թե անհրաժեշտ է հանդիսատ առնել և մանրամասն ուսումնասիրել վայրը . կարելի էր երկյուղ կրել, թե թշնամին որոգայթներ ու գայլափոսեր կլինի սարքած :

Առավոտյան իր շոտարի հետ Գավդամելայի (այժմ՝ Տեղգոմել) դաշտը շրջելով՝ Ալեքսանդրը համարվեց, որ, ընդհակառակը, պարսիկները հարթել են ամբողջ շրջակայքը, հավանորեն իրենց մարտակառքերի գրոհները հեշտացնելու նպատակով : Մութին ընկենալուն պես զորավարը հավաքեց իր հրամանատարներին, մի քանի պարզ ու արտահայտիչ բառերով ընդգծեց առաջիկա ճակատամարտի նշանակությունը, որտեղ պետք է վճռվեր Ասիային տիրապետելու հարցը, հրամայեց ճակատամարտի ժամանակ ամենաճշգրիտ կերպով հետեւ բոլոր հրահանգներին ու աղդանշաններին, թշնամու վրա հարձակվել լուս, և միայն վերջին րոպեին հարվածել նրան ամբողջ ուժով ու մարտական աղաղակով : Աղա հրամայեց ընթրել և պառկել քնելու :

Պարսկական զորքը, ամրացված ճամբար չունենալով և գիշերային հարձակումից վախենալով՝ ամբողջ գիշերը զենքի տակ շերային հարձակումից վախենալով՝ ամբողջ գիշերը զենքի տակ անց կացրեց : Բոլորը տապնապալից պատրաստության մեջ էին,


ձիերը՝ թամբած, մարտակառքերը՝ վաղքի պատրաստ . . . Դարբեհը շրջում էր իր անթիվ զորամասերը, որոնք այս անգամ համապատասխան պարսկական պետության արեւելյան կեսի ուղղաչունչ ցեղերից և իրենց թվով մի քանի անգամ գերազանցում էին հունա-մակեդոնական մասսայից։ Հետեւյալ օրը Դարեհը ճամբարում գտնվեց նրա զորքերի դաստիքուման պլանը։

Կենարոննը կազմում էին պարսկական հետեւակ ու ձիավոր զորամասերը, սուլիսացիներն ու կալուգիացիները. այլտեղ էին նաև թագավորական գվարդիայի ու թիկնաւալահների ընտիր ջոկատները և վարձկան հույների 2 հազարանոց ջոկատը։

Կենարոննին էին հարում Հնդկաստանի Ենոնական ցեղերը մի քանի մարտական փողերով, մարտական նետաձիդ աղեղնակորները և կարխացիք։ Կենարոնից գեղի աջ գտնվում էին ալբանները (աղյանները) և սակագենները, կենարոնից գեղի ձախ՝ արախոցացիք և ապա՝ նորից Հնդկաստանի Ենոնականները։ Կենարոնի հետևում խիստ զորայուններով երկրորդ ու երրորդ գծի վրա կանգնած էին լեռնականները՝ ուժուները, բարելացիները, Պարսից ծոցի առափնյա ցեղերի աշխարհազորը։

Զախ թերը, որտեղ սպավում էր մակեդոնացիների դիմավոր զբոհը, կաղմում էին դիմավորապես հեծյալ ջոկատներ, որոնք բարկացած էին բակարիացի, դակերի և սուլիացի քաջ ու սաղմաշունչ ձիավորներից։ Այստեղ էր կենարոնացված նաև պարսկական մարտակառքերի հիմնական մասսան, օժտված սուր մանդաղներով, որոնք վաղքի ժամանակ սոսկալի վերքեր էին հասցընում։ Զախ թերի ծայրում կանգնած էին բակարիացի ընտիր և սկսած մասսա-դեմքների ջոկատները, որոնք իրենց ձիերի հետ միասին, պաշտպանված էին երկաթի զրահներով։ Աջ թեր կարմում էին պարթեները, վրկանացիք, թափուրները և սակերը, ել ամելի աջ՝ միերեցիք, սիրիացիք և վերջապես կապագովկիացիք ու հայերը։

Դարեհի զորքերի հիմնական կոնտինդենտն ամելի լավ էր զինված, քան երբեմն եղել էր Պարսկաստանում։ Նիդակները երկարեցված էին, մարտական կարգերը բարեկարգված, սպառազինումը մոտեցած գելենականին և այլն։ Դարեհը մեծ հույսով էր դիմում իր զորքերը, որոնք իրենց զորչ մասսայի մեջ ունեին Սրբելքի հեծյալների ծաղիկը և, հավանորեն, հարյուրորդ անդամ վերադառնում էր պարսիկների կողմից նշված ճակատամարտի պլանին, որի մեջ դիմավոր ու վճռական գերը բաժին էր ընկնում ձիավորներին ու մարտակառքերին։ Այստեղ, Սրբելայի այս ավագութ գաշտում հանդուղն մակեդոնացիներին թերեց ու թիկունքեց պիտի շրջապատեր պարսկական հեծելազուրը, մակեդոնացիք ճակատի կողմից պիտի դեմ առնեին պարս-



Մարտական փիղ պարսից բանակում

կական իմիտ զորասյուների անթափանցելի մասսիվ ու ամուր պատճեշին, մանգաղարվոր մարտակառքերի հարվածով պիտի սրբվեին, ջարդվեին ու քչվելով պիտի քանդեին իրենց անպարտելի Փալանգաների շարքերը և առջելից, հետեւից ու կողքերից հետափնդման ու գրոհների ենթարկվելով, պետք է, վերջապես, փախուստի մեջ դանեին իրենց կործանումը...

Նույնանման նկատառում և երկյուղ եռում էր ծերունի Պարմենիոնի մտքում, երբ նայում էր թշնամու ամբողջ գիշերը բոցավառվող բազմաթիվ խարույկներին: Պարմենիոնը դիմեց Ալեքսանդրին՝ խորհուրդ տալով գիշերային հարձակումով օգտագործել իր զորքերի լավագույն փարժվածությունը և տակտիկական գերակշռությունը: Ալեքսանդրը որպես թե դրան պատախանեց, թե չի ցանկանում գիշերով գողանալ այն հաղթանակը, որ պիտի տանի ցերեկվա լույսով, և մի անգամ էլ նայելով թշնամու կաղմ ու պատրաստ մասսային՝ հաղթանակի խորին հավատով քննեց հաղթողի խաղաղ ու խոր քնով: 331 թրվի Հոկտեմբերի 1-ի առավոտյան նա ուրախ արթնացալ իր դառնամյալ օդնականի համար թափահարումներից և շտապեց իր բանակի մոտ:

Պարուկական միթխարի ուազմաղծի կողմից իր զորքերին չուրջանցելու վտանգը Ալեքսանդրը կանխել էր ստեղծելով երկու մարտական գիծ: Առաջին գիծը նախատեսված էր հարված հասցնելու իր կենտրոնով և մահավանուր աջ թևով, որի հրամանատարն ըստ սովորության ինքն՝ Ալեքսանդրը էր, և կաշկանդելու թշնամու ուժերը ձախ թևով, որի հրամանատարն էր Պարմենիոնը: Երկրորդ գիծը պետք է առաջին գծին ողներ առանձնապես սպառնալից ճակատամասերում, պետք է հետ շրպը բեր թշնամու այն զորամասերը, որոնք ճեղքելով կանցնեին առաջին գծից, իսկ եթե պարսկական հեծելազորը թևերից չուրջանց կատարեր, երկրորդ գիծը նրան պիտի շրջափակեր և կողքերից ու հետեւից պաշտպաներ առաջին գիծը, որպեսզի թշնամին ամենուրեք երես առ երես հանդիպեր մակեզնացիներին:

Աջ թերի ամենավերջին ծայրում Ալեքսանդրը կանդնեցրեց թե՛ւապեն աղեղնատիոնների ու ակոնտիստների ջոկատները, որոնք մոտ մեկ ու կես հաղար մարդ էին: Մակեղոնական էթերների 8 իւ, որոնց թվում թագավորական իւլ Կլիտի գըլիսպորությամբ, աստիճան առ աստիճան սուր սեպի ձեռով ծայրը դեպի թշնամին ուղղած, կազմում էին զվարկոր հարվածային հեծյալ մասսան, որ բաղկացած էր մոտ 1800 ձիավորից: Կենտրոնում ահեղ տեսքով շարքած էին համարյա «կրկնապատկված մեծ Փալանգայի» տակախները, նրանց հետեւ կանգնած էին զիսպասպիստները՝ մոտ 5000 մարդ: Զախ թեռում դասպորված էին դաշնակցից հունական ու թեսալական հեծելազորները, որոնք ընդհանուր առմամբ բաղկացած էին մոտ 2000

մարդուց : Ամենավտանգաւլոր ճակատամասում թեսարական իւերից ամենալավիլի՝ թարսալյան իլլի հետ կանգնած էր ինքը՝ Պարմենիոնը :

Երկրորդ դժում հարվածային աջ թեկի ռեղերվն էին կաղմում՝ Կլեանգրի վարձկանները, տեղածիոնների ու աղեղնամորոների հաղարանոց ջոկատը և աստիճան առ աստիճան դեպի աջ ու դեպի խորքը դասավորված Սրբութ սարիսոնքորները, Սրբուտոնի պեղոնյան թեթև հեծելազորը և ամենից ավելի դեպի աջ՝ Մենիդի նոր հավաքադրած վարձկան հեծյաները :

Զախ թեկի, Պարմենիոնի թեկի ռեղերվներն էին կաղմում իշխան Սրբութի թրակիական թեթև հետեւակը, որի մի մասը բըլութների վրա ճամբարն էր պաշտպանում, Աղաֆոնի օդքիցյան ձիւլորները և հունական դաշնակից հեծյաները : Այստեղ էլ, երկու գծերից ավելի ձախ ու նրանց միջև դասավորված էին Անդրոմաքի վարձկան հեծյաները : Այսպիսով, առաջին գծում դասավորված էին դիմավորապես ծանր հեծելազորն ու հետեւակը, երկրորդ գծում՝ առաջեւապես թեթև հեծելազորն ու հետեւակը և ծանրագեն վարձկան հետեւակները : Առաջին գծի նրան դիրն էր՝ հաղթել թշնամուն, երկրորդ գծի խնդիրն էր՝ թույլ չտալ, որ թշնամին հաղթի :

Էթերների լին և նրանց հետեւից առաջին գծի մարտիկների ամբողջ մասսային, մինչև Պարմենիոնի թեկը, հարկ եղալ անցումի ժամանակ տեղափոխել դեպի աջ, որպեսզի թշնամուն հընարավորություն չորվի աջ կողմից խտանար հարվածային աջ թեկի չուրջը : Եվ այդ ժամանակ նրանց զուգընթացարար առաջ շարժվելու ձգտող պարմեկական բանակի շարքերը քանդվեցին :

Մակեղոնական բանակի շարքերը լուռ ու հանգիստ առաջ էին շարժվում՝ առանց ուշազգործյուն դարձնելու սկյութական ու բակտրիական ձիավորների վրա, որոնք աջ կողմից նրանց առաջը սլանալով շեշտակի հարձակումով հետ էին տալիս Մենիդի հունական վարձկանների հեծելազորը : Մենիդի ձիավորներին օգնելու համար առաջ քաշված Սրբատոնի պեղոնյան թեթև հեծելազորը սկյութացիներին ու բակտրիացիներին հետ շպրտեց : Այն ժամանակ դակիսական, բակտրիական ու սոզդիսական հեծելազորի ամբողջ մասան, պարսկական մարտական գծի մեջ մեծ ձերքվածք առաջացնելով, սլացավ դեպի ձախ ու դեպի առաջ, որպեսզի Մենիդի պեղոնյաներին ու ձիավորներին հետ տա : Այն ժամանակ, երբ այստեղ հեծելազորային կատաղի մարտ էր ըսկըսվել, որուեղ պեղոնյան ու հունական վարձկանները դժվարությամբ էին պահում իրենց վրա հարձակված հեծյալ մասսայի ճնշումը, դիպասպիտաններն ու էթերները շտապեցին մտնել պարակական մարտական գծի մեջ առաջացած ձերքվածքը, որ լցված էր սոսկ մարտակառքերով :

Արեղակի տակ իրենց մանգաղները շողացնելով՝ ահեղաբար

Ալեքսանդրի գիտասպիսաների ու էթերների վրա ոլացան Դարեհ-Հի մարտակառքերը։ Սակայն վերջիններս կողքերից պաշտպանված չէին ո՛չ հեծելազորով, ո՛չ հետեակով, և նետաձիգներն ու աղբացիք չեշտակի զցած նետերով ու տեղերով կոտորեցին «կառավարների» մեծ մասին, նախ քան մարտակառքերը կհասնեին մակերունական շարքերին։ Իսկ երբ, այնուամենայնիվ, մարտակառքերի մի մասը հասավ դիմասպաններին, նրանք կամ դեմ առան մետաղե խիտ պատնեշին, և կամ այս ու այն կողմքաշերով՝ զինվորները նրանց թողին թիկունքն անցնել։ Մակեդոնական ձիազանները լծասարքերը կարտեցին, ձիերը կոտորեցին, իսկ մարտակառքերը կոտակեցին մի տեղ, դրանց որսը դարձնելով իրենց համար ուրախ զվարճալիք։

Ալեքսանդրի հրամանով Արետան սարիստորների գլուխ անցած շապակեց օգնության հանուելու արդեն ուժասպան լինող պետններին ու հեծյալ վարձկաններին և իր կողմը դրամից Դարեհի ձախ թիկ ամբողջ պարսկական հեծելազորը։ Պարսկական ամբողջ կենտրոնը թիկ կողմից մերկացվեց, և էթերներն ու գելապիտունները բուռն հոսանքով թափվեցին առաջացած ճեղքվածքի մեջ այն ժամանակ, երբ Փալանդայի տակսիսներն իրար հետեւից սեղմում էին զեռիս դժվարությամբ հետ քաշվող պարս-


կական կենարոնին։ Սակայն դեպի աջ շարժվելիս և դեպի առաջ հարձակվելիս մակեդոնական մարտական դժի մեջ ևս իր հերթին ճեղքվածքը էր առաջացել Պարմենիոնի թիկի, նրա հետ մնացած տակսիսների Փալանդայի և ամբողջ մակեդոնական կենտրոնի միջև։ Դարեհի հնդկական ու պարսկական ձիազորների մի մասն առաջացած ճեղքվածքը մեջ խրվելով անցավ մակեդոնական երկու գըծերը և հասավ մակեդոնական ճամբարին, որտեղ դերի պարսիկների օգնությամբ արագ ջարդեց թրակիական պահակազորը, սակայն, վտանգական թիկունքից հարփածելու, շատեց ըզբաղվել ճամբարի կողոպուտով։

Պարմենիոնի սեղերգային դժի համարյա ամբողջ հեծելազորն ու հետեակը հետ դարձավ հարձակվելու կողոպտիչների վրա, որոնք ստիպված եղան նահանջել։ Սակայն այժմ Պարմենիոնն ընկապ հօսասհատական դրության մեջ, որովհետեւ թիկ կողմից նրան հարվածել սկսեց պարսկական, հնդկական և պարմենական հեծելազորը, առջելց գրոհում էին միդիացիք, ձախ կողքից շուրջանցում էին հայկական ու կատարովիկական ձիազորները։ Այդ պահին Պարմենիոնը լուր ուղարկեց Ալեքսանդրին, որ եթե ինքն անհապաղ օգնություն չստանա, ամեն ինչ կկորչի, և որ ճամբարն արդեն հափշտակվել է թշնամու կողմից։ Որպես թե Ալեքսանդրը դրան պատասխանել է, թե Պարմենիոնը պետք է որ խելազարգած լինի, եթե այժմ օգնություն է պահանջում, և որ սուրբ ճեղքին միշտ էլ կարելի է հաղթել

կամ մեռնել: Հաղթանակը մակեդոնացիներին կվերադարձնի ի-
րենց ճամբարը և նրանց ձեռքը կտա պարսկական ճամբարը:

Ոչ մէ բան չէր կարող Ալեքսանդրին հետ պահել իր գլխա-
վոր խնդրից, այն է՝ վճռական հարված հասցնել վճռական տե-
ղում: Սուլիացիք, կտղուզները, ամբողջ պարսկական կենտրո-
նը, որ սեղմվում ու հետ էր շպրտվում սասկալի ֆալանգայի
նիզակներով, չպիմացար մակեդոնական հեծելազորի կողքից
հասցրած հարվածին և գիտասպեստների ճնշումին: Մակեդոնա-
կան սարսափելի սեպն ամելի ու ամելի խոր էր խրվում կողքից
պարսկական կենտրոնի մեջ, մինչև որ կտրեցանցար այն: Եղ
այդ կրիտիկական պահին, երբ Պարմենիոնի ձախ թևը արնա-
ցած էր լինում, երբ դեռ մակեդոնական երկու գծերի թիկուն-
քում չէր վերջացել ընդհարումը ճամբարում, երբ հեռու աջ
թևում հեծելազորային կատաղի մարտ էր տեղի ունենում, Դա-
րեհ թագավորն առջելից ու կողքից իրեն մոտեցող մարտի աղ-
մուկից սարսափած՝ ըջեց իր մարտակառքը դեպի հետ....
Մինչ այդ Դարեհի գլարդիան ու վարձկաները քաջարար ու
անձնվիրաբար կովում ու զոհվում էին պարսկական կենտրո-
նում, և մակեդոնական սեպը, որքան էլ խոր խրվեր թշնամու
զորքի մեջ, կարող էր կաշկանդիք թշնամու խիտ մասսաների
մեջ և նույնիսկ նրա դիմակների կույտերի մեջ: Բայց այժմ ա-
մեն ինչ վերջացար....

Գվարդիան ու վարձկանները, շարունակելով պաշտպանել
Դարեհին՝ սլացան նրա հետեւց, խոկ նրանց հետեւց փախայի
նակ ամբողջ պարսկական կենտրոնը: Կենտրոնի փախուստը վը ձ-
ռեց Արքատնի, Արքաի և Մենիկի մակեդոնական հեծելազորի
հաղթանակը սկսութացիների, սողդիացիների ու բակորիացինե-
րի նկատմամբ, որոնք նույնպես կույի դաշտից փախչել սկսե-



Ալեքսանդր Մակեդոնացին Գալիքամելայի ճակատամարտում

ցին, հենց որ «թաղալորը փախչում է» աղաղակը «ով կարող է թող փրկվել» կանչի նման տարածվեց ամբողջ կույի գաշտում:

Ալեքսանդրը կենտրոնի ու աջ թեր ամբողջ հեծելազորով շտապեց օղնելու Պարմենիոնին և հանդիպեց պարսկական, հընդկական ու պարթևական հեծելազորերին, որոնք այժմ գրոհի էին ենթարկվել նաև Պարմենիոնի թեր հեծյալ ուղերձների կողմից: Կատաղի կոմի մեջ ծանր վիրավորվեցին Հեփեստիոնն ու Մենիդը և գոհվեցին մակեդոնական բազմաթիվ էթերներ, բայց և այնպես պարսկական հեծելազորին՝ մեծ կորուստներով հաջողվեց ճեղքելանցնել և շարունակել իր փախուստը:

Այժմ արգեն Պարմենիոնին ևս հաջողվեց հաղթություն տաշնել կապագովի իսպացիների, միոդիացիների, սիրիացիների ու հայերի նկատմամբ: Նա Բումողի մոտ դրավեց պարսկական ճամբարը բոլոր փղերով, էշերով, մարտակառքերով և ուղարկով, Դարեհի գումակի ոսկու և գանձերի հետ միասին: Մակեդոնացիք պարսկեներին հետապնդեցին 50 կմ տարածություն: Իսկ ինքը՝ Ալեքսանդր թաղավորը մահվան հրեշտակի պես սլանում էր Դարեհի հետեւից... Ամենուրեք հետապնդման կոտորած էր տեղի ունենում: Միայն հետապնդողների հողնածությունն էր, որ փրկեց հալածվողներին: Ալեքսանդրը, որ ամբողջ թափով սլանում էր Դարեհի հետեւից, հաջորդ օրը հասավ Արքելա, այնտեղ պարսից արքայի ու նրա աղնվականների դանձերի ու դույքի հետ միասին դրավեց նաև Դարեհի աղեղն ու վահանը, և համոզվելով, որ Դարեհի հետեւից հասնել չի կարող, հետ վերադարձավ:

Քիչքիչ Դարեհի շուրջը հավաքվեցին մի քանի հազար հույն վարձկաներ, բակտրիացի ճիմուրներ ու պարսկական զվարդիականներ, որոնց հետ նա շատեց դեպի Միութիւնի լեռների հյուսիս-արևելյան լեռնանցքերը, դեպի Միութիւնի մայրաքաղաք Եկբատանը:

Մակեդոնացիների կորուստները համեմատաբար մեծ չեն. նրանց հմտությունն ու սպառավիճությունը պաշտպանում էին նրանց կյանքը: Բայց և այնպես արդյոք նվազեցրած չեն չին պատմիչն տված տեղեկությունները, որոնց համաձայն մակեդոնացիք կորցրին 500 մարդ սպանված և 1000 մի քանի հազար էլ վիրավոր: Բայց նույն տեղեկությունների պարսկեների կորուստները կազմում էին տասնյակ հազարներ:

Պարսկական միասնակառությունը, որ վիրավորվել էր Գրանիկում, ծանր վիրավորվել էր իսսայում, Գավդամելայում մահացու վերք ստացավ: Այժմ խնդիրն այն էր, թե որքան ժամանակ կտևի նրա հոգեարքը:

Պարսկեների սակագաթվությունն ու սակագ կուրտուրականությունը, նրանց ավագանու կամայականությունն ու այլամերգածությունը, սատրապների արյունահեղ հաշվեհարդարնե-

ըլ, կառավարող պարագիտային վերնախառի անընդունակությունը՝ արևմտյան հարուստ մարզերի (Փ. Ասիայի, կիպրոսի, Բարելոնի, Սիրիայի և այլնի) առևտրա-արդյունաբերական շրջաններին անհրաժեշտ խաղաղությունը, կարդ ու կանոնը և համաշխարհային առևտրական ճանապարհների վրա տիրապետություն հաստատելու գործում, զանազան երկրների ու ցեղերի կենտրոնախույս ձգտումներն ու շահերը, գրան ավելացրած նըրանց ընդհանուր ատելությունը պարսկական լծի հանդես, վերջին թաղավորների անձարակությունը, որոնց կառավարում էին իրենց հարեւնների ներքինիները, — այս ամենը Դարեհի վիթխարի միասին դեպի կործանում:

ԴԱՐԵՀԻ ՄՍ.ՀՅ. ԵՎ. ՊԱՐՍԿԱ.Ա.Ն. ՄԻՍ.ԳԵՇՈՒԹՅԱՆ Ա.ԱԽԱԶԱՆ.Ը

Մակեղոնական բանակը մոտենում էր «Հարյուրադարբաս Քարելոնի» պարիսպներին: Այդ այն ժամանակվա խոչորակույն քաղաքն էր, որի նատվածքի շրջապատը 20 ժամվա ճանապարհ քաղաքն էր, ուներ հզոր ամրություններ, բարձր ու հաստ պարիսպներ՝ բազմաթիվ աշտարակներով... Եթե Բարելոնը սիրտ աներ գիտադրություն ցույց տալու, մակեղոնական բանակը երկար ժամանակ ստիպված կլիներ մնալ այդ վիթխարի քաղաքի պարիսպների առաջ:

Սակայն Բարելոնի հարուստ վաճառականներն ու քրմերը, ինչպես և նրա սեմիտական բնակչության մյուս խավերը, թըլ-նամաբար էին տրամադրված պարսկիների նկատմամբ, որոնք քաղաքը զրկել էին ինքնավարությունից և ավերել էին նրա բազմաթիվ նշանավոր տաճարները: Ալեքսանդրին զիմավորեցին որպես պարսկական բազմամյա լծից աղաստարարի: Քաղաքը զարդարվեց, նրա փողոցներում ծաղիկներ փուցին, Բարելոնի սատրապ Մագելլը քաղաքի պատղամավորների դրույս անցած՝ դարբասների, առաջ ողջունեց թաղավորին և առանց որևէ պայմանի նրան հանձնեց քաղաքը, ամրոցն ու գանձարանը:

Ալեքսանդրը Բարելոնում ընդունեց նրա թաղավորների տիտղոսը՝ «թաղավոր Բարելոնի և աշխարհի չորս կողմերի», ապա հրամայեց վերականգնել Մարդուկի տաճարն ու պարտիկների արվերած մյուս սրբավայրերը և քուրմերի զեկավարությամբ դրհերը մատուցեց բարելական աստվածներին: Իր ճկուն ու ըղուշավոր քաղաքականությամբ նա աշխատում էր իր կողմը գլուխվել Բարելոնի բնակչությունը և ամենից առաջ նրա տիրապետող վերնախառի, բարեկամի դիմակի տակ թաքցնել նվաճողի գեմքը: Նա Բարելատանի սատրապ թողեց Մագելն, բաղմա-

թել վարչական պաշտոններում թողեց «ասխացիներին», բայց զինվորական ու ֆինանսական պաշտոններում նշանակեց առավելապես մակեղոնացիների և հույների: Բարելոնի հինավուրց կուլտուրան՝ կամե տախտակների վրա կատարած իր սեպագիր արձանադրություններով, իր գիտնական քուրմերով, որոնք հըմուտ էին երկնային լուսատունների ուսումնասիրության գործում, չափերը հաշվելու իր ավարտված ու յուրովից կատարյալ սիստեմով, իր յուրահատուկ տեխնիկայով, զբականությամբ, արվեստով տեժեղ տպագորություն թողեց թե՛ թագավորի և թե՛նրա մերձավորների վրա: Թագավորն ակամայից ենթարկվել էր արևելյան կուլտուրայի թովչանքին և երբ անցնում էր վիթխարի քաղաքի փողոցներով, նրա անհամար աշտարակների, պալատների ու տաճարների միջով, նրա փառահեղ «կախված այդիների» ու սքանչելի պուրակների միջով, չէր կարող չտեսնել հելենիների կուրությունը, որոնք այլպիսի մոռոգուրդներին «բարբարոսներ» էին համարում:

Նրա զորքն էլ իր հերթին կարողացավ լսու արժանվույն գընահատել բարեկաման քաղաքակրթության բարեկները: Գալպամելայի ճակատամարտից հետո յուրաքանչյուր մակեղոնացի ձիավորին տրվեց 600 դրահմ (մոտ 250 ռուբլի ոսկով), ոչ մակեղոնացի ձիավորներին՝ 500-ական դրահմ, մակեղոնացի հետեվակներին՝ 200-ական դրահմ և այլն, այսպես որ մակեղոնական յուրաքանչյուր զինվոր շատ թե՛ քիչ խոչոր դրամական գումար ուներ (պետք է նկատի ունենալ, թե այն ժամանակ որքան ցածրը էին դները...):

Բարելոնի հարուստ թաղամասերում տեղագործված մակեղոնական զորքը «հանգստանում էր» մի ամբողջ ամիս, ուղղմական արշավի զրկանքներից ու դժվարություններից հետո բաւոն թափով հաղուրդ էր տալիս իր վայելքի ծարավին՝ քաղաքի փողոցներում ու անկյուններում բավարարություն գտնելով աղմբեկալից բարեկոնի արթնացրած բոլոր բնազդներին ու կրքերին: Հարբեցողությունը, այլասերումը, աղարտային խաղերը, որկրամոլությունը, անասնական կրքերի բռնկումները համակել էին ամբողջ զորքին՝ սկսած կիսավայրենի թրակիացուց մինչև նույն ինքը՝ մակեղոնական թաղավորը: Վերջապես թաղավորը Բարելոնից դուրս բերեց հանգստությունից ուժասպառ եղած իր զորքերը:

Ալեքսանդրի Սուլա ժամանելուց շատ առաջ (Սուլան Պարսկաստանի մայրաքաղաքներից մեկն էր) իլամի՛ այդ հնագարյան մայրաքաղաքը գլուխել էր Ֆիլոկսենի մակեղոնական ջոկատը: Սուլայում Ալեքսանդրի ձեռքն ընկալվ 50.000 տարանդի՛ (մոտ 100 միլիոն ռուբլի ոսկով) ռոկի ու արծաթ, բացի այդ՝ ծիրառնի, անուշաբույր նյութեր, թանկադին քարեր, պալատական արդ ու զարդ: Սուլայում հունական օրինակով կազմակերպվե-

յին խաղեր ու մըցություններ (ջահակիրների վազք, բռնցքամարտ, ըմբշամարտ և այլն) և «ըստ նախնյաց սովորության» դոհեր մատուցվեցին աստվածներին: Սուզայում Արեգանդրին հասան նոր ուժեր՝ 6000 մարդ մակեղոնացի հետեւակ և 500 մակեղոնացի ձիավոր, 600 թրակիացի ձիավորներ, 3500 թրակիացի հետեւակ, 4000 վարձու հետեւակներ և 1000 ձիավոր Պելոպոնեսից, 50 հողի մակեղոնացի նշանավոր երիտասարդներ: Նորեկներին բաշխվեցին հին մարտական ստորաբաժանումների միջև: Հեծյալների յուրաքանչյուր իլ բաժանվեց երկու լոխի, որպեսզի ավելի ճկուն ու արագաշարժ լինի:

Էլամից դեպի հարավարեւելք սկսվում էր Պարսկաստանի բուն մարզը՝ Պերսիզան — պարսից նվաճողների հայրենիքը: Զմեռվա կեսն էր. ձյունը ծածկել էր իրանի լեռների զագաթներն ու լեռնանցքերը, որտեղ մոլովնում էր բուքը և թշնամաբար տրամադրված լեռնականները կտրել էին լեռնային նեղ շավիղները: Լեռնական ուկսիների ցեղը ճանապարհը կտրել էր և պահանջում էր տուրք տալ, որպիսին նրանք սովորաբար վերցնում էին նաև պարսից թաղավորից, երբ վերջինս անցնելու էր լինում այլտեղով: Ալեքսանդրը վարպետութեն կոխի մզեց լեռներում և թեթև զորամասերի ու դիալասպաստների գլուխ անցած՝ միշտ կարողանում էր հակառակորդին շուրջանցելու և շրջապատելու ճանապարհներ զանել: Ուկսիները բոլոր կողմերից շրջապատվեցին, նրանց մեծ մասը բնաջնջվեց, իսկ ցեղի մնացորդներն ստիպված եղան մակեղոնացիներին տալ բազմաթիվ ոչխարներ, ձիեր ու բեռնակիլ կենդանիներ և հետազայում ևս անսառններ ու ձիեր մատակարարել հաղթողին:

Սակայն ճանապարհին, լեռներում, 25.000 հետեւակով ու 700 ձիավորներով կանգնած էր ձեռներեց պարսիկ Արիոբարզանը, որը դժվարամատչելի լեռնանցքը՝ Պերսիզայի գրունքն ամրացրել էր խրամատներով ու քարե պարիսպներով: Ճակատից բրուժելով պարսից գրունքը բանալու անհաջողությունը մակեղութելով պարսից գրունքը բանալու անհաջողությունը: Աղոնացիներին ստիպեց նորից դիմել շուրջանցելու միջոցին: Ալեքսանդրը զիշերով, ձյունախառն բուքի միջով բարձրացավանցավ լեռան գաղաթի հետեւ, Պարսից գրունքի պաշտպանների նահանջի ճանապարհը կտրեց, մի ջնկատ առանձնացրեց դեպի Պերսկապոլիս կամուրջներ գցելու համար, իսկ ինքը՝ մի ամենաընտիր ջնկատի դրւխ անցած, զիշերային խավարի ու բուքի տակ թաքնված, անտառի միջով, ձյունի ու սառուցի վրայով մոռեցավ Արիոբարզանի ճամբարին: Պարսկական պահակներից ոմանց կոտորեցին, ոմանց հեռու քաշին իրենց ճամբարից և մակեղոնական պահակախմբերը դերի բռնեցին նրանց: Արիոբարզանի դիմունները քաղցը երազներից հանկարծ ընկան զարբարզանի դիմունները գցելու համար, միշտ կամ իրավականության մեջ: Արիոբարզանի հաջողվեց սակահութելի իրավանության մեջ:

վաթիւ պարսիկների հետ ճեղքել-անցնել թշնամու օդակի միջով: Պերսիկայի գռները բացվեցին Մակեդոնիայի առաջ:

Օգովելով հեռատեսորեն պատրաստված կամուրջներից՝ Ալեքսանդրն շտափեց դեպի Պերսիկայի սրաբեսզի ամբոխի ու պահակների կողոպուտից փրկի իր համար պարսկական թագավորների անբավ դանձերը, որոնք դարերի ընթացքում միապետության կենտրոնն էին հոսել նրա բոլոր ծայրերից: Պերսեպոլիսում ձեռք զցած մեծաքանակ դործվածքները, ամենաբազմապետի թանկարժեք իրերը, 120.000 տաղանդի ոսկին ու արծաթը Ալեքսանդրին դարձրին իր ժամանակի ամենահարուստ միապետը: Պերսեպոլիսի դանձերը տեղափոխելու համար որպես թե հարկավոր է եղել 10.000 զույգ ջորի և 3000 ուզու: Պերսեպոլիսի հետ միաժամանակ գրավվեց նաև Պատարգաթը՝ իր շքեղ պալատներով ու թագավորների գամբարաններով:

Այստեղ, Պարսկաստանի սրտում, Ալեքսանդրը վերջին անգամ ամբողջ աշխարհի առաջ հանդես եկավ հույսների առաջնորդի և Հելլադայի «դարավոր թշնամուց» վրիժառովի կերպարով: Քիչ է ճշմարտանման այն պատմությունը, ըստ որի իր թե աթենացի կուրտիզանունի Տախիան դիմուցած ժամանակ բթացած վիճակում նետվել է Հրդեհելու պարսկական թագավորների շըքեղ պալատը և իր հետեւից տարել է նաև թագավորին ու նրա ամբողջ ավազանուն: Պատմում են նաև, թե Պերսեպոլիս մտնելիս Ալեքսանդրին դիմավորեց հաշմանդամ դարձած ու այլակերպած հույսների մի թափոր, նրանք թագավորին պատմեցին, թե ինչպիսի բռնություններ ու զաղանություններ են գործադրել իրենց վերաբերմամբ և օգնություն խնդրեցին նրանից:

Պերսեպոլիսում Ալեքսանդրը հարկավոր համարեց աղատություն տալ իր զինվորների ափազակային ընազդներին, որոնք նա ստիպված էր երկաթե բազուկով սանձել պարսիկներին ենթակա երկրներում ու ցեղերի մեջ, և քաղաքը հանձնվեց բանակի կողոպուտին: Որպես թաղման ջահ Դարեհի դիմաստիայի ու միապետության գլխին՝ Հրկիդվեց ու այրվեց պարսից թագավորների հոյակապ պայտառը Պերսեպոլիսում: «Բարբարոսների» նկատմամբ կատարած այդ բարբարոսական վարժունքով Ալեքսանդրը հույսներին ապացուցում էր, որ ինքը հույն է: Պերսեպոլիսի առումը բոլոր հույսների վրա շատ ուժեղ տաղավորություն թողեց: «Ինչպիսի՞ մեծ ուրախությունից են զրկվել նրանք, որոնք չեն ապրել մինչև այսօր», — ասաց հույն աղղասերներից մեկը՝ Ալեքսանդրին տեսնելով Դարեհի զահին նստած:

Չորս ամիս Ալեքսանդրի դորքը մնաց Պերսիկայում, քեզ ու խրախանքով տոնելով Պարսկաստանի ջախճախումը և Մակեդոնիայի ու Հելլադայի հաղթանակը: Դեպի հարավ, մարդական ինքնային անհնաղանդ ցեղի դեմ էքսպեդիցիա ուղարկելը և Քարմանիայի սատրապությունը նվաճելը մեծ ջանքեր չպահանջեցին:

ու թագից, և իր մահով արձակեց Ալեքսանդրի ձեռքերը, որն իր նվաճումները շարունակեց «վրեժ Դարեհի համար» լողունգով: Դարեհի դիմակը աստիճան դարձավ, որով Ալեքսանդրը բարձրացաւ Պարսկաստանի դաշը՝ որպես պարսկական թագավորական տան բոլոր իրավունքների ու տիրապետությունների «օրինական ժառանգորդ»:

Սյդպիսի ընդարձակ միավետության դլուխ կանոնած լինելով՝ Ալեքսանդրը կարող էր մեծամյա հեղնանքով «կատվի կը-ովի» անվանել իր փոխարքա Անտիպատրի պատերազմը սպարտական թագավոր Ագիսի ղեմ: Մի քանի հաջողություններից հետո Սպարտացի հանդուղն թագավորը Մեղալոպոլիսի պաշարման ժամանակ ջախչախից եղանակ կրկնակի չափով ուժիղ թըշնամու դեմ մղած ճակատամարտում, որը մեծ կորուստ էր ունեցել: Սպարտան ստիպված եղավ պատանդներ տալ Անտիպատրին և իր աղատությունը զիջել Ալեքսանդրին, որը, ի դեմ, շատ մեղմ վարվեց նրա հետ: Մակեդոնական նախատորմը, որ ուժեղացվել էր Փյունիկացի, Կիլոպատր, Փոքր Ասիայի և Եգիպտոսի էսկադրաներով, ապահովում էր Սթենքը և Հունատանի մրւա ծովային քաղաքների հնազանդությունը:

Մակեդոնա-սպարտական պատերազմից հետո Հելլադան չէր համարձակվում Մակեդոնիայի դեմ գուրս զալ: Ալեքսանդրը, ունենալով իր ձեռքն ընկած հսկայական միջոցները, կարող էր Հելլադայի վրա նայել որպես իր պետության կարեւորագույն պլատֆինցիաներից մեկի վրա:

ԿԱՍՊԻԻ ԳՐԱՆԵՐԻՑ ՄԻՒԶԵՎ ՀԻՆԴԻԿՈՒՇԻ ՍՑՈՐՈՑՆԵՐԸ

Դարեհին սպանողները վախսան իրենց սատրապությունները, և Ալեքսանդրը, որ գործում էր «վրեժ արքային սպանողներից» լողունգով, պետք է պայքարը շարունակելու մինչև դիմադրության բոլոր օջախների ոչնչացումը Պարսկական միասնական արևելյան սատրապություններում:

Սկզբում նա զրավեց ամբողջ Պարթևստանը իր Հեկատոնամիլի կենարոնով: Ալեքսանդրի լավագույն զորավարներից մեկը՝ Կըրատիկը, նվաճեց լեռնուտ Տապուրիսն, որ Պարթևստանը բաժանում էր Վրկանիսայից: Մակեդոնական զորքերը, մի քանի զորասյուներով մտնելով Վրկանաց աշխարհը (Կասպից ծովից դեպի Հարավ-արևելք), իրար հետ միացան Վրկանիսայի կենորոնում: Զադրակարսում (այժմ Աստրաքաղ), որտեղ նրանք 15-օրյա հանգիստ ստացան: Հույն վարձկանները, որոնք Բեսսի կողմից Դարեհին ձերբակալելուց հետո նահանջել էին դեպի Տապուրիսի լեռները, մոտ 1500 մարդ, առանց որևէ պայմանի:

անձնատուր և զան Ալեքսանդրին։ Նրանց մեծ մասին ընդունեցին մակեղոնական բանակի մեջ։ Լեռնական ցեղերին հնագանդեցնելը մի քիչ էր կարացրեց վրկանաց աշխարհում մնալը։

Բակտրիա դիմայիս մակեղոնացիք մտան Արիաց աշխարհը (այժմ յան Հյուսիս-արեմատյան Ալղանստանը)։ Արիաց աշխարհի սատրապ Սատրարզանը սկզբում անձնատուր եղավ և նույնիսկ թողնվեց իր պաշտոնում, բայց հետո Ալեքսանդրի թիկունքում ապատամբություն բարձրացրեց և ոչնչացրեց Արիաց աշխարհում թողած փոքրաթիվ հեծյալ ջոկատը։ Ալեքսանդրին արագորեն վերադարձավ, դրավեց ամբողջ Արիաց աշխարհը, ապատամբների հետ դաժան դատաստան տեսավ և այդ մարզում իր իշխանությունն առնացնելու համար հիմնեց մի ուսումնական դադությունը Արիայի Ալեքսանդրիան (այժմ Հերաթ), որտեղ հույն վարձկանների ու մակեղոնացի վետերանների հետ միասին բնակության թողեց նաև տեղացիների։ Իր նվաճողական հաջողությունները տեղացիներից ու հույներից, զինվորական ու քաղաքացիական բնակչություններից կազմված այդպիսի խառն դադութ հիմնելով ամրապնդելու մեթոդը դարձավ Ալեքսանդրի սիրած մեթոդը և նա իր կյանքում մի քանի տասնյակ այդպիսի «Ալեքսանդրիան» հիմնեց։ Յուրաքանչյուր այդպիսի դադությունը միաժամանակ դառնում էր ուսումնական հենակետ ու հելլենիզացիայի և հունական ու արևելյան կուլտուրաների փոխազդեցության կենտրոն։

Արիաց աշխարհից նա դնաց Արախոզիա և Դրանդիանա սատրապությունները։ Սատրապ Բարդաենուր, Դարեհին սպանողներից մեկը, վախավ հնդկական ցեղերի մոտ, որոնք հետազոտյում նրան մատնեցին Ալեքսանդրի ձեռքը։ Գեղրողիայի նվաճումը ճանապարհ էր բանաւում դեսլի հնդկաստան։ Հնդկաստան տանող ճանապարհներից ոչ հեռու և ոչ հեռու Հինդիկուշի ամենաբարձր լեռնաշղթաներից, որոնք նվաճողները սխալմամբ կոկկայացն լեռների շարունակություն էին համարում և անվանել էին «Հնդկական Կովկաս», հիմնվեց Արախոզիայի Ալեքսանդրիան (այժմ Կանդիահար)։ Այդ տարվա արշավանքի ընթացքում մակեղոնացիք հասան մինչև Պարակամբիզի սարահարթը և ճամբար խմբեցին Հինդիկուշի ստորում։

Միայն Գեղրողիայի սատրապն էր, որ ստրատեգիական նրկատառումներով մակեղոնացի նշանակվեց (գա Հնդկաստանի ճանապարհներ էր)։ Պարթևստանում սատրապ նշանակվեց պարթե Ամմինակը, Վրկանաց աշխարհում՝ Ալեքսանդրի կողմն անցած՝ Դարեհին նախակին իշխան Ֆրատաֆերնը, Տապուրիայում՝ Ավտոբրադատը և այլն։ Ասիայի սատրապների մոտ որպես խոր հրդականներ, վերահսկիչներ ու կայազորի պետք մնում էին մակեղոնացիք և հույներ։

Սակայն 330 թ. աշնանը տեղի ունեցած մի կարևոր դեպք էրևան բերեց մի շարք նոր վտանգների, որոնք հաղթական զորագարի համար դրսուրվեցին նրա սեփական ճամբարում։

Դեռևս Ալեքսանդրի ուսուցիչ Արխատուելն իր սամփն խորհուրդը էր տալիս «Հելենների հետ վարվել որպես բարեկամների հետ, իսկ բարբարոսների հետ՝ որպես անասունների ու բույսերի հետ»։ «Բարբարուն ու ատրուկն իրենց էությամբ նույնանման հասկացողություն են», — ասում էր Արխատուելը։ Հելեններն ու մակեդոնացիք եկել են Ասիա, «որպեսզի տեր իմնեն նըրանց, ում որ վայել է ստրուկներ լինել»։ Բոլոր մարդկանց հավասարության միտքը խորթ էր ինչպես շարքային հույսի կամ մակեդոնացու համար, այնպես էլ Հունաստանի դիտնականների, փելլիսովանների, իմաստունների մեծամասնության համար, որոնց մեջ Արխատուելն ամենականավորներից մեկն էր։ Ալեքսանդրն ըստամենայնի յուրացրել էր Արխատուելի ուսմունքի այն կողմը, որի համաձայն իր ընդունակություններով ու զորությամբ աչքի ընկնող մարդն օրենքից զուրս և օրենքից բարձրը է կանգնած, որովհետև «նա ինքն է օրենքը», և հիանալի հիշում էր իր դաստիարակի պատմած առակն այն մասին, թե ինչպես նապատակներն առյուծին հավասար բաժինն էին պահանջում ավարից։ Սակայն այդ մեծ զորավարն ու քաղաքացին առաջ էր անցել իր ուսուցչի հայցքներից և իր հասած փառքի, իշխանության ու հաջողության գորգաթից կարողացավ ավելի վեր բարձրանալ իր ցեղից ու իր ժամանակից։

Դեմոկրատական, իր կազմով դյուզացիական մակեդոնական հետեւակը գեռևս ըստամենայնի նվիրված էր իր թաղալորին, որի հետ բաժանում էր նրա աշխատանքը, ափարն ու փառքը։ Ալեքսանդրը կարողանում էր ճանապարհ դանել դեպի իր զինվորի սիրառ, նրա հետ խոսել նրա լեզվով և նրան տանել իր հետեւից։ Սակայն զորքի արխատոկրատական վերնախավը, որից համարդրվում էին էթերներն ու շատ բարձրաստիճան պետք, ամելի ու ավելի մեծ անբարվականությամբ էր տեսնում, թե ինչպես իրենց թաղավորը դառնում է ամենակալ համայոզ, որն իր գահի աստիճանների մոտ հույսներին ու մակեդոնացիներին հավասարեցնում է պարտված «բարբարոսներին»։ Ալեքսանդրը գեռևս քեփեր էր անում իր «բարեկամների» հետ, լսում էր նրանց կոպիտ, երբեմն էլ խիստ խորհուրդները, կատակներն ու դիտողությունները, իր զինակիցների նկատմամբ իրեն պահում էր տակտով և զգույշ։ Սակայն մակեդոնական ու հունական այդ ավագանին, որ այնքան չուտ Արևելքի վայելքի համն առավ, Պարսկաստանը նվաճել էր նրա համար, որ տիրապետի հաղթվածներին և ոչ թե նրա համար, որ իր դիտակներով ծածկի թաղավորի ուղին գեպի ամբողջ աշխարհի և բուն Մակեդոնիայի տիրապետությունը։ «Հաղթանակների պտուղները հաղթ-

վածների ձեռքումն են», — դառնությամբ ասում էին շատ մակեդոնացիներ:

Մինչդեռ Ալեքսանդրը Դարեհի մահից հետո արագորեն գտնում էր արևելյան մշապետ մի վիթխարի պետության, որի մեջ Մակեդոնիան պիտի գտնար լոկ մելը բազմաթիվ պրովինցիաներից, իսկ մակեդոնացիք, հույները, պարսիկներն ու մյուս ժողովուրդները պիտի փոխադարձաբար հավասարակշռեն իրար իրենց թաղախորին ծառայելու գործում: Թաղախորն արեվելյան մարզերից շատերում սատրապ է նշանակում պարսիկների, միդիացիների, պարթևների, նաև պարսիկներին քաջում է իր էթերների կազմի մեջ, պարսկական երիտասարդությանը հարվածում է, որ հունարեն լեզու և մակեդոնական ոստիմական արվեստ սովորեցնի (նա հրամայել էր այդ նպատակի համար ուսնանացնել 30·000 երիտասարդ՝ պարսիկներ, միդիացիներ, պարթևներ և այլն՝ «լավագույն տոհմերից»), վերջապես նա պարսկական պալատական ծխակատարություններ է մտցնում և սկսում է սատրիճանաբար ու կամաց կամաց այդ կանոններն ու սովորությունները տարածել նաև իր մակեդոնացիների վրա:

Ալեքսանդրի արևելյան քաղաքականության դեմ եղած օպոզիցիան իր ականավոր ու ազգեցիկ առաջնորդներն է զանում ի դեմս Պարմենիոնի և նրա որդի Փիլոստի: 330 թ. աշնանը Դրանդիանի կենարունում թաղախորի կյանքի դեմ կազմակերպած դավադրություն բացվեց: Փիլոստ, որին տեղեկացրել էին դավադրության մասին, լուել էր, թեև երկու օր իրար հետեւց եղել էր թաղախորի մոտ: Դավադրության դեկավարներից մեկին՝ Դիմինին ձերբակալելու փորձ անելիս նա ինքնասպանություն դորձեց: Կեն գիշերին քաղաքի դարբասները փակվեցին և ձերբակալվեցին շատ մարդիկ, որոնց հետ նաև Փիլոստը:

Չորքի ընդհանուր ժողովում թաղախորը հրապարակեց դավադիների նամակները և հաղորդում արեց Պարմենիոնի ու նըրաւա որդի Փիլոստի կասկածելի դործունեության մասին: Հարցաքննության ժամանակ դաժան տանջանքների ենթարկված Փիլոստը խոստովանեց իր մասնակցությունը դավադրությանը, որին, համենայն դեպս, համակրում էր: Փիլոստի հայր Պարմենիոնը չէր կարող անմիջականորեն մասնակցած լինել դավադրությանը: Այդ ժամանակ նա գտնվում էր կերպատանում, որտեղ նըրաձեռքում կենարունացած էին խոչոր ուսումնական ուժեր և Փինանսական միջոցներ: Ծերունի զորավարը զորքի մեջ մեծ ազդեցություն ու հեղինակություն ուներ և ապստամբելու դեպքում կարող էր վտանգավոր հակառակորդ լինել: Ծերունազարդ Պարմենիոնը, երբ կարգում էր իր որդու կեղծված նամակները, ըստապանվեց թաղախորին նվիրված Պոլիդամանտի ձեռքով: Ծերպատանի կայազորը, որ քիչ էր մնում զենքի դիմի, հաջողվեց իսաղաղեցնել:

Մահապատժի և նթարկվեց նաև լինկիստիացի Ալեքսանդրը, որ մինչ այլ պահվում էր կալանքի տակ: Դավադրության ու մահապատճեների առաջարած հուղումը երկար ժամանակ չէր խաղաղվում, անբավականությունն իր արտահայտությունն էր գտնում նամակներում, խոսակցություններում, յուրերում, պատմություններում: Անբավական տարրերից կազմակերպվեց «դիսցիպլինար ջոկատ», որպեսզի «նրանց անտեղի շատախոսությունը մնացած զորքին էլ չի չափացնի»:

Ս.ՄՈՒ.ԴԱ.ՐԻ.Ա.Յ.Ե.Ր ԵՎ. ՍԻՐ.ԴԱ.ՐԻ.Ա.Յ.Ե.Ր Ս.ՓԵՐԻՆ

Միջին Ամսկայում Ալեքսանդրն ստիպված եղավ զործ ունենալ այնպիսի մի հակառակորդի հետ, որը սոսկալի էր ո՛չ իր ուժով ու դիմացկունությամբ բաց ձակատամարտում, այլ իր ճարպկությամբ, տեղանքի դիտությամբ, արարաշարժությամբ և հարցակումների անսպասելիությամբ: Ծանր հետեակը և նույնիսկ ծանր հեծելազորը չափաղանց դանդաղաշարժ էին գուրս գալիս թշնամու հեծյալ պարտիզանների գեմ պայքար մը՝ զելիս: Ալեքսանդրը Փալանչան օվտապղոծում է դիմավորապես կայազորային ծառայության մեջ, պաշարումների համար և Հունաստանի հետ իր հաղորդակցությունը ապահովելու համար: Նա սկսում է հիմարիխիանների մեջ համախմբել մի քանի եւ կամ հեծելազորի լրիմեր (հայանորեն գանազան տիպի) և զորքի տարրեր տեսակներից ստեղծում է առանձին ջոկատներ: Միջին Աստիայի պայմաններում հարկ եղավ շատ բան ընդօրինակել պարսկիներից, պարսիկների օրինակով կազմակերպվեց հեծյալ նեղակակիրների, հեծյալ ակրոնտիստների կորպուս, զորքի շարքերն էին ներդրավիտում ավելի ու ավելի մեծ թվով ասիացիներ՝ միզիացիք, պարսիկներ, բակարիացիք, պարթիներ և այլն, որոնց համար նույնիսկ թագավորական դմարդիա մանելու հնարավորություն ստեղծվեց: Համարյա բոլոր նետաձիզները հավաքագրվում էին «ասիացիներից»:

Դաշնակիցների կոնտինգենտը արձակելուց հետո և Ալեքսանդրի անսահմանափակ Փինանսական միջոցների պայմաններում խիստ բարձրանում է վարձու զորքերի գերբ, զգալիորեն մեծանում է վարձկան հույների թիվը, նրանք մեծ թվով մտնում են պիպասպիտների և նույնիսկ ծանր հեծելազորի շարքերը: Ալեքսանդրի բանակը քայլ առ քայլ կորցնում է իր ազգային բնույթը և արևելակոսմոպոլիտական կերպարանը է ստանում: Ալեքսանդրի ճամբարը զառնում է միապետության կառավարման շարժական կենորոնը, որտեղից հազարավոր կիւմետրերով ձըդպում են նվաճված երկրների ու ժողովուրդների կառավարման

թելերը: Այդ ճամբարը լի է ամեն հասակի, տոհմի, պղոփեսիացի ու ամեն ցեղի մարդկանցով. այլտեղ կան փիլիսոփաներ ու մարդուներ, գիտնականներ ու պոռնիկներ, երեխաններ ու ծերունիներ, հնդիկներ ու եթովպացիներ, սպեկուլյաններ ու քրոմեր: Սակայն ռազմական դորժագությանների ժամանակ արդամբողջ մարդկացին բեռը թողնվում է թիկուլքում, մարտի են տարիվում միայն ամենաանհրաժեշտները:

Դարեհի մահից հետո սկսվեց նրան սպանողների հետապնդումը: Բեսուր փախավ Բակտրիա (Ներկայիս Հյուսիսային Ասվանատանը), ավերելով Հինդիկուշի լեսնաշղթայի հյուսիսային լանջերը, որպեսզի Ալեքսանդրի ուղին դժվարացնի: 329 թ. դարին առաջ տառնչություն օրվա ընթացքում Ալեքսանդրը Հինդիկուշի լեսներն անցավ և կովկասյան Ալեքսանդրիա (այժմ Բեհրամ) ուժեղ ռազմական գաղութը հիմնելով իր տիրապետությունն ամրացնելով Հինդիկուշի լեսնանցքերի վրա, Դրապսակի (այժմ Անդիրապ) և Ասորի (այժմ Տաշկուրդան) միջով անցավ գեղի Բակտրիայի կենտրոնը՝ Բակտրա: Զյունախանն բուքերը, ձյունակուտերը, քաղցր, զինվորների հողնածությունն ու հյուծվածությունը — ոչ մի բան չէր կարող նրան չեղել իր նախանշած տակությունը — ոչ մի բան չէր կարող նրան չեղել իր նախապարհից: Բեսուր փախավ Ասորիանա (այժմ յան Ամուշ-Դարիանը), բայց ոչ լայն Օկոի (այժմ յան Ամուշ-Դարիան) ջրերը, ոչ անապատի ավաղները չփրկեցին նրան: Մակեդոնացիք Օկոն անցան կամ թշնամակերով, ուր պատրաստել էին ծղոտով զրեցին մակեդոնական գլխավոր ուժերի անցման ճանապարհին: Թշվառ տրայապանը ենթարկվեց բազմապիսի տանջանքների, ծաղր ու ծանակի և չարչարանքի: Հետազայռում Բակտրայում ծաղր ու ծանակի ավաղայտուհմիների համապությունը Բեսուրի ձեռքով, և քառատվեց: Ե՛վ Դարեհի սպանությունը Բեսուրի ձեռքով, և Բեսուր մահապատիժը հավանաբար կամ ձեռնուու էին Ալեքսանդրին:

Բեսուրի կողմնակիցները հուսահատվելով՝ բախտի քմահաճառույթին թողին նրան և դրանով իսկ նրան մատնեցին Ալեքսանդրի ձեռքը: Բեսուրին մերկ ու շղթայակապ, օղակը զգին ցուցացիքին մակեդոնական գլխավոր ուժերի անցման ճանապարհին: Պատասխան աղնվատուհմիների համապությունը կարագայական կարացած աղնվատուհմիների համապությունը Բեսուրի ձեռքով, և քառատվեց: Ե՛վ Դարեհի սպանությունը Բեսուրի ձեռքով, և Բեսուր մահապատիժը հավանաբար կամ ձեռնուու էին Ալեքսանդրին:

Այսուհետև սկսվեց արյունահեղ ու հյուծող «վոքը պատերազմի» շրջանը: Բակտրիայի ու Ասորիանայի քաջ և ինքնակամ ավաղանին ձգտում էր Դարեհի միապետության կողմանումն օդապործելով կատարյալ անկախության հասնել կենտրոնական կառավարությունից, իսկ սանձարձակված ու վաղազած օտարերկացիների բանությունները, կողոպուտն ու արյունահեղ էկղեկուցիաներն ամբողջ ժողովրդին զրդում էին անկոչ եկվորների դեմ: Այդ ռազմաշունչ ավաղանին իր լեռնային ամրու-

թյուններից իջնում էր դաշտավայրերը և, մակեղոնական առանց ձին պահակախմբերն ու մանր կայազորերը ոչնչացնելով՝ ժողովրդական լայն մասսաներին ոտքի էր հանում ընդդեմ օտարերկրյա հյուրերի։ Թուրանի անապատների ու տափառատանների ավաղակաբարո ցեղերը՝ դակերն ու մասսազետները մակեղոնացներին անհանդիստ էին անում իրենց շեշտակի հարձակումներով։ Այդ համառ, կատաղի պայքարը տարիներ տևեց՝ մերթ մեղմանալով, մերթ նորից բոլորքելով։

Այդ պայքարի ընթացքում մակեղոնացիք հասան Յակսարտա (այժմ՝ Սիր-Դարյա) գետի ափերը, որ նրանք համարում էին Դոնի վերին հոսանքը։ Բայց այդ ժամանակ ամբողջ Բակուրիայում և Սոգդիանայում բռնկեց մի ահեղ ապստամբություն, որ ղեկավարում էր եռանդուն ու զործումյա Սպիտամենը։ Ապլոտամբները ընաջինջ արին Կիրովովի ու մյուս սահմանային ամբողների կայազորերը և կոտորեցին Ալեքսանդրի բոլոր զաղութականներին։ Դակերի, սակերի ու մասսազետների քոչվոր ցեղերը միացան ապստամբներին։ Հուզումներ սկսվեցին նաև Յակսարտայի մյուս կողմն ապրող սկյութացիների մեջ։ Թվում էր, թե Ալեքսանդրի բանաւոր մաղից է կաթված։ Սակայն զորքի կազմակերպվածությունը, մարտական փորձը, դիսցիլինան, այդ զորքի առաջնորդների ձեռներեցությունը, եռանդը և քաղաքական ընդունակությունները հաղթանակն ապահովեցին։

Էզզեկուցիանները կատարվում էին զազանային զաֆանությամբ և մեթոդական անողորությամբ։ Մեկը մյուսի հետեւ ապստամբներից հետ խլվեցին ամբողները, ամբողջ սահմանամերձ գտաին ամայացվեց, տղամարդ ընակչությունը ոչնչացվեց, չատ տեղեր չէին խնայում ո՛չ երեխաններին, ո՛չ կանանց։ Մակեղոնական հեծելազորի թուուցիկ ջոկատները կոստրում էին ամբողջ ընակչությունը։ Մակեղոնացիների հաղթանակի արյունուտ հուշարձան մնաց Յակսարտի ափին հիմնած Ալեքսանդրիան (այժմ Խոջենտ), որ մակեղոնական տիրապետության վերջին կետն էր Միջին Ասիայում։

Յակսարտի այն կողմի սկյութացիներին վախեցնելու նպատակով Ալեքսանդրը նետող զործեկներով թշնամուն գետափից հեռու քչելով անցավ գետը և հեծելազորային մարտում քոչվորներին ջախջախելով՝ նրանց հալածեց անապատի խորքերը։ Այդ էքսպեդիցիայից հետո սկյութացիք իրենց հանգիստ էին պահում։ Իսկ Ալեքսանդրը չէր էլ մտածում արշավել Յակսարտի այն կողմը։

Սպիտամենը, հրապուրելով, անապատը քաշեց այն ջոկատը, որ Ալեքսանդրն ուղարկել էր փրկելու Մարտականդը (այժմ՝ Սամարկանդ), և Պոլստիմեն (այժմ՝ Զերավշան) գետի ափին ճարպիկ մանելովներով լիովին ջախջախեց նրան։ Ալեքսանդրը հազիվ վրա հասավ ու փրկեց Մարտականդը, որ երկրորդ անգամ

պաշարել էր Սպիտամենը : Երբ Ալեքսանդրի հեծելավորն ու թիւթե զորքերը մոտեցան, Սպիտամենը հետացավ անտպատ :

Ալեքսանդրն ստիպված եղավ զիջումներ անել այդ մարդկերի ավագանուն . Բակտրիան և Սուդիանան ավելի մեծ ինքնուրություններն ստացան, քան Ալեքսանդրի միասնական սատրապության մուտքանակերից որևէ մեկ ուրիշը : Ալագանին պահպանեց իր երավունքներն ու արտօնությունները, աեղերում ճանաչվեց նըրանց իշխանությունը : Ավագանու շքեղ համազումարում, որ 328 թվի ձմեռը գումարովեց Բակտրիայում, ներկայացել էին բազմաթիվ մանր թագավորների ու իշխանների դեսպաններ, սկսած Արալի ծովից մինչև Կասպից ծովը, որոնք Ալեքսանդրին խոստանում էին իրենց աջակցությունը, եթե նա արշավի Կուխիդայի վրա (այժմ Վրաստան) և զեպի Մերձ Կասպյան երկրները : 328 թվի գարնանը Ալեքսանդրի զորքերը, նորից օժանդակ ուժեր ստանալով (մոտ 17.000 հետևակ և 3000 ձիավոր), ճնշեցին Սոգդիանայի ապստամբությունը : Հիմնվեցին մոտ տար ու ուղղմական գաղութներ : Այսուը խաղաղություն տիրեց :

328 թվի ամառը Մարտիանդում, Դիոսկորի հերոսների պատմին սարգած խնճույքում թագավորը գինու գոլորշիներով արքեցած՝ հաճույքով ականջ էր զնում իր հույն պալատականների ու դիստականների ճիշտ նպատակին ուղղած հաճոյախոսություններին : Թագավորը լսում էր այն, ինչ ամենից ավելի ցանկանում էր լսել, որ նա, Ալեքսանդրը բարձր է դիոսկորեներից, որ նա իր սիրագործություններով նսեմացրել է առասպելական Հերկուլեսին, որ աշխարհն այդպիսի հերոս չի տեսել : Համար ու գաժան կլիմը, որ իր բնավորությամբ զինվոր էր, հայացքներով՝ մակեղոնացի, վաղուց արդեն նողկանքով ու զայրույթով՝ էր դիտում, թե ինչպես արեւելյան ստրուկներն ու հույն չողոքորթները բարեկամ են դարձել այդ տղային, որին ինքն էր փրկել Գրանիկում և որն իրեն հավասար է կարծում անմահ աստվածներին և կարծում է, թե աշխարհն ստեղծված է միմիայն իր համար և ամեն ինչ, բացի իրենից— ոչինչ է :

Ծերունի զինվորականը մոռայլ խմում էր զինու թասը թաս սի հետևեց, մի կերպ զապելով իր ցասումը, բայց Սպիտամենից փախած մակեղոնացիների հասցեին արված ծաղըը և թագավորի հաճոյախոսությունները պարսիկ քաջերի մասին նա կուտալ չկարողացավ : Երբ զիտողություն արվեց, թե Ֆիլիպի երախտիքը միայն այն է, որ նա Ալեքսանդրի հայրն է, ի պատասխան պալատականների բազմանշանակ հայացքների փոխանակության, որոնք, ըստ երեսութիւն վերաբերում էին Ալեքսանդրի աստվածային սերումն ունենալու գաղտնիքին, լուր բազմության մեջ ճնշեցին կլիսի ցասումնալից խոսքերը՝ «Փա՛ռք այն զորքին, որ իր ուսերի վրա է կրել չարչարանքի, հաղթանակների ու արշավների ամբողջ ծանրությունը և իր

Քրտինքով ու արյունով փառք է նվաճել Ալեքսանդրի համար... փա՛ռք Ֆիլիպին, այն մեծ զորավարին, որը բարձրացրեց իր երկրը և ընդունակ դարձրեց նրան՝ նվաճելու ամբողջ Ասիան... Եթե նա, ծերունի Ֆիլիպը գուրս դար իր շիրմից, ուժ չէր ունենաւ նայելու իր երկրի խայտառակությանը, նրա երկրի, որն իր որդու օգնությամբ կառավարում են պարտված բարբարոսները, և կշտապեր մոռայլ իրականությունից թաքնվել գերեզմանի խավարի մեջ... Եվ ինքը, Կիլտն էլ ուժ չունի նայելու այն ամենին, ինչ որ կատարվում է իր շուրջը... Որքա՞ն է նա նախանձում Պարմենիոնին, որը չապրեց մինչեւ այս մոռայլ օրերը...»

Ալեքսանդրն իրեն այնպես զգաց, լինյուս երկնքից ճահճի մեջ ընկած... Բոնազբոսիկ ժպիտը գեմքին, սրառում եռացող զայրույթը խեղդելով, նա սկսեց կցկառուր սրահոսություններ անել մի սեղանի շուրջը հավաքված կենդանիների ու կիսասուվածների մասին... Կիլտը, չգոհացած այն ապտակից, որ ինքը հասցրել էր թաղավորի արժանապատվությանն ու հպարտությանը, իր ձեռքը մեկնեց թաղավորին... Զայրացած Ալեքսանդրը վեր թուալ տեղից և, ի զուր փնտրելով իր զենքը, որ ժամանակին թաքցրել էր չքախումբը, խիեց փողահարի երեսին, որը չկատարեց տաղնապ հնչեցնելու արքայական հրամանը, գոռգոռաց, թե իր հետ փարվում են ինչպես Դարեհի հետ, և զես ու զեն էր նետվում դահլիճնում, փնտրելով Կիլտին, որին արդեն դուրս էին տապել:

Լսելով իր անունը՝ Կիլտը վերադառն ասելով. «Այսուղ է Կիլտը, ո՞վ Ալեքսանդր», և արտասանեց էվրիպիդեսի «Անդրումաքա» ողբերգության հանրահռչակ համարածը՝ «Զորքն իր արյունով հաղթանակներ է ձեռք բերում, բայց նրանց պատիվը վերադրվում է միայն զորավարին, որը հանդիսավոր կերպով թաղավորում է և արհամարհում ժողովրդին, էապես իրենից ոչինչ չներկայացնելով»: Ալեքսանդրը պահակի ձեռքից խըլեց նիվակը և մահացու հարված հասցրեց իր զինակցին՝ դոչելով. «Դնա՛ ուրեմն Ֆիլիպի ու Պարմենիոնի մաս»:

Խնձույթից հետո սկսվեց խումարը... Զայրույթը վայրիենապես աեղի տվեց վհատության: Երկու օր Ալեքսանդրն անքուն պառկած էր վրանում՝ առանց ուտելու և առանց խմելու: Զըզջումը, վիշտն ու թափիծը կրծում էին նրա սիրտը... Զէ՞ որ Կիլտը նրա փրկիչն էր եղել, նրա դայտկ լանիկայի եղբայրը, որի բոլոր զավակներն ընկել էին մակեղոնական դրոշի տակ, եղել են Մակեդոնիայի թաղավորական տան հավատարիմ ու նրա վիրված բարեկամները: Փողովի հավաքված զորքը Կիլտին հանցափոր ճանաչեց... քուրմերը աեղի ունեցած դեպքերը բացատրում էին Դիոսկուրի հերոսներից: Թաղավորական փիլիսոփա Անաքսար-

քոսը ջանասիրաբար ապացուցում էր թաղավորին, թե ամեն բան, ինչ որ թաղավորն անի, արդար է ու ամամեղապարտ... և վերջապես, Սպիտամենի նոր հարձակումների մասին եկած տաղնապալից լուրերը սթափեցրին Ալեքսանդրի միտքը և նա տեղապես թափով ձեռնամուխ եղավ իր դործերին:

Ալեքսանդրի զորավարներից կրած մի քանի պարտություններից հետո Սպիտամենը փախավ անապատ, մասսպետների մոտ, կորցնելով իր զորքերն ու իր բարեկամներին: Մասսացւներն էլզեկուցիայից փրկվեցին Սպիտամենի գլուխը տալով: 327 թվի գարնան դեմ «Ալեքսանդրի այգում» հունական տիրապետությունն այնքան ամուռ էր, որքան երբեք չէր եղել... ամենանձուիկ լեռնային ըներն անձնատուր եղան հաղթողի ողբերգածությանը:

Այդ լեռնային ամբոցների դեմ կատարած արշավանքներում երիտասարդ զորավարն իր զորքի լավագույն դինվորն էր. նա անձնվիրաբար ու տոկուն կերպով տանում էր բոլոր, դժվարություններն ու զրկանքները, և չկար մի վտանգ, որի մեջ չնետք նա պայքարի հրճվալից արքեցումով: Բայց երբ ընկանվելի նա պայքարի հրճվալից հաղթական մակար ամբությունները և Ալեքսանդրը լեռներից իջավ Բակվերջին ամբությունները, նա նորից մակեդոնական տրիալի ու Սոգդիանայի դաշտերը, նա նորից մակեդոնական զորավարից կերպարանափոխից ասիսկան թաղավորի և բարդության մակեդոնացի, չելլեն ու ասիսցի հպատակներից:

ԱՇԽԱՑ. ՏԵՐԵԼՈՒ ԹԱՂ. ԶԱ. Ն. Վ. Բ.

Ալեքսանդրը քաղաքական դեպքի նշանակություն տվեց նույնիսկ իր սիրուն, որ նա տածում էր դեպի Դարեհի աղնվատումիկներից մեկի աղջիկը՝ Ծոռքանան: Հարսանիքը կատարվեց իրանական ծեսերով և ամուսնությունից հետո Ալեքսանդրի քաղաքականության արհելյան կուրսն սկսեց կիրառվել Էլ աքադամական ու սորուակի կերպով: Միաժամանակ Ալեքսանդրին «աստվածացնելու» եռանդուն աշխատանք սկսվեց: Ալեքսանդրը, որ իրեն լավ էր զգում Դարեհի գահի վրա, ցանկնում էր ամելի վեր բարձրանալ իր հարատակներից: Նա ինչ քառ հարկե, քիչ էր հավատում իր աստվածացնությանը, քը, ի հարկե, քիչ էր հավատում իր կհաջողվի ուրիշներին ստիզել, որ հավատան դքան:

Եվ իրոք, հույններն ամելի ու ավելի քիչ էին համատում իրենց աստվածներին և երկրային տերերին անհամեմատ ավելի մեծ նշանակություն էին տալիս, քան երկնայիններին: Այն, ինչ մաս հույնների կթվար մի անձի բարձրացման սիմվոլը մնապը շատ հույնների կթվար մի անձի բարձրացման սիմվոլը մնապը շատ մարդկանց նկատմամբ, արևելյան քուրմերի ջանքերով ամպած մարդկանց նկատմամբ,

բողջ Ասիայում կարող էր քաղաքական մեծ խմաստ ստանալ: Ի-
բենք՝ Հույները Վ դարի վերջում գոհասեղաններ ու հիմներ էին
ձոնում սպարտական զորագիր Լիսանդրին, որը խորտակել էր
Աթենական միությունը: Ճիշտ է, երբ ֆասոս կղզու բնակիչնե-
րը ցանկացան սպարտական զորագիր Ազեսիւսոս Մեծին ասո-
վածացնել, նա նրանց պատասխանեց. «Թող նրանք իրենց ասո-
ված դարձնեն, այն ժամանակ ես կհավատամ, որ ի միջակի են
ինձ ևս ասոված դարձնելու»:

Պալատական չողոքորթները ջանասիրաբար սկսեցին թագա-
վորին գիմել այնպես, ինչպես ասումուն: Անաքսարքոս վիլիսո-
վամն, որը թագավորին ապացուցում էր, թե ամեն ինչ, որ ա-
նում է թագավորը, պետք է արդարացի համարի՛, մի անդամ,
երբ կայծակը որոտաց, վախեցած թագավորին հարցրեց, «Այդ-
դու ես որոտում, Զեսի որդի»: Բայց նույնիսկ փիլիսոփաների
մեջ բոլորը չէին հետևում Անաքսարքոսին, ոմանք հարում էին
Արիստոտելի ազգական Կալիսթենեսին, որը դմասվորում էր
պալատական օպորդիցիան արեւելյան նորամուծումների դեմ:

Կալիսթենեսը եկել էր մակեդոնական բանակը, որպեսզի
Աքեքսանդրի արշավանքների պատմությունը գրի, և մինչև թա-
գավորի քաղաքականության արեւելյան կուլտը գույներ չէր խը-
նացում մակեդոնացիների ու նրանց առաջնորդի հերոսու-
թյունները նկարագրելու համար: Նա պերճախոսության արտա-
կարգ շնորհք ուներ և շատ ականավոր հուետորների նման իր
սեփական հոչակի ու հաջողությունների երկրպագուն էր: Կի-
տի սպանությունից հետո նա ավելի ու ավելի հեռանում է մա-
կեդոնական թագավորից և դիպուկ ու կծու բառեր է գտնում
ծաղրելու պալատական նոր ծեսերը և միապետին աստվածաց-
ներու փորձերը: Նրա լեզվի թունավոր խայթը խիստ դիպչում
է թագավորի ինքնասիրությանը: Փիլիսոփան դառնում է մակե-
դոնական ազնվատոհմ երիտասարդության կուռքը և նրանց աչ-
քում թվում է «ազատ մարդք ստրուկների մեջ»: Սովեստի հար-
ձակումները տիրանիայի դեմ միայն այն չափանիշն էին, որոնք
ցույց էին տալիս աճող հուզումը, որ 327 թվին արտահայտվեց
որպես «մանկապիկների դավադրություն»:

Թագավորի մոտ ծառայում էին մակեդոնական անվանի տոհ-
մերի պատանիներ, այսպես կոչված թագավորական զայլակներ: Այդպիսի մանկապիկներից մեկն էր ինքնակամ, հպարտ ու
դյուրագրգիռ Ներմոլայոսը, որը վաղուց արգեն ընկել էր Կալ-
լիսթենեսի ազգեցության տակ: Մի անգամ որսի ժամանակ նա
առաջ նետվեց և իր նիզակով սպանեց այն վարագը, որ ուզում
էր որսալ թագավորը: Զայրացած Ալեքսանդրը հրամայեց ծեծել
անհնաղանդ մանկապիկն և խլել նրա ձին:

Այդ բոպելից Ներմոլայոսը միայն մտածում էր իր կրած
վիրավորանքի փոխարեն վրեժ լուծելու մասին: Նա Ալեքսանդ-

քից դժողով մանկավիկներին կազմակերպեց իր չուրջը և դավա-
դրություն կազմեց թագավորի կյանքի դեմ։ Դավադիրներին հա-
ջողվեց հերթապահ ամբողջ պահակախռովը կազմել իրենց
կողմնակիցներից, բայց այդ գիշեր Ալեքսանդրը ինձույքում ու-
շացավ, իսկ հետեւյալ օրը մանկավիկներից մեկի դյուրահա-
վատ շատախոսության հետեւանքով դավադրությունը բացվեց։

Դավադիրներն արիաբար դիմացան տառապնալից տանջանք-
ներին և մինչև վերջ բարձր պահեցին իրենց ողին։ Հերմուլայո-
ուը գեներալիստելի գատական նիստում հայտարարեց, թե պատ-
մարդու համար անհնարին է դիմանալ Ալեքսանդրի զեսպոտիլ-
մին և մի կրքու ճառով հարձակվեց թագավորի կողմից օրինա-
կանացված պալատական սպրկության վրա։ Հնարդարյան պատ-
միչների առելով Ալեքսանդրին ստիպված եղավ, պաշտպանվել ի-
րեն չըրտոված մեղադրանքներից։ Նրա ճառը շատ բնորոշ է։
«Ես Սովոր եմ եկել ոչ նրա համար, որ արմատախիլ անեմ ժո-
ղովուրդներին և աշխարհի կեսն անապատ գարձնեմ, այլ նրա
համար, որ պարտվածները ևս չտառապեն իմ հաղթությունից։
Դրա համար էլ նրանք ծառայում են ձեզ հետ միասին և իրենց
արյունն են թափում ձեզ իշխանության համար... Հակառակ
դեպքում նրանք կապտամթեին... Եթե մենք ցանկանում ենք
Սովորին տիրել, և ոչ թե միայն նրա միջով անցնել, մեղ հար-
կավոր է պարսիկներին չնորհ անել։ Սակայն ինձ մեղադրում
են այն բանում, որ ես պարսկական բարքերն ու սովորություն-
ները Մակեդոնիա եմ փոխադրում... Շատ ժողովուրդների մեջ
ես գտնում եմ այնպիսի բան, որը մեղ ամռթ չէր լինի ընդօրի-
նակել, չի կարելի այսպիսի պետությունը կառավարել՝ առանց
կուրտուրական բարիքների փոխադարձ փոխանակության...»

Դավադիրները մահվան դատապարտվեցին, և ըստ Ֆրե-
յուլիթին, մակեդոնական հին սովորության համաձայն սպանվե-
ցին քարկոծմելով։ Կալվաթենեսի դեմ ուղղակի մեղադրանքներ
ցին գար գոծմելով։ Կալվաթենեսի դեմ ուղղակի մեղադրանքներ
չեղան, բայց փիլիսոփան հսկողության տակ առնվեց և դավա-
չեղան, դուքը հերկար չառի շապրեց։ Օպոզիցիան նորից սըսկվեց։

Այսպիսով Ալեքսանդրը հայտարարեց, որ իր քարզաքակա-
նության մեջ ոչ մի բանի առաջ չի նահանջելու։ Նրա գլուխ
պատվում էր այնպիսի հողը միապետություն ստեղծելու միտքը,
որն ընդգրկեր իր ժամանակի ամբողջ աշխարհը։ «Համաշխար-
հային ծովը»— համաշխարհային օվկիանոսը, որ հույների կար-
ծիքով շրջապատում էր ամբողջ աշխարհը, պետք է դառնար մի-
ակ ու բնական տահանն այն վիթխարի միապետության, որի
մեջ աշխարհի բոլոր ժողովուրդները պետք է ենթարկվեին ասո-
վածապարմ Ալեքսանդրի բարեկողորմ կառավարությանը։ Մակե-
դոնիան տրամպին էր դեպի Սովոր առաջին թոփչքը կատարե-
լու համար, Պարսկաստանը պետք է բազա դառնար Հնդկաստան
արշավելու համար...».

Գեղեցկուհի Առքսանայի ջերմ փաղաքանքները չէին կարող պալեցնել նոր սխրագործությունների ու արկածների հերոսական տեսչը, և ո՞չ ձեռք բերածի վեհությունը, ո՞չ ինձույք ների ու խրախճանքների նրբին չըղությունը չէին կազող հագուրդ տալ նորի, խորհրդավորի, արտասովորի բուռն ծաբավին, որը մարդուն հանդիսատ չի տալիս, այլ մղում է դեսլի առաջ, նոր վտանգների ու փոթորիկների դեմ հանդիման:

Նորից սկսեց տենդաղին դործունեություն եռալ Ալեքսանդրի ճամբարում: Մակեդոնա-պարսկա-հունա-թրակիական զորքը պատրաստվում էր հեռավոր ճանապարհ ընկնելու: Սկսվում էր արշավանքը դեսլի Հնդկաստան:

ՀՈՒՅԵՐԵ ԻՆԴՈՍԻ Ա.ՓԵՐԻՆ

Հույները Հնդկաստանի միայն անունն էին լսել: Այդ երկրի հետ նրանք կապում էին զանազան ֆանտաստիկական պատկերացումներ, որոնց մեջ իրականությունը միաձուլվում էր հեքիաթականին: Ալեքսանդրն իր զորքն այնուեղ էր տանում՝ հոյուսուններով դենքի ուժով նվաճել արդ հեռավոր երկրային դրախտ, որը պիտի բառնալը ապագա համաշխարհային կայսրության թագի ամենաթանկարդին մարզարիսոր:

327 թ. ուշ աշնանն արշավի բուլոր նախապատրաստություններն ավարտված էին: Վեց տարվա ընթացքում՝ 333 թվից մինչև 327 թիվը՝ պարբերաբար եվրոպացից եկած լրացուցիչ ուժերը տվել էին առնվազն 40.000 հետևակ և 6.000 ձիավոր, եվրոպական զորքերին միացվել էին Արիաց աշխարհի, Բակտրիայի, Պարսկաստանի, Միգիայի և Սողդկանայի (ներկայիս Իրանի), Բելուջիստանի, Ռուբեկաստանի և Ալյանսատանի) սաղմաշունչ ցեղերի ասիական ջոկատները, պարսկականի օրինակով կազմակերպվել էին հեծյալ նիզակակիրների ու աղեղնաժորների ջոկատներ, այսուեղ էր նաև զակերի, սակերի, մասսագետների թեթև հեծելազորը: Հարկ եղամ արեւլան սատրապություններում բավական ուժուեղ կայարութեր ու ջոկատներ թողնել, օրինակ՝ Բակտրիայում թողնվեց 10.000 հետևակ և 3500 ձիավոր: Այնուամենայնիվ Ալեքսանդրի զորքը շատ ամելի մեծ էր, քան երբեմն եղել էր:

Ինչպես որ առյօնձին կրնկակու հետևում են չախկալների ու բորենիների դիշատիչ ոհմակները, այնպես էլ Ալեքսանդրի զորքի հետևեց, բացի ուազմական զումակից, զնում էին վաստակ ու արկածներ որոնողների բազմաթիվ ամբոխներ՝ բաղկացած բոլոր տեսակի ու բոլոր ցեղերի մարդկանցից: Կարելի է ընդունել, որ զինվորների, կողոպտիչների, դործարարների,

վաճառականների, նաև աստիճանների, դիտնականների ու կիլիսովաների թիվը, որոնք գնում էին Հնդկաստանը նվաճելու և յուրացնելու, մոտենում էր հինգ պատմազիրների տված թվերին, որոնք Հնդկաստան տարած խառն զորքի թիվը համարում էն 120.000 մարդ:

327 թվականի ամառն Ալբանիում բանակը լեռներն անցավ և գուրս եկավ Կոֆեն գետի մոտ: Այստեղ ակնվում էր Փենջափի (Հնդկագետի) մարզը, ինպասի ու նրա վտակների ավաղանի մարզը, որ հարավ-արևելքում ու արևելքում Գանդես զետի հովտից՝ բուն Հնդկաստանից բաժանվում էր տափաստանային մի լայն դռափով:

«Սրբազն Գանդեսի» ամերին ու ալվագանում ապրող բաղմամիլիոն բնակչությունը, որ պատկանում էր ստորին կաստաներին, «պարիների» վիճակի մեջ էր գտնվում: Կրոնական հաշվով ուժասպառ եղած ժողովուրդը սովորակ էր լինում՝ ըրջապատված փարթամ ու հեքիաթային չափով հարուստ բնության առաջի բարիքներով: Սոցիալ-կաստայական բարդ սահկուդի ամենաբարձր զաղաթին, աստիճաններին ու երկնքին ամենից մոտիկ դտնվում էր բարահմինների սրբազն քրմական կաստան: Թագավորը սովորաբար միայն թալաղրված պեչկա էր իր բարահմինների ձեռքում, մի տիկնիկ էր, որին կապված էր իր բարեր ծայրերը կորչում էին երկնքում: Բարձր կաստայի անդամն իրենից ցածր կաստայի անդամի վրա նայում էր որպես սողունի միա և խուսափում էր որևէ հարաբերություն ունենալ նրա հետ: Գանդեսի ախաղանում կուլտուրան ծաղկում էր կաստայական ու ցեղացին մեկուսացման և կրտնական մոլունագության փարթամ ծաղկներով: Սակայն ինդոսի ավազանի կուլտուրան Փենջափի կուլտուրան գնումն չէր հասել Գանգեսի հովտի կուլտուրային, և այն Հնդկաստանը, որտեղ ոտք դրին մակեղունացիք, գեռեւս մեր թվականությունից առաջիւ Վ դարի Կեղունացիք, գեռեւս մեր թվականությունից առաջիւ Վ դարի Միաբիկ Հնդկաստանը չէր իր ավարտիված յուրահատկությամբ:

Փենջափի խոշորագույն պետություններն էին Թաքսիլան՝ ինդոսի արևելյան ամիսն և Պորա թագավորությունը Դիլասպուղետի հստանը ունում: Այդ երկու ախոյանների միջև համառ պայտ էր տեղի ունենում Փենջափիում գլուխակություն ձեռք բերելու համար, այդ պայքարում թագավորներից յուրաքանչյուրը պլասվորում էր մանր թագավորների, եշխանների ու ռաջաների մի միություն: Անհրաժեշտ էր Հնդկաստանը նվաճել Հենց Հընդիկների օգնությամբ և Ալբանազիրի քաղաքականությունը Հնդկաստանում ամբողջապես հիմնված էր «բաժանիր» և տիրիր» հայտնի սկզբունքի վրա:

Կոֆենի և ինդոսի ամերին գտնվող բոլոր թագավորներին ու առաջնորդներին սուրհանդակներ ուղարկվեցին՝ օգնության ու հպատակության պահանջով և դաշինքի ու հովանավորու-

թյան խոստումներով : Ալեքսանդրի բանակը բաժանվեց երկու դրասյուների . նրանցից մեկը Պերգիկայի ու Հեփեստիոնի հրամանատարությամբ շարժվում էր Կոֆենի աջ ափով , նրան հրամայված էր հասնել ինդոս գետին և այդ գետի վրայով կամուրջներ պցել : Երկրորդ զորացյունն Ալեքսանդրի հրամանատարությամբ շարժվում էր Կոֆենի ձախ ափով : Ալեքսանդրի հետ էին թեթև զորամասերը , ձիավոր նիզակալվորների կորպուսը , ֆալանգաների ու հեծելազորի ընտիր զորամասերը և թաղավորից անբաժան իր զիապասլիստների ջոկատը :

Շատ ցեղեր փորձեցին դիմադրություն ցույց տալ , բայց հնդիկների մանր ցեղերն անջատ - անջատ էին զործում , իսկ Ալեքսանդրի զմբքը փոքր պատերազմի զպրոց էր անցել միջին Ասոխյում և իր կազմով ու կազմակերպվածությամբ շատ ավելի հարմարված էր այդպիսի պատերազմ մղելու : Շատ քաղաքներ համառ դիմադրություն ցույց տվին : Սովորաբար Ալեքսանդրը ձի նստած զիապասլիստների ջոկատներով արագ հարձակվում էր այս կամ այն կարեռը կետի վրա և պաշարում այն , ապա դամակ էին գլխավոր ուժերը , քաղաքը զրոհով վերցնում և դաժան զատաստան տեսնում նրա պաշտպանների հետ : Քաղաքների դըրոցներին հաջորդում էին չուրջկալները լեռներում , որտեղ թաքնվում էր բնակչության մի մասը : Վերցվում էին տաճայակ հաղարավոր գերիներ ու հարյուր հաղարավոր գլուխ անասուններ , որոնցից ամենալավ ցեղայիններն ուղարկվում էին Մակեդոնիա :

Այս ձեռվ գրավվեցին Մասսալա , Օրա , Բաղրիսա և մի շարք ուրիշ ամրոցներ , զենքի հաջողություններն ամրապնդվում էին հաղթողների կողմը գրավելով իշխաններին ու ալիքանուն , ուրոնք Ալեքսանդրի բարձրագույն հովանավորությամբ և նրա փոխարքանների հսկողության տակ պահպանում էին իրենց իրավունքները , արտոնություններն ու իշխանությունը տեղերում : Մակեդոնացիք , իհարկե , չէին զիապչում տեղական նախապաշարմանքներին ու բարքերին , ամեն ինչ մնում էր հինը , միայն նախկին ճնշողներին ավելանում էին նորերը :

Հալիկարնասից , Տյուրոսից և Հաղայից հետո մակեդոնական ճարտարապետական արվեստի նոր տրիումֆ հանդիսացավ Առյանա , այսինքն «Անթոչուն» անառիկ ամրոցի առումը : Այդ ամրոցն «Անթոչուն» էր կոչվում այն պատճառով , որ գտնվելով մոտ 1000 մետր բարձրությամբ մի սեղացած ժարուի գլխին , որպես թե , անմատչելի էր նույնիսկ թուշունների համար : Այդ ամրոցի հետ էր կապված հունական մի առասպեկտ , ըստ որի առասպելական ժողովրդական դյուցազն Հերկուլեսը չէ կարողացել մտնել այդ ամրոցը և արդադար էլ վերջ է արթիլ նրա հաղթանակներին : Բնականից անառիկ այդ ամրոցի առումից հետո մակեդոնացիք է' լ ավելի ամրացրին և նա դարձավ Ալեքսանդրի

ավիրապետության հենակեաերից մեկը կոֆենի ու ինդոսի ավազաններում :

Այդ կարգի մանր կոփիներից մեկում վերցվեց վարժեցրած պղերի մի ամբողջ հոս, որոնք հնդկական բանակներում կենդանի տանկերի դեր էին խաղում : Մակեդոնացիք ձեռք բերին դեռքի նոր տեսակ, որը հետագայում հաճախ վճռում էր պատերազմների ելքը Ալեքսանդրի հաջորդների միջև :

Ինդոսի ափին երկու զորայուների միացումից հետո Ալեքսանդրի բանակը, ինդոս գետն անցնելով, մտավ Տաքսիլի թագավորի տիրապետությունը, որը բարեկամական հարաբերություններ էր ստեղծել արևմտյան նվաճողի հետ : Տաքսիլի թագավորը հյուրին նվեր ուղարկեց 10.000 ոչիսար, 3000 զոհի կենդանի, 30 մարտական փլղ, 200 տաղանդ արծաթ, Հնդիկ ձիավորների մի ջոկատ և ալլն, և հանդիսավոր կերպով նրան զիմավորեց իր տիրապետություններում : Նա հույս ուներ, որ Ալեքսանդրի ձեռքով կիսեղէի իր հակառակորդ ու ախորան Պորին : Նվաճովը Տաքսիլի թագավորին նվիրեց 1000 տաղանդ, որպես առաջին մուծումն ի հաշիվ հետապա ծառայությունների ու բարեկարծությունների և ընդունեց Տաքսիլին բարեկամ կամ Ալեքսանդրից վախեցող բարժամշիկ կշխանների ու ուշաների դեսպաններին : Ալեքսանդրը Տաքսիլի թագավորին առաջնության իրավունք վերապահեց ինդոսի ու Հինդասպի միջև ընկած ամբողջ մարզում, նրան կից իր հրամանատարներից նշանակեց խորհրդականներ ու կայսլորերի պետեր և բանակի զմիսավոր ուժերը վերցրած՝ շտապեց դեսպի Հիդասպի ափերը :

Այստեղ խոշոր զորքի գլուխ անցած նրան էր սպասում Պավրավայի թագավոր Պորը, «ավելի քան հարյուր քաղաքի թագավորը», որը հպատակիվելու վերաբերյալ Ալեքսանդրի արած առաջարկությանը պատասխանել էր, թե ինքը կարող է արժանի հանդիսում ունենալ : 326 թվի ամառվա սկզբին տեղի ունեցավ Ալեքսանդրի չորրորդ մեծ ճակատամարտը — Հիդասպի ճակատամարտը :

ՃԻԴԱՍՊԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ

Հունիս ամիսն էր և Հնդկաստանում դեռ շարունակվում էր արեւադայլին ամպրոպները : Հիդասպ գետը վարպած ժամանակ հազար քայլից ավելի լայնություն ուներ : Հիդասպի վրայով կամուրջ զցելու համար Ալեքսանդրը հրամայեց ողոցել ինդոսի վրա կառուցած դետային նախատորմի նավերը և վոխադրել Հիդասպ : Ահեղ բնությունը, կուսական խիտ անտառը, որի խոնավ խափարի մեջ բռն էին դրել Տահաջային մոծակներ ու իժեր, ամեն քայլափոխին բաղամթիվ զոհեր էին խլում հոգ-

նատանջ հյուսիսեցիների շարքերից : Բաղմաթիվլ դժվարին, եւ կարառել ու վտանգավոր երթերում արյուն-քրտինքով միաձուլ ված 60—70 հազարանոց հիսնալի զորքի մի մասը զոհվեց տեղական ցեղերի նետերից ու նիզակներից, տրոպիկական տենդից, օձերի խայթոցից, անձրև ժամանակների անտառային երթերի զրկանքներից ու տառապանքներից : Շատերն էլ մնացին թիկունքային կայազորերում ու ջոկատներում :

Տաքսիվլ և մյուս դաշնակիցների ուղարկած 5000 հնդիկներից բաղկացած ջոկատը մարտական մեծ արժեկը չէր ներկայացնում : Փղելին ստիպված եղան թողնել, որովհետեւ ձիերը վախենում էին նրանց տեսքից և խորշում էին հոտից, իսկ զինվորները ժամանակ չունեին սովորելու փղերի հետ վարդելու տեխնիկան : Բայց և այնպես, Հիդասալին մոտենալիս Ալեքսանդրը կարող էր լիովին վատահ լինել իր հաջողությանը թշնամու նկատմամբ, որովհետեւ Պորի բանակը թե՛ քանակապես և թե մանավանդ իր որակով հետ էր մնում նրա բանակից : Բայց, ահա, ճանապարհը կտրում էր Հիդասալ լայն դետը, որի դիմացի ափին Պորի բանակը կանգնած սպասում էր Քաջմիրի ռաջա Ալիդարի խոստացած օգնական ուժերին :

Պորը որոշել էր առայժմ սահմանափակվել պաշտպանությամբ, իսկ գետի լայնությունն ու խորությունը և տեղանքի բնույթը նրան լիակատար հաջողություն էին խոստանում : Նրա բանակը բաղկացած էր 20.000—25.000 հետևակից, մի քանի հարյուր թիժե մարտակառքերից, որոնց վրա նստած էին աղեղնավորներ ու նիզակավորներ և մոտ 100 փղերից : Փորձված մարդկանց կողմէից հմտորեն դեկավարվող փղերի վրա շինված փոքրիկ աշտարակներում նստած էին նետաձիղներ և տեղաձիղներ : Պղերը կազմում էին Պորի պաշտպանության զծի կմախքը :

Սակայն, ի տարբերություն երկրաչափության, կյանքում և մարտական գործում ամեն անդամ էլ ուղիղ ճանապարհն ամենակարճը չի լինում . Ալեքսանդրը նպատակակետը եկավ ըրբ-ջապառույս ճանապարհով : Գետի երկարությամբ ցըված էին Պորի պահակակետերը և համարյա ամեն օր նրանցից մերթ մեկը, մերթ մյուսը տաղնապ էր բարձրացնում : Պորը զասավորում էր իր զորքերը և սպասում հակառակորդին, բայց երկար ու լարված ապարդյուն սպասումից հետո ստիպված էր լինում նորից արձակել նրանց իրենց լրաները : Աստիճանաբար Պորի ուշադրությունը բթացավ և նա սկսեց ավելի շատ հավատալ այն լուրերին, թե մակեդոնացիք մտադիր են անցումը հետաձգել մինչև անձրեների շրջանի վերջը և գետի ջրի նվազումը :

Ալեքսանդրն իր հակառակորդին սուտ տապնապներով հոգնեցնելով միաժամանակ խարսամ էր սուտ լուրեր տարածելով : Մինչ այդ մակեդոնացիք ավերում էին Պորի հարկան ու դաշ-

Նակլից իշխան Սպիտակիր տիրապետությունները և մանր ընդհաւառումներով Պորի ուշադրությունը բնեսում էին Հիղասպի երկու փոքրիկ կզզիների վրա, բայց նրանց գործողությունները դրանով էլ սահմանափակվում էին: Թշնամիների բոլոր այդ կրակները, նավակները, փողերի ձայնը, աղմուկա-ալաղակները, տագնապները, որոնք կրկնվում էին համարյա ամեն գիշեր, այդ ամենը ձանձրացրին Պորին, որը Ավելիզարից շուտափույթ օգնություն սպասելով հանդստացավ և դարձարեց ուշադրություն դարձնել թշնամու ձամբարում տեղի ունեցող շարժումների վրա:

Ալեքսանդրը վաղուց արդեն նշել էր իր գորքի անդումի կետը. այդ կետը գտնվում էր Հիղասպի վատակներից մեկի գետաբերանից ցած, լեռների առաջացրած անկյունի գիմաց, Քաջմիր տանող ճանապարհից ոչ հեռու: Հիղասպի հոսանքի երկարությամբ ցրված մակեդոնական պահակակետերը շարունակում էին կեղծ տաղնապներ սարքել, որոնք ավելի ու ավելի քիչ էին անհանդասացնում թշնամուն: Ալեքսանդրը դուրս եկաւ՝ իր հետ վերցնելով գիպասպիսաներին, երեք հիփարքներին ու արքայական հեծելազորը, դակերի հեծյալ նետածիզների, բակտրիական ու սովորական հեծյալների ջոկատները, ազգիաններն ու նետաձիգները և մատախուզի ու առափնյա բարձունքների ծածկույթի տակ քողարկված երեկոյան դեմ հասավ անցումի տեղը: Այստեղ, իսկա անտառի մեջ թափնակած, ջանասեր կենը դեկապարում էր կամուրջներ ցցելու գործը:

Պորի ճամբարի գիմաց թողնվեց տաղանդապոր, քաջարի գորավար Կրատերասը, արեւելյան հեծելազորի մնացութողի, մակեդոնական հիպարքներով, երկու Փալանդաներով և 5000 հընդիմներով: Կրատերասին հրամայված էր տեղից չչարժվել, քանի դեռ թշնամին անշարժ կմնար իր տեղում և անցումն սկսել միայն այն ժամանակ, երբ թշնամին կրաժանվի ու վիճերը կը տանի: Այդ գեղագում Կրատերասը պետք է գետն անցներ, հետ չըրտեր մնացած հետևակն ու հնդիմների հեծելազորը և թիկունքից խիեր Պորի փողերին, եթե Պորն իր փողերով կռվի մեջ մտնելու լիներ Ալեքսանդրի հետ: Մելեադրի, Գորգիի ու Աստավի Փալանդաները և հետևակ ու ձիավոր վարձկանների ջոկատները գիրքեր գրավեցին Կրատերասի ու Ալեքսանդրի գորքերի միջև: Նրանց հրամայված էր՝ ճակատամարտն սկսվելուց հետո անմիջապես սկսել անցումը: Հարկ եղավ նաև դարձնակալ զորքամաս առանձնացնել Ավելիզարի օգնական զորքի առաջն առնելու համար:

Խավար ու անձրեալին դիշերը ծածկեց Ալեքսանդրի ճամբարում տեղի ունեցող նախապարաստություններն ու աղմուկը: Բանակի լավագույն մարտիկներից կազմված մի փոքրիկ ջոկատով, որի մեջ էին մտնում 6000 հետևակ և 5000 ձիավոր (ու

բոնցից 1000-ը հեծյալ նետաձիգներ), նա սկսեց Հիղասովն անցնել: Բայց հանկարծ պարզվեց, որ ջոկատը դուրս է եկել ոչ թե գետի ափը, այլ մի կղզի, որը գետի դիմացի ամփեց բաժանված է բավական լայն ու խոր ջրով: Այսուամենայնիվ հաջողվեց ոտքով անցնելու տեղ գտնել, որտեղով մակեդոնացիք մինչև կը ըծք ները ջրի մեջ թաղված դուրս եկան Հիղասովի ձախ ափը: Մական Պորի պահակակետերը կարողացան ժամանակին տեղեկություն տալ իրենց թաղավորին կատարված գետքի մասին: Աւելքանդրի ջոկատը, որ Պորի ճամբարից մի քանի ժամմատ հետավորության մյա էր գտնվում, Հիղասովի հոսանքն ի վար դեպի ցած շարժվեց: Գետին բոլորովին մոտ շարժվում էր թուրառական հեծելաղորը, նրանից ձախ՝ մակեդոնական, ապա թեթև հետեւակը, մնացած հետեւակը դնում էր հետեւից:

Պորը թերապենահատելով թշնամու մարտական հատկությունները և չուրջանցացին մաների նշանակությունը՝ այդ ջոկատի դեմ ուղարկեց 2000 ձիավորներից և մի հարյուր մարտակառքից բաղկացած մի ջոկատ՝ իր որդու գլխավորությամբ: Հսու երեսութիւն այդ ջոկատի խնդիրն էր՝ մակեդոնական կորպուսը կանգնեցնել մինչև օժանդակ ուժեր դալը:

Մակեդոնական հեծելաղորը շեշտակի և ուժեղ հարվածով հետապեց հնդկական ջոկատը, իսկ թուրառական թեթիւ հեծելաղորը, բոլոր կողմերից հարձակվելով՝ դժվարացրեց փախուատը: Ավանդաբղային կովում ընկած 400 հնդիկ ձիավորների մեջ էր նաև Պորի որդին: Առափինյա տիզմի մեջ իրված հնդկական մարտակառքերը դրավվեցին մակեդոնացիների կողմից:

Այժմ միայն Պորը տեսավ, որ իր վրա հարձակվողը թշնամու գլխավոր ուժերն են: Նա ճամբարում պահապան ջոկատ թողեց բաղկացած մի քանի հազար զինվորներից ու մի քանի փղերից և ինքը հնդիկների գլխավոր ուժերը վերցրած՝ շապանց Ալեքսանդրի դիմաց: Երկու հակառակորդներն իրենց ուժերը ծավալեցին մի ավաղուտ դաշտում և սկսեցին կոմի պատրաստվել:

Աւել գիծ կազմեցին Պորի փղերը, որոնք նրա գլխավոր հույսն ու հետարանն էին: Փղերի միջև և նրանց հետեւ շարվեց հետեւակը, իսկ հեծելաղորն ու մարտակառքերը տեղավորվեցին երկու կողքերում: Պորի կողմից ճակառամարտին մասնակցում էին մոտ 20.000 հետեւակ, 4000 ձիավոր, մի քանի հարյուր մարտակառք և մոտ հարյուր փիղ: Յուրաքանչյուր զույգ փղերի միջև եղած տարածությունը բանում էր հետեւակի մի ջոկատ: Պորի բանակի զասավորությունն իր փղերով ու նրանց վրայի աշտարակներով հիշեցնում էր քաղաքի ատամնավոր պարփսու: Պորը պետք է հարձակման դիմեր: Այդ դեպքում կարելի էր հուսալ, որ փղերը կմեղքեն մակեդոնական գիծը, որն այ-

նուհետեւ պետք էր աջ թեկի կողմից շուրջանցել Հնդիկների ավելի երկար մարտադով և սեղմել գետին։ Պորին անհրաժեշտ էր փղերի ուժով և հետեւակի քանակով լլացնել Հնդկաւկան հեծելազորի թուլությունը և Հնդկաւկան հետեւակի ցածր մարտունակությունը։ Դրա վոխաբեն Պորը թշնամուն թողեց նախաձեռնության բոլոր առավելությունները։

Սլեքանդրը գործում էր մտածված, վճռական ու արագ։ Ճակատամարտի նրա պլանն էր՝ ուղերմում պահել իր հետեւակը և փղերի հետ ընդհարվելուց խուսափել այնքան ժամանակ, մինչև որ Պորի հեծելազորը նեղը կընկնի, իսկ նրա զորքերը կըսրջանցվեն ու կըջապատվեն։ Հարվածել մարդկանց և հետո միայն փղերին, որպեսզի փղերը չկարողանան օդնել մարդկանց, իսկ մարդիկ չկարողանան օդնել փղերին։ Ակզրում գործել հեծելազորով ու նետաձիղներով, և հետո միայն՝ հետեւակով—այս էր ճակատամարտի հիմնական իրեան Հիդասովում։ Ալքսանդրը չէր կարող հուսալ, թե իր ուժերով վճռական հաղթանակ կտանի, բայց նա հավատացած էր, որ վճռական բռնելին մարտի դաշտում կերպան ուղերմի Փալանդաները և Կրատերասի զորքերը։

Մակեդոնացիների թեթև ու ծանր հեծելազորը վարպետորեն մաներելով, մերժ կողքերից, մերժ թիկունքից մտնելով թրչնամու հեծելազորի մեջ՝ արագորեն երկու թիկունքն էլ լիակատար գերակալություն ձեռք բերեց։ Պորի հեծելազորը հետեւակի հետեւելի զծի հետ միասին խառն ի խուռն կերպով շտապեց գեպի կենարոննը։

Փղերի զեմ մակեդոնացիների հեծելազորն անզոր էր, սակայն Հնդիկների շարքերը քանդելով և հեծելազորն ու հետեւակի մեջ կույտի մեջ հավաքելով, հետեւից և փղերի զծի թեթրի կողմից տիրելով ճակատամարտի ամբողջ դաշտին՝ նա կարողացավ կատարել իր խնդիրը։

Փղերի գլխավոր գրոհին գիմազրել ստիպվեցին դիպառապիստները, որոնք համառորեն ու վարպետորեն մաներում էին դարձուրելի կենդանիների առաջ։ Փղերը ստնատակ էին տալիս մարդկանց, արնաշաղախ շփոթ էին դարձնում նրանց, ծակում էին իրենց ժանիքներով, ավելի ու ավելի կատաղելով՝ կնճիթով բարձրացնում էին մարդկանց ու թափով ցած շպրտում, նրանց վրայի աշտարակներից մակեդոնացիների վրա նետել ու տեղեր էին թափվում։ Բայց դիպառապիստները խուճապի չէին մատնքում, ավելի էին խտացնում իրենց նոսրացած շարքերը և չորքուանի թշնամիներին վերքեր հասցնելով, ճարպկորեն մանելում էին նրանց առջև։

Հնդիկների հեծելազորը փորձեց ճեղքել մակեդոնական հեծելազորի շղթան, բայց հետ, փղերի մոտ շպրտվեց մակեդոնական հեծելազորի խիստ շարքերի կողմից, որոնց առաջնորդում է-

ին Ալեքսանդրն ու Կենը: Պորի Հետևազովմ ամկարող էր որևէ բան նախաձեռնել և խուճապահար խլրում էր փղերի արանք ներում: Մակեդոնական նետաձիգները կոտորեցին փղերի ղեկավարներից շատերին, իսկ աղջիաները սողում էին փղերի ոտքերի արանքները և կացիններով կտրում նրանց ծնկի ջղերը: Աշտարակների մեջ եղած մարտիկները մեծ կորուստ ունեցան... վերքերից ու արյունից կատաղած կենդանիները, իրենց ղեկավարներից զրկվելով, սկսեցին տրորել ու ոչնչացնել հնդկական հետևակը: Այն ժամանակ, երբ փղերը ոչնչացնում էին նրանց արանքներում թպրտող հնդիկներին, մակեդոնացիք ոչնչացնում էին փղերին:

Պորը զրությունը փղերով վերջին փորձն արեց: Նա համարեց գեռս գեռս ղեկավարներ ունեցող մի քանի տասնյակ փղեր և իր փղի վրայից տեղ-տեղի հետևելով նետելով, անձամբ ղեկավարելով արդ վերջին հուսահատական հակադրություն, թշնամուն հետ մղեց: Բայց ի՞նչ կարող էր անել Պորը, երբ այլևս մարդիկ չուներ, երբ նրա հետևակն ու հեծելազորը դարձել էին ողորմելի, խելացնոր մարդկանց մի հոտ: Փղերը մեկը մյուսի հետևելոց դուրս էին դալիս շարքեց, իսկ թշնամին հարձակման անցավ ամբողջ ձակատով... ձակատամարտը մոտենում էր վախճանին:

Բայց Պորին չհաջողվեց նույնիսկ երկարաձգել իր զորքի հողեվարքը: Կրատերասը հենց ճիշտ ժամանակին վրա հասավ և իր վրա վերցրեց Պորի բանակի մասցորդների հետապնդումը: Երկար ժամերի մարտից հետո Ալեքսանդրի ջոկատն ընդունակ չէր համառորեն հետապնդելու թշնամուն: Պորի համարյա ամբողջ բանակն ընկալ մարտի դաշտում, դոհվեցին նրա բոլոր որդիները... ընկան փղերի ու ձիերի մեծ մասը:

Մակեդոնացիք կորցրին մոտ 700 հետևակ և 300 ճիշտոր:

Ալեքսանդրը Հիղասոլ գետն անցնելու տեղը, ի հիշատակ իր հավատարիմ չորքուսանի ընկերոջ, հմանեց Բուցեֆալ քաղաքը, իսկ ձակատամարտի տեղը՝ Նիկեա— հաղթանակի քաղաքը:

ԶՈՐՔԸ ԶՈՐԱՎԱՐԻ ԴԵՄ

Կորցնելով իր բանակն ու զավակներին՝ Պոր թագավորն ի զուր էր մահ որոնում կովի մեջ: Ալեքսանդրը հրամայեց նրան գերի վերցնել: Ասում են, թե երբ Ալեքսանդրը հարց է տվել, թե Պորն ինչպես կուղեր որ վարվեն իր հետ, նա պատասխանել է: «Ինչպես թագավորի հետ»: Ալեքսանդրի կրկնակի հարցին ասել է, որ այդ պատասխանի մեջ ամեն ինչ կա:

Ալեքսանդրը նորից հաջողությամբ ցուցաբերեց իր շատ հեռուն հաշված մեծահոգությունը. նա գերի Պորին ոչ միայն ըլ-

զրկեց թաղավորությունից, այլ և ընդարձակեց նրա տիրապետությունը և մեծացրեց նրա ազդեցությունը, որպեսզի նրա թաղավորությամբ հուսալի հակալչիու ունենա Տաքսիլի թաղավորության գեմ:

Այսուհետեւ 30-օրյա հանդիսա տվեց իր զորքին, որին հյուծել էին արեւադարձային բնությունը, արշավներն ու ճակատամարտերը: Այդ հանդիսաւը լրացվեց խնձույքներով, մըցություններով, խաղերով, դանազան զվարճություններով ու ներկայացումներով:

Միաժամանակ տեղի էր ունենում ռազմական հաջողությունների քաղաքական ամրապնդում: Պորի թաղավորությանը հարևան անկախ ցեղերի մի մասը հպատակվեց նվաճողին: Իտաջա Պորը՝ ծերունի Պորի եղբոր թոռը, որ վճռական ըռպեին խոսափել էր իր պապին օղնելուց, Հիդասպի ճակատամարտից հետո շտապից ընծաներով դեսպաններ ուղարկել և իր նիխրվածություններ հայտնել: Դեսպանները շատ զարմացան, եթք տեսան, որ պարտված Պորը նստած է Ալեքսանդրի կողքին և իր պարտության հետևանքով տիրապետում է այնպիսի ընդարձակ տարածության, որպիսին հագիլ թե կարողանար ձեռք բերել նույնիսկ հաղթության դեպքում:

Որոշ ժամանակից հետո, երբ մակեդոնական զորքը մոտեցավ կրտսեր Պորի տիրապետությանը՝ Գանդարիտիկեին, այդ թագավորը, չվատահելով իր պատին ու վախենալով Ալեքսանդրից՝ փախավ Գանդեսի մյուս կողմը: Ալեքսանդրի հրամանով Հեփեստիոնը Գանդարիտիլը դրավեց և միացրեց Ավագ Պորի թագավորությանը: Քաշմիրի ուղան Ավելարը, որն ուշացել էր օդնության հասնելու Պորին Հիդասպի կովում, սկսեց նվաճուաբար պաշտել Ալեքսանդրին, որ ողորմա, ների իրեն, բարեկամություն էր խոստանում և իր խոստումն ու երգումը հաստատելու համար հարուստ նվերներ ուղարկեց նրան: Թեև խորածնի ու կեղծավոր ուղան հիմանդության պատրվակով այնպես էլ անձամբ չներկայացավ մակեդոնական շտաբ, բայց և այնպես Ալեքսանդրը ցցանկանալով շեղել Գանդեսի Հովհանը զնալու իր հիմարկան նպատակից՝ ձեռք չտվեց Քաշմիրին և շարունակեց իր ուղին դեպի արեելը: Բոլոր նվաճված ու նվաճվող ցեղերը գրվեցին Պորի հսկողության տակ:

Տարվա այլ եղանակին հորդացած, ստորջրյա քարերով, վտանգամբոր ու նենդ ոլորապուրոններով և ջրապառույններով հարուստ Ակեսին գետով գժվարին անցում կատարելուց հետո Ալեքսանդրը բանակի գլխավոր ուժերը վերցրած ուղևորվեց գեպի Հիդաստ գետի ափերին զանվող անկախ ցեղերի մարզերը, եր հետեւ, Ակեղինի մոտ թողնելով կենի ջոկատը: Պորն ու զարկեց Պալրավա՝ նոր ուժեր ու փղեր հավաքելու: Կրատեցաւ թաղավորի հրամանով ինդոսի վրա գետանավատորմ էր

կառուցում, որով Ալեքսանդրը մտադիր էր Գանգեսի հովիտը նվաճելուց հետո նավարկել մինչև «Համաշխարհային ծովը»:

Նիդրասովի մյուս կողմն ապրող անկախ, ուղղաւունք ցեղեցից մի քանիսը ենթարկվեցին առանց դիմագրություն ցույց տվին: Այդ էքսպեդիցիայի աչքի ընկնող էպիզոդն է կտֆեական ցեղի Սանգայի քաղաքի առումը, որի մատուցյներին հասնելիս հարկ եղավ ձեղքել մարտակառքերի երեք շարք: Քաղաքն ընկալ միայն այն ժամանակ, երբ պաշարողական մեքենաները հասանեակեղոնական ճամբարը: Քաղաքի վրա գրոհելիս սպանվեցին մոտ 100 և վիրավորվեցին ավելի քան 1000 մակեդոնացի: Քաղաքի ամբողջ բնակչությունը բնաջնջվեց, իսկ քաղաքը հողին հավասարեցվեց: Զարեան մի շարք քաղաքների բնակիչները սարսափահար փախսան լեռները կամ ինդոսի և Գանգեսի հովիտների միջև ընկած տափաստանները: Կարեռազույն կետերում մակեդոնական կայտղորեր տեղափորվեցին:

Արյունահեղ դաժանության և հեռուն հաշված «մեծահոգության» չնորհալի համակցումը ցանկացած արդյունքը տվեց: Ռածական Սոսկիքը, որ գանվում էր Փենջամի ամենահեռու գետի՝ Հիփասիսի վերին հոսանքներում, ինչպես և ուշա Թելեյը՝ Հընդեկաստանի ամենաարեւելյան մարզի տերը, որին հասավ Ալեքսանդրը, շտապեցին հնագանդվել նվաճողին: Փենջամի նվաճումը առարտված էր:

Ալեքսանդրը տեղեկացավ, որ ինդոսի հովիտը Գանգեսի հովտից բաժանված է անապատային վայրով, որի միջով անցնելը 10—15 օր կտևեր: Գանգեսի փարթամ հովտում կային ընդարձակ ու հարուստ պետություններ, որոնց նվաճումը շատ ժամանակ ու եռանդ կապահանջներ: Իսկ այնտեղ, Գանգեսի հովտի այն կողմը, այն տերիտորիայում, որ այժմ մտնում է Հնդկաչինի մեջ, կային էլլ նոր երկրներ, նոր պետություններ, նոր ցեղեր: Աշխարհի ծայրը զեռ շատ հեռու էր...

Սակայն ոչ մի դժվարություն չէր կարող ազգել Ալեքսանդրի վճռականության վրա՝ գնալու գեղի Գանգես: Զորքերին հրաժան արվեց: «Առաջ»:

Դժգոհությունն ու տրտունջը համակել էր Ալեքսանդրի դիմուրներին, որոնք հոգնել ու տանջվել էին բազմամյա արշակներից, որոնց վերջը չէր երեսում... Բանակի մակեդոնական կորբիցն ութ տարվա ընթացքում 14.000 կիլոմետր ճանապարհ էր անցել և, ըստ երեսութիւն, պետք է առաջ գնար այնքան ժամանակ, քանի դեռ զինվորը գեթ մի քայլ անելու կարողություն ուներ: Քանի քանի հաղար խիզախ զինվորներ իրենց Հնուավոր հայրենիքից արշակի գուրս գալով Պարսկաստանի դեմ, զոհ զնացին Գրանիկի, իսսայի ու Գաղպամելյայի ճակատամարտերում, համբաւենական քուն մտան Փոքր Ասիայի սարահարթե-

լում, Տյուրոսի ու Գաղայի պարխապների տակ : Քանի՛-քանիսը զոհվեցին Հինդիկուշի լեռնամածյուղերում, Ամուշ-Դարխայի ու Սիր-Դարխայի, Ինդրասի, Գանդեսի, Հիդասալի ու Հիդրաստի արփերին... Ալեքսանդրն անինսա պատերազմին ու իր փառքին էր զոհաբերում բոլոր կենդանի մնացածներին, որոնց ինսայել էր բախտը, որոնց չէր ծակել պարսկական նետը, չէր խայթել թունավոր օձը, հավատենապես չէր չորացրել անապատի մահաբեր տապը, չէր սպանել կործանաբար տենդը :

Ֆիղիքական ու հոգեկան ուժերի ծայրահեղ հյուծումը՝ ուղու անկումը համակել. էր նույնիսկ կոփիած վետերաններին: Արևադարձային սոսկալի բնությունը նոր աղետներ էր նախադուշակում հուսահասության հասած կամ անհույս ապատիայի մեջ ընկած զինվորներին, որոնք դատապարտված էին իրենց ամբողջ կյանքում մահ որոնելու: Զենքերը բթացել էին, ձիերի պայտերը մաշվել, շատերը մնացել էին ստարորիկ, ցնցութիների մեջ: Ինքնակալ զորավարի քաղաքականությունից ու միջոցառումներից գժգոհ մակեղոնական զորապետները, որոնք ավելի ու ամելի էին անջատվում ու խորթանում իրենց թագավորից, վարպետորեն գժգոհություն, տրտունջ ու թշնամանք էին բորբոքում զորքի մեջ և բանակը զրդում էին իր զորավարի գեմ:

Ամբողջ ճամբարը լցվեց հետ ու առաջ խլսող անկարգ ամբոխներով և աշխատժորեն ճառող ու իրար համոզող մարդկանցով: Բոլոր ծայրերում հավաքվող բազմաթիվ ժողովներում լավում էին սպանալիքներ, հնչում էին զայրույթի բացական չություններ երդումներ էին արյում իրար, որ «այլես առաջ չեն դնա»: Այլևս չկար մեկը, որին կարելի լիներ հրամայել, չկար մեկը, որին կարելի լիներ առաջ տանել:

Իդուր էր Ալեքսանդրը փորձում քաջալերել իր զորապետներին և համոզել արշավանքը շարունակելու: Նրա պատասխանը բողոքի լուսությունն էր լինում: Խոկ երբ զորավարը պնդեց, որ պատասխան տրվի, առաջ եկավ կենը, հնագույն ու լավագույն զորապետներից մեկը և ջերմ ճառ արտասանելով դյությում էր Ալեքսանդրին զոհանալ ձեռք բերածի մեծությամբ և իր տառապած մարտիկներին աստվածների ու խարուսիկ բախտի նախանձի պարմաններում չտանել գեպի նոր վտանգներ ու տանջանքներ: «Աստվածների լավագույն պարզել բախտի մեջ չափավոր լինելն է», — ասաց կենը բոլոր ներկաների հավանության բացականչությունների տակ: Հետազայում ավելի երխուսարդ ու թարմ զորքերով Ալեքսանդրը կարող է շարունակել իր արշավանքները, բայց ավլալ պահին այդ անհնարին է և կործանարար, — այս էր կենի ճառի իմաստոր: Կենն իր ճառը վերջացրեց ներկաների աղմկալից հավանության տակ, որոնցից շատերն արտասվեցին:

Ալեքսանդրն ստիպված եղավ զործնականում համոզվել, որ
ամենամեծ մարզը մեծ է միայն մինչև այն ժամանակ, քանի
դեռ գնում է իր էպոխայի առջեկց և նրա գլուխ անցած, և
ձենց որ ձգտում է իր ժամանակաշրջանն ի սպաս դնել իր անձ-
նական ձգտումներին ու նպատակներին, դառնում է անզոր:
Համաշխարհային միասինությունն անհասանելի բաղձանք էր:
Որքան աճում էր Ալեքսանդրի կայրությունը, այնքան էլ նրա
սահմաններից դուրս աճում էր նրան սահմանակից աշխարհը և
ժամանակի պարմանների ու Ալեքսանդրի միջոցներից ուժից վեր
խնդրի լուծման փորձը միայն վիթխարի կառասարովից հասցը-
ները: Հիմասիս գետի ափին հաղթարկան զրբքը լիակատար հաղ-
թանակ տարավ իր անպարտելի զրավարի նկատմամբ:

Իդուր Ալեքսանդրը զրծի զրեց քաղաքակետի, հոգեբա-
նի, հոեսորի ու ճառախոսի իր բոլոր ընդունակությունները:
Ի զուր էր նա զորքերի ժողովներում կոչ անում կամ ավորներին
առաջ գնալ իր հետևելց, իսկ մնացածները «Փող հայրենիքում
պատմեն իրենց մասին, որ նրանք թշնամու երկրում քքել են
իրենց թագավորին ու զրավարին»: Ի զուր էր նա փորձում բո-
ցաշունչ խոսքերով բարձրացնել զրբքի ողին, ընկճած արա-
մադրությունը հաղթահարել անցյալի ու ապագայի հաղթա-
նակներով, պայքարի նոր կամք ներչնչել նոր նվաճումների ու
հարստությունների նկարսպություններով, զրբծի զնելով զո-
րամասների շատ հեղինակավոր հոեսորներին կաշառելլ, հարե-
ման քաղաքներն ու ցեղերը կողովտելու թույլտությունը:

Մի քանի օր նա դուրս չէր գալիս վրանից, բայց ի զուր
էր տրամադրության փոփոխություն սպասում զրբքի մեջ: Ձին-
վորները գլխակոր թափառում էին վրանի շուրջը: Ճամբարը
քարացել էր մասյլ ու թափծոտ անդորրի մեջ...

Վերջապես Ալեքսանդրը հասկացավ, որ ինքն ստիպված է
զիջել, մանավանդ որ Ասիայի արդեն նվաճմած մասերից ըս-
տացվող կցկառու տեղեկություններն ասում էին, որ շուտով
հարկ կլինի նորից նվաճել դրանք:

Վերադառնալու որոշումը բանակը դիմավորեց ազմկալից
յնձությամբ: Հիմասիս առերին կրած իր հույսերի խորտա-
կումին Ալեքսանդրը հաղթական կերպարանք տվեց: Որպես թե
նահանջը անբարենպատ զոհարդիրությունների հետևանք էր.
«ոչ թե մարդկանց, այլ աստվածների առաջ է նահանջում Ա-
լեքսանդրը»: Քուրմերը, իհարկե, կարողանում էին ասալած-
ներին ստիպել, որ նրանք ասեն հենց այն, ինչ որ հարկավոր
էր թագավորին: Հիմասիսի ափին կառուցվեցին 12 վիթխարի
զոհասեղաններ: Վիթխարի արշավանքների վախճանը նշեց
վիթխարի տոնակատարություններով:

Ալեքսանդրի բանակի զինվորն շտապում էր տուն հայրե-
նիք, որտեղ նրան մեծարանք ու փառք էր սպասում: Վերջ ըս-

աղիներին ու վերքերին։ Այլևս չեն լինի ո՞չ օձեր, ո՞չ հեղեղ-
ներ, ո՞չ անապատի շմկացած ավաղ, ո՞չ տրուպիկական տեսդ,
ոչ էլ տանջալից երթեր անտառներով, լեռներով ու տափառ-
տաններով։

Մոայլ էր զորավարի ողբին։ 326 թվականի վաղ աշունը,
Հիմասիսի ամերին նրա բոլոր հոգարտ երազանքների խորտակ-
ման աշունը նրա վոթորկահույցը, հանդստին թշնամի վաղան-
ցուկ կյանքի աշունը եղան։

Ա.ԵՐԱ.Դ.Ա.Բ.ՋԶԸ

Հիմասիսից վերադարձի ուղին հնդկական արշավանքի շա-
րունակությունը եղավ։ Այդ վերադարձի արշավի մեջ մակեդո-
նական նվաճողի առջև երեք հիմնական խնդիրներ էին կանգ-
նած։ նոր հաղթանակներով ու զաշինքներով, նոր գաղութներ
ու քաղաքներ հիմնելով ամրապնդել իր տիրապետությունը
Հնդկաստանում։ գուրս դալ դեպի ծովը, հաղորդակցության
ծովալին ճանապարհներ բանալ Հնդկաստանի ու պարսկական
ստարագությունների միջև։ Ինդուսի ու Տիգրիսի ավագանների
միջև առավնյատ տերիտորիաների նվաճումով հնդկական ստո-
րագությունն ամբողջականացնել Արևելյան կայսրության պրո-
վինցիանների հետ։ Կամուրջ գցել Միջերկրական ծովից դեպի
Հնդկական օվկիանոս, որպեսզի հետագայում Գանդեսի ալլեքնե-
րում կարելի լինի լվանալ Հիմասիսի խայտառակությունը— այս
էր արշավի վերջնական նորատակը։

Հիմասիսից դորքերը հետ գարձան դեպի Հիդասալ։ Կարճ
ժամանակում, սեպտեմբերին և հոկտեմբերին Հիդասալի վրա
կառուցվեց մի մեծ նախառորմիդ, որ բաղկացած էր 80 սաղ-
մանավերից, 700 տրանսպորտային նավերից և 200 անառաջաստ
նավերից (ձիեր փոխադրելու համար)։ Նախառորմիդի անձնա-
կազմն ընտրվեց վյունիկեցիներից, հույներից, կիսյուսցիներից
և Ալեքսանդրի բանակի այլ «ուղեկիցներից»։ Բարելոնից եկան
7000 հետևակ, 5000 թրակիացի ճիշավորներ, 25.000 ոսկեզրոդ
ու արծաթապարդ սպառազինություն, շատ գեղորայք, գրքեր,
զործիքներ։ Ալեքսանդրի բանակը, կրած դրկանքներից կադ-
դուրմելով, վերապինվելով՝ ու ամրապնդվելով՝ նախկին ահեղ
ու շողջողուն տեսքն ստացավ։

326 թ. նոյեմբերին դորքն ու նախառորմը ճանապարհ ըն-
կան գետի հոսանքով դեպի ցած։ Գույնդղույն առաջաստներով
հագեցած այդ բարձաթիվ նավերի շքեղ ու հոյակալ տեսարա-
նը, որոնց վրա իր դիմապիտաներով, նետաձիգներով ու գը-
շարդիայով դաշտում էր ինքը՝ Ալեքսանդրը, դետի երկու ամե-

բազ առաջ շարժվող կրատերի ու Եփեստիոնի զորայուների ու ազգմական երաժշտությունն ու երգերը, զորայուներ, որոնք ունեն 200 փեղ, կոփման վետերանների շողջողուն գենքը, անսասան տեսքն ու հատու քայլվածքը, ուազմաշունչ ու բարեկալմ երիտասարդության եռուն էներգիան— Ալեքսանդրի ռազմական հզորության այս ամբողջ զորահանդեսն ամբողջ երկրում տարածում էր նրա փառքի ու հաղթանակների արձականքը և խեղդում ազատության ու պայքարի ցանկության եռանդը:

Այսուամենայնիվ շատ ցեղեր համարձակվեցին դիմադրություն ցույց տալ: Ալեսինի ու Հիդրատի ամեր կը-ուիմների» թատերաբեմ դարձան առանձին ցեղերի ու բնակավայրերի և նեարքոսի, կրատերի, Եփեստիոնի, Պաղոմեոսի և այլոց պատճիչ կորպուսների միջնեւ: Պատերազմը հասնում էր առանձին ամբացված բնակավայրերի պաշտպան ու գրոհի, երկրի ավերման ու փախատականների բնաշնչման: Նվաճողի ուղին բաւարարություն էր այրվող բնակավայրերի ու ամբոցների բոցերով, իսկ նրա հետեւ մնում էին միայն մոխրակույտեր ու գիտակների լեռները: Բնակչությունը հուսակտուր փրկություն էր որոնում ճահճներում ու անտառներում:

325 թ. սկզբին Ալեքսանդրի զորքերը մտան Ստորին ինգոսի մարզերը, որոնք իրենց բաւականությամբ ու բնությունով մի հսկայական շքեղ այրու էին նման: Գուցե թե արտեղից է սկալել հետազայի այս առասպելը, թե Ալեքսանդրը ձգտում էր արեալի երկրացին դրախտին, որ գտնվում էր աշխարհի ծայրում: Բայց այդ երկրացին դրախտը նվաճելը գյուրին չեղալ:

Ալեքսանդրը, որ կարողանում էր համերաշխանալ քրմերի հետ, ինչպիսի աստծու էլ որ նրանք երկրագելիս լինեին, ըլկարողացավ իր կողմը զբաղել բրահմինների քրմական կատան, որն իր ձեռքումն էր պահում Սամբիուի, Մուսիկանի և Պորտիկանի թագավորությունների ղեկավարությունը: Այդ ինքնամիտոփ զորեղ ու մոլեռանդ քրմական կաստան, որ տիրում էր «երկրին ու երկնքին», չէր ցանկանում իր իշխանությունը բաժանել օտարացեղ նվաճողի հետ, որը ոչ մի արմատ չուներ այդ երկրում: նա ողենչեց վերջին արյունահեղ սլատերազմը, որ Ալեքսանդրի բանակն ստիպված եղավ մղել, պատերազմ այդ թագավորությունների բնակչության հետ, որոնց ստիպված էին եկվորները կողապել ու ճնշել՝ սնունդ ու կեր ձեռք թերելու համար: Մահեղոնական մի քանի կայազորեր ջարդելու համար որպես վրիժառություն՝ մակեղոնական բանակն ամերեց ամբողջ երկիրը և բնաշնչն արեց անհնազանդ բրահմիններին: Պորտիկան թագավորն ապահովեց, Մուսիկանն իր բրահմինների հետ միասին կախազան հանմեց ճանապարհի եղերքին, Սամբիուն փախափ անտպատ: Նվաճումն ամբաղնդից ուազմական դա-

դութներով : Արանով էլ մակելոնացիների ռազմական դործողությունները հիմնականություններ ավարտվեցին :

Այդ ժամանակ տեղեկություններ ստացվեցին, թե պարսկական սատրապություններում հուզումներ ու խառնակություններ են սկսվել, թէ Պարապամիզում ու Արխաց աշխարհում կերծ թագավորներ են երևացել, թէ Բակորիայի զաղութականներն ապստամբել են... Շտապով Կրատերասի հրամանատարությամբ պարսկական սատրապություններն ուղարկվեց մի համախառն ջոկատ, որ բազկացած էր Փալանգաներից, նետաձիգներից ու էմիրներից : Կրատերասին առաջադրանք էր տրված — ամենադյուրին ճանապարհով, Արախոզիայի ու Դրամիանայի միջով հասնել Քարմանիա (Պարսկաց ծոցից գեղի հյուսիս), այդ մարզերում խաղաղեցնել Հուզումները և Հեղողիքա (ներկայիս Բելուջիանանի տերիասը) ժամի մոտ սպարեն բերել բանակի գլխավոր ուժերի համար : Բանակի հիմնական ուժերի համար նշված էր գերազարին ճանապարհ՝ Հնդկական օվկիանոսի և Պարսկաց ծոցի երկարությամբ :

Ինքը՝ Ալեքսանդրը, ինդոսի վրայով իր ուղին շարունակեալով դեպի Հնդկական օվկիանոս, հասագի ինդոսի դելուայի գրլուխություրը — Պատուալ : Երբ Ալեքսանդրը մոտեցալ, քաղաքը կարծես թե մահացավ. ամբողջ բնակչությունը փախավայնակղից : Մեծ գերազարությամբ հաջողվեց բնակչությանը քաղաք վերադարձնել : Ինդոսի դելուայում մակեդոնացիք դիմարդության չհանդիպեցին :

325 թ. ամբողջ Հուկիսը, որի ընթացքում նրանք դունվում էին Պատուալում, անցավ տեղապին դործունեության մեջ. ամբարցից Պատուալի միջնաբերդը, կառուցվեցին նավահանդիսաներ ու նավաշնարաններ, ջրհորներ փորբեցին դեպի Գանգեսի հովտը տանող ճանապարհի երկարությամբ և այլն : Ալեքսանդրը մի էսկադրայի զլուխ անցած իջավ օվկիանոս, որտեղ առաջին անդամ նա զիսեց մակենթացությունն ու տեղատվությունը : Օվկիանոսի ափերը հետազոտելով՝ նա վերջնականապես որոշում ընդունեց, որ նավատորմը պիտի վերադառնա ծռվային ճանապարհով, իսկ բանակը՝ ցամաքային : Նավատորմի զլուխ նշանակվեց Նեարքոսը, որ փորձված ու հմուտ ծռվային էր : Նավատորմի մեկնումը նշանակված էր Հոկտեմբերի վերջին, երբ սկսում են փշել բարենպաստ ծռվային քամիներ : Նախատեսվում էր ափի երկարությամբ ջրհորներ փորել և մթերքների պահպանը ներքել նեարքոսի նավատորմին մատակարարելու համար : Օգոստոսին արքեն զորքը բռնեց վերադարձի ճանապարհը :

Արևմտաքից ու հյուսիսարևեմուտքից ինդոսի ավարանի մքա կախված ժայռոտ լեռներն անցնելով՝ Ալեքսանդրի բանակը՝ ճանապարհին հաղթահարելով օրիտների ու արբիտրների կիսավայրենի ցեղերին, որոնց միակ զենքը համարյա միայն

թունավորած նետերն էին, — մտավ «աղքատության անապատը», որի միջով ափի երկարությամբ ճանապարհը ձգվում էր դեպի պարսկական սատրապությունները:

Բայտ ավանդության այդ անապատով են դեպի Հնդկաստան գնացել ասորեստանյան թագավորների ու պարսից Կյուրոս թագավորի նվաճողական էքսպեդիցիաները, սակայն խեղչվել են ծովափնյա շիկացած ավազի ալլեքների մեջ: Որոշ պատմաբաններ էին հիմնվելով այն բանի վրա, որ Ալեքսանդրի բանակի մեծ մասն այդ անապատում դոհվեց, մակեդոնացի զորավարին անհետեթ մտադրություն են վերադրել, թե իբր նաև ցանկացել է իր բանակը ոչնչացնել, որովհետեւ Հիփասիսի ավելի ին այդ բանակը հրաժարվել էր հնագանզվել նրա կամքին:

Օրիտական ու արբիտական ցեղերին վերջնականապես Հընապանդցնելու և Նեարքոսի նախատորմին խմելու ջուր ու պարենամթերք մատակարարելու համար թիկունքում թողնելով Լեռնատի համախառն ջոկատը՝ Ալեքսանդրը 325 թ. սեպտեմբերին շարժվեց դեպի առափնյա անջուր անապատը:

Միմիայն ցամաքած գետերի հուներով կտրտված մերկ ժայռերի շլթաներ էին երեսում կղզիների նման այլ անապատային ավազե ծովի մեջ, որտեղ շիկացած կարմիր ավազի ալիքները հորդում էին մարդկանց ոտքերի տակ ու դիմավերեր՝ հորիզոնը ծածկելով կարմրավուն շլարշով: Զիր երեվում ո՛չ բույս, ո՛չ դարձան: Երբեմն միայն մասյլ ափի երկարությամբ պատահում էին ձկան ոսկորից ու ծովի ջրիմուսից շինված նըղճուկ հյուղերի խարեր: Պրանք վայրենի «իստուփաղների» բնակավայրերն էին (իտուիոփաղները սնվում էին միայն ձկան մըսով): Երբեմն էլ աղբյուրի մոտ պատահում էին մի քանի արմավենի և վախեցած մի նապաստակ խցկվում էր միմոզաների ու մոշավայրիների թփերի մեջ: Սնապատի մեռելային լրությունը դիշերներն ընդհաստվում էր չափսկալների մեռմալյային վայոցով, իսկ ցերեկները՝ մոծակների անհամար երամների տաղտկալի բղոցով: Կիզիչ տոթն արևի մայրամուտին վոխտը բինվում էր ցրտով, որը փայտացնում էր հոգերը: Ամեն մի քայլը գծվարությամբ էր արգում, մարդիկ վհասոված քարշ էին տալիս ոտքերը՝ երերալով, ույթաքերով, պատրաստ անձնատուր լինելու իրենց համակող մահաբեր քնին:

Սկզբնական շրջանում, քանի գեռ պարեն կար, քանի գեռ կարելի էր չորացած կոկորդը թարմացնել թանկաղին ջրի մի կումով, զորքը հետևում էր իր զորավարին, ինչպես կույրն է հետևում իր առաջնորդին... Զենոներեց փյունիկյան վաճառականներն ազահաբար համաքում էին անուշարույր նարդոս և խեժ: Գիտնականները ջանասիրաբար ուսումնասիրում էին աղքատիկ բնությունը, որպեսզի իրենց հետազոտություններով հարստացնեն գիտությունը, զինվորները ցերեկը քնում էին, ջրը-

Հորիներ էին փոլում և պարենի պահաստներ էին շինում նավա-
տորմի համար։ Առաջ էին շարժվում զիշերները։

Բայց զրկանքներն օրեցօր ավելանում էին։ Զիա այնպիսի
դինի, որն այնքան բաղձալի մինի, որքան բաղձալի էր լինում
նրանց համար որևէ ճահճում փոսի մեջ զտնված նեխած ջուրը։
Խախովում ու ընկնում էր զիշելիքինան, անպարտելի բանակը
դառնում էր ողորմելի կենդանիների մի կույտ, որը թախիծի,
հուսահատության ու անդորր զայրույթի մեջ պայքարում էր իր
մարող կյանքի համար։ Ալեքսանդրն ստիպված էր անպատճե-
թողնել նույնիսկ այնպիսի արարքները, ինչպես նավատորմի
համար նշանակված մթերքի հավատակությունը պահակախմբի
կողմից։

Սատկեցին համարյա ըսլոր ձիերը, էշերն ու ջորիները, չեր
մնացել նաև մորթելու անասուն։ Զոհվեցին կանայք ու երեխա-
ները։ Հիմանդրներին թողնում էին բախտի քմահածույքին։ Հետ
մնալը մահ էր նշանակում և յուրաքանչյուրը լարում էր իր ու-
ժերի մնացորդը, որպեսպի հաղթահարի քնաբեր տառապանքը և
քարշ զա զորքի ամբողջ մասսայի հետ միասին... Զորքի ան-
հավասար զծի հետեւից ձկվում էր մեռելների գիծը։

Երբեմն ջուր էին դանում։ Ծարավից մեռնող մարդիկ ձաք-
ձքված շրթումքներով ընկնում էին այդ ջրի վրա, որպեսպի
կարողանան իրենց կյանքի վերջին ժամերին ու բողնուերին
կուշտ խմել նրանից։ Կյանքի վերջին կայծերը մարում էին ա-
րեի մեռնող չողերի տակ և թվում էր, թե բոլորն էլ իրար հե-
տեւից գերեզման կդանեն անապատի պալոների մեջ։

Ալեքսանդրը ոչ մի բովե հավատը չէր կորցնում իր բախ-
տավոր աստղի նկատմամբ, չէր վհատվում և առանց տատան-
վելու շարունակում էր իր ուղին։ Նա զորքի հետ բաժանում էր
երթի բոլոր դժվարությունները և ամեն մի զեսլք օգտագործում
էր իր ուղելիցների ողին բարձրացնելու համար։ Եվ նրա զին-
վորների, մանավանդ էթերների ու դիւլասպիստների մեջ շա-
տերը կային, որոնց ողին ընկճել չէր կարող ոչ մի զրկանք և
ոչ մի տանջանք։ Ամենատիրուր օրերից մեկին մի քանի զինվոր
իրենց սալավարտով մի քիչ նեխած ջուր բերին Ալեքսանդրին,
բայց զորավարը թափեց այդ ջուրը, սնելով, թե դա չափա-
զանց քիչ է իր զորքի համար... Եվ զորքը ողջունեց իր զորա-
վարին, որը կարողացավ արդ օքը, այդ ջրով հագեցնել նրա
ծալրավը։ Երբ ծովափից հեռացած զորքերը մոլորվում են ճա-
նապարհին, իսկ ուղեցույցները կորցնում են ճիշտ ուղղությու-
նը, Ալեքսանդրին հաջողվում է ընտիր զինվորների մի ջոկա-
տով հասնել ծովին, ուղեցույցներին գուրս բերել ուղիղ ճանա-
պարհի վրա և խմելու ջրի աղբյուրներ դառնել։

Նրա զորքերը վերջին ջանքերն են զործադրում։ Օքսատօրէ
կենդաննում է շրջապատը, անապատի մեռյալ մարմինը կա-

նաչով է ծածկվում և բնությունը չարասիրա խորի մորից պիտի ում է հեղահամբույր հարազատ մոր։ Երկու ամսվա երթից հետո մեծ բանակի մնացորդները դենք ու հագուստը կրցը ըրած, ցնցութիւների մեջ փաթաթված հասնում են Պուրա՝ Հեղ-բռվայի մայրաքաղաքը։

Մինչ այդ Նեարքոսի նալատորմը, որի անձնակազմը բաղկացած էր 10—12 հազար մարդուց, ստիպված եղավ միայն սեպակմբերի վերջին գուրս դայ Պատուալայից, որովհետև ինդուսի գելտայում ապստամբություն էր բռնկել օտարերկրացիների դեմ։ Համարյա մի ամբողջ ամիս նավաստորմը բարեհաջող քամիների սպասելով մնաց օրբիտների հրվանդանի մոտ, որտեղից ոկայում էր անապատը։ Միայն հոկտեմբերի վերջին նավատորմը հնարավորություն ունեցավ շարունակելու նավարկությունը։ Հոկտեմբերի վերջին նավատորմն ուժեղ փոթորկի հանդիպեց, շատ նավեր շարքեց գուրս եկան։ Սկզբնական շրջանում, երբ Նեարքոսն ափ էր դուրս գալիք, դառնում էր նավատորմի համար զորքի թողած ջուրն ու մթերքը, բայց նոյնմբերի երկրորդ կեսից սկսած՝ նավաստիներն սկսեցին ավելի ու ավելի մեծ չափով ջրի և ուտելիքի պահաս զգալ։ Նավատորմն էլ քաղցեց ու ծարավից նույնպիսի տանջանքներ կրեց, ինչպես բանակը։

Նեարքոսը կարողացավ ճիշտ ուղղություն տալ նավատորմին և հասցնել Քարմանիայի ափերը (այլ ուղղություն վերցնելու դեպքում նավատորմը կհասներ Արարիայի անպատճերին)։ Անձնակազմն ափ իջան և տեղափորիկց բանակի ճամբարից հինգ օրվա ճանապարհի հեռավորության վրա։ Ալեքսանդրը, որ այդ ժամանակ միացել էր Կրատերասին, իր նավատորմը զոհված էր համարում։ Որքա՞ն մեծ եղավ նրա ուրախությունը, երբ իր ճամբարը եկած ցնցութիւնապատ ծերունու մեջ ճանաչեց իր հըմուտ ծովակալին, որը հետազոտել էր Հնդկաստանից Պարսկաստան տանող ծովային ճանապարհը։ Ալեքսանդրն արտասիեց և աստվածներով երգվեց, որ այդ օրը իր համար ամբողջ Ասիային տիրելուց ավելի թանկ է։

Բոլոր կողմերից դայիս էին զորքեր, պաշարեղեն, սպառազինություն, ձիեր, անսառներ, ուղարք, դեղորայք, գինի... Հզոր բուռնցք էր պատրաստվում բոլոր ներքին թշնամիների դեմ, որոնք «իրենց թագավորի» բացակայության ժամանակ գույն էին բարձրացրել։ Անապատն անցած գործերը, որոնք դեռ վերջերս ամենամնաժամնեց բաները չունեին, լողում էին փարթամության մեջ։ Բարեկեր բնությունը, հանդիսան ու առատությունն արագորեն վիրականդնեցին վետերանների ուժերը, որոնք իրենց զորավարի հետ 9 տարվա ընթացքում 15—16 հազար կիլոմետր տարածություն էին անցել։

Տանջանքներն ու զրկանքներն արտասովոր չոփով վայելը ծարավ էին արթնացրել։ Հոյակապ տոնակատարություններն ու

ուրախությունները հաջորդում էին մեկը մյուսին։ Ճանապարհ-ների երկարությամբ գինով լի սափորներ և ուտելիքներով ծան-քաբեռնված սեղաններ էին շարված։ Ալեքսանդրը կարծես հիշել էր ասորեսատանյան նվաճող Սալմանասարի խոսքերը։ «Կեր, խմիր և սիրիր, մնացած ամեն ինչը ոչինչ չարժե», և աղասու-թյուն էր տվել իրեն ու մյուսներին...

324 թվականն էր։ Պատիբազմները վերջացել էին, բայց խաղաղությունը դեռ հեռու էր։

ԱԼԵՐՍՍԱՆԴՐԻ ԿՅԱՆՔԻ ՎԵՐՋԻՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Ալեքսանդրն իր ճկուն ու հաստատուն քաղաքականության շնորհիվ, մի ձեռքով զսպելով իր մակեղոնացիներին ու հույնե-րին, իսկ մյուս ձեռքով՝ շոյելով նվաճված երկրների ավագա-նուն ու քրոմությանը՝ առժամանակ իր նոր հպատակներին հաշ-աեցնում էր իրենց նոր տիրոջ հետ։ Սակայն նրա բացակայու-թյան ժամանակ, մանավանդ երբ լուրեր էին հասել, թե նո կործանվել է Հեղորդիայի անապատում, ինչպես եվրոպական, այնպես էլ ասխական ծաղում ունեցող փոխարքաներն ու սատ-րապները բոլորովին սանձարձակ էին դարձել։ Նրանցից յուրա-քան չյուրն իր համար վարձկաններ հավաքելով՝ պատրաստվում էր զինված ուժով պաշտպանել իր երավունքներն իր պրովինցի-այում։ Որոշ սատրապների բռնություններն ու ծաղը տեղա-կան բնակչության վերաբերմամբ, կեղեքումն ու կողոպուտը, — ըստ որում կողոպտմեց ու անարգվեց նույնիսկ պարսկական դիմաստիայի նախահայր Կյուրոսի դամբարանը, — հուզումներ ու ապստամբություններ առաջացրին բնակչության մեջ։ Ե՛վ իրանում, և պարսիկների մեջ, և՛ միդիացիների մեջ նույնիսկ երևան եկան կեղծ-թափակորներ, որոնք ողովովդիմն կոչ էին ա-նում բնաջինջ անել օտարացեղ ճնշողներին։ Հնդկաստանի սատ-րապն սպանվեց իր վարձկանների ձեռքով, սպատամբացին Բակ-տրիայի ռազմական գտղութականները։ Էլլի մի քիչ ժամանակ — և Ալեքսանդրի վիթխարը կայսրությունն արյունահեղ ազգա-միջան կոփեների, ապստամբությունների ու խոսվությունների հետևանքով կրածանվել իր բազադրիչ մասերին։ Ալեքսանդրն ստիլված եղավ նորից նվաճել իր սեփական կայսրությունը, նա գործում էր վճռական, դաշտանորեն և արագ...

Նրա հրամանատարության տակ Քարմանիայում կենտրոնա-ցած գորքի ճնշող վերաբանցությունն անհուսալի էր դարձնում սատրապների զինված դիմադրությունը, որոնք հրաման ստա-ցան անհապաղ արձակել իրենց հավաքած վարձու զորքերը։ Այ-նուհետեւ սկսվեց արյունոտ դատաստանը մեղավորների հետ։

մահապատժի ենթարկվեցին Քարմանիայի, Պերսիդայի, Պարետակենի և այլ սատրապներ, ուզուրպատոր «կեղծ-թագավորներ» պարսիկ Օրդանը և միջիացի Բարիխակուր, վարձկան դորքերի պետեր Կլեանդրն ու Հերակոնտը, թրակիացիների պետ. Սետալկը և շատ ուրիշները: Անցյալի ոչ մի երախորիք նրանց չըփրկեց հաստուցումից: Սիստալկի ու Կլեանդրի հետ միասին ըրջապատվեցին և անդին ու տեղը կոտորվեցին նրանց զինվորները՝ թվով 600 մարդ: Վիթխարի ու խախուտ պետական շենքը, որքիչ էր մնում կտոր-կտոր լինի իր սեփական ծանրությունից, նորից արյունով կապակցվեց մի ամբողջության մեջ:

Պատմում են, թե երբ սատրապ Արուլիտը, որն անհրաժեշտ պաշարեղեն չէր պատրաստել Ալեքսանդրի կորպուսի համար, փորձեց պատժից փրկվել 3000 տաղանդ նվիրելով, Ալեքսանդրը հրամայեց այդ փողերը դնել ձիերի առաջ, և երբ ձիերը չմուռացն նրանց, ասաց. «Ի՞նչ օգուտ մեղ քո այս պատրաստությունից... Արուլիտը բանտ նետվեց, իսկ հետո մահապատժի ենթարկվեց չարաշահումների մեղադրանքով:

324 թվականի գարունն ու ամառը Ալեքսանդրն անց կացրեց Սուզում, որտեղ հավաքեց մի քանի զոկաների մեջ խմբած իր զորքերի գլուխվոր մասսան:

Ալեքսանդրի վիթխարի միջոցները նրան հնարավորություն էին տալիս խիստ առատաձեռն լինելու իր զորքերի նկատմամբ, որոնք մինչ այդ, չնայած ամեն ինչին, կազմում էին թագավորական դաշի գլխակոր հենարանը: Ալեքսանդրն իմանալով, որ իր բանակի զինվորները և մանավանդ հրամանատարները խոչոր պարտքեր են արել, առաջարկեց բոլորին իրենց պարտքերի համարները ներկայացնել, որպեսզի թագավորական զանձարանից վճարվեն: Սակայն զորքի մնվասահությունն իր զորավարի նըկատմամբ, որը պարտված բարբարոսներին էր պաշտպանում, այնքան մեծ էր, որ թագավորի առատաձեռնությունը բացատրվեց ամենաշռայլ զինվորներին պատժելու ցանկությամբ: Այն ժամանակ թագավորի հրամանով ճամբարում ոտիկով լի սեղաններ դրվեցին և պարտքի զումարները գաղտնի պահելու երաշխիքով վճարվեցին բոլոր ներկայացգած պահանջարկերը: Գործը, ի հարկե, առանց չարաշահությունների ու կեղծիքների չանցավ: Այնուամենայնիվ ոսկով զորքի սիրտը շահել չաջող-մեց:

Մակեդոնական վետերանների ինքնակամությունն ու «ընկերական լուծը», թագավորի նկատմամբ նրանց աճող անվստահության հետ միասին, ավելի ու ավելի էր ճնշում ու անհանգըտացնում Ալեքսանդրին, որն սկսեց իր զորքին խառնել երանցիներ ու թուրանցիներ, նրանցից ավելի ու ավելի մեծ թրփով մացնելով ոչ միայն էթերների հեծելազորի, այլև և արքայական դվարդիայի մեջ: Բացառապես Ասիական թեթև հեծե-

լազորից կազմված ջոկատների հետ միասին կազմակերպվեցին նաև խառն կազմությամբ ձիավոր հիմարիսիաներ: Մակեղոնական ձևով վարժեցրած, դինած ու հանդերձալորած իրանաթուրանական երիտասարդության «էպիդոնների» կորպուսը Սուրբայրում կազմակերպված դորահանդեսում հաճելի տպավորություն թողեց թագավորի վրա իր տեսքով, կեցվածքով, շարժումների գեղեցկությամբ ու թեթևությամբ, բայց միաժամանակ ուժեղացրեց մակեղոնական վետերանների խանդու չարությունը: Ալեքսանդրը բանակի հին, անհնապանդ կորիզին փոխարինողներ էր պատրաստում Արքելքի նվիրված և սորկության աստիճանի հնագանդ ու ճկուն երիտասարդությունից:

324 Թվի ամառը Ալեքսանդրի գորքերը հավաքվեցին Տիգրիս գետի ամիսն Օպիս քաղաքը, որտեղ նրանց առաջ կարդացվեց թագավորի, հրամանագիրը՝ «խիստ շատ» վետերանների հայրենիք արձակելու մասին: Զորքի մեջ վաղուց ի վեր պատվող լուրերն արդարացան: Թաղավորը որոշեց մեկ հարվածով աղատվել իրեն անձեռնուու վետերաններից և նրանց փոխարինել ասիացի երիտասարդությունով: Զորքը նորից զուրս եկալ իր զորավարի դեմ, բայց այս անդամ այլ արդյունք ունեցավ, քան Հիփատիսի ամիսը:

Ինչպես հաղորդում են Ալեքսանդրի նկատմամբ խիստ բարեհաճ տրամադրված հին պատմագիրները, զորավարն այդ վըտանգութոր բուպեներին լիովին պահպանում էր իր հոգու զորությունը, դաժան հաստատակամությունն ու անսասան վճռականությունը: Նրա հրամանով ձերբակալվեցին և ընդհանուր զորական ժողովում անհապաղ մահապատճի ենթարկվեցին ամենաթունդ ճառախոսներն ու դրդողները: Զորքը սսկված լսեց իր զորավարի ցատումնալից ճառը՝ չհամարձակիվելով մի ակնթարթանդամ ընդհատել նրան: Ալեքսանդրը, որպես թե, այսպիսի ճառ է ասել.

«Ձեզ պահելու համար չէ, որ ես նորից պիտի խոսեմ ձեզ հետ: Ինձ որ մնա, կարող եք զնալ ուր ցանկանում եք: Ես միայն ցանկանում եմ ցույց տալ ձեզ, թե ինչ եք դարձել իմ ըրոքհիլ... Իմ հայրը, Ֆիլիպը շատ բան արեց ձեզ համար, նա ձեզ, որ դողդողում էիք Թրակիայի բարբարոսների առաջ, դարձրեց հզոր զորք... Ֆիլիպի արածն ինքնին մեծ բան է, բայց չնչին է համեմատած նրա հետ, ինչ որ արվեց հետազում... Ես ձերը դարձրի Պարսկաստանի դանձերը, Հնդկաստանի հարստությունները և տիեզերքը շրջապատող ծովը... ձեր միջից զուրս եկան սատրապներ, զորապետներ, ստրատեգներ... Ես ինձ համար ոչինչ ձեռք չըերի, և չկա մեկը, որ կարողանար ցույց տալ իմ զանձերը, եթե միայն ցույց չտա ձեր զորքը և այն, ինչ որ պահվում է ձեզ համար...»

Եվ ինչո՞ւ պիտի զանձեր կուտակեմ: Ինձ համար, երբ ես

ուստում եմ այնպես, ինչպես դուք եք ուստում, և քննում եմ այնպես, ինչպես դուք եք քննում: Ձեզանից շատերը նույնիսկ ինձանից չքեղ են ապրում, և ես շատ գիշերներ պիտի անքուն անց կացնեմ, որպեսզի դուք կախողանաք հանդիսատ քնել: Թէ՞ այն ժամանակ, երբ դուք դժվարություններ ու վտանգներ էքը կը բռում, ես հոգս ու վիշտ չունեի: Ո՞վ կարող է ասել, որ ինքն ինձ համար ալելի շատ դժվարություններ է կը ել, քան ես՝ իր համար:

Եվ այժմ ես մտածում էի ձեղանից նրանց, ովքեր հոգնել են պատերազմից, առատ պարզեներով արձակել տուն ի հապատություն և ի զարմանք ձեր հայրենիքի: Բայց դուք ուզում եք բոլորդ գնալ, գնացեք ուրեմն բոլորդ: Երբ դուք տուն կհասնեք, ասացեք, որ դուք ձեր թագավորին, որը ձեզ հետպին հաղթականուրեն այնքան երկրներ ու այնքան ժողովուրդներ է անցել, փառքով պսակելով ձեր զենքը... որն անցել է Հիւդասպը, Ակերինն ու Հիւդասոտը, և որը Հիւսիսին էլ կանցներ եթե դուք չխանգարեիք... որ դուք ձեր թագավոր Ալեքսանդրին լքել եք և նրա պատուանությունը թողել պարտված բարբարուսներին: Կարող եք գնալ...

Նա իր օգնականների ու ավագ դորապետների հետ քաշվեց իր վրանը և մի քանի օր զորքին չէր երևուամ: Մնալով առանց առաջնորդի, առանց զորապետների, նախապես մտածված դործողությունների ծրագիր չունենալով, զորքը շիռթության մեջ ընկալ և դարձավ մի անկարգ մասսա, որ ոչ մի բանի ընդունակ չէր: Խակ երբ երրորդ օրն Ալեքսանդրն սկսեց մակերդունական օրինակով զորք կազմակերպել պարսիկներից, միդիացիններից ու բակտրիացիններից, շատ պարսիկների ու միդիացինների շնորհելով պատվավոր տիտղոսներ ու «թաղավորի» ազգականի» կոչում, պահակախումբ նշանակեց պարսիկներից ու միդիացիններից, վետերանները հոգեաես ընկճացինն: Նրանք հրաման ստացան՝ «ճամբարը մաքրել ու զնալ ուր ցանկանում են. եթե կհամարձակվեն, թող դուրս վան Ալեքսանդրի դեմ, նա կարող է ցույց տալ, որ նրանք առանց իրեն ոչինչ են»:

Վետերանները զենքը ցած դրին և սկսեցին ներումն իրնդրել, նախապես համաձայնելով ամեն ինչի: Օպիսում Ալեքսանդրը վճռական հաղթանակ տարավ իր բանակի նկատմամբ, ջախջախելով գիմադրությունն իր արևելյան քաղաքականությամբ: Հաշտությունը տրնվեց հանդիսավոր կերպով: Ալեքսանդրը չչարաշահեց իր հաղթանակը: Մոտ 10.000 վետերաններ առնելու արձակվեցին. մինչև հայրենիք հասնելլ պահպանվում էր նրանց ոռճիկը, բացի այդ յուրաքանչյուրը մեկ տաղանդ պարզե ստացավ՝ որ այն ժամանակավ համար մեծ գումար էր (մոտ 2000 ռուբլի սոկով): Ասիացի կանանցից նրանց ունեցած երեխուները թողնվեցին թագավորի խնամակալությանը, որպես

դի Հայրենիքում թողած նրանց ընտանիքների մեջ պառակատումներ չընկննն :

Թաղավորի հրամանի համաձայն վետերաններն իրավունք ունեին իրենց հայրենիքում թատրոններում ու ստագիոններում դրավել ամենապատվավոր տեղերը, պատվավոր սլամիներ կը-րել, օգտուել զանազան արտոնություններով: Իսկ թաղավորի մոտ ծառայության մնացած մակեդոնացիք և հույներն, այսու-ամենայնիվ, պարսիկների ու միդացիների համեմատությամբ առավելություն պահպանեցին, թեև վերջին վերակազմություն-ների հետեւանքով զորքը կորցրել էր իր ազգային բնույթը: Կոփիած ու ամովեհեր վետերաններն անվարինելի մարտիկներ էին:

323 թվի սկզբին Ալեքսանդրը ժամանեց Բարեխն, որը դարձել էր նոր միապետության պետական կենտրոնը: Այստեղ, արքայական ճամբարը ղետպաններ եկան բրետներից, լուկան-ներից, էտրուսկներից և իտալիայի այլ ցեղերից (ըստ որոշ տեղեկությունների՝ նաև հռոմեացիներից, որոնք այդ ժամանակ դեռ քիչ էին Հայտնի), առևտրական զորք Կարթաղենից, Հյու-սիսային Սֆրիկայի լիվիանկան ցեղերից, Պիրենյան թերակղզու իրերներից (ներկայիս բասկերի և մասսամբ իսպանացիների նա-խահայրերից), և վրոպական սկյութացիներից, կելտերից (ներ-կայիս իունիացիների և մասսամբ Փրանսիացիների նախահայ-րերից), Սֆրիկայի եթովպացիներից և ուրիշ շատ ավելի քիչ Հայտնի ցեղերից, որոնց մասին հին պատմեչները հարկավոր չեն համարել հիշատակել: Այդ բոլոր ժողովուրդները ստիպված էին մեծ միավետի բարեկամությունը վնասել, միավետ, որի գլխում նորից համաշխարհային կայսրության վիթխարի մտքեր էին ծնունդ առնում:

Մոտակա ծրագրի մեջ էր մանում՝ Արաբական թերակղզու ափերի հետադառությունը, ծովային ճանապարհ գտնելն Արևել-քի ու Արևմուտքի միջև, Սֆրիկայի շուրջը պատվելով, Հեր-կուեսայն սյուների միջով (ներկայիս Զիբրալտարը), Կատալ-այի ափերի հետազոտությունը, որն, ինչպես ենթադրվում էր, նեղուցով կապված էր համաշխարհային ծովի հետ, որը բոլոր կողմերից շրջապատում էր ցամաքը, Պարսից ծոցի ափերի հե-տազոտությունը՝ նրա ափերին ու կղզիների վրա «Նոր Փյունի-կիա» ստեղծերու համար: Արդեն պատրաստվել էին Արաբիա մեկնող առաջին էքսպեդիցիաները:

Միապետության բոլոր ծայրերից նոր ուժեր ու համա-լրում էին գալիս Բաբելոն, ենթադրվում էր զիներ մի հրս-կայական զորք և արշավանքներ սկսել միաժամանակ մի քանի ուղղությամբ: Բոլոր ծովային երկներում, մանավանդ Փյու-նիկիայում ուժեղ թափով նավաստիներ էին հավաքագրվում նավատորմի համար, որի նավերը կառուցվում էին շատ տեղե-

բում և քանդված վիճակում ջրանցքներով փոխադրվում էին Եփրատ: Բարելոնում 1000 նամի համար կառուցվում էին ջրամբարներ ու նավաշինաբաններ, քաղաքը լիքն էր նավաստիներով, ատաղձագործներով, բեռնակիրներով, զինվորներով, վաճառականներով: Ալեքսանդրն անձամբ խառնվում էր բոլոր մանրումքներին և շատ ժամանակ էր հատկացնում նավատորմի ժաներներին և իր վերակազմակերպվող բանակի դրատեմներին, առատորեն պարզեատքելով աչքի ընկնողներին:

Նրա միապետության մեջ վիթխարի ստեղծագործական աշխատանք էր կատարվում: Հույները մասսայաբար տեղափոխվում էին արևելք, տեղափոխվում նոր հիմնվող Ալեքսանդրիաներում, որոնց թիվն արդեն անցել էր հիսունից: Հունական կուլտուրան, արհեստների ու արվեստի մեջ հուների ունեցած փորձը փոխադրվում էր կայսրության բոլոր ծայրերը, ատակական աղնիվ ու մաքուր լեզուն—Դեմութենեսի ու Պերիկլեսի լեզուն դառնում էր պետական լեզու: Հունական կուլտուրայի և Արևելքի—Սիրիայի, Բարելոնի, Հրեաստանի, Եգիպտոսի, Հնդկաստանի կուլտուրաների միախառնումից ու համազումից ծնունդ էր առնում մի նոր, համաշխարհային հելենիստական կուլտուրա—համամարդկային կուլտուրայի հիմքը:

Բուռն թափով զարգանում էին առևտուրն ու արդյունաբերությունը, պարսից թագավորների ոսկուց, որ դարերով ընկած էր մնացել թաքսոսցում, կտրվեց միլիոնավոր դրամներ, ուրոնք աշխատյած շիթերով հսկեցին միապետության բոլոր առևտուրական երակներով: Ամեն կերպ խրախուսվում էր գիտության ու արվեստի զարգացումը, մանավանդ բնական գիտությունների ու բժշկականության: Արխատուելն իր գիտական հետազոտությունների համար ստացավ 800 տաղանդ, ուրիշ շատ գիտականների ու փիլիսոփաների ևս առատ նպաստներ էին արքաներ: Շինարարական վիթխարի աշխատանք էր ծավալվում, վերակառուցվում էին հին հասարակական շենքերն ու տաճարները և կառուցվում էին նորերը, ջրանցքներ էին փորձում, կառուցվում էին պատնեշներ, ամրաբարձրակներ, շլյուզներ ու փարուներ, նախագծվում էր արմատապես վերակառուցել Միջադետքի արհեստական ոռոգման ամբողջ սիստեմը:

Ալեքսանդրը, որի կյանքի նշանաբանն էր այն ասացվածքը, թե՝ «ոչինչ չի կարող կանգնեցնել հերոսին և ոչինչ չի կարող պաշտպանել վախկոտին», պատրաստվում էր իրադրծելու իր նվիրական բաղձանքը համաշխարհային միապետություն ստեղծելու մասին, որը բոլոր կողմերից պիտի չընալիք ավելացների ովկիանոսի ջրերով: Եվրոպական սկյութացիների ու արաբական ցեղերի դեմ կազմակերպելիք առաջիկա արշավանքները միմիայն նախարանը պիտի լինեին կարթազենի, Լիվիայի, Իսպանիայի, Սիցիլիայի և Խոտալայի նվաճման... Իսկ հետո, ըստ երեւյ-

Թին հերթը պիտի հասներ Հնդկաստանին, Վրաստանին, գուցեան Զինաստանին: Ամբողջ կայսրությունը ցնցվում էր նախապատերազմյան տեսդից: Սակայն մեծ դիմուրը մահ դառն իր սեփական անկողնում:

Զրկանքների ու վայելքների, օրդիաների ու ճակատամարտերի, պատերազմների ու սիրա անընդհատ փոփոխությունները հյուծել էին Ալեքսանդրի օրդանիդմը: Ասում են, թե իր պատանեկության տարիներին նա ախտոսում էր, որ ինքն ստիպված է որևէ անասունի պես ժամանակ ու էներգիա կորցնել բնունդ ստանալու և մարսողության համար. նա իր ուժերը խնայում էր ապագա սիրազործությունների համար: Սակայն իր կյանքի մերջին տարիներին նա դերազանցեց իր խրախճանասեր հորը՝ Ֆիլիպին: Եվ երբ նա հանկարծ հիվանդացավ չարորակ տեսդով, զինուց թունավորված և չափաղանցություններից հյուծված նրա օրդանիդմը չկարողացավ հաղթահարել հիվանդությանը:

Հուշիկ քայլերով մեռնող զորավարի մոռով անցնում էին նրա վետերանները, ջանալով որսալ նրա վերջին հայացքը, տեսնել նրա զվարի անշմարելի շարժումը. որպես հրաժեշտի նշան...

Ալեքսանդրը մեռավ մեր թվականությունից առաջ 323 թվի հունիսի 10-ի մատերքը:



Քանի ուրու հանձարեղ Ալեքսանդրը կենդանի էր, նրա փառքի չողը սավերի մեջ էր պահում նրա ամենասաղանդավոր զինակիցներին անդամ: Այդ չորհայի, խիզախի փառասեր ու եռանդուն զորավարներից յուրաքանչյուրը կարծում էր, կամ կարող էր կարծել, թե հենց ինքն է այն «ամենաուժեղը», որին թագավորը կտակել է իր թագավորությունը:

Սակայն Ալեքսանդրի մահից հետո կայսրության զանազան մարզերում շարժման մեջ ժոտան մինչ այդ թաքնված կենտրոնախույս ուժերն ու ձգումները. այդ կայսրության ցեղերն ու ժողովուրդներն այժմ արդեն չոշափելի կերպով համոզվեցին, որ իրենք միմիայն պարսիկներին փոխանակել են հույներով, նվազ կուտառական տերերին փոխանակել են ավելի մանրախողի, ձեռներեց ու ճարպիկ տերերով: Իսկ հույները և մանավանդ մակեդոնացիք էլ իրենց հերթին վերջապես իրենց ըդդացին «ասիսական բարբարոսների» իսկական տերեր: Իրանի, թուրքանի, տնտեսապես հետամնաց արևելյան մարզերի հողատերական ավագանին, որին ամեննեին չէր հետաքրքրում չամաշխարհային առեւրարկան կապերի ամրապնդումը, այլ շահագըրդումած էր իր հողն ու իր հշիսանությունը պահպանելու և

պաշտպանելու անկոչ հափշտակիչ հյուրերից ահա այդ ամագանին միայն հարմար մոմենտ էր որոնում արևմուտքի եկլիորներին վճռական հարգած տալու համար : Նույնիսկ հելլենական կուլտուրայով հետազողներից շատերին զուր չէր դալիս հունական տիբրապետությունը : Բարիլոնի, Սիրիայի ու Փյունիկիայի վաճառականները, արդյունաբերողները, ծովայիններն ու վաշխառուները ի դեմս հույների տեսնում էին իրենց ամենավտանդավոր մրցակլիցներին ու ախոյաններին : Հելլալայում ապրուամբ բություն բռնկեց, որի գլուխ անցավ գեմոկրատական Աթենքը, նորից հրապարակ երավ Դեմոսթենեսը, մակեդոնացիք Հելլալայում պարտություն էին կրում :

Հունական քաղաքների կոտայիշայի դեմ հաղթանակ տանելուց հետո, դեմոկրատական Աթենքի ջախջախումից և Դեմութենեսի զոհվելուց հետո սկսվում են Ալեքսանդրի հաջորդների խառնակ ու ամերիչ բազմամյա պատերազմները . նրանցից մերթմեկը, մերթմյուսը հանդեմ է դալիս որպես «ամենաուժեղը», հետևապես և «ամենաօրինական» ժառանգործը վիթխարի կայրության, որպեսողի իր դեմ համախմբի մյուս բոլոր ախոյաններին, պարտություն կրի նրանցից և իր տեղը զիջի հերթական թեկնածուին : Ոչ մեկը ոչ մի բանից չի խորչում իշխանության համար մզվող պայքարում . մեկի համար իր ախոյաններին ոչնչացնելն իր ողջ մնալու միակ միջոցն է դարձնում :

Մակեդոնիայի թագավորական դինաստիան հրապարակից վերանում է : 306 թվին Սնտիգոնը Փոքը Ասխայում, Պաղպմեոսը Եգիպտոսում, Սելեկիոսը Սիրիայում, Լիսիմաքոսը Թրակիայում մեկը մյուսի հետեւից իրենց թագավոր են հայտարարում : Պատերազմները բորբոքվում են նոր ուժով :

280 թվին Ալեքսանդրի բոլոր հաջորդները պատմության բեմից ցած էին իշել . վերջիններից մեկը — Ալեքսանդրի հաջորդներից ամենաականավորը — գոյավար Սելեկիոս—Հաղթողը, որն իր հաջող արշավանքներից մեկի ժամանակ հասել էր Հենդկաստան, մինչև Գանգես (որ, ինչպես դիտենք, չհաջողվեց Ալեքսանդրին), տիրել էր կայսրության բոլոր ասիական պրովինցիաներին ու Թրակիային, դավաճանաբար սպանվեց Մակեդոնիան դրավելս : Ոչ մեկին չհաջողվեց իր ձեռքում կենարոնացնել Ալեքսանդրի կայսրությունը, որից, բացի բազմաթիվ ինքնուրույն ու կիսամնաքնուրույն հունական քաղաքներից և միքանի մանր ու միջակ պետություններից, ստեղծվեցին երեք համեմատաբար խոչոր ու զրբեղ թագավորություններ — Մակեդոնիան Եվրոպայում (Անտիգոնի դինաստիայով, որ մի ժամանակ փոքրասիական փոխարքա էր եղել), Եղիպատան Աֆրիկայում (Աելեկիոս—Հաղթողի դինաստիայով) :

Ոչ անտեսական, ոչ կուլտուրական տեսակետից Մակեդո-

նիան նշանակալից դեր չէր խաղում: Բանակի ռազմական արվեստը, կարմահերպությունը և տակտիկան Ալեքսանդրի էպո-խայի մակարդակի վրա չմնացին. Հեծելազորն այլասերվեց ու կորցրեց իր նախկին նշանակությունը, Փալանդան ծանրացավ ու դարձավ ամելի մասսիվ, բայց գրա փոխարեն ամելի խոցելի թրկելի թրկունքից ու թմբերից: Զինվորների որակը վատացավ: Մակեդոնական բանակն այլևս անընդունակ էր հեռավոր նվաճողական արշավանքների: Բայց իր անկման մեջ էլ Մակեդոնիան երկար ժամանակ մնում էր որպես ուժեղ ռազմական պետություն, իսկ նրա Փալանդան Ալեքսանդրից հետո մի ամբողջ հարյուրամյակ էր վայելում:

Հելլագան, որ ավելում էր դրախց եկող Հելենիստական ախոյան-թաղավորների բանակների ձեռքով, ծվատվում էր ներքին անվերջ աղջամիջան կոխիներից, ապստամբություններից, քաղաքացիական կոխիների բռնկումներից, որը հետու էր շպրտիւ համաշխարհային առևտուրական ճանապարհներից, որի ընակչության ամենաեռանդուն մասը հեռանում էր երկրից, ընակչությունից զրկվեց, ուժապատ եղարկ ու աղքատացավ: Նույնիսկ երբեմնի դորեղ Աթենական դեմոկրատիան դռենկացավ, մանրացավ և իր անկումով հասալ ամենածիծաղարձայլակերպությունների:

Սակայն հունական կուլտուրան զուգակցվելով ամենաբարզ-մազան ցեղերի ու ժողովուրդների կուլտուրանների հետ, տարածվեց համարյա ամբողջ աշխարհում, Հնդկաստանից մինչև Հայաստան, Հյուսիսային Աֆրիկայից մինչև Թուրքիստան: Հելենիստական վարպետներն աշխատում էին սկզբութական թագավորների պատվերներով, փոքրասիական գործվածքներն ընկնում էին Մոնղոլիա... Ժամանակակից ոսկերիչները, որոնք զինված են ամենանրբին գործիքներով ու օպտիկական սարքերով, անզոր եղան մերարտադրելու այնպիսի մինիատյուր ոսկերիչների մանաթմբերում: Այդ էպոխայի, Հելենիզմի էպոխայի արվեստը մնաց չգերազանցված բայց զիսությունն ու տեխնիկան վիթխարի հաջողություններ ունեցան: Մեղ հայտնի են վիթխարի նավերը՝ մեծաթիվ անձնակազմով, ուղելուրների համար բոլոր հալմարություններով, բարդիքներով, այդիներով, մարմնամարզական դաշլիճներով: Մեղ հայտնի են միթխարի պաշարողական մեքենաները, որոնց հազարավոր մարդիկ էին սպասարկում, հայտնի է Հերոնի թատրոնն Ալեքսանդրիայում, որտեղ դերասանական ամբողջ կազմը և բեմական օժանդակ անձնակազմը բաղկացած էր ավտոմատ տիկնիկներից, հայտնի են մեքենացեր Արքմենդի դրուտերը, որոնք սարսափ էին տարածում հոսոմեացիների վրա և այլն:

Համամարդկային կուլտուրայի հիմքը դրվեց Հելենիզմի

դարացը ջանում, դարաշրջան, որ բացվեց Ալեքսանդրի նվաճումներով։ Հելլենիստական կուտուրայի ազգեցությունից դուրս մնացած երկրները, օրինակ՝ ձապոնիան, համեմատաբար քիչ բան մտցրին համաշխարհային կուտուրայի զանձարանը։

Քայլայվող, կազմակուծվող, հոգեվարք ապրող, բայց և այնպէս տենդագին կերպով իրար խեղդող հելլենիստական միապետությունները կուլ գնացին Հռոմին։ Հռոմը, ընդունելով ու վերամշակելով հելլենիստական կուտուրան այն հանձնեց թարմ, ուժերով ին, անտիկ սարկության սոցիալական ախտից զերծ մնացած գերմանական ու սլավոնական ցեղերին։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Բարեկազմ, նրբագեղ պատանի՝ հրով լի աչքերով, դեմքի նուրբ ու ներչնչող գծապլությամբ, մարդիկի արագ ու թեթև քայլվածքով, զորեղ ու զբնդուն ձախով, անչափանսահման կենսաինդությամբ— այսպէս էր Ալեքսանդր Մակեդոնացին, ինչոր նկարագրում է նրան պատմական ավանդությունը։

Արագածուաց ու փոթորկուա երևակայությունը վստահորեն հենվում է պայծառ, մատեմատիկորեն ճշգրիտ, հետատես ու չկուն մտքի վրա։ Արծվային հայացքն անհազուրդ որսում է կյանքի տպագորությունները, իսկ անհագ հիշողությունն ազահորեն ներծծում է դրանք իր մեջ։ Երիտասարդական բուռն խանդակառությունն ու երազուն մեղմությունը զուգորդվում են հաշված զործնականության ու հաստատուն, անընկենի կամքի հետ, որը մի հոգի մեջ է զնում նրա եռուն էներգիան։ Նրա բազմակողմանի չնորհքները— նա տաղանդավոր դերասան է, որ ինքնամուացության աստիճանի հասպուրավում է իր հերոսական կեցվածքներով ու դերերով, չնորհալի հոկետոր է, խարազրնին հետազոտող— զղկված են հելլենիստական փայլուն կրթությամբ։ Սյդ պատանու բնավորության մեջ շատ մոռթ ու հակասական բաներ կան։ Ինելով ուրախ ընկեր, նիմիրված բարեկամ, առատաձեռն ու կարեկից, հասարակ ու սիրալիր վերըմունքով, դյուրահավատ ու մեծահոգի, — նա կարողանում է այդպիսին լինել չրջապատղների հետ— պատրաստ է կարիքի դեպքում առանց տաստանվելու դիմել և՛ ուխտադրժության, և՛ ոճաբորժության։ Բայց նույնիսկ նրա բնավորության այնպիսի զծերը, ինչպէս իր «ես»-ի ինքնասեր պաշտամունքը, թաքքրած արհսմարհանքը մարդկանց նկատմամբ, ինամբ քովդարեկված երկությունը, անողոքությունը, անզուսպությունը, ցուցամոլության սերը, միայն օդնում են նրան հասնելու

իր նպատակներին։ Անսահման փառասիրությունը լարում է նրա բոկոր ընդունակություններն ու ուժերը, — նա հանգիստ չղիտե և միշտ ձգտում է զեպի առաջ, զեպի նորը, անհայտը, խորհրդավորը, զեպի նոր հաջողություններ ու նոր փառք։

Լինելով կայծակնային խորստակիչ հարվածի մեծագույն փարզետ՝ նա ճակատամարտի բախտը վճռում էր իր սիրած եղանակով, Հեծելազորի զլուխ անցած ճեղքելով ու պատուելով հակառակորդի իր դիմաց կանգնած թևը, այնուհետև թևից չեղակի խրվելով թշնամու կենուրոնը և թիկունքից շուրջանցելով նրա երկրորդ թևը։

«Հեծելազորային դրոհի ընդհանուր սկզբունքներն Ալեքսանդրի էպոխայում հասկացվում էին նույնքան յավ, ինչպես և ներկա ժամանակներում . . . Այդ ժամանակից Սլեքսանդրը համարվում է բոլոր ժամանակների ամենալավ հեծելազորային պետերից մեկը» (Ենգիլս)։ Հաղթանակը պատկիռում էր ամենաակտապի հետապնդումով, որ դես ու դեն էր ցրում թշնամու րանակի մնացորդները։

Բայց, ինչպես և բոլոր մեծ զորայարները, նա համակերպվում էր վայրի ու ժամանակի պարմաններին, հակառակորդին ու իր զինվորների հնարավորություններին։ Հիրասպի մոտ նա ճակատամարտը վարեց բոլորովին այլ կերպ, քան Գրանիկի, Խսայի և Գալբամելայի ճակատամարտերը։ Միջին Ասխայում, «Փոքր պատերազմից» հողնեցուցիչ պայմաններում նրա բանակը զործում էր այլ կերպ, քան Փոքր Ասխայում, իսկ Հնդկաստանում այլ կերպ, քան Միջին Ասխայում։ Հալիկածրնասի, Տյուրոսի, Գաղայի նման ամրոցները պաշարելիս առաջին պլանն էին դուրս գալիս նետող գործիքներն ու պաշարողական մեքենաները, մանր պարտիզանարկան ջրկատների դեմ պայքարելիս՝ թեթև ու միջակ հեծելազորի մանր ջոկատները, հենվելով ծանրը հեծելազորի էսկադրոնների վրա։ «Լեռներում զործի էին դրվում զիւպասպիստներն ու թեթև հետևազորը։ Գարեհի զեմ պատերազմելիս նա իր ուժերը կենսորնացնում էր մի զորեղ հարվածային բուռնցքի մեջ՝ թշնամուն վճռական հարված հասցնելու համար, Միջին Ասխայում պատերազմելիս նրա բանակը բաժանվել էր մի քանի մասերի, որոնցից յուրաքանչյուրն ուներ զործողակալությունների իր ուայոնը և իր առաջադրանքը։ Հնդկաստանում նրա բանակը շարժվում էր երկու-երեք ուժեղ զորա սրունք, որոնք ընդունակ էին հաջիվ տեսնելու ճանապարհին հանդիպող թշնամական ցեղերի հետ։

Շուրջանցելով թշնամու ամրոցները և չեղոքացնելով նրանց, ինչպես օրինակ, Կելինում՝ Փոքր Ասխայում, նա ձգտում էր հնարավորին չափ արագ ընդհարում ունենալ թշնամու կլիավոր ուժերի հետ, որպեսզի նրանց նկատմամբ հաղթանակ տանելով, անջատի այլ ամրոցներն ու նրանց հարկադրի անձ-

նատուր լինել։ Նա թշնամու ամբոցները մեծ մասամբ գրավում էր բաց դաշտում ճակատամարտ տալով։ Միայն այն դեպքում, երբ ամբոցի առումը քաղաքական նշանակություն էր ունենաւ, եթե ամբոցը կարող էր դառնալ բազա և թիկունքի թշնամական ուժերի կազմակերպչական կենտրոն (ինչպես, օրինակ, Տյուրոսը), այդ դեպքում Ալեքսանդրը, հաշվի չառնելով ժամանակը ու կորուստները, գրավում էր այդ ամբոցը և դարձնում իր հետագա առաջնարացման հենակետը։ Իր հերթին էլ իր ուսումա-քաղաքական գաղութներով, իր բազմաթիվ «Ալեքսանդրիա-ներով» նա իր նվաճած երկրներում հիմք էր դնում իր բարձր-թիվ ամբոցներին։ Լեռներում, տավիստաներում, անտառնե-րում— ամենուրեք նա կուտամ էր անփոփոխ հաջողությամբ, ա-մենուրեք նրա քաղաքականությունը հավասարաչափ ճկուն էր ու հաղթական։

Նրա ստրատեգիան կարող էր լինել միայն «ոչնչացման պատերազմի» ստրատեգիա։ Նրա ստրատեգիական պլանը միշտ հասարակ է, պարզ և սերտորեն կարված քաղաքական նկատա-ռումների հետ։ Պարսկական արշավանքի ժամանակ նա ցամա-քում ձեռք բերած հաղթանակներով ոչնչացրեց պարսկական նավատորմը, Տյուրոսի կործանումով և Միջներկրական ծովի ա-փերը դրավելով ապահովեց իր թիկունքը Հելլակայում և ճա-նապարհին իրեն միացնելով պարսիկներին թշնամի ժողովուրդ-ներին, ավելի ու ավելի ուժեղանալով՝ շարժվեց առաջ վիրա-գոր ու հալածական դադանին իր որջում բռնելու։ Հնդկական արշավանքում նա, դործերով «բաժանիր և տիրիր» սկզբունքով, իր կողմը դրավեց թագավորներից մեկին, նրա օդնությամբ ջախջախեց երկրորդ թագավորին և հենց Հնդկիների օդնու-թյամբ նվաճելով Հնդկաստանը՝ տիրապետեց ամբողջ ինդու-հովտին։ Հաննիբալի, Հռոմեական կեսարի, Նասուլեռնի նման նա ևս ոչ միայն մեծ դրավար է, այլև և մեծ քաղաքագետ, որի համար պատերազմը քաղաքականության կարևորագույն ու ան-փոխարինելի զենքերից մեկն է։ Նրա քաղաքական ստրատեգիա-ցի հիմնական առանցքն էր հետեւյալ ձգուումը— իր համար ու-ղերման գործությունը ոչ թե թիկունքում, այլ իր առջեռում, թշնամու-գծի այն կողմը։ Նա իր նվաճած ժողովուրդների օդնությամբ միայն կարողացավ բոլորովին ջախջախել Պարսկական միավե-տությունը։

Իր պլանները նա կենսագործում էր անխոնջ համառու-թյամբ և, նույնիսկ շուրջանցի ճանապարհներ ընտրելով, զնում էր ուղիղ դեպի նախանշած նախատակը։ Նրա բոլոր հաջողու-թյունները ձեռք են բերվել ամենաստաղանդավոր կազմակերպչա-կան նախապատրաստության հողի վրա, նշված պլանի խիստ մեթոդական իրագործումով։ Նա, օրինակ, կազմակերպում էր դաշտային նետող գործիքների խմբեր, դիմախների «հեծյալ հե-

տեսակ», բաժանում ինքնուրույն ջոկատների, նայած Հանդամանքներին՝ եվրոպական հեծելազորը ձևափոխում էր աւստրիական օրինակով և ասիական զորքերը՝ եվրոպական օրինակով։ Երբ շտաբին կեց կային տեղադրական բաժանմունք, ինչեններական ծառայություն, հետախուզություն և այլն։

Նրա օրոք ուազմական գործն սկսում է արվեստից դառնալ դիտություն, որի մասին վկայում են խնամքով սարքավորված թիկունքային բազաները, կանոնավոր կազը բանակի զանազան գործամասերի միջև, խիստ մեթոդականությունը բոլոր ուազմական միջոցառումների մեջ և հենց բանակային ստրուկտուրան։ «Ալեքսանդրի կողմից ուազմական գործողություններ վարելու ձեւ խիստ մեթոդական էր և արժանի է ամենաբարձր դովասանքի, նրա դումակի և ոչ մի սայլը չել ընկել թշնամու ձեռքը»՝ զրել է Նապոլեոնը։ Ինչ անենք, որ Ալեքսանդրի ուազմական գործողությունները մակերևսային հայացքի դեպքում կարող են թվալ բերումի զործ, իսկ նրանց հաջողությունները՝ բախույթ քմահաճույք։ Երբեմն այդպիսի փայլուն էքսպրում է թվում նաև հուետորի ճառը, որ նա պատրաստել է երկար անքուն գիշերների ընթացքում։

Չենք խոսի այստեղ Ալեքսանդրի ուազմական հնարամտության մասին, որի փայլուն օրինակներն էին կեղծ մաներներն ու լուրերը, քողարկումը, գետանցումների անակնկալները, թշնամու հոգեբանության վրա ձևավանդում գործադրելլ, որոնք իրենց ամբողջությամբ հաղթանակ նախալարաստեցին Հիդասպիում։

Ալեքսանդրը լիակատար չափով տիրապետում էր զորավարին ու քաղաքագետին անհրաժեշտ տաղանդին, իր ստորագրույթին ընդունակություններն օգտագործելու տաղանդով, սառաղբյալներ, որոնց համար նա զորավարի ու զինվորի իդեալ էր։ Լինելով բանակի լավագույն մարտիկն ու ձիավարը, որ վճռական պահին տանում էր իր հետեւից իր ամբողջ հեծելազուրը, նա զինվորների վրա ուժեղ տպավորություն էր գործում ինչպես իր ամսիներ քաջությամբ ու մըրկահույզ խիզախությամբ, այնպես էլ ամենածանր զրկանքներին ու դժվարություններին տոկում ու դժվարթ կերպով զիմանալով։ Որպես նույնը ու խորաթափախանց հոգեբան՝ նա ճանաչում էր իր զինվորին և կարողանում էր մինչև հերոսության բարձրացնել ոչ միայն առանձին մարտիկներին, այլև զորական ամբողջ մասսան։ Նա տիրապետում էր իր զինվորի հոգուն, ինչպես վիրատուող արտիստն է տիրապետում իր հնազանդ գործիքին։ Իսկ եթե զործիքը հրաժարվում էր ենթարկվել, կոտրում ու դեն էին չպրոտում, որքան էլ թանկ լիներ այն։

Հիփասիսի մոտ ունեցած անհաջողությունը չել կարող մը թագնել Ալեքսանդրի բանակի անօրինակ հաջողությունները,

մի բանակ, որ նրա ղեկավարությամբ նվաճեց Փռքը Ասիան, Փյունիկիան, Սիրիան, Պաղեստինը, Եղիպտոսը, Միջագետքը, Արևանաստանի, Իրանի, Բելուջիստանի, Աւրելիստանի, Արեմլայան Հնդկաստանի տերիտորիաները, բանակ, որ կոխվ մղեց Դանուբի, Եփրատի, Սիր-Դաշիայի ու Ինդոսի ափերին և Հաղթականորեն 15—16 հազար կիլոմետր ճանապարհ անցավ:

Ալեքսանդրը ձգտում էր նվաճելու ամբողջ աշխարհը, հիմնելու միանալիան համաշխարհային պետություն, որտեղ չեն լինի ոչ հաղթողներ, ոչ հաղթվածներ, որտեղ բռնոր ժողովուրդները միանաբար կատեղեն միանալիան համաշխարհային կուլտուրա: Վաղաժամ մահը նրան փրկեց անխուսակելի կատաստրոֆից:

Նրա նվաճումները բացին նոր երկրներ, նոր համաշխարհային ճանապարհներ, հռւնական կուլտուրայի առաջ լայնորեն բաց արքն Ասիայի դռները և սկիզբ դրին հելլենիզմի էպոխային, հռւնական կուլտուրայի և Բարելոնի, Եղիպտոսի, Հրեաստանի ու Արևելքի այլ երկրների կուլտուրաների միաձուլման էպոխային: Ալեքսանդրի շնորհիվ կուլտուրան համաշխարհային բնույթ ստացավ: Արքիմենի ու Նյուտոնի, Զօմերոսի ու Գյոթեի, Կիվիլիդիտեսի ու Էմիշտայնի, Ալեքսանդրի ու Նապոլեոնի միջև հեռավոր, բայց անքակտելի կապ գոյություն ունի:

Ալեքսանդրի գործերի ու անձնավորության վեհությունը շահթեց Ասիայի ու Եվրոպայի ժողովուրդների երեակայությունը, ժողովուրդները, որոնց ավանդությունների, առասպեկտների, Հեքիաթների, երգերի մեջ մինչև այժմ էլ կենդանի հիշողություն կա նրա մասին: Ի գուրք չէ, որ Ալեքսանդրին անվանել են «աստվածների սիրելի»: Բնությունը նրան պարզեատրել էր չտեսնված առատածեռնությամբ, կյանքը հասցըց նրան գլխապտույտ բարձրության և անմահության հասնելով՝ նա իրազործեց իր կյանքի նվիրական բաղձանքը:



Բ Ո Վ. Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ե

Հունաստանը մեր թվականությունից առաջ, IV դարի կեսերին	3
Ֆիլիպ Մակեդոնացու բանակը	10
Մակեդոնիայի բարձրացումը	26
Ալեքսանդրի պատահեկությունը	31
Հյուսիսային արշավանքը և Թերեփ ապստամբությունը	37
Պարսկական միապետությունը IV դարում (մ.թ.ա.)	43
Դրանիկի ճակատամարտը	50
Փոքը Ասիայի նվաճումը	58
Իսսայի ճակատամարտը	65
Սիրիայի և Փյունիկիայի նվաճումը	72
Ալեքսանդրը Եգիպտոսում	81
Գագամելայի (Արքելայի) ճակատամարտը	84
Դարեհի մահը և պարսկական միապետության վախճանը	93
Կասպիկ գոներից մինչև Հինգիկուշի ստորոտները	98
Ամու-Դարիայի և Սիլ-Դարիայի ափերին	102
Աղյարնին տիրելու բաղձանքը	107
Հուներն ինդոսի ափերին	110
Հիդասպի ճակատամարտը	113
Զորքը զորավարի դեմ	118
Վերադարձը	123
Ալեքսանդրի կյանքի վերջին տարիները	129
Եղբակացություն	138

Թալրդմ.¹ Հ. Հայությունյան
Պատ. խմբագիր՝ Գ. Հ. Քաջալյան

ՎՃ 2422. Պատվեր 187. Տիրաժ 4000. Տպագրական
9 մամուլ. Մեկ մամուլում 41600 նշան. Հեղինա-
կային 8,70 մամուլ. Ստորագրված է տպագրության
29/III 1941թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինի 65

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220032403

40504

(204)

